



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1936

Բայրութի գրադարան

43953-4-L.

Հրատարակութիւն Աւագ Գրիգորեանցի:

1999

ԱՅՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ԼԻԱԿԱՏԱՐ ԵՐԳԱՐԱՆ



Քանի կ'երգէ Հայաստանին
իմ Առիակ ,
Արտիս խորքում վառ կ'թողնէ
Նա միշտ սիրոյ միշտ ազգային
յիշատակ ,

Բան-Ամի:

Առաջին հատոր.

ԵՐԿՐՈՐԴ ՏՎԱԳՐՈՒԹԻՒՆ

(Փոփոխած)

ԲԱԳՈՒ

Ա. ՏԵՐ-ՅՈՎԱՆԻԿԱՆՅԱՅԻ ՏՊԱՐԱՆ

1881.



28133-629-

Արքանձութեալ գու. II Ընդհանուրական



Дозволено цензурою. Тифлисъ, 18-го Сентября 1880 г.



1936-60

Հ 1944

ԵԱՏՏ

1880

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

14



ակաւ չեն մարդկութեան սփերայի
մէջ օրինակներ. «մարդու կեանքը ու-
րիշ բան չէ. մարդու կեանքը ժը-
պիտ է ու լաց», ասում է մի հայ քա-
նաստեղծ: Եթէ այդպէս է, որեմն
մենք կ'ասենք որ ժպտի ու լացի
մէջ ապրողը ու նոցա հաշտեցնողը
միայն երգն է: Երգումէ ամեն մարդ, ամեն
հասակ. երգումէ մանուկը, երգումէ և ծերը. եր-
գումէ առողջը, երգումէ և հիւանդը. երգումէ
ուրախը, երգումէ և տրտումը: Միայն չար մար-
դիկ, ասում են, չեն երգում, այդ էլ չենք կար-
ծում... Եթք երգն է մարդու հոգու ձայնաւոր
թարգմանը, սրտի սփոփիչը, ընկերը գիտակա-
րակողը, եթք ամենքից շատ կարիք ունէ՝ հայոց
ազգը երգելու, ինչպէս ամենքից էք նաև վշտա-
հար, շատ հոգով թունաւորված, որեմն ինչո՞ւ
հայերը երգեն օտար երգեր. շիքաստա, զափիա,
դուբէիթ, միւստիզեաթ և այլ սոցա նմանները:
Եթէ մեր երգերը, ժողովրդի մէջ ժողովրդից
ոտարածված տաղերը ու խաղը արհամարհենք,
էլ ո՞ւր կ'մնայ հայ լեզուն, հայ բարեառը,
ժողովրդի խօսքերը, բանաստեղծութիւնները և

բարոր թանգագին ու ազնիւ սեփականութիւնը :

Այս է պատճառը, որ երբ վերջացան մեր
հրատարակած „Սոխակ Հայաստանի“ ազգային
լիակատար երգարանի առաջին հատորի բոլոր
օրինակները, մենք ձեռնամուխ եղանք նորա
երկրորդ տպագրութեամ, իրօք համոզվելով, որ
Հայ ժողովուրդը չերմ կուրընկալութիւն է ցոյց տա-
լիս մեր չափին աշխատութեամ :

Աւագ Գրիգորեանց:

4 Սեպտեմ. 1880 թ.

Բագու:



1.

Երգ մեռամող Հայրենասիրի.

Ազնիւ ընկեր, մեռամումեմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Իմ թշնամիքս ես օրհնումեմ,—
Օրհնումեմ քեզ Աստուծով :

Հեռանումեմ, անգին ընկեր,
Չգնահատած ոչ ոքից.

Բայց հաւաստեաւ անձնանըւէր
Ազգիս մշակ կհաշուխմ:

Ազնիւ ընկեր, չը մոռանաս,
Անդաւածան, ջերմ սիրով

Ես սիրել եմ իմ Հայրենիք,—
Գնա՛ և դու նոյն շաւզով:

Խեղճութիւնը Հայոց աղղի
Կարեկցաբար մոածի՛ր,

Ոսկէ գրքոյն Եղեչի
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր :

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան
Ազատ կամքով ու խիղճով.

Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,
Իւր ինկելի քաջերով :

Հայրենիք, սեղան սրբութեան—
Ես Աստուծոյ առաջեւ

Շատ կաղաչեմ, շատ կարտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արե:

Իմ մոերիմ, մահըս մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգով.

Որովհետեւ խիղճս արդար է,
Ճշմարտութեան ջատազով:

Ս. Շահաղիղեան.

2.

Երգ ուրախութեան.

Ահա բաժակ ուրախութեան,
Ի սէր յաւերձ միութեան,
Զի՞ վայելուչ՝ որդիք Հայկեան
Մէկտեղ հրծուին և ցնծան;
Կեցցէ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն:
Վերցուր աչքը յերկնից կամար,
Փայլի հեռուն աստղ մի պայծառ.
Եւ դու ո՛ Հայ, զարթիր, սիրտ առ,
Հայոց բաղդրն ալ չէ խաւար;
Կեցցէ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն:
Բաւ է այսքան բաժանում,
Ըլսամք ուրախ և խնդում,
Նախանձ, վրէժ ձեզ թողնում,
Անդունդք և վեհք անհատնում:
Կեցցէ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն:
Փորձ մը ըրինք բաժանման,
Փորձ մ'ալ ընենք միութեան,
Լեցուի փափագդ, Հայաստան,
Տես որդիք քո միանան;
Կեցցէ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն:
Ինչ և ընեմք, ինչ կերպ առնեմք,
Ո՞չ ըգիտեց թէ մեք Հայ եմք,
Ո՞վ ըգիտեր թէ եղբայր եմք,
Մրեք ծիծաղ դիմօք երգեմք.
Կեցցէ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն:

Ո՞ր բունաւոր, ո՞ր օրէնքներ մայլ
Կը պատուիրեն թէ մի սիրեր սիրան
Ազգիդ օդուտն ու բարիքներ,
Սերոյ գահն է յերկինս 'ի վեր:
Կեցցէ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն:

Սայլորդ.

Ահա սուրհանդակի սայլակը
Ուղիղ ճամբով է գուրաթըռչում,
Եւ Վալդայի տիտոր զանգակը
Կամարի տակ է զօղանջում:

Արթուն սայլորդը գիշերուայ դէմ
Իւր վիճակի վերայ տիրեց,
Եւ սիրեկնի աչաց կարօտը
Նա տիրագին ձայնով երգեց :

«Կապուտ աչեր, կապուտ աչեր,
Կըտրչիս կեանքը մաշեցիք,
Ինչու, ինչու, դուք չար ոսոնիներ,
Ինչու սրտերը բաժանեցիք»:

«Մընաս բարեւ, իմ տուն հօրտկան,
Մընաս բարեւ, իմ սիրական,
Ես կըհանդչիմ զինչ բոց կըտակին
Այս անբնակ դաշտի միջին»:

«Արեիս լոյսը խաւարել է,
Այս աշխարհումն էլ որբ եմ ես,
Մըրտիս կարօտը աղջկայ տեսնելից
Մինչև 'ի մահ դրկած եմ ես»:

Այսոր ասաց՝ շարժեց մորակը,
Երեք ձիանց մէջքին խըփեց,

Իւր սիրելնի պարզ յիշատակը մի
Այսպէս երգով նա փարատեց : առայ պի
4.

՚Ի միութիւն Հայոց:

Ահա՛ հրեշտակ ոսկեփետուր թռուցեալ բարձուստ երկնածեմ,
Հայոց բաղդին հեծեալ ՚ի կառս բարձր գոչէ զուարթադէմ.

Հզօր պատգամ,
՚Ի վերուստ դամ:

Միութիւն Հայք, Արքան առ առ առ
Եւ նոր ձեզ կեանք:

Տրոփեն ուժին և լանջք և սիրա, առ առ
Խաղայ արիւն ՚ի թինդ ՚ի թինդ, առ առ
Մեղը կաթի սուրբ սէրն ՚ի խինդ.
Յառաքինոյն ՚ի Հայու սիրտ.
Սիր աբորբոք համբոյր բղիսն,
Արտասուաթոր աշկունք ցողեն.

Արեք, Հայկազունք,
՚Ի սէր փութասցուք,
Եռանդուն մատիք
՚Ի համբոյր հեղեկ.
Տուք համբոյր մի ևս,
Բացէք զձեր թիւ,
Տուք համբոյր մի ևս,
Սիրոյ է պարզես.

Կեցցեն յաւերժ վեհ հայկազունք,
Անմահութեան սիրուն սերունդք.
Կեցցէ յաւերժ Հայկայ ողին,
Մեղ են վկայ երկիր երկին:
Անկաւ պարիսպ ժանտ նախանձուն ո՛չ ՚ի շանթից ահարկու,
Այլ յակնարկի և եթ սիրոյ վերաստացեալ կենսատու.

Երկին երկիր
կան ՚ի յակճիռ.
Ընդ Հայ ազգիս,
Բիւր հրաշալիս:

Բացցին անդունք սեաւ անյատակ,
Ծածկել զբաղգին հին յիշատակ.

Տիեզերաց բացցին մատեանք,
Անդէն դրօշմել Հայոց պարծանք.

Կեցցէ Հայոց սէր պանծալի,
Բերող փառաց նախանձելի:

Արեք, Հայկազունք և այն:
՚Ի սէր փութասցուք և այն:

Դէորդ Ապդուլմա:

5.

Բոնուած թռչնիկը:

(Ոռւսականից.)

Մ ա ն ի ա ն ի ա ն ի է ր է ր

«Ա, ոսալաս, ոտիշկա, շոյ!» երգի եղանակով:

Մանուկներ.

Ա՛յ բարեա՛ւ քեզ, մեր քաղցրիկ,
Դու նոր, սիրուն մեր թռչնիկ.

Մեր ցանցի մեջ լաւ ընկար,
Եւ չես կարող դուրս գնալ:

Թռչնիկ.

Ինչո՞ւ, ինչո՞ւ, մանկիկնե՛ր,
Ինձ կը պահեք այս ցանցում.

Արձակեցէք, որ զբնամ
Ես իմ թռղած երկիրներ:

Մանուկներ.

Ո՛չ, ո՛չ, մեր սիրուն թռչնիկ,
Քեզ չենք թռղնիլ գնալու,
Մենք քեզ կը տանք կան փետիկ
Եւ շաքար՝ թէյ խմելու:
Թռչնիկ.

Ես չեմ ուտում կան փետներ,
Թէյ չեմ սիրում, մանկիկներ.
Դաշտում մըժդղուկ եմ որսում,
Եւ ժողովում հատիկներ:

Մանուկներ.

Զմռան օրեր կը հասնին,
Եւ դու այնտեղ կը սառչես.
Իսկ մեզ մօտ դու կը լինիս
Պսկեայ մաքուր վանդակում:
Թռչնիկ.

Ես ձմեռը կը թռչիմ
Մեր տաք երկրի կողմերը.
Իսկ ակամայ այստեղ իմ
Կ'սենան կեանքիս օրերը:

Մանուկներ.

Թռչնիկ, թռչնիկ, քեզ սրտով
Մենք կը սիրենք այս տեղում,
Եւ չենք թռղնիլ ոչչով
Լինիս տխուր և արտում:
Թռչնիկ.

Հաւատացէք, մանկիկներ,
Որ ՚ի զուր են ձեր զգուանք,
Որով պիտի իմ օրեր,
Լինին դառը չարչարանք:

Մանուկներ.

Այսու, այդպէս է, թռչնիկ,

Դու համբերել չես կարող,
Դէ՛հ, թռիր քո Հայրենիք,
Աստուած քեզ միշտ պաշտպանող:

Ա. Գրիգորեանց.
6.

Առաւոտեամ երգ շինականաց.

Ա՛յ մարդ՝ այսօր շատ քընեցար, նընջեցիր,
Առաւոտեան հով ժամանակն անցուցիր,
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Զերմութիւնը ձորն ու դաշտը փրուուցաւ:
Ընկերներգ վաղ արտերը գընացին,
Յօրեն, գարին գերանդիով հընձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նստան հանգչիլ կաղնիներու հովումը:

Ա՛յ մարդ՝ վերկաց սառը ջրով լուացվի՛ր,
Գոտիդ կապէ, գերանդիդ ա՛ռ դաշտ հասիր,
Փանի հովէ՝ հունձըդ արա՛ արտումըդ,
Հունձըդ հընձէ, մի՛ ծուլանար գործումըդ:
Հունձըդ կապէ՛, բարդըդ բարդէ՛, տուն արի՛,
Հանգստացի՛ր, երբ քո հունձըդ կատարի,
Բե՛ր գերանդիգ, կախէ պատին քո տանը,
Ես երեկուան կը պատրաստեմ սեղանը:

Ա՛յ մարդ՝ հերիք ինչ որ այսօր քընեցար,
Աչքըդ մէկ բա՛ց, տե՛ս թէ ո՞րչափ ու շացար,
Մեր դրացին վաղ անցիցաւ կամուրջէն,
Վաղ լըռել է մեր զըզերը ձայնելէն :

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քընել, սիրական,
Արեգական շողը հասաւ մեր զըրան,
Մի՛ ծուլանար, ժամանակրդ խնայէ՛,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ:

Ա. Տ. Պատկանական

Պատմող:

(Թարգմանութիւն Գերմաներէնից).

Այն ի՞նչ ազգ է, այն ի՞նչ ցեղ է

Որ միշտ անկախ է,

Որոյ տունը ամեն տեղ է,

ի' անփող ուրախ է.

Ուսանողն է այն զռարթ մարդը,

Կենաց քէֆն է նորա ցանկացած բանը:

Այն ո՞վ է արև ծագելիս՝

Ինքն էլ զարթնում է,

Ու քաղցր ձայնով երգելիս՝

Փողոցներ չափումէ: Ուսանողն է, և այլն:

Ո՞վ երբէք սէրից չե վախում

Ու միշտ հարս ունի,

Եւ իր անձոխ, անպերճ կեանքում

Դարդ ու հոգս չունի: Ուսանողն է և այլն:

Ո՞վ է միշտ առաջին կըովում

Հայրենեաց համար,

Փայլուն զինին շեշով կոնծում

Ուրախ, բայց արդար: Ուսանողն է և այլն:

Եղաքը՝ դուք որ այն ազգիցն եք,

Գինին պատուեցէք,

Ուսանողական պատիւը

Հաստատ պահեցէք:

Իրաւ մենք ենք այն զռարթ ազգը

Կենաց քէֆն է ամենուս ցանկացածը:

Ք. Տ.-Պ. Պատկանեան:

Համաժաման զօնի զիցըք զիս զոյ
Համաժամ զիցըք ին զիցըք անոյ մ՛՛
Համաժամ, Անի քաղաք զօն զօն զն Ա
զնան զնան զնան Ա Հայի զնան զնան

Անի քաղաք ննտէր՝ կուլայ, չկայ ըսող միւլայ, միւլայ,

Կըսեն քիչ է, թող մնայ լայ, անս, երլսեմ, միւլայ միւլայ:

Շատ ցաւերով կայրիմ տապիմ, չաւնիմ մէկմարդ հաւատարիմ,

Որ խղճալոյս գայ մօտենայ, հէչ չէ ըսէ միւլայ, միւլայ:

Ա՛լ, Հայ տղայ, խղճան ինձի, տես թէ քո Անին ի՞նչալէս է,

Հերիք ես լամ, դու չգթաս, չէ քո Անին ափսոս է:

Աև ու վախով օրերս անցաւ, լալէն աչքերս կաւրացաւ,

Որ մնալն ինձ վիճակեցաւ, բախտս բնաւ զիս մուացաւ.

Կորուսեր եմ թագաւորներ, ժողովեր եմ զիխուս քօն բուեր:

Որք միշտ կերպեն, Անին անցաւ, Անին անտէր աւերեցաւ:

Անին եմ շատ մարդաբնակ, մնացեր եմ դառն աւերակ.

Իմ լայն, իմ կոծն իմ աղաղակ անտէր որբերու նմանակ:

Երբեմն էի շատ աննման Հայոց քաղաք արևելեան,

Աւերեր եմ սեփահտակ, նատէր կուր յամ ես միայնակ:

Եկար, տեսար, դարձեր կերթաս. լալով կնես, բարձր հատա:

Աստուած սիրես չմոռանաս, Արակիս սարին երբ մօտենաս,

Ըսես իմ քաջ Արարատին. Ա առել կու լայ ու խեղ Անին,

Կըսէ, ե՞րբ աւետիք կոտս, թէ, չէ Անի, հերեւ է լայ:

Աղեքսանդր վ. Արարատեան:

Ա. Հայաստան.

Առնկալ ի գիրկդ, մայրդ Հայաստան,

Զորդիս քո սիրուն ցրուեալ աստ և անդ.

Տես ինչալէս սիրովդ և քու կարօսովդ

Վառուած բորբոքած քու տեսոյդ ցանկան.

Արի, կաց ուրեմն, ով մայր Հայաստան,

Նոր ողի զգեցի՛ր փառօք անվախճան:

Օ՞ն զբահաւորիմք, ով որդիք Հայկեան,

Մեր մօր արցունիքներն ջնջել յաւիտեան,

Զօրանանք սիրով և սուրբ միութեամբ

Ըլլալ ախոյեան ընդգէմ թշնամեաց, որոց 10.

Հապա գործելու ժամանակն հասաւ, 10. սկսվել

Հայրենասիրին, կայ փառք անվորաւ; իոց ուս 3

8. Փափազեան:

10.

Երդ.

Առաւօտեան քաղցր և անուշ հովերն ու ուժի առն

Մերձեալ հնչեն մեղմով թփոցդ քովերն,

Արդ ծածանին աշացս լցեալ ծովերն,

Բայցիր, բայցիր, իմ կարմիր վարդ պատուական,

Գեղգ նման արեգական վառվառման;

Քանի ողբամ, նոր ՚ի նորոյ խոյուաիր,

Զփայլուն գեղդ ՚ի միտքերեալ բոցոտիր,

Յորդ արտասուօք ցայդ և ցերեկ թացուիմ: Բացիր և այլն:

Զմեռն հանց ես քեզ կարօտ մնացի,

Այրիմ, տապիմ որպէս ՚ի հուր հնոցի,

Քեզ շատ օրեր, ես ՚ի ձեռաց զնացի: Բացիր և այլն:

Տեսեալ զծաղկունս՝ զամեն ինձ փուշ վարկանեմ,

Թեռօք բաղիսեալ զսիրտ իմ քնքուշ հարկանեմ,

Ցաւ իմ սրտի ահա՛ քեզ յուշ արկանեմ: Բացիր:

Արքայարան Բիւզանդիոյ մեծ շնի

Տեղ և բնակ յարմարեալ քեզ յարկ լինի.

Սաւակատեօք յիշատակ քո տօն լինի: Բացիր և այլն:

Պ. Վ. Գ. Ափանցի:

Դպու ու նկար 11. արդ ման ունչ պղմանալ

: Դպու ու բան վաճառ

Դպու ու առջ առջ Երդ. Երդ. Երդ. Երդ. Երդ.

Առ քեզ ահա՛, առ քեզ մայր մեր քաղցրիկ Հայաստան,

Քո հարազատ զաւակունք նոր աւետիս կրկարդան.

Բախտ նոր սիրոյդ ել զրկաբաց, ել քեզ ընդ առաջ,

Փարատեցաւ մութ գիշերոյդ սուդ և արասուք անցին բաց.

Աթափեցաւ սերունդ Հայկայ, զարթեան ազգասէրք.

Աւերակներ քո նորոդին, ուսմամբ կանգնին տաճարներ.

Յաշխարհաջահ լցս գիտութեան մանկունք քո խայտան.

Աէր անպղասոր գէպ Հայրենիս՝ սէրս այս կացցէ յաւիտեան:

Յովեկի վ. Փինաշիանց,

Անհանուպ սպաց վ Արականալիս վլու պահան բայ

12.

Երդ. Երդ. Երդ. Երդ. Երդ. Երդ. Երդ. Երդ. Երդ.

Ասումես դիմացիր՝ սնց դիմանամ—միթէ ես եմ քար՝

Դարդիս արա մէկ ձար:

Կեանքս մաշել ես բոլորովին՝ ամենը իսպառ՝

Ես ցաւըն է դժուար:

Եսքան նեղութիւն ինձի մի՛ տար անողորմաբար,

Ուշ դու իմ սիրահար:

Եկ սէր իմ աղնիւ, աղաչումեմ, խղճա՛ խղճալոյս՝

Տնտր բաւականին յոյս:

Ողորմութիւն արա՛ աղքատիս՝ քաշի մօտրդ տա՛ր՝

Տանջել մի՛ չարաչար:

Վախտ որոտումես, վախտ ամպումես, վախտ մթնումես շատ՝

Անձրեւումես կաթ կաթ:

Խոցուած սրտի ս նշան է զրել՝ ունքիդ անեղը՝

Դու իմ ձար ու դեղը:

Ուրիշների հետ ման գալը՝ քեզ աղաթթ ես արել՝
ինձի եադ ես արել։
Ես իմ բաղդիջն եմ գանգապաւոր միշտ և մուղարար՝
ինձ չէ տալիս դադար։
Յաւդի ինձ ես տալիս, ուրիշներին քաղցր խօսքերդ։
ինձ է՞ս ա քո խերդ։ ո՞վ
ինձնից աւելի, ասա՛ աեսնեմ, եւ ո՞վ ա աէրդ՝ զամ սախան
ինձի նա տայ քու աէրդ։
Դու քու զարդերդ լաւ դիսկս՝ խեղճ Աղամ Աղար,
Խալիսն ի՞նչ ա խաբար։
13.

Երդ նախնի գերի նախարարացն 'ի խորս բանտէն։

Աստմած, որ զայս նոր
Մեղե արւիր օր,
Ընդունիմք քեզմէ,
Զի քո պարգև է։
Որպէս ով և այս
Երկաթի շրդիմայս,
Որպէս և անցյս,
Մեր այս բանտ անլոյս,
Փառք քեզ, փառք քեզ,
Յաւոց տեղէս։
Ո՛չ, ծագէ և մեր
Հայրենեաց, ով Տէր,
Մի՛ այսպէս տխուր,
Այլ լուսափետուր.
Ծագէ Հայոց լոյս,
Ճաճանչագեղ յոյս,
Մերժէ զթշնամիս,
Նման գիշերիս,
Փառք քեզ, փառք քեզ,
Յաւոց բանտէս։

14.

Գարոն.

Մանկան երգ.

Ահա եկաւ մեր գարունաց և զար և արդի
Ու զարդարեց դաշտերուն։

Գոյն գոյն ծաղկունք մեզ բերեց,
Սիրուն գարուն մեր գարուն։
Գոյն գոյն ծաղեկներ
Գլնանք քաղելու,
Տէրին փառք տալու։
Չմռան չորցած գետինը
Տեսէք ինչով է ծածկած։
Կարմիր, դեղին շուշանը
Չորս բոլորքին է սփռած։
Գոյն գոյն շուշաններ
Գլնանք քաղելու
Տէրին փառք տալու։
Մի քայլ յառաջ՝ մենք խկոյն
Տեսնում ենք վարդ գոյն ըզգոյն։
Վարդի միջին սոխակներ
Երգում են միշտ անհամբեր։
Գոյն ըզգոյն վարդեր
Գլնանք քաղելու,
Տէրին փառք տալու։
Վարդի թփեր կարգ 'ի կարգ
Բնութիւնից բուսել են.
Իսկ նոցա տակ բարդ 'ի բարդ
Մանուշակներ բուրում են։
Փունջ փունջ մանուշակ
Գլնանք քաղելու,
Տէրին փառք տալու։
Այսպէս ահա՛ ամեն տեղ
Խայտայ, ցնծայ բնութիւն.
Իսկ պանդըխտին օտար տեղ
Չունի ո՛չ մի բերկութիւն։
Մի՛ տընրի՛ր, պանդուխտ,

Պահիր քո սուրբ ուխտ՝
Տէրին փառք տալու:
Ա. Գրիգորեանց:

15.

Խմբեակն.

Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ
Փշըն տակաւ մինչդեռ սիրոյ համբուրիւ.
Ուխտեմք 'ի սէր եղքօր՝ զիեանս դնել գրաւ,
Օ՞ն անդր 'ի մէնջ այր ընկերին՝ լարել դաւ:
Ալացաւ 'ի մէնջ բաղդն անհամբոյր,
Արդ նոր բաղդիս քաղցր է համբոյր.
Եղքայր զեղքայր գգուէ սիրով,
Ճոխն աղքատին մատչե գթով:
Էանց դիշեր՝ արդ առաւօտ,
Ի ցող ժպտին Մասեաց արօտ.
Եւ վառ 'ի վառ շողշողելով,
Լոյսն արեգին ծրփայ ի ծով:
Հա՛պա մանկունք, Աւր և գութ,
Վեհ քաջազունք. Մեր պրսակ.
Ի գլուխ պըսակ, Առ մեր բաղդ,
Ի յաղթանակ: Հրաւիրակ:
Առեալ նուազս, Ցնծասցեն,
ՅԱրաքս արագս. Որք լրսեն.
Օ՞ն փութացուք, Թէ՛ ուր Հայ,
Օ՞ն երգեցուք: Զիք՝ անդ վայ»:

Եղիազար Մէլիքեան.

16.
Առաջին տարեղարձ ազգային Աահմանա-
դրութեան 1861, Մայիսի 24 (Կ Պօլիս:).

Արեք, Հայկազունք, յառաջ ընթանանք,
Աահմանադրութեան նոր բարե մ'ալ տանք.
Որ Ազգն երբ զԱնի փրկարար գոչեց,
Նո՞ր հոգի, նո՞ր կեանք Անոր սպարգեեց.
Եկայք, բարեկամք, առ բարձրեալն Աստուած՝
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած.

Կեցցէ՛, Կեցցէ, Կեցցէ միշտ

Ազգն ու Աահմանադրութիւն:

Զրկանք, բոնութիւն վասթար վարչութեան
Բերին մահն 'ի դուռն Հայոց ազգութեան.
Աահմանադրութիւնն եկաւ զայն վանեց,
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց:

Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ,

Ուր ամեն վայրկեան գոչել պարտ է մեզ.

Կեցցէ և այլն:

Զնջեց ամենայն կարծիք անձնական,
Խեղդեց ամենայն ձայն անհատական.

Հրաւիր կարդաց Աստուծոյ ձայնին,

Առաջնորդ լինել գործոց ազգային:

Այժն որ Աստուծու ձայն տուաւ մեղե,

Մենէ թող առնու ձայնով մ'այնպիսի.

Կեցցէ և այլն:

Հայերս անարդված գրկեց բարձրացուց,

Մարդկային կոչման մեզ արժանացուց.

Շնորհեց մեզի զոր ազատն Աստուած

Մարդկութեան երկրորդ նշանն է դրած:

Որուն շնորհիւ յարգ ոտացանք մենք,
Անոր յարգ տալով ապրինք ու երգենք.

Կեցէ, և այլն:
Դուն ալ, Հայաստան, սիրուն Հայրենիք,
Ալ այսուհետեւ մի սրգար լոխիկ.
Զի՞ ալ քու որդիքդ նոր ոգւով բերկրեալ,
Զքեղ հարս կուզեն տեսնել զարդարեալ:
Ա՛լ մի լար, մայրիկ, լացդ ի պար փոխէ,
Եւ ձայնիւ քաղցրիկ որդւոցդ հետ երգէ.

Կեցէ և այլն:
Հայեր, միանանք մեր մօրն հետ օրհնենք
Զանոնք, որ մեզի տուին սուրբ օրէնք.
Սահմանադրութեան բարեաց փոխանակ
Թռող վարեն ուրախ կեանք մի փառունակ:
Թռող և մեր որդիք հետ անոնց անուան
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան.

Կեցէ և այլն:

Յ. Գ. Սըլամեան

17.

Երգ Վարդանայ.

Արէք դուք Սասանեաց ի Ճամբար,
Մեք անցցուք զերկիւղալիցն ամեհաբար,
Ինա անցցուք արին գոչէր Վարդան յօժար

Սալսամբակ երիվարաց
Գոռ շեփորաց հրաւէր ի մարտ
Գոչէր ուժդին:
Գունտագունտ վառեալ ի զէն,
Սպառաղէն Հայկեան զարմէն.
Զիարշաւ հասին անդէն

Պատերազմեալք խիզախեցան թշնամնոյն դէմ:
Մըկունտ ասպար ի լոյս շողան սուր,
Մըկունտ ասպար փայլատակի հուր,
Ի դրօշի դրօշ սպային կարգ աղեղն ի յուս
Տատանիլ սուսերաց փայլին փառք,
Ի շող փայլին ջինջ արեգին:
Անցցուք, գոչէր ձայն ահեղն, ոտն ի գայթ ի շքեղ,
Հնչեսցին անդէն պայթ և ձայթ,
Բոմբիւնք թմբկաց հայրենի շառաչիւն
Շեփորեաց պայթ և թնդմունք մեծ:

18.

Ողբ Զուղայեցւոց:

Ափսոս քեզ, Հայոց խեղձիկ ժողովուրդ
Ցիրուցան ելաք անմեղ, անխորհուրդ.

Գերի գնաման աք դէպ ի խորասան
Քաղցած ու ծարաւ, տղկըր թշուառական:

Խարիւր ու խազար ցաւի դիմացաք,
Զեր քաղցրիկ երկրէն ոտք դուրս չ'դրաք,

Խիմի ձեր խօր մօր գերեզման թողաք,
Տներն ու ժամերն ուրիշ տուաք:

Էս սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղքըներն,
Քաղցրիկ ջրերն, ձեր շէն գեղերն

Ումն աք թողման դուք, որ գընաման աք,
Խալէս կը լինի՞ որ մոռանում աք:

Վախում ամ էնպէս մոքերնուցդ ընկնի,
Ինչքան որ ողջ աք՝ մոքերնուդ չ'ընկնի,

Բարի ձեր որդւոց, թոռանց պատեցէք,
Խալէս խայրենիքն քանդած թողեցիք:

Մասիսի անունն Նոյայ տապանի,
Արարատ դաշտի, սուրբ Եղմիածնի,



Մեր խոր Վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
Չմոռանան մինչ ՚ի օրն դատաստանի:
Աւքըս կուրանար, շլմքս կոտրուէր,
Խեղձ Հայաստան, քեզ էսպէս չտեսնէր.
Թռէ մեռած էի, ինձ երանի՛ էր,
Քան թէ կենդանի՝ աչքըս բաց տեսնէր:

Ստեփան Վարդապետ.

19.

Հայաստանու հող:

Հայաստանի հողը էն հողն է, էն հիանալի աշխարհն է,
ուր տեղ որ գրախոն էր եղեմական, ուր Աստուած՝ բոլոր աշ-
խարհը ջրհեղեղովը երբ որ գործանեց, Հայոց սուրբ Մասայ
սարը միայն արժան տեսաւ, որ Կոյեան տապանը նստի ու
Հայոց երկրիցը էլ էդ մարդիկ բազմանան ու ուրիշ երկիրներ
էլ շինութիւն գցեն. էն սուրբ հողն է, ուր որ անպարտելին
Հայկ իր մզրախը ցցեց ու իր սուրբ անունովը Հայաստան կան-
չեց: Են ընտիր հողը շատ ուրախութիւն տեսաւ, շատ գեղեց-
կութիւններով զարդարուեացւ, շատ թշնամուն նախանձելե-
դառաւ: Դա էն սուրբ հողն է, ուր Բագրատունեանք, Որու-
թենեանք՝ իրանց հազար թշնամուն ձեռի անտէր մնացած հայ-
րենիքը էլ եղ գերեզմանից հանեցին, էլ եդ նոր հոգի տուին.
Էն օրհնեալ հողն է, ուր Ասորէք, Պարսիկ, Հոնք, Աւանա-
ցիք, Մակեդոնացիք, Հռովմացիք, Արարէք, Օսմանցիք՝ ջրհե-
ղեղի պէս վրայ եկան, հարիւրաւոր ազգ ու աշխարհ ունա-
կուս արին, ջնջեցին, սրբեցին, —թրե, կրակի մատաղ
արին. ուր տեղ որ սար չի մնացել՝ որ արին չտեսնի,
քար չի մնացել, որ մարդ տակով չանի ու հարիր
մեր հարեան ազգեր էնպէս են հողի հետ հաւասարուել
կորել՝ որ էս օր ո՞չ նրանց շունչը կայ, ո՞չ անունը, —բայց
սուրբ Հայոց ազգը, անյաղթելի Հայկայ որդիքը իրանց կեան-

քը, թագաւորութիւնը, մեծութիւնը, փառքը, իշխանու-
թիւնը, զօրքը կորցնելին եղեւ, որ տեսան՝ թէ էս աշխարհա-
կործան ջրհեղեղէն, էս գաղան ազգերին չեն կարող դիմա-
նալ, աչքերը երկինքը գցեցին, գլխները գոզըները դրին ու
հազար թրի տակից, հազար կրակի միջից, սիրտը սրտի
տուած, հոգի հոգու կացրած, մինչև էս օր էլ իրանց գլու-
խը, իրանց սուրբ հաւատը իրանց սուրբ օրէնքը՝ էն վեհանձ-
նութիւնովը պահպանեցին, որի օրինակը աշխարքում ո՛չ
էլէլ ա, ո՛չ կըլի: Նոյեան գէսը վեց հազար տարի Հայոց
խեղձ ազգը հեթանոսի, կուապաշտի, մահմետականի, անօրէնի
ձեռին էր աչք բաց անում, նրանց հետ քեալլայ տալիս, ու
շատին շատ անգամ իր ոտի տակին գցում... բայց կարողէ
վարդը ծովի միջում գորանալ, կարողէ մանուշակը կրակի
առաջ դիմանալ, կարողէ կակող ցորենի հասկը էն կայծա-
կին ու կարկտին համբերել, որ մեր ազգը իր թշնամուն
համբերելա, ետ դիմացել:

Հայոց ազգ, Հայոց ազգ, ձեր ջանին մեռնեմ. Հայոց ազգ,
Հայոց աշխարհ՝ էն ո՞ր կաթը դուք ծծեցիք, որ դուք էս հոգին
ունեցաք, էս սիրտը ձեր միջում պահեցիք, էս հրաշքը աշ-
խարհին ցոյց տուիք. էն ի՞նչ քարացած սիրտ պէտքէ ըլի,
որ ձեզ չսիրի, ձեր փառքը չգովի: Դուք իրար պահեցիք, ձեր
հողն ու ազգը պաշտեցիք, այ Հայ տղէրք, —բայց աչք ճամ-
բի ա, ականջս ձէնի՝ ձեր ջանին դուրբան՝ չթողաք, որ էս մու-
րազը հետո գերեզմանս տանիմ ու հողումն մարմինս քրքրուի,
երկնքումը հոգիս տանջուիր երբ իմանամ թէ ձեր սէրը
պակսելա, ձեր բարեկամութիւնը ցամաքել:

Խաչատուր Արովեանց:

20.

Նկարիչ.

Ակնապիշ, անձայն, խորհուրդ ձակատիդ,
Պատանի, ո՞ւր ես մըտքով մոլորած.

Ներկ ու վրձիններ ցիրայան տռաջեղ, վը լշեայ կրտաւը քու հանդէպ փռած: Շուռաւտուր աչերըդ, նայէ՛ դէս ու դէն, Տեսէն, քեզ ծաղրումէ անմիտ անբոխը, Զարթիր, սիրելի, այդ անուշ քընէն, Գոնէ մի անգամ հանէ՛ քու ոխը: Բայց դու ներում ես նոցա վեհ հոգւով, Խուլ ես աշխարհի ունայն շըշուկին... Յանկարծ աչերդ փայլեց սուրբ շնորփով, Հըսկայի սիրտը թընդաց խիստ ուժգին: Առիր վրձինը, թացարիր ներկով, Շունչ տուիր անշունչ կոպիտ կրտաւին, Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով, Գեզ անկարելին անյայտ է բնաւին: Աեր ատելութիւն, հանձար, բարկութիւն Տուիր պատկերին մատիդ շարժուածով, Խնչ որ չի յայտնեց ճարտարի լեզուն՝ Դու պարզ յայտնեցիր անձայն խօսուածով: Ապշեց ամբոխը, վազեց յառաջեց Քու կենդանազիր պատկերի դիմաց Ծնկաչոք վըմուռս ու հալուէ խընկեց, Գոչեց մեծածայն՝ «Դա է իմ Աստուած»: Բայց, ախ, քու անքուն ժամերու Ճիզը Քանի մի արծաթ հաղեւ գին դրին, Ստեղծողդ դարձար քու խեղճ խրձիթը Ակեր շարեցին շուրջ քու պատկերին:

Ո. Պատկանեան.

21.

Մահ Զարմայրայ Նահապետի Հայոց-

Ամպր եկաւ՝ ծածկեց սարերն՝ ու ձորեր, Զէր տեսնուիլ պատերազմի դաշտերը,

Մէգ մառախուղ կ'իջնէր իդայ լեռներէն, Կիշերային մութը պատեց դիերը: Հիւսիսային հողմը փչեց սաստկագին, Հաղարամեայ կաղնին շարժեց, դողացուցնայ Ամպի միջէն փայլատակեց փայլակը, Ակօսի պէս պատեց խաւար երկնքը: Պիսակներու հոնդիւնը չէր լովիր, Քամին հեռու կ'առնէր սաստիկ փչելով, Ամպի գոռալն կ'ղըդէր երկիբը Մրրիկ, կայծակ խառնված էր օդումը: Հեռուանց կուգայր լաց ու սգոյ ձայները Տրոյացւոց և կամ ջունաց բանակին, Ամենեքեան իւրեանց մեռելն կ'պոռեն, Այն չար օրը շատ կոտորվածք էր եղել: Ճրագներով՝ լապտերներով կ'պտոեն Մարդոց, որդւոց մարմնները՝ կանայքը, Ոմանք շալկած կ'տանէին մեռելը, Որն որ առաջ կու գտնէին արեան մէջ: Ով ունէր տէր՝ կու գտնվէր դիակը Դագաղներով կ'տանէին այրելու, Մայրը, քոյրը, կինը դուստրը միասին Խւր մեռելին կ'տան վերջին պատիւր: Ամպերու մէջ չկան աստղեր, խաւար է, Սև քօղ պատեալ՝ սգաւոր է երկինքը, Քամին փչեց լապտերներուն՝ մթնեցաւ, Պատերազմի տեղը բոնեց լուսութիւն: Բայց հեռուէն այն ի՞նչ լոյս որ կ'երեւի, Իդայ սարի կողմէն մէկ լոյս կ'փայլէ, Լոյսն անդադար շարժման մէջ է քամիէն, Այլ կ'փառվի և չորս կողմը լոյս կուտայ: Սարի տակը կու երեւի մէկ Ճրագ, Որ լապտերով կախված էր այն կաղնիէն,

Արդեօք ո՞վ կայայն մութ գիշեր այնտեղը չէ
Երեխ որ՝ պառող չունի՝ անտերէ:

Կաղնւոյ տակը փռած էր մէկ լայն մարթի,
Կամ առիւծի էր այն, ընձու, կամ վագեր,
Վլէն պառկած էր կարեվէր քաջ զինոր,
Մահու քրտինք տուել էր բոլոր մարմնը:

Երկու ձեռքով բռնել էր իւր մէկ կողքը,
Կամենում էր իւր արիւնը դադարեցնել,
Միաքը բերեց իւր սիրելի չայաստան,
Յոգւոց հանեց՝ ցաւած սրտի խոր տեղէն:

Միաքը բերեց իւր կարօտեալ չայրենին,
Նորոգեցան իւր խոցերու ցաւերը.
Արիւնը յորդ բղիսեց խոր խոցերէն,
Այլ չ'մնաց այնուհետեւ կենաց յոյս:

Վեր նայեցաւ՝ տեսաւ լուսով լավտերի՝
Ծառի ճիւղ քէն կախված էր իւր աղեղը,
Կապարձը լինեաիւք ընկած գետինը,
Սուրը մօտն էր, բայց անպիտան իւր տիրոջ:

Մօտ կանգնած՝ էր միայն իւր երիվար,
Շուտ շուտ շնով՝ իրին ջալով՝ կը փէր,
Ռոքով՝ հողը՝ փորփըրելով՝ վեր ու վայր,
Իւր տիրոջ ցաւոց կ'լինէր՝ ցաւակից:

Առանց ձայնի՝ առանց լեզուի՝ որպէս թէ
Կասէր տիրոջ՝ հաւատարիմ՝ կենդանին.
Մի՛ պառկիր դու՝ այս մութ խաւար գաշտումը,
Մի՛ մնար դու՝ այս կաղնւոյ տակ՝ այս գիշեր:

Վեր կաց հեծիր՝ շուտ իմ վըն, իմ իշխան,
Ես կը տանեմ՝ բեզ քո երկիր՝ չայրենին
Ես չորս ոտքս կը տարածեմ՝ զնտինը,
Կը ցածացնեմ մէջքս՝ որ դու հեշտ նստես:

Բերանովս՝ կը բռնեմ քո թեհըր,
Կը բարձրացնեմ, կը լինիմ քեզ օգնական,

Մի՛ մնար այս օտար հեռի երկրումը,
Երթանք հասնինք՝ քո չայրենի չայաստան:

Ա՛խ քաշեցայն՝ սաստիկ խոցուած ջարմայրը,
Հուրիբոց բղիսեց՝ խորոց հոգւոյն և սրախն,
Վաղեց արիւն՝ լայնաբերան՝ խոր խոցէն,
Խաւար մահու՝ պատեց աչքին և սրախն:

Ասաց՝ արի՛, իմ քաջ ընկեր՝ մրտերիմ,
Արի՛ ազնիւ՝ իմ երիվար՝ իմ նրժոյդ,
Ես չեմ կարող՝ ախ, միւս անզամ քեզ հեծնել
Թամբիդ վրա առաջվան պէս՝ այլ նստել:

Ասպանդակիդ այլ չեմ կարող առ դնել,
Եւ ոչ ձեռքով սանձդ բռնել՝ մետաքսեայ,
Այլ չեմ կարող՝ քեզ հետ շրջել սար ու ձոր,
Պիտի մնամ՝ կարօտ կանանչ գաշտերուն:

Քանի՛ անզամ մենք պատերազմ ենք տեսած,
Քեզ հետ մտել՝ քեզ հետ ողջամբ դուրս եկած,
Ինձ շատ անզամ՝ ծառայել ես՝ մտերիմ,
Մէկ անզամ ես՝ կատարեալ իմ՝ պաշտօնը:

Մէկ մօտ արի՝ առ իմ յետին՝ ողջոյնը,
Սանձդ առնում այդ աներկիւղ՝ քո գլխէն,
Մէկ համբուրեմ արտասուալց աչքերուգ,
Իմ ողջոյնս տա՛ր հայրենի՝ մեր երկիր:

Գնա՛ դարձիր շուտով հասի՛ր չայաստան,
Որուն կարօտ պիտի մնամ այս տեղը,
Գլնամ մեր տուն՝ Արմաւիրին տա՛ր համբաւ,
Որ չ'սպասէ իւր իշխանի գանալոյն:

Որդեոյս տեսնես՝ ասա՛ չունիս՝ այլ դու հայր,
Հայաստանն է՝ այսուհետեւ քո ծնող,
Ասա՛ չայոց՝ ձեր նահապետ ջարմայրը,
Գետնին գրեց իւր երկսայրի սուսերը:

Ասա՛ չայոց՝ ձեր նահապետ ջարմայրը
Զեռին չունի աչեղ գեղարդ և վահան,

Ասաւ Հայոց ձեր Նահապետ Զարմայրը
Այլ չէ կարող հրաման տալ իւր զօրաց:

Ասաւ Հայոց ձեր Նահապետ Զարմայրը
Չէ առաջնորդ քառասուն հազար բանակին.

Քաջ Հայերը ցիրցան եղան դաշտի մէջ,
Ո՛չ ոք տեսաւ՝ իւր իշխանի մեռնելը:

Բայց երբ տեսնես՝ դու նորահարս՝ սեորած,
Որ գրկի մէջ մէկ հատ տղայ՝ ունե նայ,
Որ աչքերէն թափում լինի արտասուք,
Ու դաշտի մէջ՝ պատում լինի գերեզման,

Ու իմ անուն՝ յիշում լինի անդադար,
Ու երեխին ասում լինի մշտապէս.
Թէ դու որբ ես՝ ու հայր չունիս յաշխարհին
Այսուհետեւ քեզ չի ճանչնար Հայաստան,

Այսուհետեւ՝ մի յիշեր դու՝ այն օրը,
Որ քեզ իշխան՝ ազգի կոչեց Հայաստան
Իմացիր որ՝ նա իմ կինն է խղճալի:

Մէնակ նըրան՝ մի պատմեր դու իմ մահը,
Նա չէ կարող՝ լսել այդ սե համբաւը,
Թող չ'կաթէ նորա աչքէն՝ արտասուք,
Թող թաց չ'անէն նա արտասուք սե հողը:

Նըրան ասաւ, իմ սիրական՝ սիպտակ ձի,
Թէ քո մարդը՝ օտար երկիր՝ հեռաւոր,
Այլ գեղեցիկ աղջրկան հետ՝ պսակվեց,
Քեզ մոռացաւ՝ ո՛չ յիշեց քո՝ անունը:

Ասաւ նըրան՝ իմ սիրական՝ սիպտակ ձի,
Թէ քո մարդը՝ իդայ սարի տակումը
Նշանուածին առաւ գիրկը՝ պառկեցաւ,
Աչքը խրփեց քաղցր քնով՝ քնեցաւ:

Ասաւ նըրան՝ իմ սիրական՝ սիպտակ ձի,
Թէ քո մարդը՝ փեսայի պէս՝ պառկեցաւ,

Հարսանիքն էր Իդայ լերին՝ հովտաց մէջ,
Հարմարանը՝ դիակներով զարդարած:

Առագաստն էր՝ երկնից կապուտ կամարը,
Ճրագները՝ հրեղէն փայլակ՝ և կայծակ,
Անկողինն էր՝ սառն ու խաւար գէճ՝ հողը,
Եռագարան՝ ամսոց աշեղ՝ գոռալը:

Մատանին էր՝ լայնաբերան գեղարդը,
Հարսնացուն էր անյաղթելին Աքիլէս,
Փեսաւէրն էր՝ հին բարեկամ Մեմնոնը,
Եւ Հարսնաքոյր՝ Պանթակեղի Ամազոն:

Իմ զարդարանք՝ եղաւ կարմիր արիւնը,
Ողջագուրանք՝ դիոց մահու՝ հըռնտիւն,
Նշանվեցայ՝ սուր սլաքօք նետերու,
Պսակվեցայ՝ պողովատիկ սուսերով:

Հեղինակ, Պանդխափի ի գերեզման Լոնի ՚ի Փարէզ,,

22.

Երգ Մեռանող ընկերի.

„Ո սինմ Յօնամ օկեան“ Երգի եղանակով.

Ազնիւ ընկեր, ինչո՞ւ այդպէս
Թողնում ես ինձ վշտալի
Ու չես կամում դու քո սրոի
Գաղտնիք յայտնել մի առ մի:

Ահա! ես քո միակ ընկեր
Վերջին համբոյր քեզ տալով՝
Դարձնում եմ քեզ իմ այս խօսքեր
Արտասուալից աչերով:

Իմ սրտակից ազնիւ հոգի,
Թըսիր ահա դու շուտով
Դէմի Փրկիւ քո Յիսուսի,

Նորա բարիք տեսնելով : այս զի մցիւմասդաձ
Հանգի՞ր այնտեղ՝ այն սուրբ երկրութամ
Դարէ ՚ի գար ցնծալով , ով մասարաւ Ա
Պատճառը քո բաղդ սյն աշխարհում բաղչ
Պիտի ժպտայ խայտալով : աս զի մնջոյիմ
Պիտի քո բաղդ ոստոստելով մաղաքաւոյ
Ժպտայ այն տեղ , որտեղ որ միմառա Ս
Շատ սոխակներ քաղցրիկ ձայնով լոցումնաձ
Կ'երգեն և քեզ ամեն օր : զի միջանձի
Խակ ես ու խոռոշմ ու պատրաստ եմ այ
Զլ մոռանալ քո գործեր , այսուրոյ Նի
Եւ քո անուն պահելու եմ գմազորացր
Շատ շատ օրեր , տարիներ : դու նոցմանց
Արքան առ Ամայակուն առ Ամանաբ
Ա. Գրիգորեանց :

23

Վանեցի որբի երգը .

Արեւ, արեւ, դուրս ելիր,
Աչքրդ, ունկըրդ ինձ ցոյց տուր . Ո՛ւ
Ցուրտից ջանրս դողում է ,
Զրպլախ որբիս տաքացուր:
Հօր ու մօրլս ըսպանաւ
Քաֆիր Յուրիքը . ո՞ւր զընամ .
Փարա չունիմ փատ առնեմ ցիւրար
Օջաղ փառեմ տաքանամ :

Արեւ, արեւ, թէ՞զ արա, միջոցի
Բուքորանը գալիս ա , Ն Ն առնաք
Էսօր ցըրտից որ մեռնիմ , այսուսուցմ
Եւ արեւդ ընչես ա . Ն Ն ա զ մ ո յ ց
Ոլոմէօն Ասփարեանց :

Զլատով 24 օն : զբանից բար
Տագուի ՝ Մարդասիրական Ըն-
կերութեան 16-րդ տարեդարձի
առիթով . ին մաշ զաջ
Այսօր ուրախ , պարզ սրտով
Տարեդարձ Ընկերութեան
Օր հիմնարկութեան ժամ 10 մ
Տօնումնք երգով , մասաւ մոյ մրած զ
Գեղեցիկ հանգէս
Սենք կատարելով . մասնաւ մասաւ միմառ
Փառք, Փառք, Փառք, Փառք
Կեցցէ «Մարդասէր»
Սեր «Ընկերութիւն» .
Կեցցէ : մասնաւ մրած զուսի այ
Սենք երեկը չենք մատանայ սնաք այ
Ազգաշնչն գործեր Սորա , Ա Ա Ա
Այլ միշտ ցնծալով
Կ'առնենք երգով , մրած զ զմանի
Գեղեցիկ հանգէս
Սենք կատարելով . մասնաւ զմանի
Փառք, Փառք, Փառք, Փառք
Կեցցէ «Մարդասէր»
Սեր «Ընկերութիւն» ,
Կեցցէ :

Ա. Գրիգորեանց :

25

Երդ բարոսի կամ բարեկենգանի:
Ակոսիին մեծ կարասին
Բոլորտիքն են բազմեր .

Աւագ իշխանք, մեծ պարոնայք
Ժողովք են հոն կազմեր:
Այո՛, այո՛, ժողովք են հոն կազմեր:
Աստիկ է վէճն, մեծ է խնդիրն,
Զոր հոն տեղ կը խարհին,
Թէ ի՞նչ կերպով դարման մ'ընեն
Հիւանդ մեր աշխարհին.
Այո՛, այո՛, հիւանդ մեր աշխարհին:
Մէկն աս կըսէ, մէկն ան կըսէ,
Կը ծագի լոյսն առտուն.
,,Խնձ լսեցէք, տեարք, կըկանչէ
Աւանին պետն արթուն.
Այո՛, այո՛, աւանին պետն արթուն:
,,Թող թագն առնու, կըսէ բաքոս,
Աւ փառօք ապրի շատ.
Իսկ ցընծութիւնն ըլլայ դըշխոյ
Եւ գահն ալ յԱրտաշատ.
Այո՛, այո՛, և գահն ալ յԱրտաշատ:
Այսպէս մեզի նոր ցնծութեան
Արևեր կը ծագին.
Առողջ կըլլայ մեր ժամանակն
Եւ նոր մեր աշխարհին.
Այո՛, այո՛, և նոր մեր աշխարհին:
Եփրեմ վ. Զաղըճեան.

26.

Քահանայ.

Աօյն ո՞վ է կանդնած ամբիոնի վրայ,
Դողդոջուն ձեռքերն երկինք ամբարձած,
Գրթառատ աչերն լի արտասունքով,
Բազմութեան ուշքը դէպի նա դարձած.

Որին ամենը հայր են անուանում,
Ծանօթ, անծանօթ հաւասար յարգում,
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա,
Սրտի գաղանիքը նորան են յայտնում:

Քահանայ է նա, քաւող մեղքերու,
Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ,
Հովիւ է անխոնջ Քրիստոսի հօտին,
Երկնաբեր գանձին նա է արթուն դէտ:

Երբ մենք թաթախուած Ադամայ մեղք
Նկանք այս աշխարհ լրցեալ ցաւերով՝
Ո՞վ սրբեց մաքրեց մեր հին մեղ քերը,
Ո՞վ մեզ սփոփեց իւր սուրբ խօսքերով.
Կամ երբ ժանտախտած, ընկած մահձումը
Մըտատանջ, անյոյս մահ էինք խնդրում,
Պանողլստի նըման ամենից թողած
Ո՞վ մեզ առաջին հասաւ օգնութիւն.
Կամ երբ մոլորուած գառներու նման
Կոյր վագում էինք դէպի խորիսրաս
Ո՞վ արգեօք այն օր փրկեց մեզ մահից,
Դիւական գրքէն հանեց անսրատ.
Կամ երբ մեղսալիր աչքերլա բընաւ
Զենք համարձակում երկինք ամբառնալ
Որին կանչում էնք միջնորդ հաշութեան,
Ո՞ւմնիվ յոյս ունինք թողութիւն տուանալ.
Եւ կամ ըզբաղած ունայն գործերավ,
Մոնցել ենք Աստուած, կրթօն, սուրբ հաւաս,
Ո՞վ է մեր տեղը մեր մեղաց համար
Արտասունք թափում աչքէն յորդառատ:

Քահանան է այն և միշտ քահանան,
Մեր միջնորդ, հովիւ քաջ և աղօթիչ

Որբոց հայր, եղբայր աղքատ մուրացկին,
Արտասուաց սրբող, յանցանաց քաւիչ:
Ե՛կ պատուենք, եղբայր, այդ սուրբ քահանան,
Սիրենք միշա նորան մանկական սիրով,
Որ ամբողջ զիշեր իւր որդոց վերայ
Պատրաստ է հսկել անքուն աչքերով.
Նա բոլոր կեանքը զոհեց մեղ համար,
Չուզեց փառք, պատիւ, զբօսանք աշխարհիս:
Քանց սուրբ քահանան էլ ո՞վ է կարող
Արդեօք մեղ համար լինել հայր բարի:

Ու. Պատկանեան:

27

Վասն Հայաստանի:

(Սանդալուչիայի ձայնով)

Այն աշխարհն պատուական է, ուր բուսնումն նուռն ու խաղող,
Այն աշխարհն Հայաստան է, յորում գոյ բազում հաղ հանող:

Հայաստանի աշուղներն հայրենիքն զարդարել են,
Ազգասիրութեան սերմերն պտղատու հողում վարել են,
Տեսել են օգնական չկայ, իրանք իրանց դադարել են,
Զանազան նեղութեանց միջին ազգի ծէսն կատարել են,
Անձեմարան՝ անվարժապետ՝ առանց սատար և առանց փող:

Երբեմն աննման ջուրն՝ երբեմն առ ու տուրն են գովել,
Երբեմն բերդի ամսուրն՝ երբեմն էլ սուրն են գովել,
Երբեմն թշնամեաց հուրն՝ երբեմն ազգի մուրն են գովել,
Երբեմն կեղծիւ համբոյրն՝ երբեմն վատ լուրն են գովել
Կարճըն ասեմ: ազգի համար եղել են վարպետ՝ խրատող:

Բաղդաւորաց հետ գովել արին, անբաղդից հետ լաց ու շեւան,
Խաղաղ վախտն մալ դատեցին, նեղ օրերն ջառմայ տուան,

Մեղքն իշխանիքն զործեցին, նորանց վիզն անկաւ չուան,
Հայաստանն քայլքայեցաւ՝ ամենայն շահիցն զրկուան,
Ազգի վատ արարմանց մասին նոքա եղեն միշտ ամաչող:
Հայաստանի նշաններն նրանց խրան է պահպանել,
Քանզի ուրացող Հայերի սկսել են հոգիքն հանել,
Ուրացողքն էլ ուղեղներին փախցրել են և սպանել,
Չի գիտեմ այս չար բնութեան սերմն ո՞վ է մեր մէջ ցանել,
Որ այս թշուառ դրութիւնից չեմ տեսանում մէկ զերծանող:
Ինչ ազգ որ աշուղներ չունի, նա իւր սրտումն սէր չունի,
Ինչ ազգ սրտումն սէր չունի, նա Աստուծոյ պատկեր չունի,
Ով Աստուծոյ պատկեր չունի, նրան բարի գործեր չունի,
Ինչ մարդ բարի գործեր չունի, նրան աշխարհին խէյր չունի,
Նորա կեանքն քամոյ պէս է, ինքն չարեաց միաբանող:

Փետրոս Մագաթեանց (Աէյեադ)

28

Տարօնցի Հայի արտասուքը.

Արդեօք ե՞րբ լինի, ո՞վ Տէր Արարիւ
Որ մենք ազատուինք մոլեուանդ Թուբքից,
Դարերէ ՚ի վեր կրեցինք վշտեր,
Դարձան ամայի Հայոց շն գիւղեր:
Ազգեր, ձե՛զ մատաղ, հասէք Հայերին,
Արէք մի դարման մեր արնոտ վէրքին:

Մի կողմից Հարկը, միւսից՝ սով ու ջարդ,
Ո՞ւմը գանգատինք, որո՞ւ բանանք դատ . . .
Հայերը մեռան. Օսմանցու սուրբ
Խզեց խեղճ Հայի ազգութեան կապը:
Ազգեր, ձե՛զ մատաղ, հասէք Հայերին,
Արէք մի դարման մեր արնոտ վէրքին:

Թառղինք մեր աշխարհ, եղանք ցիր ու ցան,
թէ կայք և թէ գոյք տուինք օտարին.

Հաւերիս տապան, Արդերի շիրիմ
Յանձնեցինք մոլի մեր ոխերիմին:

Ազգեր, ձե՛ղ մատաղ, հասէք չայերին,
Արէք մի դարման մեր արնոտ վէրքին:

Տաճիկը խլեց մեզմէ գութանը,
Զաքեազ ու Քուրդը՝ մեր կին ու դուստրը.

Ի՞նչ հասած արտեր, ծաղկաւէտ դաշտեր,
Եղան ոտնակոխ՝ վանք ու տաճարներ:

Ազգեր, ձե՛ղ մատաղ, հասէք չայերին,
Արէք մի դարման մեր արնոտ վէրքին:

Հարկը բազմացաւ, պահանջը շատացաւ.
Ասպատակութիւնք դիւզ, քաղաք քանդեց.

Ի՞նչ տուն, ի՞նչ շէնքեր, ողջը աւերաւ,
Միթէ լուսինը Սուրբ Խաչին յաղթեց:

Ազգեր, ձե՛ղ մատաղ, հասէք չայերին,
Արէք մի դարման մեր արնոտ վէրքին:

Մեր հարուստ իշխանք եղան հացմաւրաց,
Անթիւ երեցներ կարօտ տաճարաց.

Բողոք մանուկներ անմայր մնացին,
Խանդաղատ ծնողք՝ առանց զաւակաց:

Ազգեր, ձե՛ղ մատաղ, հասէք չայերին,
Արէք մի դարման մեր արնոտ վէրքին:

Մեռնել է դժուար, ապրիլ չենք կարող
Ղուռանի որդիք մեզ ողջ կը թաղեն.

Հայք շունի տէր, գէթ մի պաշտպանող
Ո՞վ տայ խրախոյս մեկնել ձեռք սրին:

Ազգեր, ձե՛ղ մատաղ, հասէք չայերին,
Արէք մի դարման մեր արնոտ վէրքին:

Ազգեր, գերի ենք, տուեք փրկութիւն,
Մեր քրտանց արդիւնք թո՛ղ մենք վայելենք,

Միթէ չե՞նք ուղրում մեր սուրբ օրհնութիւն,
Ձեր կենաց համար աղօթող լինենք:

Ազգեր, ձե՛ղ մատաղ, հասէք չայերին,
Արէք մի դարման մեր արնոտ վէրքին:

Կարապետ Յովհանջանեանց.

29.

Երգ ուրախութեան.

Արէք, որ երթամք

Սոխակաց երամք,

Ծաղիկ բացուեցաւ

Միշտ փառօք ցընծամք:

Արի՛, գովելի,

Գովելի լի լի, (երիցս):

Ծաղկունքըն գարնան

Սոխակ աննըման,

Զայնիւ ցընծալով

Եղանակ բառնան.

Արի՛, գովելի, և այլն:

Ակայք սիրեսցուք,

Զմիմեամք փարեսցուք:

Ի հանդէպ վարդին

Պարուք բերկրեսցուք:

Արի՛, գովելի, և այլն:

Ահա՛, ցընծասցուք,

Ի պարտէպ հացուք,

Դու միշտ ցանկալի

Ե՛կ ուրախասցուք:

Արի՛, գովելի, և այլն:

30.

Երգ ուրախութեան.

Աստուած բարի տայ Մահմեղին,

Լաւ բան է մասձել

Որ սաստել է իր ժողովուրդին

Դինի գործածել

Թէ չէ քրիստոնեացք ծար աւու կ'կոտորվէին:

Օրն մի շեշ խմել խրասում

Բժիշկն Հիպոկրատ.

Ավայս գեղազրին Հնաղանդում,

Կին է, ոչ տղամարդ,

Բայց իմ բարի խորհուրդն էն է մի դաւ դարդակել:

Վարդապետ Նիւտերն ասէ

Մի խմաստութիւն.

Ավ գինու համը չէ տեսել

Ուղարկել գժատուն.

Պատճառ, բնութեան բարիքն արհամարհումէ:

Հայաստանին են պարտական

Ամեն գինի խմողը

Այն տեղ նոյ նախահայր մարդկան,

Քամել է խաղող.

Երբ Արարատ սարից իջաւ ջրհեղեղեց յետոյ:

Գոհութիւն մատուցանեմք քեզ,

Բաքոս ծերունի,

Եւ ՚ի պատիւ քո դարդակեմք

Մի մի շեշ գինի,

Որ մեզ առատ հունձ պարգեես օրհնեալ խաղողի:

Մ. Փ.

31

Մեզ ի՞նչէ պակաս.

(Նուէր օր. Գայիանն Յովհաննիսեանին)

Առաւօտ կանուխ հայի երեխայք

Դպրոց են վազում զըւարթ ու արագ,

Հըլու, ուշադիր սորվում են համար,

Պատրաստում աննիթ գանձ ազգի համար;

Բըթամիս արզայ հայ շատ տեսած կաս,—

Ի՞նչ է մեզ պակաս:

Հէնց որ ժամկոչը զանգակը հընչեց,

Դեռ լուս ու մութ է. մեր հայը բացեց

Դուքան ու զազեահ: Զեռքումը արագ

Շարժում է ասեղը սրղոց և ուրագ:

Հայ արուեստաւոր ծոյլ շատ տեսած կաս,—

Ի՞նչ է մեզ պակաս:

Տես տես զլորվումէ բըթուր ահազին,

Դա է բեռնակիր պանդուխա մըշեցին.

Արուն—քրտինքով, հայրական զըթով

Տուն—տեղ պահումէ հայի ամօթով:

Անպիտան մըշակ դու շատ տեսած կաս,—

Ի՞նչ է մեզ պակաս:

Ժամի խորշումը կայ գետնատարած

Մի խըղճուկ այրի, մատաղ, սևազգեաց,

Աչքը արտասուք, սիրտն յուսով լցուած,

Իր սուրբ հաւատին պինդ ապաւինած:

Կրօնազուրկ դու հայ կին շատ տեսած կաս,—

Ի՞նչ է մեզ պակաս:

Բերդըն անառիկ կայ սարի վրան,

Անթիւ թնդանոթք են նորա պաշտպան,

Հայ քաջ զօրականք նորա մօտեցան.
Անառիկ պարիսպը դետնին դլորեցան.
Լօրիս այլազգեաց մէջ շատ տեսած կաս,—
Ի՞նչ է մեզ պակաս:

Ամայի դաշտ է: Դարերէ 'ի վեր
Նորա մէջ կային վայրագ գաղաններ,
Հէնց որ հայերի ոտքն այնտեղ հասաւ,
Ամայի վայրը Աստծու դրախտ դարձաւ:
Նորհազուրկ հայեր դու շատ տեսած կաս,—
Ի՞նչ է մեզ պակաս:

Դարերէ 'ի վեր հայն է հալածուած,
Խնչու: Էնդուր որ՝ շատ է աչքաբաց.
Լումայ լումայով գումար ժողովեց,
Անթիւ դպրոցներ ամեն տեղ հիմնեց:
Հայի պէս խելօք շատ ազդ տեսած կաս,—
Ի՞նչ է մեզ պակաս:

Չէ, հայը չունի իւր մէջ գիծ թերի,
Ամէն գործի մէջ հմուտ էւ արի.
Հայեր, չի լինիլ անտեղի գովեստ,
Թէ ձեզ անուանեմ խելօք, ժեր, համեստ,
Միայն կը մընայ ձեղ իրար սիրել
Ու աշխարհ սիրել:

Գամառ—Բաթիստա:

Արե՛ ինձ անգած կալ այ դիվանա սիրտ,
Հայա սիրէ՛, աղաբ սիրէ՛, ար սիրէ՛.
Աշխաբըս քունն ըլե, ի՞նչ պիտիս տանի՛
Աստուած սիրէ՛, հօքի սիրէ՛, եար սիրէ՛:

Են բանն արա՛, վուր Աստուծու շարքումն է,
Խըրատնիրըն դըրած՝ Հարանց վարքումն է,
Երիք բան կայ՝ հօքու մարմնու կարքումն է
Գիր սիրէ՛, զալամ սիրէ՛, դավթար սիրէ՛:

Ե՛կ արի՛, սի՛րտ, մի կէնա դուն մէ դամաղի,
Ճալալ մըտիկ ա՛րա հայի ու աղի,
Հէնց բան արա՛ մարթ վըրէդ չը ծիծաղի
Խըրատ սիրէ՛, սաբըր՝ սիրէ՛, շար սիրէ՛:

Հընպարտութին չի անիս՝ դուր գուր քաս Տէրիդ,
Խօնարութին արա՛ կանց քիզ դէվէրիդ,
Աստուած դիփունանցըն մին հօքի էրիս՝
Աղկատ սիրէ՛, զօնաղ սիրէ՛, տար սիրէ՛:

Սայեաթ-Նովա, էրնէ՛կ քիզ թէ էս անիս՝
Հօքուդ խաթրի մարմնուդ ունբըր կէս անիս.
Թէ գ'ուզիս վուր դադաստան չը տէսանիս՝
Վանք սիրէ՛, անապատ սիրէ՛, քար սիրէ՛:

Սայեաթ-Ետիւա:

Հայոց գինի:

Բաժակներ առնունք, եղբա՛րք,
Լիք լիք բաժակներ գինով,
Կարմիր ու ձերմակ գինին
Մեզ լինի անուշ համով:

Բերներիս տանենք անվախ,
Չէ դա խառնած կամ խարդախ.
Նեկտար է և ո՛չ գինի,
Խըմենք մեզ անուշ լինի:

Արաբսայ ջըրով ցօղած,
Հայոց արևով հասած,

Հայոց աղջիկ է քաղել,
Քընքոյշ ձեռներով քամել:
Ա. Յ. բերքն է Հայոց երկրին,
Հայաստան տընկած նոյէն,
Անմահ երինային գինին
Նա խմեց, երբ իջաւ սարէն:
Ա. Յ. անոյշ գինին խմողը,
Սրտէն թող հանէ ովրը,
Ամէնքս էլ ասենք ամէն,
Որ մեղի շատ տայ ամ լն:
Ո. Պատկանեան.

34.

Երդ ու գնացք զօրացն Հայոց ընդ Վահանայ
Մամիկոնենոյ ՚ի Շաւարշական դաշտին վրէժք.

Բամ. փորոտան բարձուստքոմբիւնք յԱյրարատեան դաշտն ի վայր
Արի արանց արիւնք յեռանդն առատանան ՚ի հրազայր.
Հրաւեր հայրենեաց հըռչակի՞նդ հանուր
Հոգիք Հայկազանց բորբոքին ՚ի հուր.
Որք երկնաւորի պսակին էք կարօտ
Ու որ երկրաւորիս փառաց երկնահորդ,
Հապ'օ՞ն, արի արանց մանկունք
Հայրենավրէժքը Հայկազունք,
Հապ'օ՞ն ՚ի զէն գունդա գունդ
Յեռեալ ՚ի պար թունդ ՚ի թունդ՝
՚ի զէն ՚ի վրէժ, օ՞ն անդրյառաջ,
՚ի զէն ՚ի վրէժ, մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՞ն անդր յառաջ մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՞ն անդր յառաջ, յառաջ յառաջ,
Հապ'օ՞ն յառաջ:

Ղեանդ. գ. Ալիշանեան.

35.
Երդ Ուսանողաց.

Բա՛ւական է մեզ մտաց զքաղմունքն,
Մենք ևս ունինք մեր համոզմունքն,
Ճաշուցն առաջ մեխած սովորել,
Խսկ այնուհետև բաժակին նուիրել
Խմե՞նք, եղբա՛րք, գինի:

Կեցցես դու չԱստուած գինարբեցութեան,
Կեցցէ և քո գիւտ այժմ և յաւիտեան.
Ցոգնած մարմինս դու զօրացնում ես,
Երբ պարապմունքից դադարում եմ ես,
Խմե՞նք, եղբա՛րք, գինի:

Արդէն նատուած գինի տաճարում,
Ուխտաւորները խմիչք են զոհ բերում.
Կարմիր արիւնը նուիրական թասին,
Հաճելի է շատ մեր ծեր Բաքոսին:
Խմե՞նք, եղբա՛րք, գինի:

Հարկաւոր է շուտ ուխտատուն շտապել,
Տասերկու ժամ ճիշտ կաթիլ չեմ ըմպել
Ծոմապահութեանս վարձը թող լինի:
Մի շեշ Երասխայ վարդագոյն գինի:
Խմե՞նք, եղբա՛րք, գինի:

Ահա՛ թասերով զանգահարումն,
Գինի պաշտելու մեզ հրաւիրումն,
Ո՛վ պատարագին փոքր ինչ ուշանայ,
Մի լեք շեշ գինի պատիժ կստանայ:
Խմե՞նք, եղբա՛րք, գինի:

Ուրեմն միմիայն ես եմ Ֆնացել
Որ աղօթատուն դեռ չեմ դնացել.

Երթամ համբուրեմ շուտով տակառին,
Սուրբ և անարատ բաքեայ պատկերին,
Խմենք, եղբարք, դինի,

Մ. Փ.

36.

Վանեցւոց Չունուագը.

Բա՛ւ է, եղբարք, վեզ ճըկել
Ողորմելի երեկը
Ժամանակը հասել է
Հայ դրօշակին ծածանել:
Հայոց լերինք թո՛ղ թընդան,
Հայոց բերանք թող գուան
Հայսաստանի դաշտերում
Հայ քաջերու վել «ուռան».

Արիւն վոթէ թո՛ղ հայը
Աղաղակէ միշտ «ուռան»,
Սեր թշնամին այսուհետ
Սրտի վախէն թո՛ղ դողայ.

Այսուհետե արտասունք
Վախոտները թո՛ղ հեղուն,
Հայքոս արդէն պատրաստ ենք
Վոթել ազնիւ մեր արիւն,

Ու չենք դադրիլ վոթելու
Սեր հայ, ազնիւ արիւնը,
Մինչև ազգը չե ստանայ
Իրա ազատութիւնը

Ալ ու վախը մենք մոռցանք,
Այժմ դիտենք մենք «ուռան»....
Հայք՝ դոչեցէք միշտ «ուռան»,
Որ թշնամին մեր դողայ:

Գամառ—Քաթիպա.

37.

Ի հանդիսի երրորդ տարեղարձի
Ազգային Սահմանադրութեան.

Գարուն չայաստան գայ ծաղկապսակ,
Զայն ողջունելու ելէք, չայ զաւակք.
Անցան սե օրեր, օրեր մահահոտ,
Հայոց նոր բաղդի ծագի առաւօտ,
Սահմանադրութիւն ուղեցոյց կենաց,
Սիրոյ դրօշակով եկաւ զարդարուած:
Որ փայլի Արե սուրբ Հայաստանի,
Որ Հայ ազգութիւնն փառօք վերածնի:
Կեցեն անձնուէր որդէք Հայկազունք,
Կեցէ Ազգային Սահմանադրութիւն:

Կաթիլ մարտասուք հեղունք աննախանձ,
Ի սուրբ յիշատակ մեր քաջ նախահարց,
Կաթիլ մի քրտինք հեղունք անխայ,
Ի նպաստ Ազգիս յուտոյն ապագայ.
Եւ ոչ իսկ խնայենք բոլոր մեր ճգունք,
Կրօնի, Հայրենեաց և Ազգի սիրոյն;
Որ փայլի Արե ... և այլն:

Հայեր, միանանք, կընենք առաթուր,
Ամէն ուժ և նենդ, պարիսպներ ամուր.
Երկինք զայս մեր սուրբ կ'օրհնէ Միութիւն,
Ի Աստուած Գրիգորի զօրավիդ արթուն.
Հապա խրախուսինք, կուրծքտաննքանվեհեր,
Ընկծննք կործանենք ամեն արգելքներ:
Որ փայլի Արե . . . և այլն:

Ունիմք սիրտ արի, ողի եռանդուն,
Ժառանգ մնացած բազուկ աննըկուն.

Դարերու յաղթող Ազգի զաւակ ենք,
Ամէն նախատինք օ՞ն փութով ջնջենք.
Անմահ չայութեան կանգնենք յաղթանակ,
Հայոց Մօր Ճակտին հիւսենք պերճ պասկ:
Որ փայլի Արե . . . և այլ:

Ս. Պ. Պ. Փափազեան:

38.

Վերջին Գարուն.

Գարունն է եկել նախշուն թերով,
Նախշուն թերը պէսպէս ձեւրով.
Կայն դոյն ծաղկեներ՝ կարմիր ու սպիտակ,
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով:
Երկինք ու երկիր քեզ տօնեն, գարուն,
Զի ես քան զամեն եղանակ սիրուն.
Նա անձրւ ցօղէ առատ ՚ի վերէն,
Դա օրհնել տայ քեզ եկոր հաւերուն:
Ոսկի արել փայլէ քեզ վերէն,
Կենսաբեր հովք փրչէ ՚ի լերէն,
Ախ, աղնիւ գարուն, եղանակ սիրուն,
Արդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ Տէրէն:
Գլխաբարշ երթամ ՚ի պարտէզ այգուն,
Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն ՚ի բուն.
Չ'կայ ինձ հանգիստ, ցնծութիւն սրախ,
Ես վաղ եմ մոռցել՝ զի՞նչ անդորր է քուն:

Մեռած պատանքած գետնին կեանք տուար,
Տերեւթափ ծառին ստուերախիտ արար,
Քեզ թռչնոց երամ հանգէս կանչեցիր,
Ինձ մենակ խղճիս էսպէս մոռացար:

Առաջ գնա՛, գարուն, դէպ՚ի հիւսիս՚ի խոր՝
Գնա՛, կանանչցո՛ւր դու անդ սար ու ձոր,
Որոց անհամբեր քեզ կան՝ տո՛ւր բարե,
Քո ուրախ գալստեամբ նոցա զուարձացուր:
Կուգաս գալ տարի՛, դու ինձ կու գտնես,
Ա՛չ ՚ի մեր այգին և ո՛չ ՚ի պարտէզ
Այլ անզարթ քընով հողի տակ պառկած,
Գերեզմանաքար մի վրաս կը տեսնես:
Ու Պատկանեան:

39.

Գիւղական աղջիկ եմ ես զամբիւղաշէն,
Եկեալ աստ զամբիւղօք ՚ի Հայոց երկրէն,
Յուսամ, զե Հայ տիկնայք և պարնայք Հընդկաց
Բարձր գին տայցեն իմ սիրուն զամբիւղաց.
Ա՛ռ զամբիւղ (3) յօտար աղջկանէս:

ԶԱրարատ, զԵփրատ և զՏիգրիս թողի,
Միայնակ շընեմ աստ յեղերս Գանզէսի,
Պանդուխտ եմ, օգնեցէք անտերունչ անձինս,
Զի ծնողք ձեր յառաջ աստ պանդուխտ էին:

Առ զամբիւղ և այլն:

Զամբիւղք իմ են յարմար ասղնեզործեան՝
Պահել անդ զմատնոց, զթել, զասղաման.
Իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսեան,
Երբ խաշինք եւ գառինք իմ զինե խայտան:

Առ զամբիւղ և այլն:

Գրանձք բաղումք, ցաւք բաղումք կան յայսմ աշխարհի
Գէտք սակաւք, ցաւք սակաւք, կան յիմում երկրի,
Զայգի մի ունեի զամբիւղ գործէի,
Լոկ կաթամբ եւ պտղով երջանիկ էի:

Առ զամբիւղ և այլն:

Աստ սերկեւիլ ծիրան եւ խաղող չե կայ,
Բայց միայն ադայ, բիլայ եւ քիլայ.
Ախ, ե՞րբ իցէ, զի արժանի եղեց վերըստին
Ճաշակել զպուղս իմոյ պարտիզին:
Առ զամբիւղ, և այլն:

Ապա, դուք լաւ տիկնայք՝ զամբիւղս իմ առէք,
Դիւղական աղջկանս սիրով օգնեցէք.
Զի դարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր շնորհօք՝
Զերախտիս ձեր առեալ դովեցից բազմօք:
Առ զամբիւղ (3) յօտար աղջկանէս:

40.

Առ մանկունս Գողթան.

Գողթան մանկուի, ահա ձեզ
Շքեղ փառաց ասպարէզ,
Օն փութացէք, խումբ կազմեցէք.
Պսակ անթառամ մնայ ձեզ:

Գիտէք ոյք են ձեր նախնիք,
Բանաստեղծից էք որդիք,
Որ քնարով ոսկի լարով
Հայրենիքին փառք բերին:

Գուք ամենից էք զրկուած,
Փառքեր ունիք, բայց կորած,
Հայ եղբայրներ են մերկի քաղցած,
Եւ Հայրենիք մաւերած:

Գիտէք զփառս ձեր նախնեաց
Թագաւորաց, իշխանաց,
Որք նիզակօք սուր սուերօք
Հայաստանին փառք բերին:

41.

Գոռող թշնամոյն երթանք կործանենք,
Զքնաղ յաղթութեան մրցանակ առնենք,
Հայրենեաց փառքն յաւէտ շողշողայ,
Եւ ամենելին չը նսեմանայ:
Հայրենեաց սիրուն ջահը թող վառի,
Մեր սրաերու մէջ երբէք չը մարի:

42.

Անձուկ Հայ մանկանց Ա. Պօլ-
սեցւոց.

Գիշեր ցերեկ կհառաչեմ,
Ախ, Հայաստան, բո սիրոյդ.
Նախնի փառաց վեհ քաջերուդ
Լոյն է մարէ, ի՞նչ օգուտ:

Կարօտ մնանք սարիդ, դաշտիդ
Եւ ոսկեգոյն արևուդ,
Միայն առ Տէր այս պաղատիմք,
Որ ունենայ առ մեզ գութ:

Գիտնայ և բաղդն, զի Հայ մանկունք
Զեն դիմանար այս ցաւուն,
Քեզի համար մեր աչքերից
Հոսէ արցունք զօրն ՚ի բուն:

Քեզի միայն մենք կյիշեմք,
Թէ քուն ըլւամք, թէ արթուն,
Տրտում, տխուր միշտ քեզ երգեմք
Այրած հոգով մեր կեանքում:

Շատ ուհիներ թէպէտ տեսանք,
Բայց մեր սրտեր քեզ սիրեց,

Սոխակ Հայաստանի Ա. հասոր, Ա. գ.

4*

Ո՛հ, չեմք գիտեր առաւօտուն
Մեր ցաւն ի՞նչպէս քեզ տիրեց:

Քո բերդերուդ արդեօք սե քօղ
Անդթարար ո՞վ ծածկեց,
Ախ, ո՞վ էր նա, որ մեզ քեզնից
Գերւոյ նման իսկ զրկեց:

43.

Տիկ Հին.

Գիշեր ցերեկ կըհառաչեմ, ախ, օրիորդ, քո սիրուդ,
Աւաչքերուդ, վարդ այտերուդ զարնուեցայ, ի՞նչ օգուտ,
Աչքերուդ, այտերուդ և ոսկեթել մազերուդ,
Միայն քեզ սա կ'աղաչեմ, որ ունենաս քիչ մը գութ:

Գիտե՞ս, անգութ որ պատանին չի դիմանար աս ցաւուն,
Քեզի համար ալ չի դադրիր աչքիս արցունիքն օրն 'ի բուն,
Քեզի միայն կ'յիշեմ թէ քուն ըլլամ թէ արժուն,
Թէ մութ ըլլայ, միտքս կու գաս նոյնպէս և առաւօտուն:

Կատ աղուորներ թէպէտ տեսայ, սիրտս միայն քեզ սիրեց,
Ոչ, չեմ գիտեր, թէ քու սէրդ սրտիս մէջ ո՞վ արծարծեց,
Ախ, քու խաթուն մարիկդ իրէն փիսայ ո՞վ ընտրեց,
Գերի կըլլամ քու մօրկանդ, եթէ զիս դուրս չի ձըգեց:

Ո՞ւր էր, որ սա աղջիկը ինձի ըլլար ամուսին,
Խիստ երջանիկ Պէյերու պէս ապրեինք 'ի միասին,
Թոմապուլիկ կըորիկ զաւկըներիս մեր չորս դին,
Ես ծխէի իմ սիկառս, ասզնեզործէր իմ տիկին:

Քեզի համար թափառական ես սար ու ձոր ընկեր եմ,
Քեզի համար ճըզիկ ճըզիկ ոսկու ու մօրթ եղեր եմ,
Ալ բաւական իս խոցես, ահա՛ ոտքդ ընկեր եմ,
Ըսէ ինձի բառ մ'երջանիկ, թէ ես ալ քեզ կըսիրեմ:

Եկրայշաւոյ:

44.

Տաճկաստանցի Հայի վիշտը.

Գիտեմ, խեղձ Հային չեն տալ Հայաստան,
Մեզ ազդ կազմելու ամէնքն են խափան,
Նախանձ, քէն և ահ տիրել է հոգին
Դէպի Հայերուս շատ ու շատ ազգին:

Թէ թուր վերցնէինք՝ մեզ պիտ' մորթէին,
Ոչոք պիտ' ելլէր պաշտպան խեղձ Հային,
Երբ որ լուռ կեցանք մենք խոհեմաքար,
Ասին «մեռել էք հոգեպէս խսպառ»:

Ի՞նչ անենք ուրեմն, ի՞նչպէս փրկուինք,
Մեզ հալածողէն մենք ո՞րտեղ փախչենք,
Հայութեան անուան խարանած կընիք
Հայի ճակատին կոխել են մարդիկ:

Վեց հարիւր տարի մենք կիսակենդան,
Կը սողանք տրորած ճըզուի նման,
Փոխան շիջելու նախանձը մարդոց՝
Սաստկացաւ, աւաղ, զերդ հրդեհ ու բոց:

Կուզեն որ Հայքը մեր սուրբ հաւատոքէն
Ճրաժարուինք, ինչպէս մահացու մեղքէն,
Մեր լեզուն, մեր ծէսքնըշանք ազգութեան,
Երբէք չըիշուին ի մէջ մարդկութեան:

Կըրնա՞մ ուրանալ ես իմ՝ պապերուս,
«Մօրդ ատէ՛» խրատել Հարազատ որդուս,
Իմ ձեռքով պըղծել իմ՝ սուրբ աւազան.
Ազգուրացն, ասէք, չէ՞ վայրի գագան:

Ի՞նչպէս կը կընամ ես աալ մօռացման
Քո սուրբ յիշատակն, Մամիկո՞ն Վարդան,

Ո՞ր ազգի պատմիչք ըրսու հինգ հատցուցին
Նման մեր անմահ զեռնդ երէցին:

Չէ, անհընար է ազգէն հրաժարուել,
Ինչպէս որ միսը ոսկորէն բաժնել
Սինլըքոր կըմնամ, ստոր ու ատած,
Բայց ես չեմ լինիլ երբէք ազգուրաց:

Գամառ—Քաթիսպա:

45.

Գերի Հայի աղօթքը:

Գո՞հ ենք քեզնից, ո՞վ բարեբար,
Օրհնեալ լինի միշտ քո անուն:
Թո՞ղ արդար արելդ այդ լուսավառ
Բերէ իւր հետ մեզ փրկութիւն:
Ոհ, ուրախ օ՛ր շընորհիր, Տէր,
Մեր խղճալի հայրենիքին:
Նորա սիրուն սարեր, դաշտեր
Օրհնումեն քեզ եռանդագին:
Սի՛ տար, Ա՛ստուած, որ կործանուի
Կուսակրօն Հայոց աշխարհ.
Թո՞ղ քաղցր անուն Հայաստանի
Սնայ կենդան միշտ մեր համար:
Բաց մեզ զուռն քո ողորմութեան,
Յեսու, Մովսէս մեզ ուղարկիր,
Որ այս գմնեայ Եղիպտոսից
Աւետեաց մեզ տանեն երկիր:
Ո՛հ, այն աշխարհ, ուր առաջին
Քարոզեցաւ Աւետարան
Փայլեց դրօշը ծիրանածին:
Կանդնեցաւ Խաչ քրիստոսական,

Ուր նուիրական Նահատախներ
Դէմ վիշապին զնուորեցան,
Պատերազմի կանաչ դաշտեր
Նոցա արիւնով ներկուեցան:
Ուր Հայրեր մեր երանելի.
Գրիգոր, Ներսէս, Մեսրոպ, Սահակ,
Մեծարեցին անուն ազգի,
Եւ ննջեցին ծաղկապսակ:

Ա. Շահաղիզեան:

46.

Քեասիր գիւղացիներին.

Գարունը եկաւ,
Հողը փափկացաւ,
Եւ ուժ լծնանի
Գուժմանը պատրաստի
Ճլվացն ընկաւ:
Առաջ մաճկալը
Բացեց բերանը—
Ա, Առաւել ձեզ զուրբան,
Ակօսդ էս օրուան
Ոսկու անման,
Զա՞ն տուէք, մատաղ,
Ակօսին սաղաղ,
Մենք ցելն անենք,
Աստուն բաշխենք...

Աշունքը եկաւ,
Շօք—բուքը անցաւ:
Արօն ու յաքանը
Հազիր կայ դրանը.
Մին մնով դիման—
Մերմը զուրս տարան:
Գիւղացին չժեկ

Եւ ցելը սերմեց: Առաջ դողում է.
— բերանը բացեց,
Երկու խօսք ասեց: — Երգը հնձվորի
,,թէ պարտքահան ըլեմ, Սիրտ բանում է:-
թէ հորերս լցնեմ, Հունձ արա, տղայ,
իմ յոյսն ես դու,
Բաժին ես հոգու:
Դէ՛ ծլի՛ր, կանաչեր,
Խղճա՛քեասիրին,
Աչքդ բա՛ց, մոլի՛կ
Տկոր խիզանիս...
Վերև՛ ու ներքեւ,
Երկի՛ր ու երկին,
Ծարաւ մի՛ թողնեք
իմ յոյսցանածին....,

Այժմ էլ ձմեռը.
Կապուած է աշխարհը.
Լցուեցին գոմերը
Եզն ու կովերը.
Գիւղումը լուռթիւն—
Չկայ ձէն ու ձուն:
Մի մութ դօւօդից
Լովումէ ձայներ,
Մտած են այնակղ
Պարապ մարդիներ-
Ասումէն սրւնդլ'ր.-
,,Հէրը դուզ մէրը կէռ,
Տղէն խելօք, թոռը զիժ:—
-իս ի՞նչն ա...
-բաղն ա:

Արևը այրում է.
Արաը մանգաղի

Առաջ դողում է.
Երգը հնձվորի
Սիրտ բանում է:-
,,Հունձ արա, տղայ,
Բաժին ես դու:
Սիրտ բաց արա:
Հնձենք ես տախտը-
Գնանք շվաքը.
Սիսորաքայախ
Մի քիչ խալշենք,
Մրաներս հովացնենք:,,

Կալերը թորինեցին,
Գղերը կանգնեցին.
Հաշմնը սկսուեց.
Եղները լծեցին,
Գիւղացին երգեց:—
,,Ե՛զը ջան, կա՛լ արա,
Կալիդ ման արա,
Տո՛ւր ինձ ցորենը,
Ա՛ռ քեզ դարմանը.
Մարաքը կը լցնեմ,
Զեզ կուշտ-կուշտ կ'պահեմ:,,

Կալի մէջ մաքուր
Ցորենն է թեղ տուած,
Եւ մի հաստափոր
Կողքին է կանգնած:
-Դէ՛ չափենք, Հանէս,
Ցորեն շատ ունես.
Հինգ թաղար թէ վեց
ինձ չէ՞ որ պարտ ես:...

Յուրտ է և սրառու,
Կա՛պ է դուռն և կտուր,
-Յօ՛, մարդ Աստուծու,
Խնչ ես փիքր անում:
Գնա՛ Տէրտէրանց
Ոտի տակն ընկի՛ր,
Եւ մի թաղար հաց
Խր շահովն ուղի՛ր:
Մարդը դուրս գնաց
Արտասունք դառը
Աչքերում ցոլաց.
Եւ այն տան մայրը
Համ իլիկ մանեց,
Համ բարակ երգեց:
-Յա՛ռա, տա՛ռա,
Զին ա գալի
Բախրի փալինք շաղ ա տալի,
Սարի սմբուլ վէր ա գալի.
Խեղճ մարդիերանց սև սիրտ տալի.
Խեղճ ու նաշար, վայ ձեր օրին
Էրնակ կը տաք գարեհայցին....,,

Աղեքս. Արարատեանց:

47.

Չ ա ղ կ ա ձ ո ր *)
(Աւանդութիւն)

Գարուն էր: Զիրնը, սառուցը հալուած,
Ամէն տան գռներ, երդիկներ բացուած,

*) Ծաղկաձոր, որ այժմ տաճկաց լեզուի Գարաչիչագ է ասվում, գեղեցիկ Հայաստանի ամենագեղեցիկ տեղն է, որն այս օրուայ օրս, ցաւելով պէտք է ամել, մարդկային ազգի մրուն է ափառականել:

Արել վերէն վայր նայում էր հաշտ,
Ծիծաղում էին ձոր, հովիտ ու դաշտ:

Հայոց աշխարհը սիրուն է գարնան,
Նա եղեմական դրախտի է նրման,
Սոխակ ու արտուտ թրփի, արտի մեջ
Օրնիբուն սաղմոս կարդում են անվերջ:

«Քոյրե՞ր, խաղալու ձորնիվայր երթանք»,
Ասացին իրար անմեղ հայ կուսանք.
Պահծու երփներանդ հագան նոքա շոր,
Պահազարդ գնացին ուղեղ դէպի ձոր:

Գոյն գոյն հալաւով ձերը փռուեցան,
Խաղով, պարերով կուշտ զռուարձացան...
Պանիր, կաթ ու հաց հետերն ունէին,
Խորտիկի նստան ժամ միջօրէին:

Ինչպէս չար բազէն անմեղ թռչնակին,
Այնպէս դարանած զունդ տուփոտ Պարսկին
Ական թօթափել աղջբկանց վըրան
Սըրով ու զէնքով արագ թափեցան:

Հայ պարկեցտ կուսանք խոստմանմխերիմ,
Որ տուել էին հայ փեսաներին,
Մահաբեր սուրէն չի սարսափեցան,
Արխնաթաթաւ դետնին գլորուեցան:

Արել ինկաւ սարերի թիկունք,
Մայրերը ասին «ո՞ւր են մեր աղջկունք».
Այսպէս հոգետանջ ու մրտամոլոր,
Շուտ շուտ վագեցին նոքա դէպի ձոր:

Ամէն մի բըլուր, ամէն մի առուակ
Ծածկել էր աղջկայ զարդարուն դիմակ:

Ամէն մի տերև, ծառի ամէն ծիլ
Ներկել էր աղջկայ արեան ջննջ կաթիլ:

Ծընողք շատ լացին ու չի սփոփեցան,
Ընկան գետնի վրայ ու խոր քընեցան.
Միւս առաւտօտ աչքերն որ բացին,
Տրտմել դադրեցան ու էլ չի լացին—

Ամէն մի բըլուր, ամէն մի առուակ
Ծածկել էին վարդ, շուշան, մանուշակ,
Ամէն մի տերև, ծիլ բանջար ու խոտ
Բուրկենի նըման էին խնկահոտ:

Ու այնուհետև ամէն նոր գարուն
Զորն այն ծաղկունքով է միշտ դարդարուն,
Եւ այդ չարաշուք օրից մինչ այսօր
Զորի անունը մընաց ծաղկաձոր:

Գամառ—Քաթիպա,

Ոգալի մահ Զէյթունցի պատանւոյ.

Դու զո՞վ խնդրես, մայր իմ անուշ
Ե'կ, մի' գողար, մօտեցի՛ր հոս.
Անլաց աչօք դիտէ զորդիդ,
Ու իւր վէրքերն արիւնահոս:
Թըրքաց մայրեր թո՞ղ լան՝ ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր 'ի Զէյթուն:

Ինչպէս երբեմն որրանիս մէջ,
Կակուղ ձեռամբ փայփայելով
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր,
Երբեւ հրեշտակ նուազելով:
Զիս հանգչեցուր 'ի հող՝ ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր 'ի Զէյթուն:

«Ասրեկ որդւոյս կենացն արև
Զեղի համար վայլի, Հայեր».
Այսպէս յայնժամ գու կ'երգէիր
Օրօրոցիս նստեալ քովեր:
Անմայ համար շիջաւ, և դուն
Ուրախ լուրեր տա՛ր՝ ի Զէյթուն:
Կարմիր կայլակք ցայտին վէրքէս,
Սակայն, մայր իմ, նայէ՛ չորս գին,
Զարիւնըուշտ բիւրտերն տե՛ս,
Հազարներով փուռւած գետին:
Կերաւ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր՝ ի Զէյթուն:
Ինչպէս վիշապ մըուընչելով՝
Յանկարծ մեր վրայ յարձակեցան,
Յընցեց Զէյթուն զլուխն ժայռոտ,
Խը վեհից մէջ թօթափեցան:
Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր՝ ի Զէյթուն:
Ու Ծափ զարկին մեր հարց ըստուերք,
Զի չէ մեռած չայոցս կրակ,
Ու ցնծացին այնչափ զոհեր,
Զի լուծաւ վըէժ յարեան վտակ:
Խնդաց Մասիս, մայր իմ և դուն
Ուրախ լուրեր տա՛ր՝ ի Զէյթուն:
Վերջին համբոյր տամ քեզ, մայրիկ,
Հաստուցնես զայն սիրուհւոյս.
Վերջին անգամ զրկեմ մեր հող,
Ոյր արդ կիջնեմ՝ ի ծոցն անլոյս:
Խաչ մի տնկէ վըրաս՝ ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր՝ ի Զէյթուն:
Մ. Պէտքթաշլեան».

49.
Թաղումն Զէյթունցի պատանոյն.
Պար Զէյթունցւոց.

Ոչ փող զարկինք, ո՛չ արձադանք լեռնասոյզ,
Սարէ՝ ի սար չարաշըշուկ տարին լուր,
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտայոյզ՝
Երբ պատանւոյն բայինք մըուայլ փոսին դուռ:

Գիշերական մունչ ըստուերներ շուրջ կային,
Երբ որ սըրով բըրով զհող փորեցինք,
Լուսին միայն դողդող շողար մեր գլխին.
Մուգ էր պատեր լըդ դաշտ, բըրւոր և երկինք:

Պէտք չէր դագաղ և ո՛չ ձերմակ պատանքներ,
Որով գոյցուէր աղասորդի Զէյթունցին.
Նա յետ մարտին կարծես հոգնած կու հանդչէր,
Ու վերարկուն կարմիր բա՛ւ էր իւր անձին:

Անձայն ու կարծ ննջեցելոց մի զրուցեց
Մեր քաջ Տէրաէրն, զինուոր Հայոց ՇԱՍՏՈՒԾՈՅ,
Գովեց զմահն և զքաջութիւն իւր օրհնեց,
Թոյլ չի տուաւ հառաչ մ'ու Ճիչ հանելոյ:

Բայց երբ զլուխն ՚ի բարձ դըրինք հողաշէն
Տեսանք զգեղ ճակաբն ու վերըրն պայծառ,
Ո՛վ պատանեակ, ըսինք առենքս մէկ բերնէն,
Վասն հայրենեաց մեռար, դու շատ ասպիցար:

Գլնա՛ զրուցէ՛ հայկազարմից մեծ ոգւոց,
Որ կան այստեղ աղաս ու քաջ դեռ Հայեր,
Որոնք ի բիւր պատերազմաց թէպէտ խոց
Մէջ ամպրոպաց ՚ի ժայռ կանգուն են կեցեր...

Մէջ մ'ալ քամի յանկարծ փըսեց ցրտաշունչ,
լուսնին շղերն եկաւ դոցեց մըթին ամպ.
Ու մեր սարերն զերդ ուրուականք անմըռունչ
Սև դըռուխնին անկած դիտեն ապշութեամբ:

Յայնժամ ցուրտ ցուրտ հողիցուցինք իւր վրան,
Խաչ մի զըրինք, ինչպէս իւր մօր պատուէր ետ,
Ու այլ շըքեղ արձանագիր ոչ տուպան,
Զինքըն մինակ թողուցինք իւր փառքին հետ:

Ա. Պէշիքթաշեան,

50.

Դու տեսե՞լ ես երկնքումը պայծառ լուսին ծագելիս,
Կամ թէ կանանչ տերեկ մէջ կարմիր ծիրան փայլելիս:
Դու տեսե՞լ ես ծաղկոցումը կարմիր վարդը փըթըթած,
Շուշան, մեխակ ու նունուֆար չորս բոլորքը պար բունած:
Բայց լուսինը խիստ խաւար է չայ աղջկայ առաջին,
Ծիրան, մեխակ ու նունուֆար չարժեն նորա մէկ պաշին:
Երկու թըլին վարդ են նստել ճերմակ ճակտին մի շուշան.
Ժայիտը բերնից ցած չի գալիս,—անմեղութեան է նշան:
Տես, նա առաւ կարմիրով իւր ընկերից դահիրան,
Գրըմդրմեցուց փափուկ մատով ու ըսկսեց լեզգինկան:
Նաղուք մէջքը ծառի նըման տատանումէ գեղեցիկ,
Մէկ թուչում է նա անդուման, մէկ գնում է խիստ հեզեկ:
Հալվում է խեղճ կորիճների սիրտը նորան տեսնելով
Ճերը իրան անիծում է, որ ծերացաւ խիստ շուտով:

Ա. Պատկանեան:

51.

Կանանց բաղրը.

Դուք տեսե՞լ էք վանդակում Որ յուսահատ երդում է,
Խղճիկ թռչուն բանտարկած, Ազատ կեանքից նա զրկված:

Կամ լալիս է կամ լոռում
Կամ խղճալի ձեզ նայում:
Նա ձեզանից, Պարոններ,
Ազատութիւն է խնդրում:

Նորա տիսուր վիճակը,
Աւաղ, մի սիրտ չէ շարժում.
Այլ ամեն մարդ ուրան է,
Նոր նորա ձայնն է լոռում:

Այս խեղճ գերի էակը
Է մսիթար հայ կանանց,
Որ դարձդար խատաբար
Չորս պատի մէջ է փակուած:

Նորանց տուած է լեզու,
Նոքա ունին խելք, իմաստ,
Բայց անողորմ մարդիկը
Նոյց դարձրել են զրաստ:

Այս ինչ այն ինչ գործերում
Կինը խառնուել չէ կարող.
Պատմառ, մարդիկ միմիայն
Պիտի լինին հէնց իշխող:

Կանայք չունին իրաւունք
Ազատ կարծիք մի յայտնել,
Պատմառ, մարդիկ ասումնէն
Կինը չգիտէ բնաւ դատել:

Եթէ ո՛չինչ բանի մէջ
Կինը յանկարծ սխալուի,
Ի՞նչ կայծակներ, Տէր Աստուած,
Խկոյն գլխին կ'թափուին:

Խկոյն թէ բողոք կամ մի ձայն
Հէնց յանկանայ նա յայտնել,
Ամեն կողմից կ'ասեն թէ
Ոչ, մեծ յանցանք է զործել:

Ինչի՞ն կանանց, ո՛չ, Տէր իմ,
Չես ստեղծել դու զօրեղ,
Որ նոքա էլ երևան
Անմեղ, արդար ամեն տեղ:

Ենդուր գո՛հ եմ, երջանիկ,
Ո՛վ յարգելի Պարոններ,
Որ տեսնում եմ ես ձեզ հետ
Կին, օրիորդ, ընկերներ 1):

Տիկին Եկատերինէ Արդումանեանց:

52

Խրախոյս ի միութիւն.

Դեռ նոր հայրենիք, դեռ նոր ազգութիւն,
Դարուս շնորհիւ պարտք և իրաւունք.
Սահման և կշեռ թոթովել որ դիտցանք,
Ո՛վ հայաստանի պանդուխտ զաւակունք:

1) Այս յօդուածը կարդացուած է գրականական երեկոյին 1872 թ.
Բագուհի,, Մարդ. Ընկերութեանու դահմանում. Ա. Գրիգորեանց:

Կինանք արդ զոհել կինանք ամեն բան
Անձնական կրից մասնել անխընայ.
Եւ օտարին շահն Ազգին վասող,
Ո՞վ կրնայ խնդրել, որ այն եղեան Հայ:

Զգոյշ ո՞վ Հայեր, զգոյշ կենանք միշտ.
Քանդի ազգագաւ սլանան նետեր.

Մեր խոցուած սրտերն կրկին խոցելու
Պահենք զայն ամուր սիրոյ վահանաւ:

Միութիւնն ըլլայ զըրահ անվանգ,
Եւ անհամածայն թէ գտնուինք մեր մէջ.

Այլոյ միջամուտ ներենք ո՞չ երբէք,
Ազատ ու հաւսար, ամենքս ալ եղբայր:

Հեռատես, զգոյշ և գործն անդուլ,
Ազգային կամաց հրպատակ անխօս

Այսպէս կրթուի Հայ մանկութիւնը,
Այսպէս պատրաստուի պատանեկութիւնը:

Ու երիտասարդութիւնն ըլլայ աննրկուն,
Անտէր ախոյեան Ազգին իրաւանց.

Ու թո'ղ ծերութիւնն հսկէ լրջամիտ,
Հայոց բաղդն ու Արեւ յուսով ողջունել:

Ա. Պ. Պ. Փափաղեան

53

Ապօլօնի քնարը իմ ձեռքում.

Դեռ նոր ելած Մորիկոսի,
Խաղաղ զոգից (ութ ժամին)՝
Պատրաստվում եմ ներկայանալ
Ապօլօնի ըսպասին . . .

Եւ աշա՛նա իր քընարը
Մեկնեց դէպ' ինձ և տաց.

«Ածի՛ր, որդեակի, զու այն երգը,
«Որին սըրոտի ես սիրած» :

Ձեռքից առի...բայց արտասուք
Ծովի պէս ինձ խեզզեցին...—
Հայի ներկայ սե վիճակը
Պատկերացաւ իմ աչքին:

Հայրենիքի դրութիւնը
Իբրեւ մի սար ահազին
Ծանրացաւ, ոհ, սրտիս վիրայ,
Ճլնշեց, խեզզեց իմ հոգին . . .

Ըուտ լարեցի ես քնարը
Եւ զարիեցի թելերին.

Գրուեց սըրտիս ծանըր սարը
Եւ որոտաց խիստ ուժգին:

Աորա ձայնը զընաց հեռու
Նոյնպէս տրխուր, վըշտազին,
Անբաղդ Հայի ցաւն ու վիշտը
Յայտնեց ամբողջ աշխարհին . . .

«Ի՞նչ ես անում», գոռաց յանկարձ
Ապօլօնը զարմացած.

«Սուզր լաց, վա՛շ ա՛խ, կըսկիծ, մըրմնւնց
«Այդ է երգը քո սիրած. . . .»

«Տո՛ւր քընարը. նա չէ միայն
«Արտայայտիչ վըշտերի, —
«Այլ գորանով պիտի գովուի
«Գեղը գերող աչքերի. . . .»

— «Ա՛ռ», ասացի, «մե՛ծ Ապօլօն»՝
Եւ դարձըրի յետ իրան.

» Շա՛տ եմ երգել ես Երոսին,
« Շա՛տ եմ պաշտել և՛ նորան.
— Շա՛տ եմ քաղել թարմ վարդերից
« Ես Աստղկան զըբախտին,
« Շատ եմ խաղել Ադօնիսի
« Դերը նորա առաջին. . .
— « Բայց ոյժը ոչ, հայր ողորմած. . .
« Քանի պառաւ Հայաստան
« Կըրում է իւր ուսի վերայ
« Ճնշող լուծը Տաճկական.
— « Քանի թուրքը կապած ունի
« Թըշուառ Հայի ոտք ու ձեռք,—
« Քո քընարը էլ իմ ձեռքում
« Չէ հընչելու սիրոյ երգ...»
— Ապշած աչքով Ապօլօնը
Երկար նայում էր—անխօս...
Վերջը թողեց իր քընարը
Եւ վերացաւ ոլիմպօս:

Սիմէօն Սափարեանց:

45

Թատրոնական երգ:

Արիացի՛ր, դոնեայց երգի եղանակով.
Եկայր, ընկերք, սիրապէս
Կատարելու մի հանդէս,
Ա. Հա՛ շքեղ տեսարան:
— Շնորհիւ Ռուսաց Արքային
Մէնք ազատ ենք դրիմովնն՝
Ոիրել մեր Ազգ և կրօն:

Թա՛ղ, ուրեմնն, իմ Հայեր,
Արիանան ձեր սրտեր՝
Գովել մեր Հայրենիքը.
Պատճառ, նորա սուրբ հողը,
Միրդ և պտուղ և ջուրը
Օրհնեալ է մեր Արարէն:
Դէ՛հ, ուրեմն, շուտով մէնք
Հայ ազգի կենաց խմենք,
Օ՞ն, մի ծափահարութիւն:

55

Կիլիկիա.

Երբոր բացուին գոներն յուսոյ,
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Զքնաղ երկինս մերս Արմենիոյ,
Երբ փայլէ իւր քաղցրիկ օգեր:
Երբոր ծիծառն ՚ի բայն դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերեւ,
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Տեսի զաշտերն ընուրիոյ,
Լեռն լիբանան և իւր մայրեր.
Տեսի զերկինս փայլեոյ,
Վենետիկ և իւր Կոնսոլներ:
Կղզի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ.
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կտյ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կաւարտի.

Սոխակ Հայաստանի Ա. հատոր. Ա. Գ.

5*

Հասակ մը ուր հէզին 'ի տենչ.
Յիշատակաց իւր կարօտի:
Յորժամ քնարս իմ ցրտանայ,
Սիրոյնտալով վերջին բարես.
Երթամ ննջել յիմ սիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արե:

56

Կենաց բաժակ.

Եղբարք՝ մի շուրջ ժողովեցէք,
Քաջ Հայոց կերպի կոնծեցէք,
Բաժակները դարդեցէք
Մեր Հայ ազգի կենացը:

Հայոց երիտասարդներուն,
Հայրենիք պաշտպանողներուն,
Որոց անկումն էլ սուրբ է մեզ—
Այս բաժակը նըւիրենք:

Հայ աղջեներու կենացը,
Ոք միայն Հայ մարդ կու սիրեն,
Միշտ իրանց մաքուր կու պահեն.—
Այս բաժակը դարդեցէնք:

Արանց, որ մեր սիրուն գրաւում են,
Մեղ զգօն ճամփով վարում են,
Որոց կեանքը մեզ օրինակ,—
Մի երեակ «կեցցէ» ասենք:

Եղբարք, որք այժմ աւարտել են,
Մեր ուխտի անդամ եղել են,
Որոց ուխտը միշտ սիրում է—
Այս բաժակը նըւիրենք:

Եղբարք, որք դարդից ազատ են,
Մահուան հանգիստ վայելում են,
«Ողորմի հոգուն» ասելով
Այս բաժակը նըւիրենք:

Բայց որ զեռ զինին փայլում է,
Ու մեզ իրան մօտ կանչում է,
Բաժակները դարդեցէք
Բոլոր Հայի կենացը:

Ա. Պատկանական:

57

Հայաստանի Սոխակին.
«Ծագեա հեղիկ» երգի եղանակով.

Երգիք, Սոխակ Հայաստանի,
Քո քաղցրաձայն երգ սիրալի:
Թուիք, պատմիք դու, մեր Սոխակ,
Հայոց ազգին այս յիշատակ:

Երգիք նոցա այս մեր հանդէս, (*)
Որ տօնումենք մեր սիրապէս:

Ասա՛ խումբ խումբ Հայ զաւակներ
Երգեն ահա՛ այս մաղթանքներ:—
«Կեցցէ մեր այս Ընկերութիւն,
Որ տալիս է մեզ կրթութիւն:

Կեցցեն Սորա վեհ Անդամներ
Աղնիւ գործընդ շատ տարիներ:»

Ա. Գրիգորիանց:

(*) Գրուած է 1872 թ. Բագուի Հայոց, Անդամներ
կան Ընկերութեան,, իններբորդ արժադարձի ասթիւ և
երգված է նոյն տօնի հանդիսում Հայոց ուստի նարանի
ուսանողներից:

Ա. Գրիգորիանց:

58

Երազ.

Ես լսեցի մի անուշ ձայն,—

Իմ ծերացած մօր մօտ էր:

Փայլեց նշոյլ ուրախութեան, բայց բայց
Բայց ափսոս, որ երած էր:

Կարկաչահոս աղքիւր այն տեղ

Թաւալում էր մարդարիտ.—

Նա յստակ էր որպէս բիւրեղ,

Այն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղեդին տխուր, մայրենի

Յիշեց մանկութեան օրեր.—

Մօրս համբոյրն ես զգացի,—

Ախ, ափսոս, որ երազ էր:

Կուրծքին սեղմեց կարօտագին.

Աչքերս սրբեց—շատ թաց էր,—

Բայց արտասուք գնում էին

Ախ, այդ ինչո՞ւ երազ էր:

Ա. Շահագիզեան:

59

Գրենադերներ.

Երկու գրենադեր գնումեին Ֆրանսիա,

Որ գերի էին հիւսիսում ընկած 1).

Եւ երբոր եկան, հասան գերմանիա,

Այնտեղ թեքեցին գլուխներն վասակած:

Այս տեղ լսեցին այն տխուր վէսքը,
Թէ նոցա սիրուն Ֆրանսիան կործանուած,

Յաղթուած ու ջարդուած քաջապուն զօրքը,
Եւ կայսրը, կայսրը 2), թշնամուց գերուած:

Կոքա միասին լաց էին լինում,

Այդ արտասուելի լսելով լուրքը.

Վայ, ասաց մինը, «ի՞նչպէս է ցաւում,

Ի՞նչպէս է այրում, ախ, իմ հին վէրքը»:

Երկրորդը ասաց. «վէրջացաւ բանը,

Եւ ես կամէի քո հետ մեռանիլ,

Բայց կին ու զաւակ թողել եմ տանը.

Նոքա առանց իմ կարող են կորչել:

«Ի՞նչ փոյթէ ինձ կինս, որդիքս ի՞նչ փոյթ են,

Սրտիս բաղձանքը աւելի լաւ է.

Թող գնան, հաց մուրան, եթէ սոված են,—

Կայսրը, իմ կայսրը գերի տարած է».

«Կատարի՛ր, եղայր, իմ մի խնդիրքը,

Եթէ ես այժմ մեռնիմ այս երկրում,

Տա՞ր դէպ ՚ի Ֆրանսիա դու իմ դիակը,

Թաղի՛ր ինձ այն տեղ Ֆրանսիայի հողում:

«Կարմիր թելից կախ պատուանշանը,

Դի՛ր դու քո ձեռով իմ քաջ սրտի վրայ

Եւ աջ ձեռս տուր իմ հին հրացանը,

Այլև իմ սուրս կապի՛ր մէջքիս վրայ»:

«Եւ այսպէս պարկած, ականջ կը դնեմ,

Ի՞նչպէս պահապան, գերեզմանումը,

Երբ թնդանօթի որոսք լսեմ,

Այլև խրինջող ձիերի տրովը

«Եւ կայսրը կանցնէ իմ վերայ ձիով,

Եր շառաւեն սուրեր, և նոյն բոպէին

Իմ գերեզմանից դուրս կրգամ զէնքով,—

Եւ կը պաշտպանեմ կայսրին, իմ կայսրին»:

Թարգ. Գ. Բարխուդարեանց.

1) Առուսիայում; 2) Այսինքն Նապոլէօն առաջինը.

60

Մշեցու նոր սերունդ.

Երբոր մայրը երկունքով
Աշխարհ բերէ երեխայ,
Հայրը որդուն մի ողբած
Պիտի գաշոյն տայ ընծայ:

Երբ երեխան մեծենայ,
Խաղալիկներու փոխան
Հայրը ձեռքը պիտի տայ
Մի մահարեր հըրացան:

Երբոր արդին վարժառուն
Գայ ժամանակ երթալու,
Նախ սուը խաղցնել, և ապա
Պիտ սորվեցնունք կարգալու:

Կարգալ—զըրել լաւ բան է...
Բայց որ հասաւ քըմնութիւն,
Աշակերտին հարցուցէք—
Վոթել զիտէ՞ նա արխան:

Լոկ զուք այսպէս յուսացէք
Փըրկիւ խըզձուկ Հայաստան...
Ազատ անկախ մարդ երբէք
Այնելու չ մուրացկան:

Գամանու Քաթիսա:

61

Որբ Հավելուհի.

Առ եմ որբիկ խեղջ հօվուհի,
Աշխարհս է այն զեղ—մարդը

Շունս է միայն ինձ սիրելի
Եւ ընկերու գառնուկը:

Իմ զարգս են այս ծաղիկները,
Եւ հայելիս՝ պարզ վտակ,
Պատսպարանս՝ անտառները,
Լապտերս՝ վառ արեգակ:

Ադամանքս ժայռ քարերը,
Եւ թանգ ոսկիս անթառամ—
Մետաքսենիս՝ կանաչները—
Փափուկ, մաքուր, ուստուական:

Ես պարծենալ չեմ կարող չեմ
Որ և իցէ ուսումնավ,
Միայն քաղցր երգել զիտեմ
Եւ կեանք վարել սուրբ սրանվ:

Այլ ևս ինձ բաներ պէտք չեն
Այս աշխարհի նեղ կեանքում—
Ոչ հայր, ոչ մայր և ոչ եղբայր,
Ոչ Հայրենիք և ոչ տուն:

* * *

62

Իքաջութիւն Հայկայ.

Երկինք զուարթ ակնարկեր
Նահապեան ՚ի սիրտ ցնծայ,
Զանձն Աստուծոյ ՚ի նուեր,
Յա՛ր և կենօք Ճոխանայ,
Աստուածապաշան ՚ի յասպարեզ
Գոռոզն ինքնին կորանայ:

Արուեստմատանց մերնախնուոյն
Եչերձ ՚ի զբահ երկաթի,

Որ կամեր առնուլ պաշտօն,
Կործան արկանել երկրի.
Գիւցակրօնից սա պարագլուխ
Էտո զեւր վարձն արժանի:

Բռնակալին գուժ մահու անազանասով
ՅԱսորեստան հնչէ շոյտ,
Որդէս ալիք խիստ ծովու աղմանը,||
Մարդիկ խմբին 'ի մի կոյտ,
Բռունք երկրի խրախոյս բառնան
Բռունք արկանեն զգինու:

Այլ պինդ ձայթ մունք աղեղանց
Քաջականգուր հսկային,
Հանգոյն ահեղ որոտմանց
Պակոյց զսիրտ ամբոխին.
Ուր հզօրաց ձեռք թուլացեալ,
Փախչել, թագչիլ գիմենի:

Եկայք, սերունդք, սոյն վեհիս
Ձօնել նմա շուրջ պատկ,
Զմեր քաջութեան արգասիս
Յանմահ փառացն յիշատակ.
Զի ծանիցէ աշխարհ զմեղ
Թէ եմբ նորա իսկ զաւակ:

63

Ազգամեր.

Երբ պանդոկումն եմ ու իմ յանդիման
Կան կերակուրներ թանգ ու պատուական,
Միթէ չեմ յիշում վիճակն իմ ազգին,
Չեմ ասում «Հայեր, օգնեցէք հային»:

Թռատրօնում նըստած առաջի կարգում,
Ու մըտքիս միւսպէս խորհուրդ են ծագում
Կըսպոց թէստրօն. Հայոց զօրք. ուսում.
Չեմ ասում «Հայեր, գաղթեցէք Արգոսւմ»

Կալուածատէր եմ, տնտեսը իմ տան
Հաւաքեց բերեց ինձ փող բաւական.
Ես չեմ հասկանում ազգիս հանգամանք,
Չեմ ասում «Վանին խիստպէտքէ միբանք»:

Մահիճը կակուզ վրէս տաք վերմակ
(Ես շատ բարի եմ քընի ժամանակ,
Մանաւանդ երբոր փորս էլ է տրկուած)
Չեմ ասում «Հային տըւելք խորշ ու հայ»:

Որն է միգաւպատ, տակոր թաց ու ցիւս
Բեռնակիր մշակը ուաքն չունի տըրեիս.
Տաք տեղից ասած չեմ հաղար անգամ
«Չէր երկաթուղի չունի հայաստան»:

Վընկաս չորս կանգուն կերպասէ աղին
Որքան լաւ բաներ բերեց իմ մոքին,
Զասացի հային «Ձեր համար յըլատ,
Իսկ եղբարց համար պիտ լինիք ստատ»:

Դուստրս ինտիտուտ, որդիս հօրուստում,
(Ոկանջիր կասեմ այդ է զուտ ուսում)
Բայց երբ զընում եմ ես թուրքիւմայդան,
Հայ զպրոցներին ես չեմ միշտ պաշտպան:

Այսպէս տարիներ ու ամբողջ իւր կեանք
Արել է միայն նա լոկ շաղփաղփանք.
Իսկ զուք, միամիտ, շուտ-խաբւող հայեր,
Անունը դըրիք խելօք ազգամէր:
Գամառ---քաթիպա.

**ԳԵՆԵՐԱԼ ՅՈՒԺԱՆՆԻՍ ԴԱւթեան
Լազարեանցի տապանագիրը***

Երբ մանուկ էի—շորերս պատռտած
Ասեղն էր տալիս ինձ ապրուստ և հայ.
Բայց երբ կատաղի երիտասարդութեան
Արիւնը իմ մէջ ըսկեց եռալ՝
Փշշրեցի ասեղն—և նորա փոխան
Առի զինուորի հըրացան, խանչալ:
Եւ այնուշետե իմ հըզօր ձեռքը
Զարդարեց պատռով իմ ուսն ու կուրծքը:
Ինձնից դոդումը, պէս տերեւ աշնան,

(*) ԳԵՆԵՐԱԼ ՅՈՒԺԱՆՆԻՍ ԴԱւթեան Լազարեանցը ծնված է 1820 թ. Ղարաբաղու Շուշի քաղաքում և կրթութիւն ստացած տեղական արքունի դպրոցում: Նա մի առանձին հպարտութեամբ նայելով այն ասեղի վերայ, որով պարագելիս է եղել գերձակութեամբ, կոտրումէ նորան և մտնում զինուորական ծառայութեան մէջ 1839 թուին: Այդ ժամանակից նա պատերազմական կենաքի դպրոցի մէջ կրթվելով և միանդամայն զրաւելով պետութեան ուշադրութիւնը իրա քաջութեան, ընդունակութեան, հանուչադրութիւնը իրա քաջութեան, համարական զինուորի և աղնիւ բնաւորութեան վերայ, հասարակ զինուորի պաշտոնից սկսած համումէ զեներալ-ադխոտանորի բարձր աստիճանին: Հանդուցեալ Լազարեանցի կինուազրութիւնը և, հետեաբար, նորա պաշտօնական ծառայութիւնների վառաւոր պատմութիւնը թողնումէն իմ համաքաղաքացի պ. Գրիգոր Նիկողոսեանին, որը, աւելի և աւելի մօտիկ կարգութեանին, կեանքին և գործունէութեան, խոսվելով հանգուցելու կեանքին և գործունէութեան, խոստացած է իրա սուր զրչի անդրանիկ աշխատութիւնը նուիրել աղքին «ԳԵՆԵՐԱԼ Լազարեկ և Գաղթականութիւն» վերագրով: Կը ին ժամանակներում, այն է 1879 թուին հանդուցեալ Լազարեանցը Ալմալ-թէքէ անուանված Թիւրք-մէնների դէմ բացուած պատերազմի մէջ ուստաց զօրքին

Քաջ արծուասիրտ ամբողջ Դաղըստան:
Անցան տարիներ.... Ճընշուած Հայաստան,
Ոտք զըսի քո մէջ՝ սարսեց Տաճկաստան...
Ելի մի տարի—և ահա՛ տապան հըսկան...
Կոխեց գոռ մահը Արցախու հըսկան...
Անցո՞րդ, ժանգոսեց սուր և հըրացան,
Կորաւ աշխարհից իմ փառք, իմ նըշան.
Բայց կը մուանա՞յ արդեօք Հիւսիսը
թէ ի՞նչ քաջեր է ծընել Մասիսը....

Սիմէօն Սափարեանց:

Պլասւոր հրամանատար նշանակվելով և տակաւին իրաբաղկի գորութեանը և իրա թրի զնդոցին թշնամուն չզոհած, ի՞նչ ասեմ.... մի խոցով հիւսանդանումէ և նոյն թուի Օգոստոսի 14-ին մեռանում ջաթա կոչուած աեղում, որ գանվումէ կասպեան ծովի արևելեան սահմաններում: Նա մահուան նեղ ձգնաժամին, երբ իրա հոգու քնարի լարերը արդէն խանգարված են լինում, երբ ամեն կողմ նայելով տեսնումէ օտարութիւն, տեսնումէ բացակայութիւն սիրական ամուսնու, որի թանգարին կեանքից թիւն պրկված էր, բացակայութիւն նազելի քրոջ, հավագուց զրկված էր, բացակայութիւն զառնուկ զաւակների և բաղատ եղբօր, բացակայութիւն զառնուկ զաւակների և յետոյ՝ մեծ բազմութեամբ յուղարկաւորումէն թիֆլիս և թաղում վարեկանների, զառնումէ իրա անդրանիկ Աղեքյարգոյ բարեկանների, զառնումէ իրա մօտէ լինում և անդր որդուն, որ այդ ժամանակ իրա մօտէ լինում և ասում. «Сашա, ձայ մի՞ յիշն!....» (Սաշա, ինձ կեանք տուր....)

Հանդուցեալ Լազարեանցի մարմինը Օգոստոսի 20-ին մեծ հանդէսով բերումին բազու և սուրբ Լուսաւորիչ եկեղեցում, նոյն ամսի 21-ին, պատարագ մատուցանելուց յետոյ՝ մեծ բազմութեամբ յուղարկաւորումէն թիֆլիս և թաղում վանքի եկեղեցու բակաւմ Օգոստոսի 27-ին:

Հանդիսատ քո միրմին, պետութեան հաւատաբնմ պաշտօնեայ, աղքի և եկեղեցու հարազատ զաւակ և մարդկութեան նահասակ:

Ա. Գրիգորեանց:

Համապատասխան հոգուն առջև առջակ ջադ
Համապատասխան ծառ առջակ առջակ մազակ:

Ուսանող.

Երբ-որ հողից մարդ գարձայր ՈՒ չեղիլ ուսանող
Երբ Աստուածանից հարցայ Համ է, որումիշա մընար հող-
թէ ի՞նչ վիճակ ես ուղում ից քանց Աստուծոյ լրաց արեւ
Ասի ուսանողութիւն: Ուսանոց առ վայելու:

Աստուած ուղեց զարդարել ՈՒ չեղիլ երգելով.
Ինձ գիտայ շորեր կարել ընկերաց հետ պաշտելով,
Ասի էն դու կանանց տուր, Նա ըզգիսէ ցընծութիւն,
Ինձ մի նըշանագգեստ տուր: Եղուկ սրտին, վայ հոգուն:

Կապտածրգի գրգակ տուր, ՈՒ չեղիլ ընկերաց,
Մէջքս կապէ հատու սուր, Պաշտապան լինել հայրենեաց,
Մառանումքս լաւագինին Վերջի արինը թափելու
Թուղ միշտ անպակստ լինի: Հայրենիքը պաշտպանել:

Իմ սիրելի նազելին Մեղնից էնպէսն հեռանայ,
Սնայ ինձ միշտ հաւատարիմ. Լոյս աշխարհից վերանայ,
Փըլլշտացի ախոյեաննամ, Թուղ ում ուղի կարգն ընկնի,
Տես իմ սուրն է իմ պաշտպան: Մեր մէջ նա թուղ չեղ մըտնի:

Ու. Պատկանեան.

66

Եղեա՛րք, աժից ընկած պողագրով
Կլ աւելի չեմ կարող խմել,
Կարելի է, որ մեանեմ շուտով,
Ուզումեմ շուտով կտակս ձեզ յայտնի:
Ինձ այն զինետանը թաղեցէք,
Որ շատ անգամ ես հարբել, եմ,
Գերեզմանս այնպէս մորեցէք,
Որ տակառի տակին պառկեմ:
Ուսներս պատի կողմն ուղած,
Բերանս լինի լուլի տակ,

Երկու ձեռնով ունենամ բռնած

Ահազին զինով լի բաժակ:

Թաղման հանդէսս մի կատարէք լուր
Պատարագով զանգախերով,
Դիակիս վերայ զինի թափեցէք
Բաժակները չըրըսկացնելով:

Գերեզմանիս վերայ բար չպնէք,
Տակառն արձան է ինձ արժան,
Կարով միայն չորս խօսք զրեցէք
«Հարբեցողի է սա տապան:»

Գերեզմանիս տեսութիւն գալով
Շուտ շուտ ինչպէս լաւ ընկերներ,
Խմ խեղջ հոգուն ողորմի տալով,
Կոնծեցէք լիք լիք բաժակներ:

Բայց դեռ քանի հողիս բերանումն է,
Տուէք, եղբարք, ինձ մի շեշ գինի,
Ամօթ է որ մահու հրեշտակը
Գայ և ինձ հարբած չգտնի:

Յարդմ. կերմ. Գ. Բարիսուղարեանց.

67

Աղէն տանին է.

Զարմանք բան է հինց զիաննամ
Աղէք տանք չին նատում,
Խակի չիլաւ, կուր մի դըմնիմ
Աղալոյին իր տընում:

Մի արմնա, պարուն Արգիս,
Էս աշխարքի ագաթին,
Խշանք, գանա, գու խաբար չես,
Կուր քասիբին կու ատին:

ԱՌ օրինակ՝ թէ մեծավուր
Ապալեանիրը ուսին,
Գայ դրսան մօտ, հարցնէ աղին՝
«Տա՞նն է» .— տանն է, կօսին: —

Ելքա էդնից մի փէշաքար,
Էլք էն նօքրին հարցնէ.
«Տա՞նն է աղէն» . կընծին տալով
Խեղճին խսկոյն դուս կօնէ:

Թէ աղի մօտ լաւ չուրերով
Կուգաս՝ տանը կու գըթնիս.
Վայ թէ չուխէդ հընացած է,
Լաւն էն է, տուն չե մըտնիս:

Թէ սալօպով աղջիկ պարոն
Կուգայ՝ թող ներս հրամայէ,
Թէ զաթիպով պառաւ ջալօն
Հարցնէ — կօսին տանը չէ:

Թէ վուր ձեռիդ քիսա բրոնած,
Պարոնին փուղ բերիլ իս,
Փառք ու պատուով ներս մըտնում իս
Գլխի վսրայ տեղ ունիս:

Թէ դուքանդար իս, հիսաբով
Փուղի էդնից իս էկի, —
«Տա՞նն է աղէն» . կօսին-հալա
Ժամիցը տուն չե էկի: —

Ես է հիմիկուայ ադաթը —
Կուղես ջիզրից արտաքի՛,
Թէ քասիր իս, ջուրը ընկի՛,
Թէ խօջա իս՝ տուն մըտի:

Զարթի՛ր, մայր Հայաստան, 'ի լոյս արփենի.
Նոր առաւօտ շողեաց քեզ շող ծիրանի:
Աւետաբերն եկեալ շեղ 'ի բերանի՝
Զիմաստութեան ձօնէ քեզ սուրբ ձիթենի:
Աղու աղաւնի
Նոյեան Տապանի,

Զարթի՛ր և պսակեա՛ զորդիս գեղանի:
Ծովահայեաց սիրուն կայ անդ հանգըռուան,
Եւրոպէ դշխոյին վերջին դիտարան,
Աբքային մեր թադի գոհար պատուական,
Բիւզանդիոյ երկրորդի Ճառանգորդ անուան:
Անդ և Ճեմարան,
Ազգիս Արամեան:
Դաստակերտ հոյակապ վեհին Խալիսկեան:

Սախիջեան պայծառքազ մեր ծնընդեան,
Ով համբար բազմագանձ վաճառուց Հայկեան.
Յաւերժ դու պանծացի՛ր որդւովք բազմութեան,
Շքեղ քու տաճարօք, խանթիւք գեղազան:
Մեք յնւսու մնարան
Դիմեմք Խալիսկեան,
Դառնամքնաւք ակաղձուն գանձու գիտութեան:

Գ. Ա. Պատկանաց:

Զձայն մանկանց, ով ծէր Յիսուս,
Լուր, որոց դու միայն ես յոյս.
Էջ, երթիցուք քո 'ի սեղան
Եւ 'ի սրտից զբազմարան

Քեզ ծարաւեալ ողիքն մեր,
Արբո՛ նոցա յանոյշը քո սէր:
Լուր մեզ Յիսուս, լուր զմեր ձայն,
Գու զԱզգս օրհնեա՛ և զվարժարանս:
Տես, Տէր, մոտաց մեր զիսաւար,
Եւ ծագեա՛ զլոյս քո հոգեվառ,
Տես 'ի մեր սիրա ախտից դհոյլ,
Յառաքինի ՚ի ջանս եմք թոյլ,
Տուր մեզ զշնորհ քոյին հզօր,
Զի մի՛ 'ի կրից պատրիմք մալոր:
Լուր մեզ Յիսուս, լուր զմեր ձայն,
Գու զԱզգս օրհնեա՛ և զվարժարանս:

Չինւորի երկ.

(Պ. ար գ մանութիւն)

Չինւորիս երգերը, եղբարք, լսեցէք,
Աշխարհիս բաները լս' և ճանաչեցէք:
Մէկն ունի մէծ տներ, միւսն զիւղ ունի,
Միայն խեղճ զինորը ոչինչ բան չունի:
Չորերը թանկագին, փորը միշտ քաղցած,
Տուր ձիուն միշտ գարի, ինքդ կե՛ր չոր հաց:

Թէ քաջ պատերազմես՝ կտան մէծ պարգև,
Թէ սուրբդ կորցնես, կտսեն միստ բարեւ:

Ուր գնամ ես մենակ աշխարհքիս վրան,
Ահա քեզ լաւ վաստակ բասն մէկ տարուան:
Գ. Գողոփեանց

Ե ր գ.

Զէ յժուն, անկախ դու աշխարհիկ,
Գո սար ու ձոր են անառիկ
Ամեն մի քար և անկիւնդ
Շաղախել է քո արիւնդ:
Հէլէ, Հէլէ, Հէլէ, Հէլէ, Հէլէ:

Դեռ ևս քո զօրեղ բազկում
Ոռութենեանց երկիրն է շարժում,
Յիշատակ նախնի դիւցազանց
Պատկերն է քո քաջ զաւակաց:
Հէլէ, Հէլէ.....

Մզրախդ է ունեցած կայքն
Գո ապրուստն է և քո կայքն,
Բռնութեան լուծն զթուրք մարդու
Կո զէնքով ես թօթափել դու:
Հէլէ Հէլէ.....

Կեցցէ Գրիգորեան հաւատը,
Հայ պահել իւր ժողովուրդը,
Ո՛չ մի կրօն աշխարհիս վրայ
Չունի ազատ ոգին սորա:
Հէլէ, Հէլէ.....

Ա. Փ.

Աղասու մօր երգը.

Զարթիր, մանուկ իմ նազելի, բաց այդ պայծառ աշերը,
Թերթերունքէդ քունը թօթուէ, զիրկը հանգիր քո մօրը,
Բաւ քեզ ողբան բարի հրեշտակը հեքաթ ասին երազում
Առխակ Հայաստանի Ա. հասոր, Ա. Գ.

Այժմ արի՛ քեզ այն պատմեմ, ինչ պիտ' տեսնես աշխարում:

Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քնես,
բա՛ց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրլդ իւր բաղդ, փառքը
կեանք ու արևն է տեսնում:

Դուն կըմեծանաս, բօյ կը քաշես—չինար բայիդ ես զուրբան,
քեզ ուժ կըտան Մասսի քաջըր, որ դու լինիս քաջ վարդան,
իմ մասներով մի ոսկեթել մէջքիդ գօտի եմ կարել,
գօտիիցըդ թուր կը կապեմ, այն էլ ինքս եմ արել:

Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քնես,
բա՛ց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրլդ իւր բաղդ, փառքը
կեանք ու արևն է տեսնում:

Մեր բակումը ձի է կայնած՝ քեզ է մընում անհամբեր,
Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես, առ քու թուրը մահաբեր,
Գու հայ ազգը հեծեծում է, ձեռքը, ոսքը շղթայած,
Գու եղբարքը գերութեան մէջ... քաջ, միայն դու ես քընած...

Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես,
բա՛ց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրլդ իւր բաղդ, փառքը
կեանք ու արևն է տեսնում:

Զէ, իմ որդին շուտ կըդարթի, ձին կըհեծնէ սանձակոծ,
Հայի արցունքը կըսրբէ, կըդարբայնէ լաց ու կոծ.
Հայ եղբայրներ, ըիշ էլ կացէ՛ք, իմ Աղասին զարթեցաւ,
Գօտին կապեց, թուրը կախեց ու իր նըժոյդ ձին նըստաւ:

Եռշանիկ.

Ե՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից,
Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից.
Մեր ամենիս զու մայր էիր գլժառատ,
Արդ հեռանաս, մեզ մութ պատէ անփարատ:
Քո սուրբ ձեռօք մեր վերքերը շատ անդամ
Լուանայիր գդեզ գնէիր ամէն ժամ, թով
Քո մազերից ոլորէիր վերակապ,
Քո բոլոր կեանքն ազգիդ համար էր ագապ:

Արդ հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,
Վրաց ազգը քո խնամօք պերճանայ,
Հայաստանը զըկի իւր սուրբ Շուշանից,
Վրաստանը բուրէ հասով քաղցրալից:

Ուր որ երթաս, ուր որ լինիս, տիրուհի,
Մեր սիրտ, հոգին քեզ հետ տանիս, մաքրուհի.
Գնաս բարեաւ, մեր լոյս հաւատն քեզ ընկեր.
Աջն ու խաչը քեզ պահապան զօր գիշեր:

Յա ու շատ անուն Յ. Կարինեանց:

Յա ու ազգաց 74

Յա ու մարտ առ անմասաց:

Երդ Ուսանողաց:

Թուշենք դէպի լոյս գիտութիւն
Ազատութեան մենք զրօշակով,
Թուշենք, այո՛, դէպ' մարդկութիւն,
Աէր, միութեան ընքոյշ սրաով :

Տրայ-рай լի-լամъ, мои друзья!

Աէր, միութիւնն է՛ մեզ ընծայ:

Աիրենք, ընկերք, կրօն, Ազգութիւն,

Որ նմանինք «ՈՍԿԻ» դարուն.
Պատճառ, տուեց ազատութիւն
Մեղ վեհ կայսրն և ամենուն:

Տրայ-րայ լի-լամъ, мои друзья!

Գիտութիւնն է մեղ միշտ ընծայ:

Կեցցեն Հայոց վարժարաններ,

Որք տալիս են մեղ կրթութիւն,

Կեցցեն նոցա Հոգատարներ,

Եւ իմաստուն Պետագոգներ:

Տրայ-րայ լի-լամъ, мои друзья!

Հայոց Աշխարհն է մեղ ընծայ:

Ա. Գրիգորեանց.

75

Հայրենիք.

Թռէ իմ Հայրենեաց քնար սգաւոր

Հեծէ տիսրագին՝ իմ հոգիս է այն.

Թէ նորա բեկեկ թելեր վշտաւոր

Խօսի ողբաձայն՝ իմ սրտիկս է այն:

Թռէ Հայ մուսային սրտառուչ նուագ

Դեռ կեղերերգէ՝ հառաջանքս է այն,

Թէ Հայաստանիս սև բաղդին հազար

Լայ աղեկառը՝ հեծեծանքս է այն:

Թռէ իմ Հայրենեաց կիսամեռիկ շունչ

Դեռ լսի տիսուր՝ իմ ողբերս է այն.

Թէ լուիկ մնջիկ հեծէ անշըշունչ,

Ո՛չ, անկարեկիր իմ լալիքս է այն:

Եւ Հայկայ փառաց յօժար ողբերգուն

Հարազատ լացողն իմ ձայնիկս է այն,

Զորս հազար տարուան պարծանաց դարուն
Արձագանդ տուողն աղազակս է այն:

Իմ Հայաստանիս ցաւերուն Հատոր

Ահա այս մաշած իմ կուրծքս է այն.

Եւ սև թերթերուն էջ սրտակոտոր

Սրտասուօք գրուած՝ իմ աղիքս է այն:

Թռէ բանաս կարդաս արիւնոտ դաշտեր
Վարդագոյն ներկուած՝ իմ կողերս է այն,
Թ'աչքէ անցընես շամփրած նիզակներ
Մահահոտ ցցուած՝ իմ թիկունքս է այն:

Թռէ Հայկ և Արամ, Վարդան, Վահաններ
Ինկած տեսանես՝ իմ ուժը է այն.

Թէ զնք, թէ զրահ, թէ սուր, թէ սուսեր
Փշրած կոտորած՝ սոկորներս է այն:

Թռէ արեամբ ներկեն ակունք եղեմին
Նշար քաջերուն՝ իմ բիբերս է այն.
Թէ քաղցր ու ամբիծ ալեք նվիրատին
Լեղի են գարձեր՝ արտասուքս է այն:

Թռէ վծիտ գետերն, աղբերքն արծաթի
Լալիք առուակին՝ երակներս է այն.

Թէ Տիգրիս, գեհովն, Փիսոն մոնչեն՝

Թէ պղտոր գնան՝ իմ արիւնս է այն:

Թռէ սառնամանիք ձմռան փքաբեր
Լեռներն է պատեր, իմ գագաթս է այն.
Եւ քաղցրիկ զեփիւան անուշակ հովեր
Ցրտագին փշեն, իմ շնչեկս է այն:

Թռէ վտակ վտակ ցողէ զմիշատակ
Զայս տրտմավաստակ, աչքերը է այն.

Թէ սրտաձայնիկ երգէ զՀայաստան,

կանչէ զայտատան՝ անկեղծ սէրս է այն:

Թէ մօլին խորշերն ու ձորեր լուին,
Սևերով ծածկին, մենաստանս է այն.
Թէ ողբ կը կարդան վայրերն եղեմին
Ճնշած լերդերուս՝ արձագանդն է այն:

Եւ Հայտաստանիս հողերը ուսխախւ
Պինդ սիրով գրկողն՝ իմ ձեռքերս է այն,
Թէ կը համբուրեն կաթողին ինդիւ
Ո՛հ, մայրակարօտ շրթունքներս է այն:

Եւ Հայոց լերանց ցուրտ շուքերն ու տակ
Ընկած ապարագդ՝ իմ ճակատս է այն,
Մասեաց առւրբ քարերն իւր բարձն ու պատկ
Դրած սգաւոր՝ գլուխիկս է այն:

Եւ կիսակործան տաճարն Հայրենի
Սև սուդ է պատեր՝ տաղաւարս է այն,
Ուր շիջելավառ կանթեղ զեռ հիւծէ
Նուաղ առ նուաղ՝ իմ յոյսըս է այն:

Ուր տխուր նստեր, մազերն են ծածկեր,
Խւր սևուկ աչքեր՝ սիրականս է այն.
Զեռքերն ՚ի ճակատ, կոնակն ՚ի հողեր.
Յուսով կոթըներ՝ Հայտաստանս է այն.
— Կերեղմանս է այն:

Ուր երբ տեսանեմ զիմ հէղն Հայտաստան
Ի մէջ իւր փառաց՝ իմ բազմանքս է այն,
Յայնժամ թողմեռնիմ յիւր ծոց մայրական
Զիմ վերջն շնչոյս միակ ուխտս է այն:

Սիմոն Հայկ Ս. Ֆէլէկեան

— թէ ծխաքարշը ձեռիս Մենակութեան ժամանակ
Սենեակումը նատած եմ, Գու ինձ լաւ ընկեր ես,
Քընթիցս ծուխս հանելիս թէ իմ սիրտըս նեղանայ՝
Կարծում եմ թէ իշխան եմ; Քեզ կառնեմ ես ձեռլս:

Երբ քամին ծուխը վրչի, Թանկ ես, թուրքի ծխախոտ,
Ես պինդ ծիծաղում եմ, Հարուստներու բան ես,
Ասում եմ մեր գործերը Հողիս էլ տամա՞քեզ կառնեմ
Էսպիս անցաւոր են: Ու կածեմ գրքանըս:

Ազնիւ խոտ, գու զօրութիւն, Ինչքան էլ դատարկ լինի
Կեանք ու ուժ ես ինձտալի, Փողերիս քըսակը,
Ախ կարնայի քեզ գովիլ Պէտքէ անպակաս լինի
Ինչքան սիրալս է տալի; Բերնիս ծխաքարշը:

Ով երկինք, տուր էս խոտին Ուսանող առ ծըխաքարշը,
Դու արե, և անձրե շատ, Շուտ կանցնի քո կեանքը,
Եւ սորա մշակողին Ու ծըխելով միաք արա՛,
Օրհնութիւն, կեանք ու բաղդ: Ունայն է աշխարքը:

Ք. Տ. Պ. Պատկանեան,

Վանեցու ամենօրեայ Երգը.

(Բերմինի դաշնադրութեան 61-րդ յօդուածից
յետու.)

Թուրքը հասաւ... էլեմ — էրթամ
Եղնուկներս հաւաքիմ,
Տանեմ անոր անկուշտ աչքից
Մի խալուաթ աեղ պինտ պաշեմ:

Տասըքըսան ջուխտ եղներից
Մնացեր է երկու հատ.

Անոնց ալ, հա՛, շուտ իմ ձեռնից
Կ'առնու քուրզը անհաւասա:
Հերու կը ակ տուեց—վառեց ոված սպի հմագ
Տուն ու տեղըս, տեղերըս.
Մալ ու միւլքըս բիւթիւն իրլեց,
Տարաւ կոյս աղջիկներըս.

Արսէնիս ալ (ախ, պալա—ջան) Նև Առաջ
Անօրէնը ըսպանեց,
Հարևանիս մենձ աղջըկան
Աչքն ճամպում նա թողեց...

Հո—հո—հո, շուտ արէք, եղներ, մասնաւ ով
Հեռանանք, կորչինք սա տեղէն.
Հըրէն թուրքը... հըրէն քըրդեր զառ ցանչը ԱՌ
Կրգան ուղիղ մեր վըրէն,...,

Զէ, եղնուկներ... հոս կայնեցէք.
Թող ձեզ տանի Օսմանլին.
Ասկէ ետե ալ ո՞ւմ համար
Պիտի վարէք դուք գետին.

Խեղձ Արսէնի՞ս, աղջիկներո՞ւս,
Թէ՞ տանըս չորս պատերուն.
Անոնք մեռան, տունըս այրուեց,
Դաղաբի գայ Օսմանլուն.

Բարբա՛դ ըլլա թուրքի տունը,
Թախտը ջարդուի Սուլթանի,
Բալքա Հայու մարած տատղը
Գէնայ վաղուան պէս փայլի...

— Հայու Աստուած, անգո՛թ Աստուած,
Ալ ո՞ր ատեն պիտ' լըսես

Մեր աղօթըը, մեր ողբ ու լաց,
Մեր աղաղակ աղէկէկ...

Արմէօն Սափարեանց:

78

**Տաղ ՚ի դիմաց իւրաքանչիւր Հայկազնւոյ առ
Հայաստան.**

Ա՛ռ զամբիւղ երգի եղանակով.

Թօշուա՛ռ Հայաստան, տուն ատելութեան,
Փութա՛ր բժշկել ըզմէրք քո բնութեան,
Քանզի ցաւն այն չունի դեղ ու Ճար,
Որ գաղտ հասանի վերին ուժգնութեան;
Ո՛չ, ո՞ւր ես, ո՛չ ո՞ւր ես, ո՛չ ո՞ւր ես,
Աննման Ներսէս:*

*) Հանգուցեալ երջանկայիշատակ Ներսէս հինգերորդ
Կաթողիկոսը ծնված է 1770 թ. մայիսի 1-ին Աշտարակ
գիւղում: Ներսէսը, որի մկրտութեան անունն էր Թու-
րոս, որ իրա պապի անունն է, 7 տարնկան հասակից ըսկ-
սած՝ սովորում է Ս. Էջմիածնի Ժառանգաւորաց Դպրո-
ցում 13 տարի և 20 տարեկան հասակում աւագ սար-
կաւագ ձեռնաղբում իրա կնքանայր Գալուստ արքե-
պիսկոպոսից, Ներսէս վերակոչվելով և ապա քանի մի
սարուց յետոյ—վարդապետ:

Ներսէսի գործունէութիւններին նայելով, իրեն հո-
գեր անձն, նա միանգամայն արժանաւոր էր իրա վեհ
կոչման մէջ իրեն դաստիարակիչ, իրեն քարոզիչ և իրեն
բարեկարգիչ առաջնորդ: Խոկ անզը եկած ժամանակ, նա
համ քաջ զօրապետ էր, համ էլ հեռատես քաղաքադէտ: Ա. յապէս-օրինակի համար-երբ 1826 թուին Պարսիկները
մնած բազմութեամբ յարձակիվումն Ռուսական Հայա-
տանի վերայ և հետզհետէ զրաւում Շուշի, Գանձակ,
Շամախի և այլ քաղաքներ, մեծամեծ վնասներ պատճա-
ռելով՝ Ներսէսը, որ այն ժամանակ եպիսկոպոս էր և

՚ի ծննդենէ էր քեզ նա հարազատ,
դու եղեր նմա ծնող անհաստատ,
թէւ լինէիր մայր արատութեան,
՚ի քէն օտարաց չէր առնել գանգատ:

Ո՛հ, ո՞ւր և այլն:

՚ի սէր քո կրեաց բազում աշխատանք,
Ետես շատ լաւ օր և շատ անարդանք,
Որդիքը իրեւ Կայէն ոլսացեալ՝
Հասուցին նմա վեշտ և ստգտանք:
Ո՛հ, ո՞ւր ես և այլն:

առաջնորդ Թիֆլսի վիճակին, Հայ քաջերի մի խումբ
կազմելով և ինքն էլ նոցա պարագլուխ հանդիսանալով՝
դուրս է գալիս Պարսից դէմ և ոչնչացնում նոցա ար-
շաւանքը:

Երե 1843 թուին Յովհաննէս Կաթողիկոսը վախճան-
վում է, Ներսէսը, աղքի միաձայն հաւանութեամբ, ար-
ժանանում է Կաթողիկոսական գահին և իրա գեղեցիկ և
ընտիր և ազգօգուտ գործերով յաւերժացնում իրա անու-
նը, 14 տարի Հայ եկեղեցու և աղքի բարօրութեան և
լուսաւորութեան համար հոգալով և աշխատելով։ Սորա
Հայրապետութիւնը Շոսկեղէն դար կարելի էր համարել
Հայերի համար, բայց Բնչ անես, որ 1857 թուի փետր-
վարի 13-ին կնքումէ իրա բազմարդին կեանքը, սուզի
մէջ թողնելով Հայոց ազգին։

Ներսէսի կեանքի հետ մանրամասն ծանօթանալ
ցանկացողներին, որ շատ հետաքրքրական է, խորհուրդ
կ'տայի ձեռք ըերեւ և կարդալ մեծ պ. Աղեքսանդր Երի-
ցեանի աշխատասիրած Ներսէս հինգերրորդ Աշտարա-
կեցի Կաթողիկոսի կենսագրութիւնը վերնագրով երեք
տեսարք, որ տաղմած է Թիֆլս 1878 թուին և երեքը միա-
սին արժէ 1 բուրլի։

Ա. Գրիգորեանց:

Վատ արարք նոցա էին անսահման,
Զետ Յուղայ նմա եղեն դաւաճան,
Ապերախտութիւն նոցին յայտնապէս
Իջոյց զնա ՚ի մութն գերեզման։
Ո՛հ, ո՞ւր ես և այլն։

Այսուհետեւ դու հազար աշխատես,
Պտուղ չես տալ՝ զի նեխեալ արմատ ես,
Ինչ որ ծնանիս՝ պիտի լինի հրէշ,
Թէ չես հաւատում, փորձիր ահա տես։
Ո՛հ, ո՞ւր ես և այլն։

Կորուսիր գահըդ, կորուսիր թագըդ,
Խաւարեցաւ քո լոյս արեգակըդ,
Այնպիսի որդի՛ էլ չես դտանել,
Որ նա ուղղէ քո վատ վիճակըդ։
Ո՛հ, ո՞ւր ես և այլն։

Կա էր միմիայն որդիդ պարզերես,
Յոյս չկայ մէկն էլ ծնանի այնպէս,
Դար և ժամանակը շատ կը լրանան,
Որ հառաջանօք կասես, ո՛հ, Ներսէս։
Ո՛հ, ո՞ւր ես և այլն։

Թառ'զ, որ իմ վկայս լինի Սէյեադը,
Քրիստոնէական կրօնի հաստատը,
Որ ըստ փրկչական անսուտ հրամանի՝
Լաւն անցել է, մնացել է վատը.
Ո՛հ, ո՞ւր ես, ո՛հ ո՞ւր ես, ո՛հ ո՞ւր ես
Աննման Ներսէս։

Գետրոս Մաղաթեանց,

79

Տ. Ներսէս Ե. Կաթողիկոս.

(Ապրում իւր զօրաց Ներսէսի նկարագրութիւնը կընէ.)

Ահա, դացի տեսայ մեծ մարդը, Հայաստանի հովերու Ներսէս։ Իմ մեծ հասակովս ո՛րչափ պղտիկ երեւցայ անոր քով։ Ի՞նչպէս նկարագրեմ զինք. կերպարանը զիս դիւթեց, լեզուն զիս գրաւեց, քանի մը վայրկենի մէջ զիս բոլորովին գերեց։ Թէ որ հրամայէր, որ երթամ Արարատ լեռը շալշեմ իր առջեւը բերեմ՝ կուրօրէն պիտի երթայի։ Մեր Եղիշէ վարդապետը միայն պիտի կրնար անոր պատկերը Ճիշտ քաշել՝ եթէ ողջ լինէր։ Այս սուրս վկայ, կարգաւոր չէ այն, այլ քաջ զօրապետ մը, հեռատես քաղաքագէտ մը։ Ես, որ վազրի, օձի առջեւ գտնուած և անոնց աչքին մէջ անվեհեր նայած եմ, չկրցայ վայրկեան մը շարունակ Ներսէսի աչքին մէջ նայիլ, որու կայծերը սրտիս մէջ կ'թափանցէին։ Իրաւի, Սասունցիի դէմքն ունի, այլ ոչ մեր տկար խելքը. երկու մանր շողուն բիրեր կ'եռան կապոյտ շարժուն Ծակներու մէջ, թաւ ունքն ու արտեւանունքը կ'սքօղեն իր խորհուրդները, փայլուն կունտ ճակտին վերայ դրոշմուած է Հայաստանի ճակատագիրը՝ կապոյտ որոշ գծերով։ Որ յօնիւցը մէջ աեղ մերթ կ'ուռին և կարծես թէ գլխուն փոթորիկը կ'յայտնեն. ազնիւ սե մօրումն ու նուրբ պեխը կ'ծածկին իր հեղնալի ժպիտը։ Հասպա նաստանի պէս ձի կը հեծնէ և սնդի պէս կ'սահի ամեն տեղ, ամեն բանի կ'հասնի, ամեն ձայն ու շշուկ կ'լսէ, տկարն ու կարօտը կ'գգուէ, կ'ափոփէ, մեծերուն հետ խըստա ու հրամայող, եկեղեցականին սաստող է։ Ձեռքըն Աւետարան չունի, այլ մորակ. զլուխը վեղար չունի, այլ կլոր պղնձէ սա-

զաւարտ, որու դագաթը միայն փոքրիկ խաչ մը կայ. կոնակը փիլոն չունի, այլ սպիտակ ոչխարի քուրդէ վերարկու մը. ոտքերը հողաթափ չունին, այլ բարձր կօշեկներ, որ մինչւ ծունկերը կը ծածկեն. կուրծքը ոսկի նշաններ չունի, այլ վառ սիրտ մը, որ. իր աթոռն ոսկեփայլ գահ ու բարձ չէ, այլ ամեհի սե երիվար մը, որ տիրոջը պէս կրակ ու վառող կ'սիրէ։

Մ. Մամուլեան.

80

Դաշնակ Հայկեան թատրոնի, որ ՚ի Խասպիւլ.

Ժամանակաց՝ անցից՝ վաեմ կրթարան Եւ նոր գիպաց՝ նոր զգացմանց կարգադիր. Ահա՝ մեզ նոր՝ արդ կ'կանգնի աեսարան թէ կրթութեան՝ թէ հաճոյից արգաղիր։ Հոս ձայն կուտանք մենք ծաղկալից Հայաստանի սուրբ դաշտերուն, Եւ կ'ցրուի սրակց թափիծ, Երբ Հայրենեաց յիշեմք զանուն։

Ո՛վ սուրբ Հայաստան
Փառաց օթեան,
Որբ գաւկըներդ հոս
Գեղ պիտի ողբան։

Հոս երազ անմահ	Որբ որդիքդ այրիւ
Քո նախնի փառաց	Հոս պիտի ողբան։
Մեզ պիտի վառէ	Ավերածնին հոս ոսկի գարք,
՚ի սէր Հայրենեաց։	Հոս տեղ մաքեր կրնան սրուիլ։
Այշրիկ Հայաստան,	Կ'շտկուին հոս անկիրթ բարք,
Փառաց գերեզման,	Հոս և ծիծաղ կրնայ զտուիլ։

ՈՎ սուրբ Հայաստան,
Քաջաց օթեան,
Հոսկէ որդիքդ հոն
Գիրկդ պիտի գան:
Հոս ոճ Հայ լեզուին
Նոր զարդ՝ ձեւ կառնու,
Կեանք անմեղ ւերկինք
Կազդեն սրտերու:
Քաղցրի՛կ Հայաստան,
Մեր հարց օթեան,
Մոցդ որդիքդ որ գան
Է՞ր պիտի ողբան:

գ. գ. զ.

81

Եղբայր եմք մեք.

Ի բիւր ձայնից բնութեան շըքեղ
Թէ երգք թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար.
Զունին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:
Տուր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեք,
Որ մրրկաւ էինք զատուած,
Բաղդին ամեն ոխ չարանենդ,
Ի մի համբոյր ցրուին ի բաց:
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:
Երբ ալեոր Մայրն Հայաստան
Տեմնէ զորդիս իւր քովէ քովլ,
Սրաին խորունկ վէրքըն դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցողով.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:
Մէկտեղ լացինք մենք ի հընում...
Եկէր դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտուր և զիսնդում,

Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:
Մէկտեղ յոդնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըդհունձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:
Ա. Պէշիքթաշեան.

82

Պար Կախարարաց.

Ի զուր են, ՚ի զուր, բռնաւոր,
Ըսպառնալիք քո ամենայն.
Ոչ, քո շղթայք չեն զօրաւոր
ՅընկՃել զոգիս մեր Հայկական:
Զմարմին միայն զայս մարմին
Կարես գերել քեզ ՚ի նախատ.
Սակայն ոգիք մեր երկնային՝
Սիրու Հայկազնոց են միշտ ազատ:
Ազատ են, ազատ մեր լեզուք,
Մաղթել զշանթս արդարութեան
՚ի զլուխ ձեր, ով արիւնարբուք՝
Որ աւերէք զՀայաստան:
՚ի դժոխս անկցին թշնամիք,
Անշետասցին մինչ յաւիտեան.
Կեցցեն Արքայ և Հայրենիք,
Կեցցէ անմահ մեր Հայաստան:

Խորէն Եպիսկոպոս Գալֆայեան.

Երդ ցաւագին.

Իմ սիրելի զաւակունքս
Կթափառին օտար աշխարհ.
Ես ուր դիմեմ, ուր փնդռեմ,
Կծառայեն այլոց խոնարհ:
Եկայք, որդեակք իմ,
Զեր մօրն այցելութեան:

Դարեր անցան, լուր մը չ'առի,
Իմ քաջերս մեռան, կորան,
Կուլամ արիւնս կը սառի,
Մէկը չունիմ տայ ինձ դարման:
Եկայք, որդեակք և այլն:

Արիւնս ցամքած, սիրտս մաշած,
Գէմքս է տխուր մինչ յաւիտեան,
Եւ կարօտոյն իմ որդեկաց
Պիտի իջնեմ սև զերեզման:
Եկայք, որդեակք և այլն:

Եւ դու, հովեւ թափառական,
Կ'երգես տխուր ՚ի մէջ հովոաց.
Ե՛կ արտասուենք թանգ կորստեան
Տխուր մահուան մեր որդեկաց:
Եկայք, որդեակք և այլն:

Իսկ դու, կռունկ իմ Հայրենեաց
Գնա՛ հեռու աչքէս ՚ի բաց,
Յետին ողջոյնս տա՛ր զաւակացս,
Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած:
Եկայք, որդեակք իմ,
Զեր մօրն այցելութեան:

Ինձ համար չէ.

Ինձ համար չէ դարնան գալը.
Ինձ համար չէ ծառի ծաղկելը,
Ուրախութեան սրտի զրդիոլը,
Ոչ մի բերկանկը չեն ինձ համար:
Ինձ համար չէ կենաց բաղդը,
Ինձ համար չէ երջանկութիւնը.
Եւ մրայօն կուսի աչքերը,
Նոցա արցունք չեն ինձ համար:
Ինձ համար չէ փայլուն լուսնի
Անտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի երգչի տաղերը
Սոխակ ու վարդ չեն ինձ համար:
Ինձ համար չէ բարեկամաց
Մէկ տեղ սիրով տօն կատարելը,
Զատիկ օրուան ուրախ ասելը
Վարիստոս յարեաւ չէ ինձ համար:
Ինձ համար չէ ծնողաց լացը,
Ինձ համար չէ աղջկայ արևորիլը,
Վերեզմանիս վրայ արտասուիլը
Բարեկամաց՝ չէ ինձ համար:
Բայց ինձ համար կու գայ ժամը,
Վ'երթամ թշնամեաց պատերազմը,
Եւ մահառիթ սպանիչ զընդակը
Անդ պատրաստած է ինձ համար:

Ք. Պատկանեան:

Հայրենիք.

Իմ Հայրենիքս զիս կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն.
Հայու որդւոյն կը վայելէ^օ
Հեռանալ Հայաստանէն:
Միթէ արծաթ, ոսկի, գոհար
Կ'սփոփէ^օ Հայաստանը.
Այն որ կ'ողբայ որդւոց համար
Խղճալի Հայաստանը:
Խոր տիրութեան մէջ է թաղունը
Թագուհի Հայաստանը,
Բորիկ ոտքով, աղատ մազով
Կ'արտասուէ Հայաստանը:
Անգութ երկինք ալ չէ յիշեր,
Մոռացեր է Հայաստանը.
Անսիրտ Հայերն ալ չեն սիրեր,
Անուշիկ Հայաստանը:
Ո՛չ, թողէք զիս խօսիմ աղատ,
Երգեմ միշտ Հայաստանը.
Անուշ երկիր կոյս անարատ,
Անըման Հայաստանը:
Արև ծածկեր է իւր գէմքը,
Խաւար է Հայաստանը,
Հայոց արեւը ալ մարեր է,
Սև հագեր է Հայաստանը:
Թշուառ սրտիս ձայն կը կտրէ,
Ողբալով Հայաստանը.
Ո՛չ, չեկայ Հայ, որ սփոփէ
Նուաղեալ Հայաստանը:
Թռէւ կըտրի իմ վերջին շունչս,

Պիտի պոռամ Հայաստան.
Պլուիմ մէյմ' իմ Հայրենեացս,
Հապա մօնեմ գերեզման:
Անդորրութիւն ես կը ինդրեմ
Միրելի Հայաստանին.
Կտրել այս ձայնս չէ, չէ կարող
Սոսկումըն գերեզմանին:

Ունայնութեան վերայ.

Ի՞նչ ես ջարդում անձրդ, էյ մարդ, ցաւերով,
Գլխիդ բարդում գանձրդ անթիւ նաւերով.
Արի', աղքէր, իմ խըրատին դու միտ դիր,
Հոգս ու ջափէդ ա՛ռ քեզանից ու յիտ դիր:
Մերկ ու թեթև դու էս աշխարհ էկել ես,
Բեռան տակը մէջքը ինչո՞ւ թեքել ես,
Ժանդ արծաթի խաժրին դու քեզ գերել ես,
Գեղին սոսկու սիրուն հոգւով մեռել ես:

Դիպայ շորեր, անգին քարեր, գանձ ու գահ,
Ե՞րբ ես տեսել, որ մարդուս անեն անմահ.
Նահախ սպարում ես արծաթի մազանը,
Որ աժան է օխտը կազ քու քաթանը:

Եսօր, էգուց քեզ կու զրկէ սպատանքը
Ու չե փրկիլ մահից սոսկին, ո՛չ հանքը:

Իննջմանէդ արքայական, զարթիրնազելի իմ, զարթիր
Եհասնշոյլ արեգական, զարթիրնազելի իմ, զարթիր:

Պատկեր սիրուն տիպ բոլորակ,
Լրացելոյ լուսնոյն քատակ,
Ու գտանի քեզ օրինակ զարթիր, և այլն:
Այսդ քո տեսիլդ զոր դու ունիս,
Արար ծառայ քեզ զգերիս,
Արևակէզ գուցէ լինիս, զարթիր, և այլն:
Ղարին սրտիւ քանի կոծամ,
Է՞ վարդ կարմիր և անթառամ,
Տես թէ զիարդ խղճալի կամ, զարթիր. և այլն:
Տապ և խորշակ ժամանեցին,
Զթերթք գեղոյդ այրել կամին,
Քանզի էանց ոչշերն մթին, զարթիր. և այլն:
Ե անման իմ գովելիս,
Ի մէջ ականց գեղ քո մատնես,
Ի ուահեակ սոյն թուականիս, զարթիր. և այլն:

88

Աստուածածնի պատկերը.

Ինչու լալագին աչքով նըխշած է
Տիրամօր պատկերը ժամումը կախած.
Ինչու ձեռները խաչ կապած է,
Աչքերը դէպի երկինք ամբարձած:
Ինչի՞ է կարօտ, ի՞նչ է աղօթում
Անարատ, անմեղ, սուրբ Աստուածածին,
Ասես՝ խօսքերը ջերմեռանդ սրտէն
Գլնումէն երկինք դէպ' առ սուրբ Որդին:
Նահախ չի իջնում երկնառաք ցողը
Ցամաքած, կոշտացած մեր երկրի վըրայ.
Նահախ չի ծաղկում սեւացած հողը,—
Այս են պաղատում աչքերը նորա:

Թէ որ անմեղը չաղօթէր իսկի
Երա մեղաւոր աղքօրը խաթրին,
Երկիր կու ճաքուէր ահեղ ձէներով,
Երկին կու խոռվէր վերից մեր գլխին:
Թէ որ արդարը չեներէր իրա
Չարչարող, տանջող, զալում դուշմանին,
Ել ո՞վ էր մեզի փրկում, աղատում,
Խաղառ կիլէին դժոխքի որդին:
Ապա՝ լս'ց իլիր, ծանր ա'խ քաշէ,
Որբոց Մէր, այրեաց մըլսիթարութիւն.
Յո՞լ քու արտասունքն վազին ջարի պէս
Յաք որ ցամաքի երկրէս չարութիւն:

Ո. Պատկանեան

89

Հայոց գիմի.

Լքցրէք, եղբա՛րք, ձեր բաժակները,
Եւ քաջ պարտեցէք,
Այսպէս զինին բոլոր աշխարքումը
Գուք զըտնելու չէք:
Ու թուրքի է այս և ո՛չ Մաճառի,
Ո՛չ Ֆրանսիայի,
Յո՞լ ուրիշն օտար զինի խմի, —
Սերն է հրաշալի:
Շամպայն զինին կանացի զինի է,
Այդ մեր զինին չէ,
Խմել, կոնծել թէւ կարելի է,
Բայց սիրելու չէ:
Խըրիմի զինին լաւ զոված զինի է,
Բայց այս ել այն չէ,
Ճաշից յետ խմել կարելի է,
Բայց երգելու չէ:

Կախեթու գինին պատուական գինի է,
թէև Հայոց չէ.

Բայց, ափսո՞ս, որ օտարի է
Նոյեան տընկած չէ:

Երասլի մօտ՝ այնաեղէ մեր գինին,
Օրհնեալ է Երասլ.

Երասլի մօտ ամենքն են գեղեցիկ,
Ամենքն են ուրախ:

Այդ գինին պարգևեց մեզ Աստուած,
Ու դրախտից հանեց,

Երբ Հայ Նոն աշխատանքից մաշուած
Նորան աղաչեց:

Սոն իմաստուն մարդ եղած պիտի լլնի,
Որ այդպէս ճարտար

Նա Ճմից, քամեց, խմեց մեր գինին
Ու շնեց տակառ:

Ուրեմն, եղեա՛րք, բաժակըն լքցրած է
Զամբեցէք անվախ.

Թէ լենք որ՝ մէկը շատ տըխրած է
Նրան գինի կը տանք:

ԹՕ

Մոխամմազ.

Լսեցէք, ով իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ ասում,
Խմացէք ձեզ շահաւէտ էս խօսքերս սուր եմ ասում.

Ով կուզէ թողլ լսւ լըսէ, նրան սրտիս դիւր եմ ասում,
Ով կամի թողլ հասկանայ, նրան իմ ջան հիւր եմ ասում.

Բայց բարին չիմացողին մտքի աչքը կուր եմ ասում,
Արդեօք նրան ի՞նչ անուն տամ, նրան խելքից թիւր եմ ասում:

Լսեցէք, ով իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ ասում և այլն:

Լսեցէք ու կիմանաք մեր վաղուցվայ անցքը Հայե՛ր,
թէ ի՞նչպէս հոչակված էր անուամբ Հայոց ազգը, Հայե՛ր,
Այլոց պէս Հայն էլ ունէր մեծ տէրութեան փառքը, Հայեր,
Թագաւոր, զօրք, զօրավար, քաջ ու ազնիւ լարքը, Հայեր,
Անհամար գեղ ու քաղաք ունէր մեր աշխարհքը, Հայեր,
Բայց հիմիկ ի՞նչ մընաց մեզ, մեր ցաւերը բիւր եմ ասում:
Լսեցէք, ով իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ ասում և այլն:

Թաշնամիք մեր աշխարհքը քանդեցին, աւերակ թողին,
Էն մեծ մեծ քաղաքներից Անին մեզ օրինակ թողին,
Մեր թագ, գայսոն խլեցին, Հայաստան անձրագ թողին,
Էն Հայոց բազմութիւնը մաղի նըման բարակ թողին,
Սպանելու, դուրս քշելով ցիր ու ցան սոքի տակ թողին,
Մեր անսէր վարքիցն էր ողջ, չէ թէ էս ձեզ զուր եմ ասում:
Լսեցէք, ով իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ ասում և այլն:

Բայց հիմիկ ամեն աշխարհ թափառական մենք ցրուել ենք,
Զրկուած հայրենիքից, նախնեաց վարքից հեռացել ենք,
Մեր հաւատ, մեր ազգ, լեզուն էլ չենք պաշտում, ուրացել ենք,
Սրտացաւ չենք մէկ մէկու, մոլի վարքով խստացել ենք,
Թշվառ ենք, մեր լաւն ու վատ չենք հասկանում, կուրացել ենք,
Ի՞նչ ասեմ, որ մինն ասեմ, Հայեր, մեզ թուք մուր եմ ասում:
Լսեցէք, ով իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ ասում և այլն:

Թէ ուզենք մեր վիճակը էսպէս խեղճ, թշվառ չեմընայ,
Ոչ մէկ հայ տըզէտ, անբան, բեռնակիր տաւար չեմընայ
Վը պտուի ազգի շահը, այլոց ձեռք տաւր չեմընայ,
Միաբան մեր հոգս կանենք, մեր մէջ մարդ շիւար չեմընայ,
Կրկն մեզ լըս կը ծագի, մեր օրը խաւար չեմընայ,
Թէ առնենք ուսման համը, որ փրկութեան դուռ եմ ասում:
Լսեցէք, ով իմ Հայեր, մի կարծէք նոր լուր եմ ասում և այլն:

Տեսէք թէ ուրիշ ազգեր ուսումով ի՞նչ կարդի հասան,
Վաղ էին խեղճ, վայրենի, հիմիկ ազնիւ վարքի հասան,

Չունէին կարգ ու կանոն, հիմիկ էնպէս սարքի հասան,
Սաղ աշխարհ իրանց ձեռն է, էն իմաստուն բարքի հասան,
Ծաղկեցան, շատ զօրացան, ահա ինչպէս փառքի հասան.
Եւ ոչ թէ հայի նման ամենից թափուր եմ ասում:
Լսեցէք, ով իմ հայեր, մի՛ կարծէք նոր լուր եմ ասում և այլն:

Ինձ կասեն ոմի՛ գանգատվեր, յոյս ունեցիր հայի մասին,
Հայը միշտ հետեւող է լաւ անուան համբաւի մասին,
Մի՛ կարծիր նա չի ցաւում իւր խորտակուած նաւի մասին,
Համբերիր և քո հայն—էլ ճար կանի իւր ցաւի մասին
Ի՞նչ ասեմ, մի՛թէ կարնամ էլ խօսք բացել դաւի մասին,
Սուրէնն եմ, էսպէս խօսքեր օրէնը հարիւր եմ ասում:

Յովհաննէս Քուչուքենեանց.

❶

Հանդէպ պ. Աէյեադի ասացեալ „Ոչ ով Գաւ-
պարեան չի լինիլ“ խաղին.

Լաւ ես ասում, պարոն Աէյեադ, ոչ ով գասպարեան *)
Տղեղ ագուան խօսալով՝ սոխակ քաղցրաբան չի լինիլ,
Թուկէտ դորուս դորա սիւս չայկազուն իշխանք
Սակայն նոցա և ոչ մէկը ազգիս օգնական չի լինիլ:

(*) Հանգուցեալ պատուանուն քաղցրացի և ասպետ իսահակ Մովսէսեան գասպարեանցը, հանգուցեալ Պօղոս Մովսէսեան Մելքեանց զօրագլխի ինիշխատիւով, իբա կարողութեան մեծ մասը նուիրեց մի աղքատամոց վերականգնելու Մոմիկայում, որը իւր անունով կոչուեցաւ «Պատպարեան» և գտնվումէ ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարքի և Կաթողիկոսի առանձին հովանաւորութեան տակ: Արա կանոնադրութիւնը «Պատպարեան տառն վասն

Պարահնար և զանարդի վատթար Վասակ չեմք ասեր, բայց
Բարեացապարտ և աղգանէր Վարդան ու Վահան չի լինիլ:

Թու կուզ այն Վեղուվեան լեռՀազար կանգուն էլ բարձրանայ,
Գեղեցկաձև և մշականձ Մասիսայ նման չի լինիլ:

Բասեան գաւառի Դաշտը լայն ու ընդարձակ է, ծանօթ եմք,
Առատաբեր մշտագալար մեծ Շիրակաւան չի լինիլ:

Աղգերուս համար սրտառուշ պատմաբաններ թէկ կան շատ,
Խիկապէս նոցա ո՛չ մէկը Մովսէս ու Ցովհան չի լինիլ:

Մեր կղերաց գասի մէջէն սև վեղարաւորներ բիւրաւոր,
Ցաւերն ազգիս կրօղ, յայտ է, Սահակ Պարթև չի լինիլ:

Ծովիր, անթիւ նաւեր ողջ բոլորը ի միասին
Մարդկութեան սեռը ազատող՝ մէկ Նոյեան տապան չի լինիլ:

Թու ազգային թէ ծխական դպրոցներ կան շատ թէ սակաւ,
Բայց որպէս Ներսէսեան և Լազարեան Ճեմարան՝ չի լինիլ:

Ապագայի բարօրութեան մտածողներ բանիւ անթիւ,
Սակայն գործով կատարողներ զերթ Մաղաթելեան*) չի լինիլ:

Թամբաշեան, զու որքան այսպէս երգեր ասես, շարամանես,
Բայց քո երգերը Աէյեադի նման գովական չի լինիլ:

Մանուկ Թամբաշեան:

տնանկ Հայոց (Կայորովսկիй пріютъ для бѣдныхъ армянъ) վերնա-
գրով, բարեհամել հաստատել է Նորին Կայսերական Մեծութիւնը
1845 թ. Նոյեմբերի 27-ին:

(*) Մեծ պ. Ռափայէլ Սաղաթելեանցը Ախալցխայի «Նոր Արշա-
լոյ» Օրիորդական Գալրանոցի հիմնադիրն է, որը, այդ գեղեցիկ և
բարենպատակ գործի համար, չի խնայել թէ իւր դրամական միջոցը

92

Սիրոյ զոհեր.

Արծի մէջ նաւակը
Մեղմ հողմով կը տանի,
Նորա մէջ նըստած է
Սիրահար պատանի:

Պատանին ձեռքն ունի
Կիթարայ ու կերպէ,
Խակ քամին կը փախցնու
Նաւակը եղերքէ:

Լճակի մէջը կայ
Քարաշէն մի ամրոց,
Սիրուհւոյ բնակարան
Հանապազ փակ ու գոյ:

Պատանեւոյ նաւակը
Դէպ ամրոց կը վաղէր,
Ուր նորա անձկալին
Սրտարոփ կը սպասէր:

Մեղմ հողմը աւելի, սաստ
Աւելի սաստացաւ,
Երկինքը թուխպ պատեց,
Փոթորիկ բարձրացաւ:

և թէ իւր աշխատութիւնը յիշեալ դպրանոցի բացման և, որ աւելի
գովիլին է, յառաջադիմութեան համար:

Ա. Գրիգորեանց:

Ալեք լեռները

Գոռալով կրծքիան,
Պատանին աներկւղ
Կը նուագէ կիթարան:

Լուսինը ամպերու
Տակերէն երեցաւ,
Սոսկալի աղբախ
Պատկերը բացուեցաւ:

Կէս ճամբուն ալեքը
Նաւակին խփուեցան,
Նաւակը փշեցին,
Յոյս չիկայ փրկութեան:

Պատանին աչքերը
Լուսնեակին բարձրացուց,
Աիթարիւլարերը
Նա ուժգին հնչեցուց:

«Տա՛ր վերջին խօսքերը»
«Անձկալոյս, ով լուսին,
Թէ քաղցրիկ անունըդ
Յիշելով կը մեռնիմ»:

Դադրեցաւ փոթորիկ,
Ու ալեք պառկեցան,
Զըրի վրայ կրտստանք
Նաւակի երեցան:

Սիրուհին սրտարոփի,
Նայեցաւ լըճակին,
Հասկացաւ դառնութիւն
Իւր անբաղդ վիճակին:

Ասաց և աղաղակ
Բարձրացուց նա ուժգին,
Գըլորվեց, զոհ եղաւ
Անկուշտում ծովակին:

«Միարմէ բաժնեցին
«Մեղ աշխարհ և այս կեանք,
«Գէթ մահով այսուհետ
«Զրի տակ միանանք:»

Ալեռուհին սրտարոփի,
Բարձրացուց նա ուժգին,
Գըլորվեց, զոհ եղաւ
Անկուշտում ծովակին:

Գամառ—բաթիպա:
93

Խնդա՛ այսօր, Հայստան,
Հայրենիք մեր սիրական: Ձև պահանջ զի
Եկայք, եղբարք, միաբանան պահանջ
Լիցուք զծեառնէ գոհաբան:

Բարձրացո՞ արդ, Արարատ,
Տիուր թախիծ քոյդ դագաթ: և նիմ ու
Եկայք, եղբարք, և այլն:

Փայլեսի խաչ Քրիստոսի
Ի լոյս Ճակատ Հայ-աղգի: և նիմ ու
Եկայք, եղբարք, և այլն:

Մեծ են քո փառք, Արարիչ,
Մեծ են քո շնորհք, Տէր Քրիչ,
Եկայք եղբարք, և այլն:

Մեր կեանք, մեր փառք յաւիտեան
Զոհեաց ի քեզ, Հայստան:

Եկայք, եղբարք, միաբան
Լիցուք զծեառնէ գոհաբան:

94

միջնական մազացի
Երգ մի քօրականի
ու աղաքանի բառ դիմաց
աղաքանի բառ դիմաց

Խելքս ու միտքս արիւնաշաղախ,
Օրեր կը սպասեն, որ կան անյապաղ:
Այս օրերն են, որ աշխարհ կը քանդեն,
Այս օրերն են, որ աշխարհ կը փրկեն:
Զենքի շառաշեւնը թէ երկինք համնէ,
Բայց մեր դրօշակը յաղթութիւն յայտնէ,
Հրձուանք ու պարծանք է այն իմ համար,
Ամեն յանկութիւնքս կը ստանան կատար:

Սրընթաց ձիուս կողերը կը խթեմ,
Որ քաջերի մէջ շուտով հասանեմ.
Հայրենեացս համար չ' ինչ իմ աչքում
Ոչ վէրք, և ոչ մահ, և ոչ գերութիւն:

Թէ սուր թշնամյն սիրալս թափանցէ
Ունիմ ես մի ոք, որ խոցըս ծածկէ,
Ունիմ ես մի ոք, որոյ նուերքը
Հզօր քան բալսամ, կ' բուժեն իմ վէրքը:

Խակ թէ թշնամիք գերի ինձ առնուն,
Կը գայ կը գտնէ նա ինձ մութ բանտում.
Երկու գեղեցիկ աշունքը փայլուն
Կը լուսաւորեն խաւարիս անկիւն:

Թէ մահ հանդիպի պատերազմի մէջ,
Կը գայ իմ հրեշտակ կինըս սիրատենէ,
Սրիւնաթաթախ մարմինըս լուանող
Խար արտասուքով նա չ' ձանձրանալ:

Մ, Բուտաղեան.

95

միտացք յիս ծագուած իս
միջրաժիշտ Նորու ունես սոր սոի յոյէ
ամիջոցի Յաղկերտ:

ամիջոց բարացեց սոսում խարս ով
Ծագեա՛ հեղեկի, արև քաղցրիկի,
Զլոյ պայծառ քո գեղեցիկ: Ե իմանցութ
Զի ձեմեսցէ արքայ հզօր,
Մերս Յաղկերտ պերճ փառաւոր:
Դու թագաւոր այլազգական, խայս ո՞ւ Ե
Էզսա ծաներու մեր տէր իշխան: Ե ո՞ւ
Ամա վայելէ, փառք և պատիւ, ուն շնչար
Սա հաւասար զից գերազնիւ: Ամեն զարու:
Ծաղկեսցի քո, աէր, պատուական, խաւան
Աթոռ և սուր և զաւազան:

Պատուի շատութիւն բազրու աշխի արք
Պայտերօց մասու վայր յիստա՛
Արցուած շնչը ցնունի աւու միջոյք
: անձր անձնան յանձն մասութիւն:

96
Թալնած գեղ.

Ճանա ջմ մինս թէ կը զիշածայի արք
Ծուխը ամակի պէս կ' ելէր դէպի վեր,
Տընտըղի նման բոցը կը քալէր ո՞ւ արմ
Տուն, եկեղեցի, պարուէլ ու այգի խանչու
Անսիրտ, անհոգի մասնած են կրակի:

Հայերն հօտի պէս սորսած կը վազեն,
Անցնող — գարձողէն օգնութիւն կուզեն,
Օգնութիւն: Խեղձե՛ր, կատղած օսմանլին
Չար մահ կը սպառնայ զարհուրած Հային:

Մայրը կականով կը վրնտուէ աղջիկ
Աղջրկանը գերի արաւ չար Տաճիկ
Խր որդուն կ' ուզէ հայրը շուարած,
Որդուն կը տեսնէ խազուխի զրրած:

Հայի հաւաքած մալը աղքատին
 Հելալ փայ եղաւ անկուշում Քիւրդին.
 Խեղձը յուսահատ կ'աչէ երկնքին,
 Կը սպասէ նըպաստ հրեշտակաց զօրքին:
 Խաբուսիկ յոյսեր... դեռ շատ ու շատ գար
 Պիտի խաբուխա, հայ, ինչպէս խաբուեցար,
 Թէ ինքը չանես քու գլխու ճարը,
 Ե՞րբ պիտի օգնէ քեզի օտարը...
 Խեղձմարդ, մէկ անգամ մեռնելէն վախցար,
 Մինչ մահուան օրը հազար մահ տեսար,
 Հազար մեռնելը հազար ցաւերով,
 Հաւակիդ փոսը ձեռքովդ փորելով...
 Դու միշտ աղօրդ անտէրունչ թողեր,
 Մատիդ ծարովը նորան չօգնեցիր.
 Գլուխն առաւ խեղձը, գնաց հեռացաւ,
 Հայաստան ձեռքէդ ամայի դարձաւ:
 Դու կարծեցիր թէ ոսկին մեծ բան է,
 Ամեն մէկ ցաւի, զարդի գարման է. առ
 Ապա հէր ոսկիդ քեզի չի օգնեց լուսաց
 Արնկադ, զաւակիդ թըրէ չի փրկեց:
 Ա՛խ Հայեր, Հայեր, թէ որ ձեր ոսկին
 Կիսով չափ զահուեկը յօդուա Հայ ազգին,
 Առ միշտ կը գալիք ձեր լացն ու կական
 Ու դրախտ երկաւոր կը լաք Հայաստան:
 Գամառ-Քաթիպա,

Այդո բա զի ԹՇ ց' մե Խոյսարուն
 Անձնանց ու սերնէ մի որ զայցեցնար
 Եմիքը նազր ու զի զայցեցնար
 Անձնա ոց լոր զայց մէ զի չը ար
 Նույնի (Սերբիականից) անց ու ձեւը
 Անձնա ու զայց առ սերն ու մասն է
 Ծածկումէր երկիր մութը իրիկուայ,
 Երբ յանկարծ փայլից մի կրակ հեռվում,
 Այնտեղ նատած էր քարափի վերայ
 Մայրը որդու հետ թիւրի յետքում:
 Գիշերուայ յըրտից ծածկումէր որդուն
 Շորի պատառքով մայրը վշտուհար,
 Ասումէր նորան ձայնով դողքողուն.
 Հանգիստ առ, սիրուն, մեծ է ճանապարհ:

Զէ հնար ապրել մեր հայրենիքում.
 Ամեն կործաննեց թշնամին իսպառ,
 Թողինք տուն ու տեղ վառուած կրակում,
 Ո', մնացել հնք անտէր ու անձար:
 Հայրիկդ լինելով մեր գլխի պաշտպան
 Երեկ զոհ զնաց թշնամու սրին,
 Եղբայրդ ընկաւ դաշտի մէջ արեան,
 Քրոջդ, աւաղ, չարեաց մատնեցին:

Փասել եմ քեզ հետ սար ու ձոր լնկել,
 Գուցէ կ'ազատվենք — յայտնի չ' այդ գեռ,
 Ո', ինձ էլ չէ պէտք այսուհետ ապրել,
 Թողի կեանք ու արե քեզ առյ միայն Տէր:
 Ուժը հաւաքած աղգը վշտահար
 Ելաւ պատերազմ վերջին և աչեղ,
 Գուցէ կ'ձագէ խեղձ ազգի համար
 Օր աղատութեան, այդ օր լուսագեղ:

Ասպասելով մենք երկար այդ օրին՝
կանչեցինք կովի հանդէս թշնամուն,
կանչեցինք, մեր կեանքը նուիրած ազգին,
Գուցէ մի օր էլ պէտք գայ քո արիւն:
Գուցէ թշնամին մնայ մեր երկրում,
Ո՛, մեռի՛ր անվախ դու հօրդ նման.

Լաւ է, լաւ, մեռնիլ մի անգամ կռվում,
Քան թէ լծի տակ տանջվել յաւիտեան:

Սարկութիւնից դառնագոյն վեճակ
էլ ի՞նչ կարող է բախտը ուղարկել,
թէ եղար սարսւեկ... ո՛, այն ժամանակ...
Բայց, ո՛չ, սարկութեան չեմք քեզ աղատել.
Ազատութեան համար եմ քեզ փրկել
Եւ հայրենիքի նուիրել փառքին.
Երբ կ'մեծանաս, կ'սկսես ապրել
Ինձ չես անիծիլ, գէհ, քնի՛ր, անդի՛ն:

Ելլուեց մայրը խօսքերն էր երկար,
Մանուկը անշարժ պատկած էր զգիում,
Մօրը գգուանքին պատասխան չկար,
Ել չկար ժպիտ նորա շըմունքում :
Կարծում էր թէ քնից են փակուել աչեր,
Բայց, աւա՞ղ, սառել էր մահիցը ճակատ.
Մայրը սփոեց թուլացած ձեռքեր,
Գիտակի վրա մնաց շնչահատ....

98

Նախակ-Ախալցխայից *) 28 սպիտ, 1880թ.

Բա'րեկամ, դուք իմ կեանքից տեղեկութիւններ էք խընդշրում. մի՞թէ մի բանավ ես արժանացել եմ ազգասեր բարեկամիս այդպիսի ուշագրաւթեան: Ոչ, կարծումեմ, որ այդպիսի հետաքրքրութիւն շարժելէ ձեր մէջ ոչ ուրիշ բան, բացի միայն ձեր անձնական համակրութիւնը դէպի ձեր անիկեղծ բարեկամը: Ի՞նչ տեղեկութիւն տամ ձեզ, երբ իմ կեանքը անցեալում կեանք չե՛մ հաշվում, այլ իսկական կեանք կ'տեսնեմ մի՛այն այն օրից, երբ կ'տեսնեմ ինքն ավար Հայաստանի պատկերը նորա կերտոնական քաղաքը և կազմակերպութիւնը. այդ օրից միայն բուպէներին գին կ'գնեմ, որովհետեւ իւրաքանչիւրը նոցանից կ'անցնի Հայաստանի հողե քառ, վասն որոյ և կ'լինի աւելի մեծագին քանի թէ իմ մինչև հիմայ անցրած բոլոր տարիները միտեղ, որ Տննդեան օրից սկսած, 2 յունիսի 1852 թ., հանումէ 28-ին:

Եւ յիրաւի, մի՞թէ մինչև այժմ՝ կեանքի, հարուստ ազ-
գականների, անսիրտ մարդիկների հետ արած իմ անդադար
կուխեները մի բանի տեղ կարելիէ զնել, երբ այդ պատերազմ-
ների մէջ ինձ չէ ողեղորել ո՛չ Հայաստանի հողը և ոչ էլ

(*) Այսական տպագրումնեմ այն նամակը, որ պ, Գրիգոր Նիկո-
ղոսեանը ուղղել է ինձ, երբ ևս նորա կեանքից, իրբն բարեկամ և
համաքաղաքացի, տեղեկաթիւններ էի ինզրուել : Կամակը տպելուս
նպատակն այն էր, որ կարողանայի ընթերցողներին ծանօթացնել
պ. Նիկողոսեանի ոչ միայն կեանքի, այլ և նորա ձգուումների,
տրամադրութեան և դրական ոճի հետ:

նորա վրա ապրող գեղեցիկ հայուհու ազատութեան սէրը...
Ո՛, այդ հայուհին է, որ մի արիւնըռուշտ օֆիցերի, ձեր
բարեկամի, թրի գեանից քաշքաշվելու ձայնը փոխել ստիպեց
մի թոյլ գրչի ճռճռոցին, որով անհանգիստ եմ անում ես
հայ հասարակութիւնը հէնց այն օրից, երբ տեսայ էրզրումը,
ինքնավար չայաստանի ապագայ մայր քաղաքը, ուր սիրտս
սկսեց ուրիշ կերպ բարախիլ, միտքս ուրիշ կերպ տրամա-
դրվել և լեզուս ուրիշ կերպ խօսիլ: Այն օրից չայաստանի
հողի վրա ինձ հետ մի անբացարեկի փոփոխութիւն պատա-
հեց՝ ես ստացայ ոյժ, վստահութիւն և պէտք՝ դուրս գալ
գրականական ասպարէզը «Մշակի» էջերի մէջ: չայաստանի
հողի վրա զգացի միայն, որ կայ աշխարհում աներեւոյթ հո-
գի, որ ընդունակ է փոխել մարդու բոլոր էակը՝ մահացածին
անդամ շունչ տալ, հոգի փշել և ոգենորել, վասն որոյ այն
օրից ես հասկացայ, որ հայը չի կարող ապրել և երջանիկ
լինել, երբ նա գուրս է չայաստանի հողից, օդից ու ջոից...
Ահա՛, բարեկամ, ինչու եմ գաղարել յիշել իմ անցեալ
կեանքի մէջ տեսած բոլոր մրրիկները, բուք ու հարուածները,
որոնք ձեզ լաւ են յայտնի, ինչպէս իմ համաքաղաքա-
ցուն և պատանեկութեան ընկերիս: Բայց խոստովանվումեմ,
որ մի բան իմ անցեալից միշտ կմնայ անմառաց, միշտ երգելի
և այդ իմ մանկական յիշատակներս են, որ կապված են իմ
պաշտած հանգուցեալ քրոջ Մահիղարի պատկերի, երգերի և
ընկերութեան հետ: Երևի եղել էք ուտիաբնակ Վարդաշ-
նում, տեսել էք նորա շքեղ բնութիւնը, նսեմաստուեր կոյս
անտառները, մերթ կապոյտ, մերթ ձիւնապատ լեռները. այդ
լեռներից դէն մի օրուայ Ճանապարհ է եղել կովկասի սար-
սափ համիլի կացարանը, բունը: Ես յիշումեմ, ինչպէս երա-
զում, որ Վարդաշէնի փոքրիկ ուտիացիներին, նոյսա մէջ և
ինձ, արգելում էին ծնողները դնալ սարից թափող ջրվէժի
տակ լողալու, հաւատացներով, որ աւազակ լեզգիները թա-
փառում են այն տեղ, բայց մէնք միշտ արհամարում էինք

այդ սպառնալիքը և վազում ջրվէժի տակ: Ահա՛ այդ ժա-
մանակ էր, որ, ինչպէս պահապան հրեշտակ, իսկոյն նկատում
էր տանից իմ բացակայութիւնը իմ պաշտած քոյրը և իր
անբաժան լէզզի գեղեցկուհի ընկեր Ֆէհրիի հետ գալիս էր
ետելից և ուսերի վրա փախցնում տուն: Ո՛, քաղցր են ինձ
համար իննը մանկական տարիներս, որ անցրել եմ Վարդաշէ-
նում, որտեղ բաժանեց ինձ իմ լալագին քրոջ գրկից ազ-
գականներիս ցանկութիւնը, որ ուզեցին ուղարկել ինձ անի-
ծեալ թիֆլիս լուսաւորվելու և իմ ազատ բնութիւնը փո-
խելու համար... Աւազ, մի քանի տարից յետ այցելելով
իմ հօրական տունը, էլ չկարողացայ արժանանալ Մահիղա-
րիս գրկին, «եզեայր» կանչելով նա փչել էր հոգին. նորա
սուրբ կուրծքը համբուրելու տեղ, ես համբուրեցի միայն նորա
սառը գերեզմանը....

Ահա՛, բարեկամ, խոստովանվում եմ, որ չայաստանի հո-
ղից դուրս ինձ համար սրբազն՝ միայն այդ գերեզմանն է.
ուրիշ ոչինչ....

Զեր մտերիմ

Գրիգոր Նիկողոսեան,

Գան գիւլում, ջան ծաղիկ.

Ծառիս տակը մանիշակ, ջան գիւլում՝ ջան ջան,
իմ եարը քանց քեզ շիշակ, ջան ծաղիկ՝ ջան ջան,
Ութ թումանիցն անց կենամ, ջան գիւլում՝ ջան ջան,
Քեզ կանեմ եարիս մշակ, ջան ծաղիկ՝ ջան ջան:

Ջաղացիս գուռը տաշած, Սարի թրթն ջուկ թաղա,
Աղիխիս գիւլը քաշած.
Ջաւդ ու մեխակ քեզ մաղա,
Կեռ կեռ ունքերիդ մեռնեմ,
Ինձ պէս հաղանի աղջիկ՝
Ոսկի ղալամով քաշած:

Անձրև եկաւ շաղալէն, Ջրի վերայ սակ պըտի,
Ուռու աերև դողալէն.
Հրէս եկաւ իմ աղբէրն,
Աւ ձին տակին խաղալէն:
Ինձ օրդակը զակ պըտի,
Ի՞նչ եմ անում. թուլնդին,
Իմ եարը շահաբազ պըտի:

Վանդնել ես ախա բախա, Կախատափին խնկի ծառ,
Լաշակիդ տուտը կախ ա,
Սե տղայ, սպիտակ աղջիկ,
Բռնել էք իրար եախա:

Արեն ընկաւ մեր պատին
Արքայութիւն իմ տատին.
Հոգիդ դատուի, այ տատի,
Ինձ խի տուիր կանատին:

Սարէն կ'գայ ձիաւոր,
Մեր տունը չարդախատոր,
Հրէս եկաւ իմ աղբէր,
Երեք օրվան թաղաւոր:

Գան գիւլում, ջան ծաղիկ.

Աղջեկ աղջեկ, աւ աղջեկ,
Աչքերդ չալ չալ, աղջեկ.
Ուներդ շաղի միջին,
Դու մեր տանը հարա պըտիս, կանչելուգ մեռնեմ,
Իմ քիրը քեզ տալ, աղջեկ: Ամ քո հաղի միջին:

Իմ աղբէրը սարումն ա, Մեր տան յետնէն մի մառան,
Շուխին գոտկածալումն ա.
Տղերքն եկան՝ յետ դառան.
Աղբէր ջան, շուիդ ածա:
Ջեռս տարայ թէ բռնեմ,
Քիրդ կոռուայ քարումն ա: Դիպ լալ ու մարջան դառան:

Տեղեմ քցել վոթ կտայ, Ջուր է գնաւմ արխումը,
Բարձ եմ դրել՝ սոթ կտայ,
Մբրբշում ա չարխումը.
Մեռնեմ միջի քնողին.
Էն օրին էրնեկ կուտամ,
Անոյշ խնկահոս կ'գայ:
Ջումարդ կանգնես խալխումը:

Ես աղջեկ եմ, աւ կուզեմ,
Ալ ծալուծալ կուզեմ.
Որ տունը որ ես մանեմ,
Ում տունն էլ դուն երթաս,
Ոսկին սարէսար կուզեմ:
Կապէդ սլիտի,
Բոխէդ ծալէծալ պիտի.
Ուկին սարէսար պիտի:

Աղբէր հանաքիդ մեռնեմ, Ես աղջեկ եմ՝ ալ կուզեմ,
Ոսկէ գանակիդ մեռնեմ.
Բոխէդ ծալէծալ կուզեմ:
Ճամբայ երթող շէկ աղբէր,
Երբ որ եարիս տուն կերթամ,
Դուքան բազարիդ մեռնեմ:
Գոտիկս թիրմա շալ կուզեմ:

Երգ պանդուխա պատանեկի.

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրոն վաշտակ,
Գէպի ո՞ւր, ինձ ասա',
Յուչում ես այդպէս արագ:



Ա՛լո, թըրո՛իր, ծիծեռնակ,
Ծընած տեղս-Աշտարակ,
Անդ շինի՛ր քո բունը
Հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու ալեռ
Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նորա,
Ինձնից շատ բարեւ արա',
Աս' թո՛ղ նըստի լսյ
Իւր անբաղդ որդու վերայ:

Դու պատմէ թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմես,
Միշտ լալով, ողբալով
Կեանքս մաշուել, եղել կէս:

Ինձ համար ցերեկը
Մութ է շըջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Բունը մօտ չե դալիս:

Ասիր, որ չե բացուած'
Թառամեցայ միացած,
Ես ծաղեկ գեղեցիկ
Հայրենի հողեց զրկած:

Թէ՛հ, սիրո՛ւն ծիծեռնակ,
Հեռացի՛ր, թո՛իր արագ
Դէպ ՚ի Հայոց երկիրը,
Ծնած տեղս-Աշտարակ:

Կեցցես, քաջ Սամէլ, փառք ու պարծանք Հայ անուան.
Կեցցես, քաջ Սամէլ, դու ես միմիայն
Փրկիւ տան Հայկազեան:

Դու որ ուրացող խարդախ քո հօրից
Վրէժ առնել պատրաստ ես,
Քեզ միայն՝ քեզ միայն փառք Հայկազոնքս կ'տանք,
Քեզ դարէդար յաւիտեան:

Կեցցես, քաջ Սամէլ, փառք ու պարծանք Հայ անուան.
Այդ մեծ քաջութիւն վեհ անունդ կ'պասկէ,
Այդ ջերմ հաւատը քեզ կ'պահպանէ
Եւ կ'զօրացնէ, զիտենք իսկապէս
Թէ քաջ Հայի պէս նահատակ կ'գառնաս.
Ուստի քեզ միայն փառք Հայկազոնքս կ'տանք,
Քեզ դարէդար յաւիտեան:
Կեցցես, քաջ Սամէլ ... և այլն:

Герасимъ

102 АЙРАПЕТОВЪ

Կապոյտ երկնքում
Աստղեր են փայլում,
Այլեւ լուսնակը,
Ամենից սիրուն,
Ամենից փայլուն
Է արեգակը:

Բայց չէ ոչ մինը
Վարդի նմանը,
Նա է բնութեան զարդ:
Սիրուն աղջեկներ,
Ինչպէս ծաղեկներ,
Ամեն տեղ շատ կան.

Բայց իմ ընտրածը,

Արտիս սիրածը

Ծաղեկներ կան շատ.

Գ. Բարիսուդարեանց

Կրամբամբուլի.

(Թարդ Ռուսերէնից)

Կրամբամբուլին էս էն օղին է, առ բարձր ու առ հայտ
Որ մեզի քաջ ծանօթ է, առ անուշաբար վեճու ու աջ է
Որոյ համբչ տեսնեն առաջ մասն ուզ անու բարձր
Աւսանողին ամօթ է. առ անու առ զարձար բարձր
Բայց հանապաղ, իմ սիրելի,
Մենք կոնծումենք կրամբամբուլի:

Հայրս անդադար ինձ գրում է, առ առ անու անու քաջ
,,Որդի-ջան շուտ աւարտէ, առ զանով ժանուարը՝ այ
Տե՛ս, գրերդ լաւ սերտէ, առ առ այս հայ քաջ քայլ
Ժամանակդ արագ անցնում է. առ այս ուզ անու
Բայց նորա պարոն որդին անու այս զարձար բարձր
Կոնծումէ կրամբամբուլի, առ անու հայ սացը կրամբամբիմբամբուլի, կրամբամբուլի:

Թէ գրտին ու հոգսը ինձ նեղումէ,
Թէ իմ քէֆը տեղը չէ,
Թէ աղջելը ինձ խարումէ
Ու հաւատարիմ չէ:
Կասեմ՝ Աղջեկ, իմ նազելի,
Քու տեղ կ'սիրեմ կրամբամբուլի:

Թէ լերդս ու թոքս իմ մաշուել է,
Գլուխս էլ սաստիկ ցաւումէ,
Թէ որ խմեն ու քէֆ անելը
Բրժիշկն ինձ արգելումէ,
Բայց ինչ ցաւ կ'ուզէ ըլի,
Ես կ'կոնծեմ կրամբամբուլի:

Երբ մայրս ինձ մի հարս ձարել է, առ առ
Առումէ որ՝ պղսակուեմ,
Եւ պարտքն ու կարգն ինձ ստիպել է,
Որ ես ճաշ ու քէֆ սարքեմ,
Ես ճաշի տեղ, իմ սիրելի,
Կ'առնում առաս կրամբամբուլի:

Բայց երբ կուգայ կեանքիս վերջը,
Մահս-էլ առաջիս տեսնեմ, մողիս միանձնու թ
Օղին կ'ածեմ բաժակիս մէջը, առ առ առ
Հոգեհանիս-էլ կ'ասեմ.

Վերջին անգամ, իմ պատուելի,
Ե'կ տուքացնենք կրամբամբուլի,
Կրամբիմբամբուլի, կրամբամբուլի:
Ք. Պատկանեան:

Պանդուխտ առ կուտնկն.

Կոռ'նկ, ուստի՝ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս,
Մի վագեր երամիդ՝ շուտով կը հանիս,
Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս.

Թողեր եմ ու եկեր իմ մըլքերս ու այգիս,
Քանի որ ա'խ կ'անեմ՝ կու քաջուի հոգիս,
Կոռ'նկ, պահ մի կացի՛ր, ձայնիկդ ի հոգիս,
Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալսող
Զայնիկդ անուշ կուգայ քան զջրը տօրապ,
Կոռ'նկ, Պաղտատա իջնուս կամ թէ ի Հալապ,

Կոռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

ԱՀՐՈՒԵՐՆԻՍ կամեցաւ, ելանք գընացանք,

Այս սուտ աստղներիս դարդերն իմացանք.

Աղուհացկեր մարդկանց կարօտ մշնացանք.

Կոռուպցիոն մեր աշխատհէն խաղըիկ մի չունի՞ս:

Աստղնաւորիս բաներն կամաց կամաց է,

Միթէ Աստուած լըսէ, դրանակըն բայց է.

Ղարիպին սիրտն է սուզ, աչեղն՝ ի լաց է.

Կոռունկ, մեր աշխարհէն խաղըիկ մի չունի՞ս:

Աստուած, քեզնէ խնդրեմ մռւրպէթ ու քէրէմ,

Վարիպին սիրտն է խոզ, ճիկերն է վէրէմ.

Կերած հացն է յեղի ու ջուրն է հարամ

Կուռ' լնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

ՂԵՐԳՎԵՐ օՐՆ զիտեմ, ոչ ըգկիրակին.

Զարկած է զիս շամփուրն, բըռնած կը բակին.

Այրիլըս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ.

Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Պաղտամու կուգաս, կ'երթա՛ս ՚ի սէհրատ,

Յրդթիկ մի գրքեր եմ, տամ քեզ ամանաթ.

Աստուած թող վըկայ լինի քո վըր ադ.

Տարեալ Հասուացես զայդ իմ սիրելեաց:

Գրքեր եմ մէջ թրղթիս՝ թէ հոս մընացի.

ՕՐԻԿ մի օրեր զաշերս չլրացի.

Սիրելիք, ձեզանէ կարօտ մընացի.

Կռունկ, մեր աշխարհէն խապիճկ մի չունի՞ս:

Այսուհետեւ մատեղեր, գնայու ես թէտպիր.

Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր.

ինձ պատասխան չտուիր, ելար գնացիր.

Կոռունկ, մեր աշխարհէն գընա՛ հեռացի՛ր:

105

105

Հայաստանցի պահնդովիմուր.

Հայաստանցի պահնդովիմուր է իւր երկիրները և
կեզրոնանումէ քաղաքներում։ Աղքատութիւնը սահմանմէ¹
նորան թողուլ իւր տունը, իւր ընաանիքը, իւր ամուսինը,
իւր գաւակները և գնալ Պօլիս կամ այլ քաղաք, աղքատու-
թիւնից ազատվելու համար։ Բայց այդ աեցերում ևս, նորան
հանգեց է գուրս գալիս, էապէս, նոյն աղքատութիւնը, գու-
ցէ մի փոքր քաղաքային ամոք կերպարանքով։ Դիցուք, գե-
ղում ստանումէր նա օրեկան հինգ զուրուշ, ինկ քաղա-
քում ստանումէ ութն կամ տասն. բայց ի՞նչ օդուտ այն
երեք կամ հինգ զուրուշ յաւելուածից, մինչ չէ մնում
նորա ձեռքում։ Քաղաքի մէջ, համեմատութեամբ շինական
կեանքին, եթէ ոչ աւելի գէթ հարիւրին քառասուն տաւել
է ծախըր։ Եթէ մարզը հինգ ստանալով աղքատ էր գեղում,
աղքատ կը լինի Պօլսի մէջ կամ այլ քաղաքներումց ութն
կամ տասն ստանալով։

Բացի սորանից, ընտանիքան կեանքից զրկվել, դժու-
խային աշխատութիւնը՝ որով պիտի շահի նա այն մի քանի
յաւ եկեալ, դու բռնչերը, անառուն, վարատական և անմաքուր
կեանքը, որ պիտի անցուցանէ, նա զանազան իջևաններում:
Արեկայեան պիտի գայ վաստակեալ ու ժամանակի շատ անգամ
և վաստուած անդամներով, ինք լուսաբացին նոյն եգիպտա-
կան ծառայութիւնը, որ սպառում է նորան: Զկայ այն ընտա-
նեկան միսիթարութիւնը, ամու տու և զաւակների մտերմական,
գողարիկ և անմեղ հայեացքը, որ առանց ձայնի, առանց խօ-
սելու, կարող են ամօքել Ճակատագրի գաւոնութիւնը, և այս
բոլորը անխօրհուրդ, առանց Հիմնական հաշուի և չկամե-
լուց արմատական կերպով դարձնան տանել իւր ադքատու-
թեան: Եւ այսպէս, իբրև գրասա, իբրև մեքենայ, ծառայե-

լով արտասուելի օտարութեան մէջ, տասն-քսան տարի, կամ
մեռանումէ այնտեղ, թողնելով իւր ընտանիքը ծայրացեալ.
թշուառութեան մէջ կամ վերադառնումէ գէպ ի իւր եր-
կիրը: Վերադառնումէ... բայց ոչ այնպէս առոյգ և զուարթ
ինչպէս դուրս էր եկել այն տեղից, այլ հասակն առած,
ուժաթափ և թօշնած: Վերադառնումէ իւր տունը, երբ կո-
րուսել էր աշխատելու ընդունակութիւնը և յարմարութիւնը:
Ուրեմն, վերադառնումէ նա միմիայն իւր ներկայութեամբ,
իւր աղքատ և կարօտ ընտանեաց թիւը յանելցնելու համար:
Եւ ահա նորա տասն և ութը կամ քան տարեկան որդին,
որ աճել և զօրացել էր իբրև մի ծաղիկ իւր սեպհական հողե
վերայ, առնումէ ձեռքը իւր հօր պանդխտական դաւազանը
և գնումէ....

— Ո՞ւր բարով: «Պոլիս ծրապիզօն, և այն և այն:»
— Ինչի՞ համար: «Աշխատելու և ընտանեաց օգնելու:»
— Աշխատելու և ընտանեաց օգնելու: — Կրկնումէ խօսա-
կիցը անհնարին տիրութեամբ:

Անցնումէ սորա վերայով մի քանի տարի, յանկարծ, այս
նորեկը լուր է առնում, որ իւր ծերունի հայրը վախճանելի,
մայրը հիւանդ է: Մի փոքր ժամանակից և մայրը մեռնումէ:
Պանդխտակիցքը գալիս են նորան միսիթարելու: Մի երկու-
րաժակ գինի... մի քահանայ, մի «հոգւոց» և պանդոխտի
սիրու պաղումէ այն աշխարհից, ուր ծնել էր նա.... ի՞նչ
բանի համար վերադառնայ: Կա գտնելու չէ իւր տունը, իւր
ծնողքը նորան աչքին պիտի հանդիպին երկու գերեզման և
մի ամայի բնակարան, եթէ և այն չէ անցել օտարի ձեռք:
Նա որոշումէ մնալ պանդխտութեան մէջ, և այս որոշումնի
յօժարումէ մնալ տակը խմել թշուառութեան բաժակը:
Այս մնումէ նա, բայց տունը մարեցաւ: Մի գերդաստան
ընկաւ հասարակաց խումբից:

Արդեօք ո՞րքան գերդաստանք ընկնում են այսպէս:
Մ. Նալբանդեանց,
106

Արշալոյս Հայաստանի.

Հայաստանեաց սե տիրագին օրերը
Փարատեցան, նոր հորիզոն բացուեցաւ,
Մեզի համար չեն այն մթին ամպերը
Զի արշալոյս պայծառ զարձեալ փայլեցաւ:
Յուրախութիւն, ո' Հայեր,
Որդիք Հայոց ւԱրամայ.
Զեղ փառաւոր պողոտայ
Հորդեն երկինք լուսաբեր:

Դուք դիւցազանց Ճետ էք, Հայեր, քա՛ջ եղիք.
Յառա՛ջ գացէք, յառա՛ջ, ահա ասպարէզ.
Մայր Հայաստան Ճեղ կնայի աւասիկ,
Մեղմացուցէք իր արտասուքն աղեկէզ:

Թշուառութեան բաժակը
Մինչեւ տակը խմեցինք
Արդ ուղարկեց մեզ երկինք
Աւետաբեր հրեշտակը:

Այս հրեշտակը, որ Վարդանայ վեհ հոգին
Ի՞ւս արայը ինահատակաց սուրբ գունդը
Ներկայացուց ամենակալ Արարծին
Մինչ կրակապաշտ Պարսիկն երթայր անդունդը:
Արդ Ճեղ կու գայ, Հայկագունք,
Նոր աւետիս բերկիրելով,
,,Զէ՛ այլ Ճեղ բաղդըն խոսով,
Գուք քաջարեաց, ո' մանկունք:

Օ՞ն խայտացէք, գողթան երգեր թող՝ հընչեն,
Թող՝ արձագանդ տան և հովիտք, բլուրներ.

Մեր սրտերը, որ սուրբ սիրով կը տրոփեն,
Թող՝ միանան ու կորնչե անսուրբ հեռ:

Ի՞ամէն տարի ցնծութեամբ

Մեր այս շքեղ հովտին մեջ

Հեշտին պարուց ելեէջ

Ընեմք դարձեալ միութեամբ:

Սիմն չայկ Մ. Ֆէքիան:

107

Գերի Յոյն.

Հայրենիք սրբազն, իմ սիրուն աշխարհ,
Թըռչումեմ գետի քեղ հոգւովս անդադար.
Բայց, աւաղ, այս բանդում փակված եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կովում և ես:

Հանապաղ տանջուեցայ քո ճակատագրով,
Սրտում շղթաներիդ ձայներ կրելով
Չեմ կարող մոռանալ իմ ազդ հարազատ,
Ախ, կամ ոչնչանալ, կամ լինիլ ազատ:

Քաջ ընկերներով հեշտ է ինձ կովել,
Եւ սուրբ գործքի համար քաղցր է մեռանիլ.
Բայց, աւաղ, այս բանդում փակված եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կովում և ես:

Զը գիտեմ ի՞նչպէս է կոխւն հրգեհվում,
Ես չունիմ ոչ ինչ լուր, բայց լուրն է թոջում . . .
Տարվում է միշտ համբաւ սպանութեան ահեղ,
Թափում է ազգարիւն, բայց ես չեմ այն տեղ:

Ա՛խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,
Եւ վառ արշալուսով քո օր կարմբում է . . .
Թող՝ այս տեղ չարչարվեմ անծանօթ կապկած,
Միայն քեղ, չայրենիք, տեսնեմ ազատուած:

Յովհաննէս Քուչուբէգեամս:

108

Երգ 'ի դէմս քաջին Վարդանայ:

Հայրենասէք Արամեանք,
Զի՞ կայք 'ի քուն ընկղմեալ,
Բացէք զաշ ձեր հոգեկան,
Տեսէք զօրս ձեր ժամանեալ:

Ուր են փառք, ձիր ձեր նախնեաց,
Ուր են պատիւ վեհ արանց,
Որ զաշխարհ չայստանեաց
Լցին փառօք դիւցադանց:

Յառաջ մատիք ինձ լսել,
Նաւաւիդք քաջին չայկայ,
Ես կամիմ ձեզ արդ պատմել
Զազգասէք գործ Վարդանայ:

Որ զգլուխ իւր կենօք չափ
Եղ 'ի փրկանս իւր աղղի,
Եւ կընքեալ զայն իւր արեամբ
Եղե փրկիչ չայրենի:

Սուրբ խաչ փայլեաց փրկչական
Հոգւոց ազգիս չայկական,
Պահեաց զմեղ, Տէր Աստուած,

Եւ աշխարհիս վարձանաց: 108
 Լուսաւորեաց չայաստան,
 Լուսով խաչին փրկչական.
 Հնչեա' աշխարհ ամենայն
 զփող մեծի աւետման:

Բարձրացի՛ր արդ, Արարատ,
 ՊՃՆԵԱԼ ծաղկօք զքոյդ գագաթ.
 Աղդիս չայոց խնդութեան
 Լե՛ր դու վկայ յաւիտեան:

109

Յաւուր գործադրութեան ազգաւ-
 յին սահմանադրութեան, 20 օդու-
 տոսի 1860 Կ. Պօլիս.

Հայրենեաց սիրով վաւուած վեհ սրտեր,
 Ի՞նչ կը յապաղէք ենել ՚ի հանդէս.
 Ի՞նչ կը յապաղէք. — սիրտ կը դիմանայ,
 Սիրտ որ ազգամէր ըլլաւ կը ցանկայ,
 Տեսնել հայրենեաց այսքան բիւր աղէտ,
 Եւ դու անտարբեր ցարդ մնալ յաւէտ:
 Խեռ ատելութեան և չար նախանձու
 Սերմերն ու հոգին հեռու մղենք, հեռու,
 Սիրտ սրտի կապուած, թե թեփ տուած,
 Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացուած.
 Օ՞ն, վազենք յառաջ ՚ի սուրբ խաչն վստահ,
 Օ՞ն, երթանք յառաջ, և անձնանուէր՝
 Հայրենեաց օդտին ըլլանք ու խտանուէր.
 Հայ, մի վհատիր, սիրտ ո՛ո. և սիրտ առեր,

Տկարք զօրանան, քաջք խրախուսին,
 Վատերը բացուին, վատերը զատուին,
 Ճշմարիտ Հայերն յառաջ թող անցնին.
 Խաչ, սէրն են նշան Ճշմարիտ Հայուն,
 Խաչ, սէրն են պարծանք Ճշմարիտ Հայուն:
 Սիրոյ դրօշակներ
 Թող արդ պարզուին,
 Հաշտութեան ձայներ
 Թող արդ հնչուին.
 Հայն մէկ սիրտ եղաւ
 Սիրով միացաւ,
 Սուտ են, որ ըսեն
 Հայք զերար կատեն: //

Սուրբ Արարատեան մայր աթոռոյն զիրկը
 Եկէք, Հայկազունք, Եկէք միանանք.
 Եւ սփոփենք մեր վշտացած մօր սիրտը,
 Օրհնելով Տէրը, որ մեղ պարզեց
 Մեր Ազգին կապն ու հոգին,
 Ազգային Սահմանադրութիւն
 Յաւերժմացի արդիւնաւէտ:

Ա. Պ. Պ Փափազեանց:

110

Ելրդ ծաղկացանի. »Ծիծեռնակի« եղանակով.

(Թարդ. Առւասկանից)

Հատիկ դու, իմ հասիկ,
 Ահա մութ քո ողնիկ.
 Որեգից զբկվերով՝
 Կընջեր աստ դու, խզմիկ:
 Առխակ Հայաստանի Ա. հատոր, Ա. գ. 9.

Ահա՛ ես կը ծածկեմ
Քո երես սառ հողով,
Գերեզման կը շինեմ
Քեզ համար իմ ձեռով։

Եթէ դու լինէիր
Բանախօս կենդանի,
Գուցէ ինձ կ'ասէիր
Տղառուր բան այսպիսի։—

«Զրկվելով՝ արեգի
Շողողուն վառ լուսից,
Եւ ի՞նչ կեանք այսպիսի
Պիտ' կը թեմ այս բանդից։»

Համիկ դու, իմ համիկ
Մի՛ աղխրիր հոգալու,
Այս տեղ է՛ շատ փափկիկ,
Եւ հանգիստ քընելու։

Շուտով՝ դու կը զարթնես
Գեղեցիկ ոստերով,
Եւ կը թին կը լինես
Նոյն ծաղիկ՝ լսւ հոտով։

Համիկ դու, իմ համիկ
Կէ՛ լսի՛ր իմ խօսքին,
Որ կասեմ ես այժմիկ
Մի գուխովին։—

Նոյնպէս ինձ կը սպասի
Այդպէս մութ գերեզման,
Որ մարդիկ տը խրալի
Հառաւըն իմ թաղման։

Ես այնտեղ նընջելով՝
Կը սպասեմ մեծ յուսով,
Երբ Փրկիչ ինձ ձայնէ.
Ավեր կացիր, Դրիգորէ։»

Ա. Գրիգորեանց.

Ես հայոց ազգին մէկ բան եմ ուզում,
Եւ այդ մէկ բանն է-հիմնաւոր ուսում։

Հայոց երգերը, սէրն և գինին
Մեր շրջանիցը անպակաս լինին.
Ապրինք պարզ սրտով, միաբան, ուրախ,
Սիայն չար բանից ունենանք մենք վախ։

Եղբարք սիրելիք, մեր որտերու մէջ,
Ինչպէս երկնային արեգակ անշէջ,
Թո՛ղ պահէ հաստատ երկնային Տէրը¹
Անդին հայրենեաց բոցավառ սէրը։

Կեցցէ մեր հաւատ, երգե՞նք միաբան,
Մեր ազգայնութեան միակ պահապան,
Նորա մոռացող, ուրացող հային
Անուանենք ընկեր մասնիչ Յուղային։

Կեցցէ յաւխտեան մեր գանձ թանգարին—
Մեր հայոց լեզուն քաղցրիկ նորածին.
Թո՛ղ նա զօրանայ ծաղիկ և ածի
Ապահովութեամբ Աստուծոյ աջե։

Հայոց երգերը սէրն և գինին
Մեր շրջանիցը անպակաս լինին.
Ապրինք պարզ սրտով, միաբան, ուրախ,
Սիայն չար բանից ունենանք մենք վախ։

Հայոց աղջեկներ՝ ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս էք զալիս՝ ասումեմ ես ա'խ,
Հալվումեմ, հալվում օտարութեան մէջ,
Ա'խ, սիրտը խորվում, ցաւիս չրկայ վերջ։

Երբ կարմիր գինին բաժակումս ածած՝
Սեղանիս վըրայ առաջս է դրած՝
Աչքըս ակամայ վրան եմ ձրգում,
Զեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում:

Տեսնում եմ և, ախ, միտքս է մոլորվում,
Դառն արտասունքով աչքըս պրղտորում,
Կարծում եմ բոլոր աշխարհն մըմնեց,
Արևուշ խաւրեց, էնդուր որ տխրեց:

Հայոց աղջեկներ, ձեր հոգուն մեռնեմ,
Զեր սիրուն աչերն էլ ե՞րբ կրտեսնեմ,
Էն սե սե աչերն սե ունքով պատած,
Կարծես՝ երկնային դալամով քաշած:

Էն սե սե աչերն, որ շատին սպանեց,
Բայց էլ շատին դըժոխից հանեց,
Ես-էլ կենդանի աեղովս եմ մեռած,
Առանց կըրակի երուած, խորոված:

Էլ ե՞րբ կրտեսնեմ ես ձեզ մանգալիս
Բաղ ու բաղսայում սէյրան անելիս,
Ինչտեղ ամօթից վարդն-էլ է դեղնում,
Երբո՞ր ձեր կարմիր թըլքըր աեսնում:

Բըլքուն-էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
Թըլքում է, թըլքում, ամպերում կորչում
Եւ իր Արարչի տեսածն ասելիս
Փառք քեզ, Տէր Աստուած, փառք քեզ
է կանչում:

Հայոց աղջեկներ, ի՞նչ անուն տամ ձեզ,
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,
Թէ մարդ անուանեմ՝ բէդամաղ կ'անեմ,
Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորուած եմ եօ:

Մոլորուած եմ ես օտար աշխարհում,
Հաւատոն-էլ օտար, օտար և լեզուն,
Աղջեկն-էլ օտար ու ձեզ չի նըման,
Հայոց աղջեկներ, դուք էք աննըման:

Զեր սէրն է միայն սըրտումս պահած,
Զեր սիրով միայն եմ ես կենդանի,
Զեր սէրը միայն էս կեանքս մաշուած
Օտարովթեան մէջ դեռ կըպահապանի:

Գէորգ Միրիմանեանց.

113

Պարերգ.

Հայկազունք, պար բռնենք,
Թւ ՚ի թւ օ՞ն ելնենք
Ցնծութեան ձայներով,
Եւ զուարթ սրուերով:

Զի ահա՛ ՚ի նոր բաղդ
Չայն կուտայ երկնելք արդ,
՚ի սուրբ կոչում ուխտեմք հաստատ
Անձնուէր գոլ պատրաստ:

Ա. Պ. Պ. Փափազեանց.

114

Հապա, քաջազունք, կենդանիք սարսեն
Հայոց զաւակունք, ջինուցդ ՚ի ձայնէն.
Առէ՛ք աղեղունք Շեշտակի նետեր
՚ի մահ երագունք. Թափեցէ՛ք, քաջեր,
Անտառք ըսպասեն Յերէս անվեհեր:

Դ Գ Հ Յ Հ.

Վաղեմք, ուր վասնդ, Յաղեղ և մըկունդ,
Այս մեր բրօսանք, Յուսով սրտաթունդ.
Որսոց արշաւանք Շամփրեմք կենդանիս,
Մարտից են կրթանք: Երբ զթշնամիս
Երթամք գունդ 'ի գունդ, ի մեր հայրենիս:

115

Երգ երեկոյեան.

Հրեշտակ գուարթուն
Հրզօր պահապան մեր,
Որ զտիւն ողջոյն
Ըդմեղ խնամեցեր:
Ի մուտս արիւոյն
Դու լոյս անստուեր ես մեր,
Անմուտ արե
Կացցես մեզ այս դիշեր:
Քուն քաղցր անփորձ
Շնորհեա՛ 'ի փառս Աստուծոյ
Եւ դճողս հոգւոց և մարմնոց կեցո՛:

Գ. վ. Այլապեանց:

116

Վարդան Մամիկոնեանի երգը.

Հիմի է՞լ լըռենք, երբ մեր թշնամին
Երբ մեր թշնամին իր սուրն է զըռել,
Եր օրհասական սուրբ մեր կըսթին,
Ականջ չի զընում մեր լաց ու կոծին,
Ասացէ՛ք, եղբարք հայեր, ի՞նչ անենք,
Հիմի է՞լ լըռենք:

Հիմի է՞լ լըռենք, երբ մեր թշնամին
Դաւով, հրապուրքով աիրեց մեր երկրին,
Զընջեց աշխարքից Հայկայ անունը,
Հեմքից կործանեց Թորգոմայ սունը,
Խըլեց մեզանից թագ, և խօսք, և զէնք,
Հիմի է՞լ լըռենք:

Հիմի է՞լ լըռենք, երբ մեր թշնամին
Խըլեց մեր սուրբ—պաշտպան մեր անձին
Մըշակի ձեռքիցն էլ խոփը խըլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կըռեց,
Վայ մեզ շղթայով կապած գերի ենք.
Հիմի է՞լ լըռենք:

Հիմի է՞լ լըռենք, երբ մեր թշնամին
Սոսկալի զէնքը բըռնած մեր զըլիխին,
Կուլ տալ է տալիս արտասունք առատ,
Աղեխարշ բողոք վարուց ապիրատ.
Մեր զլուխը լալու Նվիրատ ո՞ւր պըտունք,
Հիմի է՞լ լըռենք:

Հիմի է՞լ լըռենք, երբ մեր թշնամին
Լիրբ զոռոզութեամբ զըրած իր հոգին,
Արդարութեան ձայնն հանած իր սրտից
Արտաքսումէ մեզ մեր բընիկ երկրից,
Պանդուխո, հալածեալ եղբարք, ո՞ւր զիմենք
Հիմի է՞լ լըռենք:

Հիմի է՞լ լըռենք, երբ մեր թշնամին
Անդոհ մեր բերած ծանր զոհերին,
Իւր լիրբ, նըզոված ձեռքը կարկառեց,
Ազգութեանս մերջին կապը պատառեց.
Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք,
Հիմի է՞լ լըռենք:

Հիմի էլ լուենք, երբ մեր թշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր Եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գայլազգեստ գառին մեզ գըլուխ դրաւ,
Սուրբ Խորան չունինք, արդո՞ւր աղօթենք:
Հիմի էլ լուենք:

Հիմի էլ լուենք՝ մարդիկ ի՞նչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Չե՞ն ասիլ որ Հայք արժանի էին
Այդ սարսկական անարդ վիճակին.
Մեր սուրբքաջնախնեաց գործերը գիտենք,
Մինչև ե՞րբ լուենք:

Թո՞ւղ լուէ մունջը, անդահալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՞կ անվախ ենենք թշնամու առաջ,
Դոնէ մեր փառքը մահով յետ խլւենք
Ու այնպէս լուենք:

Ո. Պատկանեան.

117

Վայրիկոնեան մեծ վահանի
պատասխանը.

Հիմի էլ խօսենք, եղբարք, հիմի էլ
Երբ ընտանեկան երկարակութեամբ
Ուրիշ բան չունինք, բայց իրար դաւել
Եւ սարսափելի ազգուրացութեամբ
Մեր նախնեաց ուխտը ոոքով կոխել ենք.
Հիմի էլ խօսենք:

Տառը

Հիմի էլ խօսենք երբ քաջն վարդան
Վաթսուն հազարից, հազարով մնայ,
Մինչ մնացել էր Պարսից լոկ մատեան
Գունդը, մեր վատութեամբ ողջ կորուսելենք
Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ օտարից շատ
Սենք ենք մեր ազգի արիւնը խմում.
Սովորատնով լցինք Դուին, Արտաշատ,
Ծիմի մէջ կորաւ խաչն եկեղեցուն.
Երբ այս ամենը մենք կատարել ենք,
Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ հրապարակում
Պարսիկը առակ արել է Հային.

«Եթէ Ասորու նման աշխարհում
Զայ մի վատ ազգ, բայց քան Ասորին
Ել վատ է Հայը», մենք այս տանումենք,
Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ իշխանութիւն
Ծախումէ անարդ հացկատակներին,
Մինչ սարուկ մարդիկ նստան մեր զլիին
Եւ մեզ կարծումեն հող իրենց ոտքի,
Ու մենք մեզ կոխող ոտքը լիզումենք,
Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ լուսաւորչի
Բնիկ ժառանգի թեկերը կտրած,
Անարդ Պարսիկ՝ այս ու այն թեմի՝
Վարդումէ տեսուչ ըստ իւր չար մոաց.
Եւ մենք գեռ «կեցցէ արին» գոռումենք,
Հիմի էլ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,
Երբ ողջունումենք մենք այդ չքերին,
Որ դրան շուն են, և մեզ տեսնելիս՝

Շուտ դիմակները դնում երեսին,
Այդպիսիներին դարձեալ պատվումնք.
Հիմի է լ խօսենք:

Ել մեր երեսին մնա՞ց մի կաթիւ
Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք.
Ո՛չ, թէ չենք ուզում հողեց հող կորչել,
Թշնամու արիւնով մեր թրին ջուր տանք,
Ազգ, եկեղեցի փրկենք, աղատենք,
Ապա թէ խօսենք:

Միքայէլ Նալբանդեանց,

118

Յառաջ գնացէք.

Հայկական սեռի արի զաւակներ,
Ժամ է մեզ պաշտել մեր իրաւունքներ.
Ահա' ծագեց արշալոյար,
Ելէք, դուք էք Հայի յոյսը.

Յառաջ, յառաջ գընացէք:

Յառաջ գընացէք, սիրելի՝ Հայեր,
Հերիք է թըմրած մնացինք շատ դարեր.
Հասաւ, եղբարք, ժամանակը,
Զեղ կանչումէ ազգի պարտքը.

Յառաջ, յառաջ գընացէք:

Բարձրացրէք կրկին Հայութեան վառքը,
Այն որ ունէին վաղ ձեր նախնիքը. . .
Թո՛ղ օտարը դարձեալ չ'ասէ
Թէ Հայութիւն դեռ քընած է . . .

Յառաջ, յառաջ գընացէք:

Յառաջ գընացէք, ամօթ այն հային,
Որ չէ ծառայում իւր ազգի շահին.—
Նա անկիրթ է, խեղճ և թշուառ,
Նա օտար է, չէ մեր եղբայր.

Յառաջ, յառաջ գընացէք:

Յառաջ գընացէք լուսաւոր խելքով,
Կեանքի արժանի ազնիւ պարծանքով.
Արուեստ, ուսում և գիտութիւն
Խոստանում են մեզ փրկութիւն.

Յառաջ, յառաջ գընացէք:

Յառաջ գնացէք, ստացէք կրթութիւն,
Գիտեմ, չէ սառել ձեր մէջ այն արիւն
Որ երբեմն մեր սուրբ նախնիք
Ծաղկացրին ազգ ու Հայրենիք.

Յառաջ, յառաջ գընացէք:

Յառաջ գընացէք, ձեզ մեր Հայրենիք
Պիտի ճանաչէ Հարազատ որդիք.
Նա ձեր համար պատրաստ ունի
Դամնեայ պսակ ձեզ արժանի.

Յառաջ, յառաջ գընացէք:

Յառաջ գընացէք, յառաջ, եղբայրներ,
Ձեռք ձեռքի տալով, միացրած սրտեր.
Ահա' մօտ է յաջողութիւն,
Ահա' հանդէպ ձեր բարութիւն. . .

Յառաջ, յառաջ գընացէք:

Յովհաննէս Քուչուբէգեանց:

119

Հայ ապրինք.

Հայապրինք, Եղբարք, մարդկութեան մէջը,
Հայ կընքեր է մեզ պատմութեան էջը.

Հայ անուամբ ըզմեղ կողջունեն Երկինք. —
Եղբարք, հայ ապրինք:
Հայ ապրինք. — մեր հայրն է այն Դիւցագուն,
Որ զազատութիւն սովորեցոյց մարդուն,
Ու մեղ վեհ Անուն մը տրւաւ բաժինք. —
Եղբարք, հայ ապրինք:
Մեր աշխարհն է սուրբ: — Մեր հոգուն վըրան
Աստուած է քալեր, հանելով զԱղամ.
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ Ինք. —
Եղբարք, հայ ապրինք:
Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին օրբան.
Երկիր փրկութեան է մերս Հայաստան,
Կրօնից նախկին սեղան է Մասկը. —
Եղբարք, հայ ապրինք:
Հայուն պերճ անուն՝ ո՛չ միայն յերկիր՝
Այլ և յեթերց մէջ ըռղայ լուսալեր.
Քաջ Հայկին աստեղք անմահ են յերկինք. —
Եղբարք, հայ ապրինք:
Հայ ապրինք. — ո՞ր ազգ կայ Հայուն նըման,
Որ ունենայ հին պարձանկներ այսք ան,
Ո՞ր ազգ հայուն պէս շքեղ Հայրենիք. —
Եղբարք, հայ ապրինք:
Ըսէք, ո՞ր ազգին չորս առաքեալներ
Երկնից թագաւորն է դեսպան զրկեր,
Ո՞ր թագաւորին հետ թղթակցեր ենք. —
Եղբարք, հայ ապրինք:
Ո՞ւ կրնայ համրել սրբոց մեր զանուանք,
Մեր պատմութիւնն է նահատակաց յանկ.
Մեր եկեղեցին յերկրի է երկինք. —
Եղբարք, հայ ապրինք:
Քրիստոսի ունինք անդրանիկ օրհնենք,
Հաւատոց եղանք միշտ ախոյեան մենք.

Հայը զարմացոյց զերկիր և զերկինք. —
Եղբարք, հայ ապրինք:
Մեր Ազգ հետեղ է Ճիշտ Յիսուսի,
Որ Խաչն այսչափ դար առած է յուսի.
Ու, չը խոնարհիր չըլար դասալիք. —
Եղբարք, հայ ապրինք:
Այս, Խաչին կեանք՝ կեանք է վրշտալից,
Այս, Հայուն կեանք՝ կեանք է ցաւալից.
Բայց Խաչն՝ յաղթութիւն ունի վեհ կրնիք. —
Եղբարք, հայ ապրինք:
Ու, Ճակատագիր մեր չէ միշտ տրխուր՝
Ըզմշուառութեան ուտել հացն ու ջուր.
Նոր երջանկութեան ապագայ մունինք. . . . —
Եղբարք, հայ ապրինք:
Հայ ապրինք, որ մեր որդիք ալ, Եղբարք,
Կարենան պարձիլ, որ զմեղ ունին հարք.
Չ'ըլանք հայ անուան չըլանք նախատինք. —
Եղբարք, հայ ապրինք:
Խորէն Արքեպիսկոպոս Նար—Պէտ. . . .
120
Զատիկ.
(Մանկական երգ)
Հողմը հընչեց ի հարաւէն,
Ազատուեցան դաշտք ճիւներէն,
Բերկութիւն է ամեն տըզոց,
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:
Առուները խոփոջացին,
Ծառերն բողբոջ արձակեցին,

Օղը լի է ձայնիւ թռչնոց,
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:
Տղայ, աղջկ ուրախ, զուարթ
Փթթեցան զերդ մայիսի վարդ . . .
Ոիս, քէն չունի սիրալ մարդոց,
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:
Քրիստոս յարեաւ . . . կասկած չեկայ,
Բնութիւնն համայն է մեզ վրկայ . . .
Բայց ե՞րբ կասէ լեզուն հայոց—
«Նա էլ յարեաւ ի մեռելոց»:
Գամառ—Քաթիպա:

121

Առ Հայաստան.

Հայաստան, երկիր գրախտավայր,
Գու մարդկայնոյ ցեղես որրան,
Գու և բնիկ իմ հայրենիք,
Հայաստան, Հայաստան, Հայաստան:
Ի վեհ անունդ սիրտ իմ, ո՛հ, յոյժ
Ոգերի ՚ի նոր խրախոյս,
Եւ անձկայրեաց ՚ի քեզ յուսամ,
Ի քեզ՝ ՚ի քեզ յոյս իմ միայն.
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայաստան, անուն փարելի,
Ի քեզ հանգիստ նոյեան տապան
Եղիս և քեւ ապրեցաւ նոյ
Հայաստան, Հայաստան, Հայաստան:
Գետք քաջառաջք աղենաբուղիս,
Զհողդ բարի առնեն յուսթի,

Քեւ ապրիմ ես, քեւ միշտ ցնծամ,
Քեւ, քեւ պանծամ, վառք իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան:
Հայաստան ծնող գիւցազանց
Եւ հրաշլեաց հանդիսարան,
Գո զեփիւռին քաղցր է շնչեն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան:
Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան,
Զոր շնչեցին և զօրացան,
Զքեզ յիշեմ զքեզ սիրեմ,
Զքեզ, զքեզ սէր իմ միայն,
Հայաստան Հայաստան, Հայաստան:

Ցովհաննէս Միրզա—Վահանդեցի

122

Վայր ընկնող աստղեր.
(Թարգմանութիւն)

«Հայրիկ, ասաց դուստրը հօրը, կապոյտ երկնքի վերայ Որքան աստղեր փայլումեն վառ, Ասես համար, թիւ ըռկայ. Ասումեն որ ամենայն մարդ Աստղեկ ունի երկնքում, Ճշմարի՞տ է, ասա՛, հայրիկ, Խը ո՞ր տեղ է փայլում»:
— Այս, դստրիկ, այդ աստղերը Ունին հաշեւ ու համար, Եւ մեզանից իւրաքանչեւր Մի աստղ ունի իւր համար:
«Հայրիկ, տես, տես, աստղը թռաւ, Յետքից պայծառ զիծ թռողեց.

Աստղեկն ընկաւ երկնքիցը, ով ամբու ձ
Միւս անգամ՝ այլ չերեւց» : Ասու ձ,
— Ով իմ դատրիկ, հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր, ու մասսաւ
Որ իւր օրում, իւր կեանքումը
Խիղճ ասածը չը դիտէր.
Աղքատները նորա դանից
Դիշեր ցերեկ հալածված.
Մի մարդ չկար նորան ծանօթ,
Որ չը լինէր վշտացած:
«Հայրիկ, տես, տես, աստղը թռաւ,
Յետքից պայծառ զիծ թռղեց,
Աստղեկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ՝ այլ չերեւց» :
— Ով իմ դաւակ, մի վրդովեր,
Դա աղջկայ մի աստղ էր,
Որ իւր հօր ու մօր խօսքը
Իւր կեանքումը յարդած չէր,
Նա փախել էր իւրեանց տնից....
Մուր էր քսել տան վերայ....
Իւր ծնողքը լայտոցել էր,
Ինչքը վատնել անխնայ:
«Հայրիկ, դարձեալ թռաւ մի աստղ,
Վայր ընկաւ նա երկնքից.
Հայրիկ, ո՞վի աստղն էր արդեօք,
Որ զրկուեցաւ իւր տեղեց» :
— Ոհ, դստրիկս, հանգիստ կացիր,
Կեղծաւորի դա աստղ էր,
Որ իւր օրում ուղեղ մի խօսք
Մարդու երբեք ասած չէր.
Փարիսական իւր ձևերով

Սշխարհք խաբեց, գարմացուց) մայ
Այդ պատճառով Աստուած նորա
Աստղի լոյսը խաւարցուց:
«Հայրիկ, տես, տես, մի աստղ թռաւ,
Եւ գիծ անգամ չը թռղեց,
Աստղեկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ՝ այլ չերեւց» :
— Ոհ, սիրական, խաղաղ մնա,
Բռնակալի դա աստղ էր,
Որ աշխարհը իւրեան գերի
Ծնած օրից կարծել էր.
Շատ հալածանք, շատ նեղութիւն
Պատճառեց նա իւր կեանքում,
Շատ տուն քանդեց, շատ մարդ զրկեց,
Գութ չունեցաւ իւր սրտում:
«Ապա այն ի՞նչ աստղ է, հայրիկ,
Որ այնպէս պարզ վառվումէ,
Նորա մաքուր, պայծառ լոյսը
Չորս կողմը բակ բռնել է» :
— Ոհ, իմ դստրիկ, ալօթք արա,
Դա ծերունու մի աստղ է,
Որ իւր կեանքում ոչինչ մարդու
Ոչինչ վնաս տուած չէ.
Այն լուսաւոր բակն է նորա
Առաքինի գործքերը,
Աղօթք արա, որ երկարվեն
Նորա կեանքի թելերը:
Շատ օր չանցաւ, երկնքիցը
Մի այլ վառ աստղ պակասեց.
Ո՞վի աստղեկն էր, որ ընկաւ,

բան հարցանող չերեց:
 Մինչգեռ լուսինը արծաթափայլ
 Կոյս էր տալիս գիշերին,
 Խորհրդաւոր մինչ տիրել էր
 Անվրդով խոր լոռութիւն,
 Մի սրտաթափ մազերն արձակ
 Վազեց աղջիկ սգաւոր
 Դէպի գեղի գերեզմանքը,
 Ծունկ չոքեց մի շերմի մօտ:
 «Հայրիկ, աստղիկդ չէ փայլում,
 Դու յաւիտեան քնեցիր.
 Ա՛ռ ինձ քո մօտ, քո ծոց, քո գիրկու
 Ինչու անտէր թողեցիր:
 Իմ աստղեկն ասաւ նոյնպէս,
 Որ չը փայլէ հերիք է.
 Այս աշխարհը ինձ առանց քեզ,
 Մութն ու խաւար մի բանա է»:

Մի մարդ չըկար, որ նկատէր,
 Որ հետեւեալ գիշերին
 Պակասեցաւ երկնքիցը
 Մի պայծառ աստղ ինդագին;
 Երրորդ օրը շատ սգաւորը
 Փորեցին մի գերեզման,
 Ուր թաղվեցաւ իւր հօր մօտին
 Մարմինը խեղճ աղջկան:

«Հայրիկ, տես, տես, աստղը թուաւ,
 Յեսքից պայծառ գիծ թողեց,
 Աստղին ընկաւ երկնքիցը,
 Միւս անդամ այլ չերեց....

Միքայէլ Նալբանդեանց:

Օրօրոցի երգ.

Հերիք ննջես, անուշեկ սէր,
 Ինձ քո տուած սէրիդ մատաղ.
 Բա՛ց քո անոյշ կապուտ աչեր,
 Կապուտակ աչերիդ մատաղ:

Բա՛ւ է՛ մնաս օրօրոցում,
 Ո՛վ դու սէրդ իմ անպատում,
 Այսքան ժամէ ո՞նց ես ննջում,
 Քո ննջած ժամերիդ մատաղ:

Կարմիր շըթունքդ րա՛ց արա,
 Մարիկ ջանիդ իմա՛ց արա,
 Ուզումես քիչ էլ լա՛ց արա,
 Մեղմանոյշ լացերիդ մատաղ:

Արթնացի՛ր, ժա՛ժ տուր ոտներդ,
 Պարզե՛ր քնքուշիկ ձեռներդ,
 Ե՛լ ձգի՛ր սիրուն ստուերդ.
 Քո սիրուն ստուերիդ մատաղ:

Ատինքներդ լիք է կաթով,
 Սպասումեն քեզ անխոռով,
 Ծծիր կակուղ դամաղներով.
 Կակուղ դամաղներիդ մատաղ:

Պատրաստեր եմ քեզ այս անգամ՝
 Լոյս ձակատիդ արծաթածամ,
 Վարդ պատկերիդ ոսկէ դրամ.
 Վարդատիալ պատկերիդ մատաղ:

Թաւերիդ ոսկէզօծ կապեր,
 Ականջներիդ ջուխտակ օղեր,

Սե մազերիդ փափուկ փնջեր.

Սեագոյն մազերիդ մատաղ:

Ե՞րբ պիտի շարժեն բըթերդ,
Բացուին կապուտակ աչերդ,
Ե՞րբ պիտի ժպտին թշերդ.
Ժպիտոտ թշերիդ մատաղ:

Ա՛յս, ե՞րբ պիտի գուրգուրալով
Ելնես փարես իմ ընդ վզով,
Մա մա ասես հեկեկալով.
Ասած մամաներիդ մատաղ:

Ես եմ քո Փառանձեմ մայրդ,
Երդիչ Թամբաշեանն է հայրդ,
Ո՞ւր է քո եղբայր Զարմայրդ...
Քեզ և քո եղբօրդ մատաղ:

Տիկին Փառանձեմ Թամբաշեան.

124

Մայր և որդի.

Մի մայր մի պսալիկ երեխայ ունէր. նա այնպէս գեղեցիկ և խելօք էր, որ ով տեսնէր, պէտք է ակամայ սիրէր նորան և ամենաքըն էլ շատ սիրում էին նորան: Մէկ անգամ յանկարծ հիւանդացաւ և Աստուած նորան իւր մօտ կանչեց. խեղճ մայրը մնաց անմիտար և օր ու գիշեր լաց էր լինում: Միքանի ժամանակ նորան թաղելուց յետոյ, մանուկը երեխաւ գիշերը այն տեղ, ուր կենդանութեան ժամանակ սովորաբար նստած խաղում էր. մայրը արտասուք էր թափում, մանուկն էլ լաց էր լինում և առաւտօտեան լոյսը բայցուելուն պէս՝ անյայտանում էր: Բայց որովհետեւ մայրը չէր դադարում լաց լինելուց, եկաւ նա մի գիշեր իր սպիտակ շապկով, որով դադաղի մէջն էր դրուած,

Նստեց նորա ոտի տակին, անկողնու վրայ և ասաց. «Մայրիկ, էլ լաց մի՛ ըլի թէ չէ ես իմ դադաղում չեմ կարողանում քննել, որովհետեւ իմ շապիկը չի չորանում» քո արտասունքաներից, որ բոլորը նորա վրայ են թափվում:» Այս լսելով մայրը՝ մեղքացաւ իր որդուն և էլ լաց չեղաւ: Եւ ահա՛ միւս գիշերը մանուկը դարձեալ եկաւ, ունէր ձեռին մի ձրագ և ասաց. «Տեսնում մայրիկ, շապիկս չորացել է, և ես գերեզմանիս մէջ հանգիստ եմ:» Մայրն այնուհետեւ Աստուծուն յանձնեց իր վիշտը, համբերութեամբ ու անխոռով տարաւ իր ցաւը. իսկ մանուկն այլ ևս չերեւեցաւ և հանգիստ հանգչում էր գետնի տակի հողէ անկողնու մէջ:

Նահապետական-Հայրենի աշխարհ:

125

Հայ մարդու Հայրենիքը.

Հայ մարդ, Հայ ազգ, ասա՛, արդեօք Ո՞ր տեղ է քո Հայրենիքդ.
Կամ ունի՞ս դու ուր և իցէ,
Ո՞վ են արդեօք ազգակիցքդ:

Հայ մարդ, ասա՛, ո՞ւր է տունդ,
Հայ մարդ, ո՞ր տեղ քո կենտրոնդ,
Ունի՞ս մի բան քեզ սեպհական.
Ցոյց տուր ինձ դու քո պարձանքդ:

«Ի՞նչ Հայրենիք, յիմար զքեզ,
Հարցանումես դու ինձանից.

Ուր եմ ծնած, այդ ես քննում.

Այս տեղ եկած եմ թիֆլովից:

Ես տուն ունիմ և այն քարեայ,
Երկու յարկով շէնք փառաւոր.
Ծառաներիս թիւը չը կայ,
Իմ հիւրերը հարիւրաւոր:

Եղեարք ունիմ, ունիմ որդիք,
Դատերք ու այլ շատ ազգական,
Ընտիր ծանօթք, շատ մեծատունք,
Ունիմ փեսայ և այն իշխան:

Իմ պարծանքը յիմար զքեզ,
Ցոյց տուր ինձ դու յառաջ քոնք
Ճաշ եմ ուտում, ազնիւ ընթրիք,
Որ չէ կերել լուկուլոսը:

Ես խմումեմ Շամպայն, Մադեռ,
Ուոյնումես դու փորդ ջրով.
Ունիմ քանի տեսակ կառքեր,
Բայց դու ման ես գալա ոտքով:

Ոսկի, արծաթ, գոհարեղին,
Իմ պարծանքը, իմ գանձերը.
Թէ դոցանով չես բաւական,
Տես' իմ երկու պատուի նշանքը:

Դու ի՞նչ կենտրոն ես հարցանում,
Իմ կենտրոնը է իմ փորը.
Ոսկի, արծաթ, հարստութիւն,
Ահա՛ կեանքիս լոկ խորհուրդը:

Բան էք յուսել յիմար զքեզ,
Թէ հայրենիք պիտի սիրել.
Բայց թէ ի՞նչպէս հարկաւոր էր,
Ամենեին չկամիք լսել:

Ես սիրումեմ հայրենիքը,
Նորան միշտ ու միշտ գովումեմ.
Օտար ազգի առաջելը
Պակասութիւնքը ծածկումեմ:

Թէ մի աղքատ կը գայ իմ մօտ,
Նորան կը տամ ողորմութիւն.
Բայց թէ ո՞քան կամ ի՞նչ չափով,
Այդ քո դործը չէ, ներողութիւն:

Ամենայն օր դուք մեր ազգը
Բամբասումեք անխղճմտանք,
Ազգի գլխից ձերակներով
Եկաւ անցաւ այնքան փորձանք...

Ողորմելի, դու կարծումես,
Թէ հայրենիքդ սիրելով
Բան կը ննես. սխալվումես,
Այդպէս յիմար մտածելով :

Քո ուսումը չէ կշացնում
Իմ, կամ իմակների փորը.
Մեզ պիտոյ է հարստութիւն,
Որ պարարենք մեր մարմինը:

Հոգու համար ուսում պէտք չէ,
Ո՞ր սուրբերը ուսեալ էին.
Կրօնի ծէսերը պահելով,
Անշուշ կերթամ արքայութիւն:

Ուրախացի՛ր, դու Հայաստան,
Լսելով քո որդու խօսքը.
Փառք ու պատիւ քեզ կը բերեն
Քո մարմնապաշտ մեծատունքը:

Միքայէլ Նալբանդեանց,

126

Իմ երգը.

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկումը,
Մենակ բըսած ծաղկի նըման դաշտումք:
Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգած գարուն, ամսու գարձնում են.
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,

ինձ երեկը կըրկնը վում է միշտ այսօր։
Ասպարիզիս նեղ է ճանփան ու փըշոտ,
Խեղջութիւնը համարում են ինձ ամօթ,
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի,
«Դա, ասում են, իր կեանքումը դարդ չունի»։
Ես դարդ ունիմ դարդը մեծ է ու պէսպէս,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարծատես։
Երբ ես մըտայ անհիւրլնկալ այս աշխարհ,
Քանի բոպէ բաղդը ժըպոաց ինձ պայծառ։
«Հա, ասացի, դարձել է իմ անիւր,
Լըրացել է իմ վատ բաղդի չար թիւը»։
Յանկարձ՝ փըչեց անտուժելի հիւսիսին,
Թառամեցուց վարդ, մանուշակ մայիսին։
Այսպէս չորցուց իմ նագելի հասակը,
Իմ անողորմ անագորոյն վիճակը։
Ա'խ, մօտեցի՛ր, օրհասական օր մահուան,
Բե՛ր քու հետը սե հող ու նեղ գերեզման,
Թո՛ղ սառ լինի իմ նոր տանը յատակը,
Ծանր քարէ վըրաս ծածկած վերմակը։
Բայց ախ՝ երբ որ կանցնի ամիս ու տարի,
Կըմամնոտի գերեզմանը այն քարի,
Հետքը անգամ չի մընալու իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակ՝ կըկորչին։
Բայց կուզէի թողնել այստեղ մի արձան,
Որ դարէ դար մընար ամուր անկործան...
Ես երգեցի երգ ոլորուն ու անուշ
Իմ քընարի ձայնն էր մեղմիկ ու քընքուշ։
Մի՞թէ այնքան անգութ կլինի լետա գետ,
Որ անունը անդամ կ'անէ նա անշետ։

Ո. Պատկանկան

Աղջկայ երգ
(Բատ եղանակին)

Ты душа-ль моя,
Красная-дѣвица,
Ты звѣзда-ль моя,
Ненаглядная.)

Հանդիստ, իմ անոյշ անցար զնացիր,
Միայն վէրք անբոյժ սրտումն թողեցիր.
Սոխակն գեղեցիկ կանաչ պարտիզում,
Երգելով քաղցրիկ ինձ չէ զրաւում։

Քեղանով միայն երջանիկ էի,
Տիկին ինքնիշխան ինձ կարծումէի.
Ցերեկը մենակ փակուած սենակում,
Ողբում եմ անյագ, ո'չ ոք չէ լսում։

Գիշեր է գալիս—մահիճ եմ մտնում,
Տրտմումէ հոգիս, քունս չէ տանում.
Մազեր թուխ, երկայն, աչեր գրաւիչ,
Ինչ հասակ, ինչ ձայն, ինչ հոգի կորիչ։

Ո՛հ, սիրտս այրուած, ողջ քէղ է կանչում,
Ողջ քո անմոռաց անունդ է յիշում.
Անգութ. ինձ խարեց, ուրիշն սիրեց,
Ա'խ, նա ինձ գեռ վաղ պատրաստեց տաղաղ։

Ո. Շահաղիզեան

Հնչեսցեն լարք գեղգեղ ՚ի սուլ,
Քնարաց չայոց սոփերաց,
Եւ ՚ի Մասեաց ձայնք օն անդուլ

Երգովք ախորժ մաղթանաց:
Դըռուատեսցին 'ի քաղցր 'ի նուագս,
Ազգանուէր գործք սիրալիք,
Հըռչակ հարցին երկրի ցծագս,
Փառաւոր անուն քաղցրիկ:

Երկարեսցին աւուրք կենաց
Տեառն գէորգեայ մեր պետի,
Եւ հիւսեսցին թագ պարծանաց
Մեծարդիւն Հայրապետի:

Օն, Հայաստան, Խինդ 'ի դէմն, Խինդ 'ի դէմն
Կա'ց օրհնաբան 'ի հանդէս, 'ի հանդէս,
Զգեցիր հանդերձ ծիրանիս,
Եւ տուր յուղերձ զաւետիս:

Հոգէհատոր իմ որդիք,
Գտի ահա՛ պաշտպան հըզօր,
Եւ պաշտելի հայրենիք
Պանծացի 'ի Տէր ԳէՈՐԴ:

Վահրամ վ. Մանկունի:

129.

Հրաւէր դէպի ուսումնարան.

(Նուէր Հայ մանուկներին)

Հայոց մանուկներ, փոքրիկ կարիքներ,
Աշտահար հոգուս միակ բժիշկներ,
Վե՛ր կացէք շուտով, բացէ՛ք ձեր աչքեր,
Տեսէ՛ք ի՞նչ քաղցրիկ երգումեն ծտեր:

Արեն էլ ահա՛ գարնան վարդի պէս
Բացել է իրա փայլունակ երես,
Եւ վարդակարմիր ճաճանչներ պէսպէս
Միուէլ, զարդարել դաշտեր գեղատես:

Ահա՛ արտուար, սիրուն սոխակը,
Իր ձագուկներով և ծիծեռնակը
Թուչումեն ուրախ կապուտ երկնի տակ
Եւ երգում իւրեանց երգը ներդաշնակ:

Տեսէ՛ք, մինչ անգամ և մըջեւնները
Մաքրումեն շտապով իւրեանց բները,
Նոքա շնուռմեն շտեմարաններ՝
Զըմեռուայ համար ածելու սերմեր:

Դուք էլ, մանուկներ, վե՛ր կացէ՛ք շուտով
Զեռք ու երեսներդ մաքրեցէ՛ք ջրով
Եւ դէպի երկնիք պարզած աչքերով
Աղօթք կարդացէ՛ք ջերմեռանդ սրտով:

Մանուկներ, խնդրեմ, ձեր արդար բերնով
Եւ քանի կաթիլ ջերմ արտասունքով
Խնդրեցէ՛ք Փրկչից, որ խեղճ Հայ ազգին
Միշտ պահէ անփորձ իւր թեկի տակին:

Խնդրեցէ՛ք Փրկչից սրտով և հոգով,
Որ իւր փրկարար մաքուր արիւնով
Զրէ չորացած Հայ ազգի այգին,
Որ տայ արժանի պտուղ իւր Հօտին:

Խնդրեցէ՛ք Փրկչից, անմեղ մանուկներ,
Ա'լս...մեր մէջ ցանէ միութեան սերմեր,
Որ սիրենք միմեանց, որպէս եղբայրներ,
Մի սիրու, մի հոգի լինինք ողջ Հայեր:

Խնդրեցէ՛ք Փրկչից, որ պահէ հաստատ
Սեր Սուրբ Աթոռն 'ի Վաղարշապատ,
Տայ պայծառութիւն մեր եկեղեցուն,
Յարատեռութիւն մեր մաքուր Կրօնին:

Աղօթքից յետոյ՝ դուք զուարթ սրտով
Հարկաւոր գըքեր յողովէք շտապով,
Դէպ ուսումնարան արագ քայլերով
Վագեցէք իսկոյն ուսման փափագով:

Այստեղ են բոլոր ձեր ընկերները,
Այստեղ ձեր բարի վարժապետները,
Վարժատունն է ձեր առաջին մայրը,
Վարժապետը—ձեր բարի ծծմայրը:

Թագաւոր, իշխան... , տղայ թէ աղջիկ,
Այս մեծ աշխարհում թէ մեծ, թէ փոքրիկ,
Ուսումնի միայն հասան մեծ փառքի,
Ուսումն է ճրագ համայն աշխարհքի:

Վարդենի:

130.

Ազգային երգ.

Հայրենիք մեր շքեղ փառաց յիշատակէ այս նոր,
Եկէք, եղբարք, Հայ դիւցազնց ներբող ձօնեմք այսօր,

Այո, այո, ներբող ձօնեմք այսօր:

Աւարայր դաշտ, ուր նահատակք անկան Հայկայ որդիք,
Պահ մի սրտին նոր աշխուժին վերանան օ՞ն մեր միտք,

Այո, այո, վերանան օ՞ն մեր միտք:

Հոն կ'անեմք Աստուածային և ազգային սուրբ սէր,
Ու միութիւն, որով եղեն հժկու և վեհ Հայեր,

Այո, այո, հժկու և վեհ Հայեր:

Երգեմք, եղբարք, քաղցր ՚ի նուազս օրհնեմք քաջաց այն խումբ
Որք Պարսից դէմ պաշտպանեցին Ազգն ու հաւատն մեր սուրբ,

Այո, այո, ազգն ու հաւատն մեր սուրբ:

Օքհնեալ են միշտ Վարդան, Խորէն, Արտակ, Տաճատ, Հմայակ,
Ներսէհ, Վահան, Արսէն, Գարեգին, ու սուրբ Վարդանանք,

Այո, այո, բոլոր սուրբ Վարդանանք:

131.

Վորա կակիծը (*)

Նուեր իշխանուհի Ու

Հնչէ, իմ դաշնակ, Հնչէ ախրագին,
Միակ միսիթար դու ես իմ սրտին,
Տանջումէ հոգիս վեշտը չարաչար,
Ում բանայ սիրտս, ո՛, վիճակ թշուառ...
Հնչէ, իմ դաշնակ, թող քո ձայն դիւրին
Բերէ հովութիւն վէրքերիս խորին:
Թէպէտ անհոգի, թէպէտ անարիւն,
Բայց էլ շատերից կ'լինես զգայուն:

Մտայ ես աշխարհ սրտով պարզագին,
Ի՞նչ վեմ սիրով լիքն էր իմ հոգին,
Քանի զգացմունք ու վեհ ձգտումներ
Իմ կուրծքը իւր մէջ միշտ կ'փայփայէր:
Դառնութիւն ու վեշտ չէին ինձ համար.
Կային հարազատք կեանքիս միսիթար,
Բայց... վայ իմ բաղդիս սիրտս չէր զգում
Թէ ինչ սե անդունդ է ինձ սպասում:

Ո՛, անմեղ օրեր մատաղ հասակիս,
Զոհ եղայ ես ձեղ և սուրբ հաւատիս.
Զհաւատայի՞, Տէր, միթէ քո դէմ չէր
Թէ ծնող չ'լինէր իմ միակ յոյս—սէր,

(*) Ճշգրիտ անցքի այս նկարագրութիւնը վերաբերվումէ
մի օտարուհու կեանքին, որի հետ մտերմացել է երիտա-
սարդ բանաստեղծը, պատահելով նորան 1877 թ. Կիսլո-
վուսկի հանքային ջրերում, ուր յաճախումն իւրաքան-
չիւր տարի առողջութեան կարօնները Ռուսաստանի ամեն
ծայրերից:

Ա. Գլիգորեանց.

Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ, Աստուած թշուառի,
Կամեցար ինձ առ վիշտը աշխարհի.
Ուրացաւ ինձ, ո՞վ լեզուս չէ դառնում,
Ուրացաւ ինձ...մայր, ո՛, ի՞նչ եմ ապրում...

Հնչէ, իմ դաշնակ, էլ ինձ մտերիմ
Չունիմ մի էակ ես հաւատարիմ,
Թող քո ձայն միակ քո ձայն սրբազն
Լինի ինձ ընկեր մինչ ՚ի գերեզման:
Անմեղ դաւակիդ յոյս ու փրկութիւն,
Մայր իմ, չէ՞ր քո դիրի, քո ողորմութիւն,
Բայց, ասա՛, ինչո՞ւ դու ինձ դրկեցիր
Եւ չ'զթալով դադաղ զցեցիր....

Ուրացար աղջկադ, մատնեցիր նորան,
Նորա սրբութեան եղար դաւաձան,
Մատնեցիր և ո՞ւմ—այն բիրտ չէրքէզին,
Որ տանջեց անգութ քո խեղճ կ—դին:
Աղերս, արտասուք նորան չ'ազդեցին,
Չ'ազդեցին, աւաղ, ևս քո սրահն.
Ուր գնաց քո դութ, երբ դու լսեցիր
Իմ ձայն յուսահատ. «մայր իմ, ինձ փրկիր»:

Ո՞ւր էին եղբարք, ո՞ւր իմ հայր սիրած.
Յանուցիր արիր դռւ նոյց խաբած,
Խարեցիր, անողորմ, չէնց էնդուր համա՞ր,
Որ տանջեն զակիդ այդպէս չարաչար:
Աստուած իմ, ո՞ւր էիր իսկ Դու, ո՞ւր էր իսկ իմ մահ.
Մոռացան ամենք, մօռացան անխնայ:
Սոսկալի յիշատակ տիսուր անցեալիս
Հերիք է, հերիք տանջես իմ հոգիս....
Հնչէ իմ դաշնակ, տուր ինձ հեշտութիւն,
Մարդկանց հոգու մէջ է լոկ խստութիւն.

Սիրոյն ու յուսոյ մի անմեղ կուսի
Եղաւ դաւաձան սիրտը ծնողի
Եղաւ դաւաձան և տուն հօրական,
Ուր ես հնչեցի աղօթք մանկական,
Ուր ես զգացի խնդութիւն այնքան,
Բայց ուր և գտայ այս վիճակ դաժան:

Մայրիկ, ինձ էնդո՞ւր մնուցիր քո կաթով
Որ յետոյ մաշես իմ օրեր թունով.
Էնդո՞ւր էր զգուանք, համբոյրներ սիրոյ,
Որ մոլի փառքիդ բերես մի օր զոհ:
Էնդո՞ւր զմայլիչ կեանք դիւթական,
Որ այժմ օրերս անցնեմ լալական:
Էնդո՞ւր, հէնց էնդուր ուսում, կրթութիւն,
Որ աւել զօլե՞զ զգամ դառնութիւն,

Որ թողնեմ ափեր սիրած նեվայի,
Թողնեմ ես քաղաք պայծառ, գեղանի,
Ուր այնքան իմ կուրծք շնչում էր ապատ,
Ուր միաքս ունէր շրջան լայն առասա,
Մաշվեմ ես այստեղ լացում, կսկիծում
Կըրուսի անհաշտ որդւոյ երկրում,
Ուր ամեն կրում է երկաթէ կապան.
Եւ սիրալ մարդկան, և խօսքը կենդան:

Դէհ, հնչէ, հնչէ, իմ սիրուն դաշնակ,
Թող իմ արտասուք թափվեն շարունակ,
Թող իմ կուրծքը պատառւի ցաւից,
Թող այս տեղ տանջվիմ մենակ, վշտալից
Միայն երբ զրկեց ինձ դադաղ, դաշնակ,
Ա՛ռ իմ դելախառ խօսքերս վերջնակ,
Ա՛ռ իմ մահատու հառաչանք խորին,
Հնչեր ՚ի միիթար իմ մօրս սրտին:

Աս չիղթաց իմ արտասուքին,
Տուաւ նոր հաւասոնա ինձ ամուսին,
Տուաւ մեծազլ չէրթէղ իշխանին,
Տուաւ ինձ տիտղոս և գանձ ահագին,
Բայց տուաւ, աւազ, և մահ խստադին...
Գրիգոր Նիկողոսեան.

123.

Զեռք քաշէց ով բժիշկն իմ շատ ցաւերէն,
Դեղ չես կարող դտնիլ, վէրքերս է ներսէն,
Երակներուս արիւն դադրաւ ըրջանէն,
Աչքիս առաջ պատրաստ անդութ մահ մը կայ:

Հմուտ բժիշկը բոլոր դեղեր փորձեցին,
Կենդանութեանս մասին յոյսեր կտրեցին,
Իրենց վերջին հրաժեշտ տալով գնացին...
Եւ դու դարձեալ կասես ապրելու յոյս կայ:

Եւ չունիմ նպատակ զեղ ընդունելու,
Եւ իրուր կ'աշխատես ինձի օգնելու,
Պատրաստ եմ այս կեանքէն շուտ բաժնուելու,
Զիս մաշող, տանջող գաղտնի ձեռք մը կայ:

Բերէնի վեհժողով խեղճ Հային խարեց,
Բուլզարաց և այլոց ազատ կեանք տուեց.
Թուրք, Քիւրդ, Լէզգիներուն մեղ գերի թողեց,
Եւ մենք կ'ասենք վաթսուն և մէկ յօդուած կայ:

Մեր դիւրախաբ Հայեր ձեռքեր գէնք չ'առին,
Սուր, վահան, հրացան պատէն քաշ արին,
Ուրիշներ Տէր ունին, չեք պաշտպան Հային.
Եւ կ'ասեն ինձ, Կօրիմազ, մի՛ մեռնիր, յոյս կայ:

Խաչատուր Կօրիմազեանց.

133.

Բուրաստան. (*)

Անաս բարով, Բուրաստան, ափսոս վարդերդ չը տեսի,
Սիրուն տեսքիդ կարօտած՝ պայծառ զարդերդ չը տեսի,
Երկնային շաղ ու ցօղով լուացած պատկերդ չը տեսի,
Արշալուսի հետ ծիծաղող՝ բացած աչբրդ չը տեսի:

Թողնում եմ էգակս կիսատ՝ չեմանալով ինչ կը լինիս.
Կը ջրվիս, կը պահապանվիս, թէ թուխակի յուսով կը լինիս.
Կը բացվիս կը զարդարուիս, թէ ինձ պէս տիսուր կը լինիս.
Անսպահապան Բուրաստան՝ երբէք զարդարուն չը տեսի:

Անաս բարով, Բուրաստան, ափսոս և այն: 1)

Շատ եմ թողել չափած, ձեւած Բուրաստան քեզի պէս.
Հողը փորած, ծառեր տնկած այգեստան քեզի պէս.
Լարով քաշած, ուղեղ շարած ծառաստան քեզի պէս.
Սիրոս միշտ կարօտ մնաց՝ ծառերս ծաղկած չը տեսի:

Աիրեցի ես սիրուն սիրակէզ՝ լաւ ցանկապատ Բուրաստան,
Սերմի համար շատ ման եկայ՝ մերթ Եւրոպէ, միշտ Հայաստան,
Ծաղկների լաւն ընտրեցի՝ անկեցի սիրուն ծառաստան,
Աչքերս կարօտ մնացի՝ հասած պտուղները չը աեսի:

Հայաստանի Հողի վրայ գրախափ անուն լսեցի.
Սիրուն տեսքով սիրահարուած՝ նորա պատկերն նկարեցի.

(*) Այս բանաստեղծութիւնը, որ փոխարեւական մաքով գլուխ է
Պ. . . . Հայոց Աւաստմարանի վերայ, գրել է պ. Գ. Մուրազեանց
(այժմ Մելքիսեդեկ Ապիսկոպոս) 1865 թ. ապրիլի 15 ին պ. Պ.
Շ...հանցի նոյն ուսումնարանում տեսուչ եղած ժամանակ և ապրած է
պ. Պալմ Եղիշ վերնապրով դրայի մէջ. Ա. Գրիգորեանց.

1) Երաքանչիւր տան վերջը՝ առաջին տունը կը լրկնուի.

Առխուկ Հայաստանի Ա. հաստր, Ա. Գ.

Անմեղութեան, Ճշմարտութեան ցրված սերմերն հաւաքեցի,
Գարնան վերայ ձմեռն եկաւ՝ բացված ծաղիկներ չը տեսի:

Պրախտի սիրոնի էրված՝ հալածական շատ ման եկի.
Բերի հողում, մաքուր օգում՝ ես մի պարտէզ որոնեցի.
Հայաստանի սուրբ ջրերն՝ առուներով՝ բերել առուի. առաջ
Խարդախներն պղտորեցին՝ անարատ ծաղիկ չը տեսի:

Պարտիզում տնկեցի ես շատ թզենի ու ձիթենի, առաջան
Սողոմնի այգու նման՝ շատ նոնենի ու նշենի.
Ոսոխներ գարան մտան՝ խառնեցին բարդի վայրենի,
Պարտէզս աւեր եղաւ՝ պղտղալի ծառեր չը տեսի:

Անմեղութիւն որոնելով՝ վարդ մանիշակ շատ ցանեցի.
Սոխ ու սխտոր պաշտեցին՝ իմ դրացիքս եղիպտացի.
Բուլքուլի տեղ բայզուշ դրին՝ մութն աւերակ սիրեցին.
Փշի մէջ, տատասկի մէջ՝ վարդը բացուած չը տեսի:

Քանի քանի պարտէզներ էսպէս խոպան մնացին,
Կամ չարաւ և կամ շիւսի խիստ տօթ ու ցրտով քանդեցին,
Ոչ մէկն չը խղճաց խեղճ քրտնաթոր պարտիզպանին.
Գարունն անցաւ, ամառն եկաւ, պարտիզի կարօտ մնացի:

Ծաղիներս առան տարան՝ օտար երկիր, օտար սահման.
Ամեն ծաղիկ իր հողն ունի՝ էս մի օրէնք է բնական.
Տէրն ուրիշ տեղ չը տնկեց, այլ դրախտն ՚ի Հայաստան.
Հայաստանի բնիկ տունին՝ օտար տեղ ծաղկած չը տեսի:

Ով իմ սիրուն բուրաստան, վարած, մշակած եմ թողնում,
Ի՞նչ կը լինիս, չեմ իմանում, սիրտս շատ կոտրած եմ թողնում.
Զրերդ օտար ականից՝ մշակդ հարրած եմ թողնում.
Ո՛չ մի անտէր այբեստան՝ ծաղկած ու հասած չը տեսի:

Բուրաստանն անտէր, անջուր, պարտիզպանն ո՞նց կը թողնի.
Մատղաշ որդին օտար յուսով լաւ ծնողը ո՞նց կը թողնի.

Սոխակին վարդից խլում են՝ խեղճ սոխակը ո՞նց չը թողնի.
Բաժանած սիրար սերից՝ երբէք միմիթար չը տեսի:

Քո անուն, քո յիշատակ՝ սրտումն պահած կը լինի.
Սրակի պէս բուրաստան՝ ո՞վ երբէք տեսած կը լինի.
Սրտի մէջ բուսած վարդն՝ շարունակ ծաղկած կը լինի.
Անմեղութեամբ վառուած սիրտն՝ երբէք անապատ չը տեսի:

Աշուղի շնորհք չունիմ՝ քո սէրն ինձ աշուղ կը շինի.
Սէրն շատին լեզու տուաւ՝ ինձ էլ սիրաբան կը շինի.
Համ կ'երգեմ, համ կը կանչեմ քանի բերնումն շունչ կը լինի,
իմ բուրաստան, իմ Վարժարան, ախ, ես քեզ ծաղկած չը տեսի:

գ. Յուրաղիանց,

Պարաբաղցոց գիւլում Հայը.

Մէնք մին տեղ ենք, ջոկ ջոկ թաղ,
Գիւլում Հայ, այ գիւլում,
Բէրենք մէջտեղ Հաց ու աղ,
Գիւլում Հայ, այ գիւլում:
Մորթենք մեր Խաչին մատաղ,
Գիւլում Հայ, այ գիւլում,
Ասենք սիրուն սիրուն խաղ,
Գիւլում Հայ, այ գիւլում,
Գիւլում, գիւլում, գիւլ չիչակ:

Փառք քեզ, Աստուած, որ էս օր,
Մեր եղբարց հետ, հօր ու մօր.
Վարդավառին հասինք նոր,
Պիտի գնանիք սար, ու ձոր:
Ման գալով ամեն լաւ տեղ՝
Քաղենք ծաղիկ մենք մին տեղ.

Փունջեր կապենք մեր մէջտեղի
Խաղ ասելով տանենք գեղ:
Գնանք էնտեղ սուրբի տակ,
Կապենք ըսպիտակ լեշակ,
Գիւլում հայ ասենք տաք տաք ու ուժ կազմ
թէ մեծ, պատիկ, թէ մէջնակ:
Աղջիկ, աղջիկ, չերիքնազ,
Վեր կալ ձեռնդ, ածէ սազ,
Մենք բիթունքս կանենք տազ:
Որ քեզանաւ անենք հազ:
Ուսենք, խմենք մենք չափով,
Պար էլ գանք շարուած ծափով,
Ասենք գիւլում հայ դափով,
Ծիծաղելով համ գեափով:
Վեր իլենք սարի վերայ.
Խստենք մեծ քարի վերայ:
Խօսենք մեր ճարի վերայ,
Անէծք տանք չարի վերայ:

Մովսէս Զօ՞րապեանց:

135.

Երգ Հայրենի.

Մինչեռ յուսով խայտայ բնութիւն
Յետ դառնաշունչ ձմերայնոյն,
Եւ 'ի դաւառն իմ հայրենի
Գեղածիծաղ դառնայ դարուն,
Մինչ բոյր 'ի բոյր փթթին ծաղկունք
Եւ ձոռողեն նորեկ ծիծուունք,
Ի քեզ ես դարձ առնում յայնժամ,
Ով ցանկալիդ իմ Հայաստան:

Ո՛չ չելուետեան ինձ դաշտավայրք
Եւ կամ զուարթ մարգագետինք,
Ո՛չ քան զքեղ չքնազագեղ
Խտալական պայծառ երկինք,
Չեռի 'ի քէն պանդուխտ գոլով,
Քոյովդ յար տապիմ անձկով,
Ի խանձարուրդ իմոց կենաց,
Ով Հայաստան, առնում քեղ դարձ:

Գայցեն աւուրք, ուր մանկութեան
Անկցի դիսց իմ զեղ դալար,
Եւ յինէն խոյս տացեն վայելք
Կենաց թեթև 'ի գարշապար,
Ուր հէգ Մուսայս մատն 'ի յերեր
Մոռանայցէ երգել զսէր,
Զնինջ 'ի ծոցդ առնում յայնժամ,
Ով ցանկալիդ իմ Հայաստան:

136.

Թարգմանոթիւն յԽտալականէ.

Մնացես բարեաւ, սէր իմ, սէր,
Հրաւէր մարտից որոտաց՝
թէ չեմ քաջաց ես ընկեր,
Զկայ բաժին ինձ փառաց:
Մի' լար, հոգւոյս իմ հատոր,
Գուցէ դառնամ, ո՛հ, մի' լար,
Թանկայց մարտին ես 'ի զոռ,
Տեսցուք յերկինս մեք զիրեար:
Եղայրադաւ չ՛ նախանձ,

Որ բորբոքեալ յիս վառի.
Առաջ առաջ Ս. Պէտքթաշեան.

137.

Երկու քոյր.

Մեղնից շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգւով դեռ արի, զլխով ալեոր.
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը
Ակի ասացին գիտունք այն դարր:

Ունէր նա երկու մատաղչաս աղջիկ,
Տինը խիստ տրգեղը միւսը գեղեցիկ.
Մի օր տրգեղը ասաց միւսին՝
Այրթանք ծովի ափ, քուրիկ, միասին::,

Այրունը զլնաց առաջեց արտում,
Տրգեղը ետնից ով պահած սրտում:
Հաղիւ թէ ծովի ափին էր հասած,
Կր սիրուն քըրոջ գըլորեց նա ցած:

Կանչեց կիսամեռ սիրունը ջըրից.
Այբուրիկ իմ, քուրիկ, փրկէ ինձ մահից.
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
Առ, էն քեզ լինի, պարգեէ ինձ կեանք::.

— Են առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինչից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:
Աքո որիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւտիան,
Կուտար քեզ ոսկի պըսակ պատու ական:

— Են առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:
«Քուրիկ, մի թողնիլ դու ինձ անտէրունչ,
Քեզ սիրուն վեսաս կուտամ անտրտունջ»:

Տըգեղի սիրտը դարձել էր ժեռ քար,
Քըրոջ խընդիրքը թողեց անկատար.
Չըկնորսը ծովը ձըգեց մեծ ուռիան,
Քըռնեց մարմինը սիրուն աղջկան:

Ջըրից հանեց, զըրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վըրան ու շատ խոտ.
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,
Լացեց ու առաւ զըրեց ուսի վըրան:

Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,
Չորացուց նորա մարմնու դիվ հիւթը.
Գեղեցիկ ատելի շնեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից:

Երբ-որ ամեն բան պատրաստեց կարգին,
Գընաց արքունիք տաւիղը ձեռքին.
Երբ մըտաւ դահլիճ շըքեղ զարդարած,
Տեսաւ տրգեղին փեսի մօտ կանգնած:

Բացեց բերանը, լարերին խըփեց,
Հիւրերի առաջ քաղցրաձայն երգեց.
«Հընչէ՛, իմ տաւիղ, հընչէ՛ համարձակ,
Հարազատ քոյրը խըլեց իմ պըսակ:

Լըսէ՛, իմ ծընող, լըսէ՛ սիրական,
Հարազատ քոյրը խըլեց իմ վեսան.
Լըսէ՛ ժողովուրդ, լըսէ՛ անխըռով,
Հարազատ քոյրը գըլորեց ինձ ծով:

Սիւս օր դահիճք խարոյկ շինեցին,
Մահապարտ քրոջ մէջը զբլորեցին.
Հուրը պըլպըլսաց, աղջիկը կանչեց՝
Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց:

Ռ. Պատկանիան.

138

Խոալացի աղջկայ երգ 1859
թուականից.

«Մեր հայրենիք, թշուառ, անտէր,
Մեր թշնամուց ոնքակոխ,
Իւր որդիքը արդ կանչումէ,
Հանել իւր վրէժ քէն ու ոխ:

Մեր հայրենիք շղթաներով՝
Այսքան տարի կապիսպած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատված:

Ահա, եղբայր, քեզ մի գրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չ'եղայ,
Արտասուքով լուացի:

Կայիր նորան, երեք զունով,
Նուիրական մեր նշան.
Թո՞ղ փողիողի թշնամու գէմ,
Թո՞ղ կործանիի Աւստրիան:

Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի զործերում
Կարէ օգնել իւր եղբօրը,
Զանց չարեցի քո սիրուն:

Ահա իմ գործ, ահա գրօշ.
Շուտ ձի հեծիք քաջի պէս,
Գնա փրկել մեր հայրենիք—
Պատերազմի վառ հանդէս:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ' մեռնէ.

Բայց երանի, որ իւր ազգի

Ազատութեան կը զոհվի:

Գնա, եղբայր, Աստուած քեզ յոյս,

Ազգի սէրը քաջալեր,

Գնա, թէւ չեմ կարող գալ

Բայց իմ հոգին քեզ ընկեր:

Գնա մեռիր դու քաջի պէս, և

Թո՞ղ չ'տեսնէ թշնամին

Գո թիկունքը, թո՞ղ նա չ'ասէ

Թէ վատ է Խոալացին:»

Ասաց, տուեց օրիորդը

Իւր եղբօրը մի գրօշ

Մետաքսից երջ ազնիւ գործած,

Ուր երեք գոյն կան որոշ:

Եղբայրն առաւ և ողջունեց

Իւր սիրական քնքուշ քոյր,

Առաւ զէնքը, սուր, հրացան,

Հեծաւ իւր ձին սեաթոյր:

— Քուրիկ — կանչեց քաջ պատանին, —

Մնաս բարեաւ, սիրական,

Այս գրօշակին պիտի նայի

Ամբո՞ղջ բանակ Խոալեան:

Նա սուրբ է ինձ, երբ միրտիած

Արտասուքով ու կնքած,

Դու յանձնեցիր ինձ յիշատակ,

Հայրենիքի նուիրված:

Թռէ մեռանիմ, դու մի՛ սգար,
իմացի՛ր որ տարեցի
Դէպի մահու արքայութիւն
Իմ հետ քանի թշնամի:

Ասաց, վաղեց դէպ ՚ի հանդէս
Աւստրիացւոց յանդիման,
Խւր արխոնվ գնել յաւէժ,
Ազատութիւն խտալեան:

Ո՛հ, իմ սիրտը կտրատվումէ,
Տեսանելով այսպէս սէր,
Դէպի թշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր:

Ո՛հ.., արտասուր ինձ խեղդումեն,
Այլ չեմ կարող բան խօսել.
Զէ....., թշուառ չէ խտալիան,
Եթէ կանայք այսպէս են:

Մ. Նալբանդեան.

139.

Արամ - Երգ

Մեր քաջ Հայոց զօրութիւնք,
Վեր կացէք, ասաց Արամ.
Առաջեաւ բացէք նոշան,
Վնանք Հայ լեզուն տարածենք:
Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:
Վիւքար զսարուկն Ասորին
Բարբառ գոչ առաջին.
Գլուխն յաշտարակ մեխեցէ՛ք,
Որ յերկնից սորուի հայերէն: Ո՛հ. և այլն:
Յորդան տուք զօրք, օն, յորդան
Դէպ ՚ի կողմն Արևմտեան,

Պայապիս Քաղեայ Տիտան,
Դէք ի տապաստ ՚ի դամբան: Ո՛հ, և այլն:
Յորդան տուք, օն, զօրք յորդան,
Տեաբք լայնալիճ աղեղան,
Քընքուշախոս ամբոխին
Տալ ըզլեզու Հայկական: Ո՛հ, և այլն:
Ով չըգիտէ Հայերէն,
Ու Ճանաչէ նա զՈրէն,
Որ բանիւ Հայոց արար
Այս մեծ աշխարհ մեզ համար: Ո՛հ և այլն:
՚Ի ծովէ մինչեւ ՚ի ծով
Թող խօսին Հայ բարբառով.
Ներհակողին նիզակով
Յուցէ՛ք, ո՛հ, ասաց Արամ:
Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:

140.

Առ աստղն Հայրենեաց.

Մեր սիրուն Հայրենեաց
Բեւեռը շողշողով
Մեր սիրուն քաջաղանց
Աճիւներն ցարդ հսկող:
Պայծառ աստղ, որ այժմիկ
Լոյսդ կընես թափանցիկ,
Մինչեւ Հայ պանդխտոց
Սրտերուն կուտաս բոց:
Ո՛վ քաղցր Յոյս դու միկթար,
Տարագիր Հայոց թշուառ.
Ի՞նչ աշխոյժ նոր ՚ի նոր,
Ի՞նչ աշխոյժ ոգեսոր
Կարծարծես սրտերնոււ,

Ով Հայոցս միակ Յոյս:
Զէ, ալ չ'վշատինք բնաւ, ով Հայեր,
Սեղ քաջալեր են Յոյս և ժամանակ.
Զէ, ալ չ'վշատինք բնաւ, ով Հայեր,
 ժամանակին հետ յառաջ ընթանանք.
 Յառաջ ընթանանք, հոն, ուր հրաւեր,
 Հրաւեր կարդան մեզ նախահարց ասաղեր.
 Թէ Հայկայ որդիք եմք,
 Թէ Հայկայ արիւն կրեմք.
 Ամենքս ալ ՚ի սուրբ սէր
 Հայրենեաց ՚ի նուեր.
 Քաջ որդիք պանծալի
 Ըլլամք միշտ արժանի:

141

Մայրենի լեզու.

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
 Ախորժ, ընտանի իմ հոգու համար,
 Առաջին դու խօսք ականջիս հասած,
 Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած.
 Մանկական լեզուիս թոթովանք տրկար,
 Հընչումես իմ մէջ դու միշտ անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
 Այդ ի՞նչպէս քաղցրը հնչումես ինձ դու.
 Կամիս աւելի քաջ ծանօթանալ
 Քո ճոխ գանձերին, հոգւով հայանալ
 Ասես թէ ահա՛ կանչումեին ինձ
 Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:

Հընչիր դու հընչիր այժմ և յաւիտեան
 Մայրենի լեզու, բարբառ սիրական,
 Արի՛ բարձրացի՛ր հնութեան փոշուց,
 Դու իմ հայ լեզու մոռացած վաղուց.
 Ըգգեցի՛ր նոր կեանք սուրբ գրուածներով
 Որ ամենայն սիրտ վառվի քո սիրով:
 Ամեն տեղ փշումէ Աստուծոյ շոնչը,
 Սուրբ է այո՛ միւս, այլ ձեւ ու ոճը,
 Բայց թէ աղօթել, զոհանալ պէտք էր,
 Իմ սրբի սէրը յայտնել արժան էր.
 Իմ երանական մտածութիւնքը —
 Ապա կը խօսեմ իմ մօրըս խօսքը;

Ա. Նազարեանց:

142.

Ուսիր առաջ քո մայրենի լեզուն:

Ծառայել հայրենիքին և օդնել նորա կարիքներին կարելի
 է այն ժամանակ, երբ գու տեղեակ ես նոցա, երբ դու ուսում
 նասիրել ես նորա պիտոյքները, երբ դու իմանում ես քո ազգի
 լեզուն: Ամենայն ուսման հիմք և զիտութիւն տանալու միակ
 և ճիշտ ծանապարհը լեզուազիտութիւնն է, և եթէ դու կա-
 մենում ես կարգով ու հեշտ սովորել ուրիշ լեզուներ, աշխատիր
 ուսանել նախ քո մայրենի լեզուն: Լեզուն է ազգայնութեան
 առաջին և զլլաւոր նշանը, լեզուն է այն միակ կապը, որ ազգի
 անդամներին կապում է միմեանց հետ. այս պատճառով կարելի
 է ասել, թէ իւր մայրենի լեզուն չիմացողը համարեա թէ իւր
 կամիս աւելի քաջ ծանօթանալ
 Քո ճոխ գանձերին, հոգւով հայանալ
 Ասես թէ ահա՛ կանչումեին ինձ
 Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:

գերը կատարում են ծշտութեամբ, չնայելով, որ նոցա լեզուն
անկիրթ է, աղքատ, չմշակուած. ուրեմն որչափ անպատշաճ
բան կլնի, եթէ մեկը ազնիւ, հարուստ, հիմաւոր և մշա-
կուած լեզու ունենայ և չկամենայ սովորել: Բայց մայրենի լե-
զուի գիտութիւնը բացի օգտակար լինելուց, պարտք էլ է. ա-
մեն մարդ պարտաւոր է իւր հայրենիքին և ազգին ծառայել
բայց այս պարաքը մարդս չէ կարող ըստ արժանոյն լցուցանել
եթէ իւր լեզուն լւա չխանայ: Այս պատճառով ուսեալ և կրօ-
թեալ ազգերի մէջ մեծ ամօթ և նախատինք է իւր լեզուն չե-
մանալը և շատ անգամ ընկերութիւնների մէջ այսպիսիներին
չեն ընդունում և նոցա երեսին չեն մտիկ տալիս: Ուրեմն ամենայն
մարդ իւր ազգային պարտականութիւնները կատարելու համար
պէտք է ուսանի իւր մայրենի լեզուն, որով և կարողանայ
իւր ազգի հետ միանալ նորաուրախութիւններին ուրախակից
և նեղութիւններին վշտակից լինիւ:

Մայրենի լեզու գ. և գ. տարի.

143

Քաջ Վարդան Մամիկոնեան.

Մեր նախնիքը ազգի համար
Խրեանց կեանքը զոհեցին,
Թշնամեաց դէմ միշտ աներկիւղ
Սուրը առած վազեցին:

Նրանց առաջնորդ ազգի սէրն էր,
Նրանց խրախոյսը մեր հաւատն էր.
Արանով նրանք քաջ անունը
Խրաւամը ժառանգեցին:

Կախնեաց վառքին ժառանգաւոր,
Ժառանգ է մեզ քաջն վարդան,
Մեծ սպարապետ հայրենասէր,
Սուրբ հաւատոյ վեհ պաշտպան:

144.

Երդ ուսանող մանկանց.

Տաճկական Վեհաստապօլ երդի եղանակով.

Մականացուդ դու՛ բա՛ց դուռն սրտիդ
Արագ արագ,

Որ կարողանաս խօսքս տալ մոքիդ:

Ես ինձնից երբէք չեմ կարող ո՛չինչ,

Աւա՛լ աւաղ

Ճառել և գրել գոնեա և փոքր ինչ:

Սուրբ գրքի խօսքերն սէր են քարոզում

Արագ արագ,

Որով միայն կարեմք բնակիլ երկնքում:

Բոպէք և ժամեր՝ քոյ կենաց համար,

Աւալ աւաղ

Պատրաստվել են ո՞հ հոգւոյդ առնես ճար:

Ո՞ւ դու կարդացող՝ զաւետարանն ա՛ռ

Արագ արագ,

Ործարծելով միշտ կարդա՛ անդադար:

Վ երջնդ միշտ բեր՝ բարի գործ գործի՛ր,

Աւալ աւաղ

Հաւատոյ յոյս, և սէրդ՝ գործըիդ հետ

Խառնիր:

Բայց ողորմութեամբ քաւել նեղքերդ

Արագ արագ,

Զանց չառնես երբէք՝ պատուէր ետ Տէրդ:

Ամեն օր և ժամ աղօթքով միայն,

Աւալ աւաղ

Զարդարիր հոգիդ՝ ու անձդ համայն:

Յաւիտեան էլ դու՛ յաւ, միշտ, նեղութիւն,

Արագ արագ,

զե՞ս տեսնիր երբէք՝ այլ սէր, ցնծութիւն:
Եին անմահի՝ գոհութիւն պատիւ
Արագ արագ
Մատուցուք ամենքս՝ օրերով անթիւ:

Սեսլով կ. Սմբատեանց,

145.

Մեծափառ արքայն մեր
Ի մարտ կամի ելանել
Լարեցէք աղեղներ,
Որդէս մեզ վայել:

Հնչեցէք փողերն
Անուշաձայն երգերով,
Այսօր քաջ արքայ մի
Կամի ելանել:

Մանուշակ ու շուշան
Թող զարդարեն ձանապարհ, գույ յառաջ, օն, յառաջ,
Անդադար թող ծափ տան
Սար, դաշտ ու անտառ:

Կեցցես զու, քաջ վահան,
Գույ յառաջ, օն, յառաջ,
Ետերից շատ Պարսիկ
Թող գլորվին տրոփի, տրոփի:

146.

Երեկոյեան երդ շինականաց.

Մարդս եկաւ, եկաւ դաշտից՝ դաշտիցը,
Կանանք դաշտից, դալար դաշտից տուն եկաւ,
Տուն եկաւ ու դուռը դրսեց նըստեցաւ.
Շալիին խուրձ էր, խուրձ ցորենի, արտից:

Խուրձը վեր դիր, թող բաց անեմ թոնկերը,
Մէջքէդ առնում այդ սուր, այդ սուր գերանդին,
Սուր այդ, սուր այդ գերանդիով հնձել ես,
Հնձել ես ու խուրձ կապել ես ցորենը:

Ախ, ձակատը թաց է եղիլ քըրտինքով,
Թող ձակատը, թող որ սըրբեմ իմ ձեռով, իմ ձեռով,

իմ ձեռովս գօտիդ բացեմ՝ խուրձըդ առնում իմ ձեռով,
Խուրձըդ առնում ծանըր բեռըդ շալակէդ:

Սառը ջըրով ձեռըդ լուա՛, սոքըդ լուա՛, երեսըդ,
Ձեռքիդ սոտիդ ես ջուր կ'ածեմ, երբ լուանաս երեսըդ.
Սըրբէ՛ ձեռով քո երեսէդ քըրտինքըդ,
Գլուխըդ լուա՛ սառը ջըրով, ձեռքդ, սոքըդ, երեսըդ:

Ես քեզ համար հաց թխեցի, սիստակ, փափուկ դարեհաց,
Ես քեզ համար պատրաստել եմ կաթն ու կարագ ու պանիր,
Գառան մըսէն շամփրի վըրա խորոված,
Կասկարայով գառան միսը տապակած:

Կուժը լիքը կարմիր գինին դըրած է,
Իմ ձեռագործ կըտաւ սուփրան փըռած է.
Ձեռըդ լուա՛, հանգստացի՛ր. իմ սիրակա՞ն ամուսին,
Լուսնիակը երեսում է երկնքումը փայլելով,
Պատուհանէն լոյս է ձըղել սուփրի վըրայ շողալով:

Երեսում է հայն ու կաթը, պանիրը,
Երեսում է կարմիր գինույ սափորը.
Մէկ ես, մէկ դու, մէկ պահապան շրեշտակը,
Ռւտենք, խմենք ու գոհանանք Արարչէն.
Հանգըստանանք աշխատանքէն, որ քաշեցինք ցերեկը:

Ո. Պատկանեան:

147.

Մ ա ր և

Մեզ նոր արև ծագէ, բացուի լոյս բոցավառ,
Մեզ առաջնորդ սուրբ երեցներ ունինք խաչ ու խաչուառ,
Զօրավա՛ր քաջ վարդան, դիմենք յառաջ 'ի սուր,
Վիմենք բանալ կենաց շաւիզ, Հայեր, մեր առաջնիր.

Սոխակ Հայատանի Ա. հատոր, Ա. գ.

12*

Հարսանեաց հարսանեաց սուրբ հանդիսարան,
Սեղ նոր ուխտ կանչումէ լինիւ փրկիւ կրօնի, փրկիւ
Հայրենեաց.

Հայոց ծաղկունք թռումին, հայերք թէ պղծուին,
Սեղնից ցող ինկոց բուրմանք կամին.
Զէնքեր պատենից մէջ եռ գան կրակ դարձած,
Պարսից արեամբ հանգուցանել խնդրել զբազուկս քաջաց.
Նժոյգներ խրխնջան, զերկիր փորեն, տոփեն,
Դիմենք յԱրտաղ դաշտ, դիմենք յԱւարայը
Սեր հայրենիք, մեր ազգութիւն, կրօն,
Գալ ժողովիւ 'ի սուրբ տօնա, հրաւիրել զամեն Հայա:

148.

Վ ե հ ա ժ ո ղ ո վ .

Մայր—Հայաստանի տարին էլ անցաւ,
Տանջումին նորան նոյն վիշտն ու նոյն ցաւ,
Բացուած լայն վերքէն արիւնը ծործոր
Կաթելով վազումէ դեռ ամէն օր:

Մեր հոգու վիշտը մեր բօթն ու սուզը,
Աղեխարշ աչաց մեր արտասուքը
Ոչոք ըստեսաւ, ոչոք չե ըզգաց) —
Լուսաւոր Եւրոպ կոյր ու խուլ մընաց:

Անմեղ գառնուկը — խեղճիկ Հայաստան
Ողջակէզ եղաւ Տաճիկ քաւութեան.
Փրշըրտած շղթայք սլաւոն ազգերին
Բերին փաթթեցին Հայոց ձեռքերին,

Ինչու: թո՛ղ ասէ անգութ Եւրոպան,
Որ Պիղասոսի արաւ դատաստան —
Նախ՝ անմեղութիւնն մեր խոստովանեց,
Ապա չարերուն մեզ 'ի խաչ մատնեց:

Գամառ-Քաթիպա:

149.

Թէջնիս մօդի վերայ.

Մօդ անուն, տեսնելով էդ բու արարքըդ,
Թէ լեզուս լըում է, ես չեմ դիմանում:
Գու ստեղծողներդ չեն սիրում վարքըդ:
Չեմ դիտում եադերը ո՞նց են հաւանում:

Շատերի աները մտար դու զօռով,
Երկուսին շահեցիր, երեքն են խոռվ
Ոմանց էլ առանց քեզ չեն տալիս բարով.
Էդ ի՞նչ չար սերմերա մեր մէջ ես ցանում:

Ոմանք ամօթովդ յետ ընկան ժամից,
Մնացին պաս բերան Ճաշակի համից,
Միշտ էդպէս ես քցում Աստուծոյ կամից,
Մինչեւ ես չեմ ասում, դու չես հասկանում:

Յիրաւի, ամօթը պարտը են Ճանաչել
Բայց զո՞ւ չես, քեզանից չէ պէտք ամաչել
Ո՞վ նեռի մարգարէ, քեզ ո՞վ է կանչել
Քրիստոսին թողած՝ քեզ են դաւանում:

Ինչ մարդ ընդունումէ քեզ նման չարին,
Պակառում է սրտիցը խիզճըն ու բարին,
Քեզնից չէ աւելնում, ո՞նց տայ անձարին,
Ճեսա՞ր պատուիրանքից ինչպէս ես հանում:

Վ այ կինի էն մարդուն կրնկնի բու սէրը,
Կինը կինի շոայլ կարծ կինի ձեռը,
Շուտ կ'ասես անում են ձեզից վարդերը,
Շատերն էսպէս չէ բաս ո՞նց են կեռանում:

Քու վաճառողներդ քաշեցին վընաս,
Քանդեցիր տները, չի թողիր մնաս.

Ի՞նչ տանք, որ մեզնից հեռանաս, դընաս,
Ինչ ձեռվ ման կրդանք՝ մենք ենք իմանում:

Ծախողդ սև սիրտ է, առնողդ ընկատ,
Մարդ ու կին չե մնաց, չը լինին անբաւ,
Հարստաց յեց իլար, միջնակներին յաւ,
Խակ չքաւորների կեանքն է սեանում:

Փեղի ասուները մարդիկ են անդին,
Գու աւըդ քաշելով մընացին անկին,
Խեղձ Դէմրչե-օղլու պէս եադ սիրոյ ճանկին,
Տե՛ս քանի հազարք են հոգւով մեռանում:

Յովակիմ Կուզնեցեանց:

150

Գիշերը Վանում.

Մի գեղեցիկ, պարզ գիշեր էր
Երկինքը լի աստղերով
Եւ լուսինը մեզմ փայլում էր
Կաթնանըման իր լուսով:

Սա նայում էր-լուիկ-մընջիկ
Երբեւ մի կոյս գէպի վան.
Նորա աչքին երևում էր
Բիւր յաւալի տեսարան:

Նա տեսնում էր անթիւ Քորդեր
Բընած սուր, թուր, հըրացան
Կոտորում են... կողոպտում են....
Աւերում են Հայաստան....

Եւ կարծես թէ երկներիցը
Ասում էր այդ լուռ վըկան.

«Վերա՛յ հասիր, ձայ—ազդասէր,
«Չեռքից դընաց Հայաստան....» :

Սիմէօն Սափարեանց:

151.

Ալաշկերուցի գաղթականը ոռու սաստամում.

Մէկ փըշուր հաց տուէք, ախպերք,
Շաբթով սոված մանչերուս,
Սովո կապեց մըր ոտք ու ձեռք՝
Ըմեն տեղից կըտրեց յոյս:

Մէկ կաթիւ ջուր, ախպերք—Հայեր,
Տուէք հիւանդ աղջըկաս,
Ցաւը չորցուց լնդար պուներ,
Տապից կ'մեռնի խեղձ պալաս:

Մէկ հին հալաւ տուէք մըզի—
Տըկլոր— չըփլաղ Հայերուս,
Ցուրաը եկաւ, հէւ չե թորկի՝
Կրսպանի մըզ ըմենուս:

Մէկ հին քօշեր, գուլքայ, չաքմայ
Տուէք ծածկենք ոտերնիս.
Գար, քասադ, փուշ, մընք ձըզ մատադ,
Հանան մէ բաշ հոգերնիս:

Մէկ գոմ, թովկա, մէկ գալդալըզ
Տուէք անտուն խեղձերուս,
Սըտիկ տուէք— չունինք մի տեղւ
Որտեղ դընենք դըմսըրնուս:

Կար էնպէս վախտ, ձեզի՛ զուրբան,
Որ մընք լէ ձեզ պէս ուրախ,
Ուտում, իրմում, քէֆ ինք անում.
Ունէինք տուն-տեղ, եաթաղ:

Ամբարներս լիքը ցորեն,
Տասը ջուխտ եղ հայաթում.
Ըմեն բանից բօլ ունէինք,
Գեսաղոթիւն չինք քաշում:

Օրէն տասը աղքատ կը գար —
Թուրք, Ասօրի, Քուրդ և Հայ,
Ասծու տուածից կրստանացին
Ըմենըն լէ իրանց փայ:

Հիմա տեսէ՛ք — սար, չէօլ լնկած՝
Սոված, ծարաւ կը քալենք.
Տուն, տեղ մալ միւլք թորկած-հկած
Ջրզնից շոր-շերթ, հաց կուզենք:

Մըր սիրական լաճեր, Ճըժեր
Ճանալին մըռան — զընացին,
Մընացածն էլ, տեսէ՛ք, հիւանդ
Ընկած են էս նամ տափին....

Տեղ ու գարման, ախտերք-Հայեր,
Արէ՛ք ցաւոտ մանչերուս,
Մենք լէ Հայ ենք — Ճըր ախտեր,
Ջրզնից բաշխայ չունինք յուս....

Այմէօն Ասիարեանց:

152.

Ես էլ փորձենք.

Մեր արցունքով, աղաչանքով
Զը շարժեցինք մարդկանց գութ,
Մեր ցաւերը հազար կերպով
Լոյս հանեցինք — անօդուտ:

Աղերսեցինք, ծունկ չոքեցինք
Մեզի օդնող ըլտեսինք,
Ճարահատեալ մենք գաղթեցինք
Դարձեալ — էլ շատ տանջուեցինք:

Մարդ զըրկեցինք դէպի Բերլին,
Որ դուցէ մեզ մեղքանան,
Հային ամեն բան խոստացին —
Ոչ մէկը չը կատարան:

Ամեն ազգի լըրագիրներ
Ազետներով բեռնեցինք,
Այդ կարգացին մեր եղբայրներ,
Բայց օդնութիւն չըստացինք:

«Հաւատակից», «Քրիստոնեայ»,
«Եղբարք» բառք չը շարժեցին
Ոչ Անդիայի սիրտն անրզգայ,
Եւ ոչ ամբողջ Եւրոպին:

Մեր տուն-տեղը կըրակ տուին,
Մեր տաճարը պըդծեցին,
Քրիստոնեայք աչքով տեսին,
Բայց չը տեսնող ձեւացին:

Փարեր, սարեր լեզու առած
Հայի տեղակ խօսեցին,
Բայց անձայն, լուռ և մունջ մընաց—
Ոչինչ չ'ասեց Անդիացին....

Մի ճար մընաց Հայի համար,
Եկէք հաւքենք մեծ—գումար
Եւ լաւ կաշառք տանք Անդիային,
Գուցէ անի՛ մեզ մի ճար...

Ես էլ վորձենք, Հայ եղբայրներ,
Եթէ մի շահ չը տեսնենք—
Առնենք մեր կին, մեր զաւակներ
Զուրը ընկնենք և ինդդուենք,

Արմէօն Ապարեանց:

153.

Մի բուռն հող.

(Գերմանականից)

Մի բուռն հող ինձ կը ծածկէ միանգամ,
Երբ վասակած, դէպ'ի հանգիստ ես կերթամ
Այնուհետեւ ցաւից, վշուից ազատված,
Մահու քնով կը ննջեմ ես մեղմ հանգարտ,
Մինչև կանչէ գերեզմանից Եհովան:

Մի բուռն հող ինձ կը լինի պատուական,
Աւելի քան մի փառահեղ ծանրութիւն,
Հարտարագործ ձեռքից շինած քարանիւթ,
Արդէն ցաւեր շատ օրերի ձնշեցին
Կեանքս, հոգիս ծանրը ծանրը բեռներով:

Մի բուռն հող ինձ հերիք է, բաւական,
Գիտեմ ահա՛, լինելու եմ ես անշուշտ
Որդների ու ՃՃների կերակուր
Բայց խաղաղ է գերեզմանի խորքումը
Ցան ու վեշտը այն տեղ լուռ է և հանգիստ
Գունը քաղցր և անխոռվ հանգալազ:

Մի բուռն հող գուցէ ձբդէ իմ վերայ
Բարեկամա տրտում դէմքով ու լայով.
Եթէ միայն ունէի ես մի անձըն,
Որ գալու էր գերեզմանիս տեսութիւն.
Այնուհետեւ կթեթեանար իմ վերայ
Աստծու հողը գերեզմանիս միջումը:

Վարդան Առւլիանեանց:

154.

Անուր ջք.

Յամավերջն Ապրիլի զպատուհանս բացի,
Զձիւնաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի:

Արտասուք եռանգունք զայտս իմ այրեցին:
Զի անդարձ գերութիւն յուշ իմ մուտ ածին:
Լեզուապէս դառնացան վերը վեհատ հոգւոյս,
Թըմբեցան զգայարանքս հատան ելք շնչոյս:
Ափսոս ինձ, ասացի, բիւր անգամ յայն օր,
Հատ անէծս թափեցի ՚ի ծննդեանս վատ օր:

Մաշեցայ, թռնեցայ մըտի խոր ՚ի քուն,
Զչար կոկիծ հեք գերւոյս արկ ՚ի ծով անհուն:
Դրշոյն մեծ անմահից ել ինձ յայց տեսլեամբ,
Որպէս թէ ՚ի փոսոյ զիս ելոյծ ձեռամբ:
Աներկմտ մօտ մատեայ ՚ի համբոյր ոտին
Գերբնապէս սքանչելօք զիս ազատողին:

Պամբ ձայնեղ թրուչնակաց ճոխ դայլայլեցին,
կենսածին Տիրամօրն փառս վերերգեցին:
Երանի ասացէ՛ք կարմրացայտ վարդիս.
Գաջալիրս տուրք նըմա ՚ի զով պաշուղանիս:
Աւաղ իմ նեղասիրտ կարծամիտ լալոյս,
Զիա՞րդ զիս կարծեցի կորուսեալ անյոյս:
Աւխատինք իմ նեղչաց նետք եղեն ինքեւանյ,
Նանրացան դաւք նոցա, անկան յիւրեանց ցանց:
Յաւազնեալք՝ օրհնեցէ՛ք զանուն Տեաւն յաւէտ,
Դի՛ք զյոյս ձեր յօդնութիւն Խաչին փըրկաւէտ:

Յ. Վ. Աւամբարեանց

155.

Սուդ դստեր Յեփիթայեայ.

Յառաւօտ կենաց կուսանիս,
Յարշալոյս աւուրց անմեղիս,
Խորշակ մահուան տարածի,
Ա՛լս, լըս աչացս պակասի:

Ա՛յ ծանօթ լերինք և հովետք,
Ա՛յ պայծառ դաշտք ծաղկափթիթք,
Ահա՛ ՚ի ձէնջ հրաժարիմ,
Փութով երթայց ՚ի շերիմ:

Լայէ՛ք զիս, ո՛վ անտառք, բըլութք,
Լայէ՛ք, հա՛րք, մարք, եղբարք և քորք,
Զիս փոյթ զենցէ սուր ուխտին,
Յօդուածքս այժմն սարսափին:

Արիւն իմ է գին փրկութեան,
Գիշամու տանն Խարայէլեան
Սեղապարտքն աղատ մընան,
Անմեղ կեանք իմ չըքանան:

Ամայր իմ ախ, դու մի՛ շատ ցաւիր,
Հօրս ուխտին բնաւ մի՛ ներհակիր,
ՅԱստուած բարձրեալն զյոյս քո դիր,
Բե՛ր զզարդս իմ, մի՛ աղխրիր:

Դուրք, դստերք տոհմին Յակովեան,
Շուրջ զենև կացէ՛ք միաբան,
Երգեցէ՛ք զերգս հարսնութեան,
Միշտ տօնեցէ՛ք զիմ վախճան:

Աստուած մեծ փառք Խարայէլի,
Ընկա՛լ զիս իբր զհոտ կընդրկի,
Եբրե զզոհն Սրէլի,
Եբրե զըրդին Սարրայի:

Պարունեաց վըճիո համաձայն
Ո՛չ կարաց տալ մահուս խափիան,
Լե՛ր դու, Տէ՛ր իմ, օգնական,
Դու հե՛շտ արա զեմ վախճան:

Եղիելոյս ծընողք ցաւալի
Սընացեն առանց զաւակի,
Տէ՛ր, տուր նոցա սիրտ արի,
Մեղմեա՛ զմորմոք դառն վըշտի:

Աւանիկ երամբ հրեշտակաց
Առ երկնիւք կան թեւատարած,
Զիս հրաւիրեն յԱդին բայ,
Զիս կոչեն հարսն Հօր փառաց:

Արկարէն քօղն իմ հարսնութեան
Փոխարկի ՚ի պատան թաղման,
Իմ պՃնազարդ հարսնարան
Եղե այս խոր գերեզման:

Յուցէ՛ք ինձ զիմ մահու դործի,
Զսուր զէն զոհիս արժանի,

Արդ՝ ողջ լերուք, սիրելիք,
Օրհնեալ է Տէր, պիղծ են դիք:

Յ. Վ. Ալամբարեանց:

156

Յերկու ձեռին երկու մոմ
Ինձ ընդ առաջ ել ՚ի տուն,
Մի՛ հարցանէք—ո՞վ էր նա,
Հրեշտակ, թէ կոյս լուսագեղ:

Ամօթն գնա վարդ արար,
Ես հիացեալ դարձայ քար,
Այն ինչ օր էր և ինչ ժամ
Յորում տեսի ես կեանք նոր:

Լիածըրագ յայնմիկ տան,
Ի մարդաշատ բազմութեան,
Ի մէջ աղջկանց և հարսանց
Յոտին կայր ոմն անդ յանկեան:

Այն օրիորդն էր պարկեշտ,
Ինձ պատահեալ առ դրամը տան,
Զոգիս դրաւեաց յիւր ՚ի սէր,
Ի նմա տեսի ես կե անք նոր:

Մարգարտափայլ մարմինն էր,
Հասակն էր յոյժ վայելուչ
Զոտիւքն վարսք քարշ դային,
Ի դոյն քըրքմոյ փայլէին:

Դիմաց շըքեղ երեսյթ,
Յօնից, աչաց այտից գեղ,
Շըրթանց, լեզուին համանոյշ
Խոստանային ինձ կեանք նոր:

Ա՛խ ասացի, թըմիցայ,

Սիրոս սկսաւ դողդողալ
Զաշխարհ համայն մոռացայ
Ի գեղ կուսին ափշեցեալ:

Ռամք կոչելոցն յայն հանդէս
Ընդ իմ մեծ բազդ մախային,
Զի մերձաւորք այն կուսին
Փեսայ զանձն իմ ձայնէին:

Եթէ զաշխարհ լի գանձիւք
Ինձ ոք բաշխէր ՚ի պարգև
Ո՛չ տեսանէր այնքան բախ,
Որքան ՚ի գալս առ կուսին:

Արդեօք գուցէ յաշխարհի
Սիրոյ նման ինչ հըզօր,
Սէր ՚ի ձեռաց Արարէին
Վեղ մահացուացս է ձիր նոր:

Անիրախորհուրդ ազգ մարդկան
Շատ մի՛ սիրեր դու զաշխարհ,
Նա թըշնամի է անդութ,
Զար քան զքարբ մահաթոյն:

Յանցիւ սիրոյ զքեղ կարթէ,
Ի հաղբ անել ըմբռնէ,
Ապա զսիրոյդ առարկայ
Ի քէն արագ կողոպտէ:

Յ. Վ. Ալամբարեանց:

157.

Մանկունք Հայկայ.

Առրաբոյս խայրիք մանկունք Հայկայ,
Օ՛ն մատիք յայս վեհ հանդէս.

«Արաքս, ինչո՞ւ ձըկանց հետ «Խիզախ անմիտ պատանի,
Պար չես բռնում մանկական, Նիրհըս ինչո՞ւ դարեօր
Դու դեռ ծովը չի հասած, Վըդովում ես, նորոգում
Սրգաւոր ես ինձ նըման: Իմ ցաւերը բիւրաւոր:»

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէզ, հըպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից:

Եիրելի մահից յետ
Ե՞րբ ես տեսել որ այրին
Ռտից գըլուս պըճնուի
Իր զարդերով թանգարին:

Մի' պըղտորիլ յատակդ,
Հանդարտ հոսէ' խայտալով,
Մանկութիւնը քու կարծէ,
Շուտ կը հասնես դէպի ծով:

Որի՞ համար զարդարում,
Որի՞ աչքը հրապուրեմ,
Շատերն՝ ինձ են ատելի,
Շատերին՝ ես օտար եմ:

Արդի թրիեր թո՛ղ բըսնին կար ժամանակ, որ ես էլ
Քու հիւրլնէալ ափի մօտ, նըքեղազարդ հարսի պէս
Սոխակները նոցա մէջ չազարդ առաջում էի ափերէս:

Յատակ թրիեր թո՛ղ բըսնին կար ժամանակ, որ ես էլ
Քու հիւրլնէալ ափի մօտ, նըքեղազարդ հարսի պէս
Սոխակները նոցա մէջ չազարդ առաջում էի ափերէս:

Մըշտագալր ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջըրին,
Ճըկուն ուտըն ու տերեւ
Թո՛ղ թաց անեն տապ օրին:

Յատակը պարզ ու վըճիտ,
Կոհակներըս ուլրուն,
Լուսաբերը մինչև այդ
Ջըրիս միջին էր լողում:

Ափերիդ մօտ երգելու
Հովիւր թո՛ղ գան համարձակ, Ո՞ր ջըրամօտ գեղերըս,
Գառն ու ուլը քու վըճիտ Ո՞րը իմ շէն քաղաքից,
Զուրը մըտնին միշտ արձակ:» Ո՞ր բերկրալի տեղերըս:

Ի՞նչըս մնաց այն օրից՝
Հովիւր թո՛ղ գան համարձակ, Ո՞ր ջըրամօտ գեղերըս,
Գառն ու ուլը քու վըճիտ Ո՞րը իմ շէն քաղաքից,
Զուրը մըտնին միշտ արձակ:» Ո՞ր բերկրալի տեղերըս:

Մէջքը ուռոցուց Արաքսը
Փըրփուր հանեց իր տակից,
Ամսի նըման գոռալով՝
Էսպէս խօսեց յատակից:

Տուրքը ջըրի ամեն օր
Իր սուրբ ծոցէն Արաքս
Մայրախնամ ինձ սընունդ
Պարգեռում է լի առատ:

Զի գուարթուն հոգին չայրենասէր այս 2
Դի Մասեաց դիմէ ցայս վայր:
Արք անդուլ ցանկայք դուք առիս,
Զի ես տամ խնջեալ ձեր ձակատոն
Պանձաշուք պսակ փառաց:
Առորք պսակաց հասին ժամք,
Օ՞ն ձեպեսցուք բարեկամք,
Առեալ զնուագ ներգաշնակ,
Երգեցուք զերգս նոր:
Վ սեմ յարկիս պերճ հանդերձանք,
Ազգեն ՚ի մեզ սրտից հրձուանք,
Կայտուին բարձունք ՚ի լոյս համակ,
Բերկրապատար հրձուեսցուք,
Ի սոյն հանդէս գեղաշուք:
Նորահրաշ բերկրութեամբ
Դարձ առնէ արդ գարուն,
Լուսափայլ շողոցին
Մեզ արփին գեղաշուք:
Ծաղկասփիւռ զարդարին
Բուրաստանք բանաւոր,
Քաղցրաձայն նուագէ
Աստ երգանք հոգեօր,
Զերգս սիրոյ յորդոր:

Արաքսի արտաստոքը.

Մայր—Արաքսի ափերով
Փայլամնոր գլնում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պըտում եմ:

Բայց նոքա միշտ յեղաղուկ
Պըզտոր ջըրով եղերըն
Դարիւ դարիւ խըփելով
Փախչում էին լալագին:

Հին հին դարուց յիշատակ հայութեան մաս
Ալեաց մէջը պարում եմ» յոյ բայ այս
Կարո՞ղ է պատահիլ արգեօք, որ մի որ և է Հայ անհատ,
տեսնելով Արաքսը, իսկոյն չմտաքերէ այդ ազդու բանաստեղ-
ծութիւնը, եթէ կարդացելէ դորան գոնէ մի անգամ:

Մի բոպէում շարուեցին յիշողութեանս մէջ պատմական
ամբողջ շրջաններ, սկսուած ջուղայի փարթամ դրութիւնից,
անցած նորա թշուառ աքսորանքին դէպ ի Սպահան ու վեր-
ջացնելով ներկայ քարակոյտ աւերակների տիսուր կերպարան-
քով: Ես երեւակայեցի ջուղայեցւոց միահամուռ ընդունելու-
թեան հանդէսը Պարսից առաջին Շահ՝ Աբասի գալստեանի,
1604 թուականին: Եւ ահա՝ իշխանները, ծերերը և երիտա-
սարդները զարդարուած ոսկեհուու զէնքերով և սիրատեսիլ
հանդերձներով, ընթանում են խրոխտ թագաւորի առաջ:
Նորաբողբոյն գեռահաս մանուկները՝ ոսկէ բաժակներով անու-
շահամ և ազնիւ գինի են մատուցանում: Վառած մոմերով,
ինկով և ինդրուկով քահանայք և մարմնաւոր երգիչները
առաջը զնալով յարմարաձայն նուագում են: Եւ ահա գետա-
փից մինչեւ խոջայ Խաչիկի ապարանները, Ճանապարհի վրայ
սփուած է կարմիր գործուած, որի վերայ թագաւորը ընթանում
է դէպ ի Խաչիկի պալատը: Խոջայ Խաչիկը ահա իւր որդւոց
ձեռքով ոսկու կոյար ոսկէ սկուտեղի վերայ պարգև է մատու-
ցանում թագակիր հիւրին: Նորան հետեւում են ջուղայու
և միւս մեծամեծները: Շահ՝ Աբասը երեք օր հիւր մնաց ջու-
ղայեցւոց մօտ, որոնք պատուեցին նորան համադամ կերակուր-
ներով և ծաղկահամ գինիով:

Թշուա՛ռ ջուղայեցիք: Դուք պատուեցիք, թագաւորավայել
կերպով ընդունեցիք, չըխնայեցիք ձեր սիրտը, կարողութիւնը
ու համակրութիւնը ձեր բարձրաստիճան հիւրի համար, որ
մնածում էր լոկ ձեր կորստեան վերայ: Ձեր բարձր հիւրը
ձեր հիւրասիրութեան փոխարէն, մի տարից յետոյ այրեց
ու քանդեց ձեր հայրենիքը, տեղը և տունը: Գլխատեց շատե-
րին ձեզանից, շատերին էլ ջրահեղձ անելով Արաքսի յորձանա-
լու սիսակ Հայաստանի Ա. հատոր, Ա. գ.

Բայց ես այն սուրբ ջպերով Հեռու հեռու քըշեցին
Սուրբ — Ակօբի աղքիւրին Բընիկ ազգը իմ Հայկեան,
Պիտի ցօղեմ արտօրայք Նորա տեղը ինձ տուին
Իմ ատելի օտարին: Ազգ անկըրծն, մոլեկան:

Կամ կենսատու իմ ջրով Դոցա՞ համար զարդարեմ
Ափերիս մօտ կըկրպած Խմ հիւրընկալ ափերը
Խոր նամա՞ղը կատարէ Եւ կամ դոցա՞ հրապուրեմ
Թուրք կամ Պարսիկը հոտած: Ճըպուտ, պըլած աչերը:

Մինչ իմ որդիկը — ո՞վ գիտէ — Փանի որ իմ զաւակունք
Ծարաւ, նօթի, անտէրունչ Ա. յապէս կու մընան տանդուխտ
Օտար աշխարհ յածում են ինձ մշշա սրգաւոր կը տեսնէք,
Թոյլ ոտքերով կիսաշունչ: Այս է անխար իմ սուրբ ուխտ:

Ել չե խօսեց Արաքսը
Յորձանք տուեց ահազին,
Օղակ օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեղին.

Ո. Պատկանեան:

Արաքսի ափանց վրայ.

Զննելով այսպէս երբեմն փարթամ, հարուստ, բազմամարդ
և բազմազուրկ գիւղաքաղաքի (ջուղայ) տեղը, ես կանգնեցի
Արաքսի ափումը և նայեցի մի կողմից ժայռապատ ձորակի ընդ-
հանուր վայրենի տեսքին, միւս կողմից սիզածեմ զետի ալիք-
ների վերայ՝ շրթունքներից ակամայ թռան հանձարաւոր հե-
ղինակի աննման ոտանաւորի տողերը.

«Մայր — Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,

քում, մնացածներին, գերեց դէպ ի Սպահան: Զեր պատուած հիւրի լիրը զօրականներն եւ զինուորներն անպատուեցին ձեր կոյս աղջկանց և ձեր փափկասուն հարսերին: Զեր մատաղահաս մանուկներին զոհեցին նոքա իւրեանց սրին: «Ընդունում» եմ Դանայեցւոյ պարգեւը, բայց վախենում եմ նորանից»: Սոյն այս լատինական խօսքերին յարմար էր ձեզ կրկնել, «Ընդունում ենք մեր թագակիր հիւրին, բայց վախենում ենք նորանից»:

Քաջբերունի:

160.

Ստեփաննոս Նաղարեանցի տապանագիրը *)

Եիրիմ, բացիր դու մայրական քո ծոց՝
Կենդանի մեռեալ է գալիս քեզ հիւր.
Հողածին մարդ է, բայց լուսոյ որդւոց
Տանումէ երկրից դիտութեան աղքիւր:
Թռ' զ հանգչի Յորա սուրբ ոսկըրները
Քո մըշտախաւար, լուռ խոնաւ գրքում,
Քանի լուսինը, արեգն, աստղերը
Պայծառ փայլումեն կապոյտ երկնքում,
Քանի որ Ստեղծողն արարիչ ձեռքով
Զէ կրտել երկրի գոյութեան թելը,

*) Ստեփաննոս Տէր-Եսայեան Նաղարեանցը ծնված է 1812 թուին թիֆլուում և սկզբնական կրթութիւնը սկսելով Ղարաբաղցի Պողոս վարդապետի մօտ, շարունակումէ Ներսիսեան Դարրոցում և տարի և աւարտում այնտեղ։ Սորանից յետոյ Նաղարեանցը զնումէ Դորավատ և տեղական համալսարանում բարձրագոյն կրթութիւն ստանալով՝ աւարտումէ իրեւ ամենայառաջաղէմ ուսանողներից մինը, և, իրեւ արեւագէտ, պրօֆէսօր է նշանակվում կազանի համալսարանում և առաջ 1848 թուին Լաղարեան Ճեմարանի Լիցէնսում բարձր մասնագիտական դասանում համար Պարսկական և Արաբական լեզուների դասախոս հրաւիրվում։

Սորա անունը խունկ ու սաղմնուլ
Անվերջ կը յիշուի Հայաստանումը:

Նաղարեանցը յայտնի էր ոչ միայն Հայ հասարակութեան ընթերցող դասին, իրեւ յայտնի գրող, հայագէտ, այլ նա յայտնի էր նոյնաբէս թէ ուսւ և թէ եւրոպական գիտնականների լուսնին իրեւ լեզուագէտ։ Նաղարեանցի համար լեզուի մշակութիւնը կեանքի խնդիր էր, այդ պատճառով նա սկսեց հիմն դնել աշխարհաբար, կենդանի լեզուի զարգացման, որից և տարածուեցաւ շատ տեղեր։

Նաղարեանցը, համարձակ կարելի է ասել, առաջինն էր իրա ժամանակ, որ եռամսղով պարապում էր գրականական ասպարիզում, որի հետևանքն էր նորա մի քանի ուսումնական գրուածները։ Նա իրա աշխատութիւնների մէջ աւելի և աւելի ժողովրդականութիւն ստացաւ «Հիւսիսափայլ» ամսագրի հրատարակութեամբ, սկսած 1858-1864 թիւը, չհրատարակելով միայն նախընթաց 62 և 63 թուերի համարները, իրան յայտնի պատճառով, «Հիւսիսափայլ», այդ բառի բուն և ընդարձակ նշանակութեամբ, կատարելապէս փայլում էր իրա զեղեցիկ և օգտակար յօդուածներով, որոնք մէր և եռանդ էին զարթեցնում ընթերցողի պատի մէջ և նորա հոգու քնարի լարերին մի առանձին զարկ տալիս։ Հնաց այս բոպէին էլ «Հիւսիսափայլ» ժողովրդի մէջ հաղուագիւտ գիրք է համարվում ընթերցանութեան համար, որի եռամբ ճրագով են մանգալիս։

Նաղարեանցը, որ երբեմն կեանքի բարօրութեան գոյութեան մասին շեշտելով և զդրութելով էր խօսում, վերջին տարիներում, գրեթէ, լուսութեամբ է անցնում և, վերջապէս, 1879 թուի ապրիլի 26-ին մեռանումէ 67 տարեկան հասակում, թողնելով աղքի մոտածող դասին խոր ցաւակցութեան մէջ։

Գուռ կենդանի ես մէր մէջ, ով բաղմաշխատ գրական մշակ Նաղարեանց։ Քանի որ քո աշխատութիւնները մէր սեղանի զարդն է, քանի որ նոքա մէր որաի և մէր հոգու ամենամերձ բարեկամներն են՝ դու մէզ հետ ես, դու մէզ հետ զրոյց ես անում և զրագեցնում մէզ քո մտքի աղնիւ զարդափարներով։ Խակ երբ կեանքի անգութ մանգաղը մէզ ես հնձեց այս կեանքից, այն ժամանակ, լաւ իմացիր, հնձեակ, որ անձամբ կ'տեսնուինք հանդերձեալ կեանքում և աւելի գեղեցիկ տպաւորութեան տակ կ'լինինք, լսելով քեզանից, քո կեանքի, քո ջերմաջերմ և քո եռանդու խօսքերը։

Ա. ՔԸ

Երջանիկ շիրիմ, ընդունիր Դորան,
 Դա չ' լոկ դիակ հողածին մարդու.
 Դա իր մէջ ունի մի ճսիս շտեմարան
 Հայոց աշխարհիկ գրականութեան:

 Դա արևմուտքից ուսման քաղցրիկ ջուր
 Բերաւ ու արբոյց Հային, իր որդուն.
 Դա «Հիւսիսից» գիւտութեան «Փայլեր»
 Արձակեց նորա ամպամած հոգուն:

 Դա առաջինն էր, որ յանդրզնեցաւ
 Գերեզման փորել գրքաբառ լեզուին.
 Դորանով ծաղկեց և շունչ ըստացաւ
 Կենդանի խօսքը—բարբառը Հային:

 Դա ներկայացաւ իր ազդին պէս մայր,
 Որ յաւով ծնեց աշխարհիկ լեզու.
 Դորան ըստ ազգեց խօսքը—բիրտ, յամառ
 Կրնարած շաւզում (անյաղթ գիտութիւն):

 Դա գրցեց Հայի թրմրած կեանքի մէջ
 Մի զարմանալի յեղափոխութիւն.
 Դորանով վառուեց կըբակը— անշէջ
 Մայրենի լեզուի Հայ սըրտերի մէջ:

 Ախմէն Սափարեանց:

Գարուն.

Ո՛չ, ի՞նչ անուշ և ինչպէս զով
 Առաւօտուց փրչես հովիկ
 Գիտականց վըրայ զուրգուրալով
 Պասակաս հրեւ մազերուն կուսին փափկիկ.

Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
 Գնա՛ անցիր սըրտէս ՚ի բաց:
 Ո՛չ, ի՞նչ աղու և սրտագին
 Ծառոց մէջէն երգես թռչնիկ,
 Սիրոյ ժամերն ՚ի յանտառին
 Ըզմայլեցան ՚ի քոյ ձայնիկ.
 Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
 Գնա՛ երգէ սըրտէս ՚ի բաց:
 Ո՛չ, ի՞նչ մրմունջ հանես վըտակ
 Ականակիտ և հանդարտիկ.
 Քո հայելոյդ մէջ անապակ
 Նային զերենք վարդն ու աղջիկ.
 Բայց չես վըտակ իմ հայրենեաց,
 Գնա՛ հոսէ սըրտէս ՚ի բաց:
 Թէպէտ թռչնիկն ու հոմին Հայոց
 Աւերակաց շրջին վերայ,
 Թէպէտ պղասոր վըտակն Հայոց
 Նոճիներու մէջ կը սողայ,
 Նոքա հառաչք են հայրենեաց,
 Նոքա չերթան սըրտէս ՚ի բաց:

Մ. Պէտիկթաւեան:

162.

Վարդանի և իրա զօրաց
 Վարդան.
 Ո՛վ Հայիազունք, ո՛վ գիւցազունք
 Ահա՛ ձեզ նոր հանդիսարան.
 Բացէք աչքերդ, հերիք ննջէք,
 Տարիք գարեր են անցական:
 Զօրականք.
 Մենք պարասատ ենք, մենք ուխտել ենք,



Սեր կեանքը զոհ բոլորանուէր
Մատաղ անել Հայոց ազգին,
Նորա լեզուին և կրօնին:
Վարդան.

Առէ՛ք սուրեր, նետ ու անեղ,
Ելէ՛ք լնդղէմ ձեր թշնամեաց.
Ձեր հաւատը և ձեր ազգը
Պաշտպանեցէ՛ք յօտար ազգաց:
Զօրականք.

Հայ զինորի կեանքը դառն է,
Երբ որ պարապ տանն է նստած,
Մեզ ասպարէզ անմահ փառաց
Կոռի դաշտն է նշանակած:
Վարդան.

Հայ զօրականք, ձեր նետերը
Կապարձից մէջ հերիք մնան,
Ձեր երկիրը Պարսիկ ոտից
Ընդէ՛ր լինի այդպէս կոխան:
Զօրականք.

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք
Մեր սուրբ երկրից Հալածական
Առնել անկրօն Պարսից ազգը,
Փրկչի խաչն է մեզ օգնական:
Վարդան.

Հայոց հովեք, ձեր ոչխարները
Է՞ր սար ու ձոր թափառական
Գաղանաց ձանին ընկած ողբան.
Է՞ր չլսէք նոցա կական:
Զօրականք.

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Աւետարան խաչ ՚ի ձեռին,

Առաջնորդել Հայոց ազգին, պահպար
՚ի ժամ սրբոյ պատերազմին:

163

Ալոթք.

Ո՛վ Տէր մեր Աստուած, ու
Լե՛ր մեզ ողողմած, ուս ճառը
Գու ես լոյս լուսոյ,
Մեր հոգին զօրացո՛ յաւիտեան:
Ո՛վ Տէր դու մեր Աստուած,
Ո՛յժ առւր բազկաց,
Վանենք սոսկիք,
Պահենք կրօն.

Աստուած, մեր հոգին
Զօրացո՛ յաւիտեան:

164

Ազգային մաղթանք.

Ո՛վ Հայր մեր Աստուած,
Միշտ բարի և զըթած,
Էցցո՛ Հայութիւն:
Մի՛ թող', Տէր, մեզ խապառ
Անխընամ և թշուառ,
Գու միւսանգամ պայծառ
Արա՛ Հայութիւն:
Տէր, մեզ զըթա՛ գու կրկին,
Տո՛ւր հոգի իմ ազգին,
Միաբանական
Որ Քո փառքիդ Համար
Դարձեալ գեսի արդար

Գլնանք ձանապարհ, Արդանայաց
Քեզ պաշտել ապատ: Կողու Դասե զի
Մաքրիր, Տէր, Հայի
Եւ սիրտ և հոգի
Հոգւոյդ կրակով,
Որ Ճմարտութիւն զգան,
Եւ զուգութիւն
Կապէ ազգութիւն
Ամուր շաղկապով:

165.

Երգ առ Հայաստան

Ողջոյն ընդ քեզ, Հայաստան,
Մեր դիւցաղանց գերեզման.
Ողջոյն
Պսակեալ փառօք Հայրենի:

Երկինք լիրկէ Քեզ Հրեշտակ,
Քիւր վարդք ծըլին ոտքին տակ,
Խւր մէկ նայուածքն երկնագեղ
Քու արտասուացդ ըլլան զեզ:

Ո՛չ, ինչ անուշ նըւագներ
Պիտի հնչեն սոխոսկներ,
Երբ քու ճակատըդ պատիէ
Ծաղկէնեան դափնիէ:

Մանուկն յորոց կը խայայ,
Եւ ծերունոյն սիրտ ցնծայ.
Երբոր նշոյլք կը ժպախն,
Հայ աստեղաց նորածին:

Ո՛չ, շիրմացդ քով ալ հանգչե բյար ԽԱ
Անմահութեան վեհ ոգի. Ելուսա Ճամաց
Մինչ զուարթունը 'ի բարձանց
Պսակս սփուն Հայկազանց:
Փափուկ մատունքդ թուղ դրօշմենց
Այն տառերով ոսկեղին. Յա բյար մի ձգու
Սեր սրտին մէջ «սէր և լոյս»,
Սեր հոգւոյն մէջ «կեանքն և յոյս»:

Քու վըշտերուդ փոխանակ
Երկինք կանգնեց յաղթանակ.
Քու վէրքերուդ ալ դարման
Քեզի Օրէնք շնորհեցան:

166.

Հարբած մարդու Երգ.

(Գերմանականից)

Ուղիղ գնեառունից ես տուն եմ զընում
Փողոց, այ փողոց, էդ ինչ եմ տեսնում,
Աջ գնամ թէ ձախ՝ ծուռ են երկուսն էլ
Փողոց, տեսնում եմ դու էլ ես հարբել:

Լուսին ջան՝ ուկիսրդ ինչի՞ է ծըւած,
Մէկ աչքըդ կապուել միւսը կէս բաց.
Դու էլ ես կոնծել այ դու անամօթ.
Ամանչիր ինձնից, վաղուցուան ծանօթ:

Բա էստեղ էստեղ, տես լապաերներն էլ
Չեն կարող ուղիղ ուղիղ վրայ կանդնել

Մէկ պարզ են վառվում, մէկ՝ սաստիկ խաւար
կամ թէ՝ պատից պատ կը պչում անդադար:

Աղեկ՝ էս գիշեր ամենքն են հարբել
ի՞նչ բան է մենակ մենակ ծոմ պահել
ջէ, էդ կը լինի իստակ գրժութիւն,
ուրեմն նորից նոր դառնամ դինետուն:
Գէրդ Դողովեանց,

167.

Պլպուլն Աւարայրի.

Ո՛չ դու բարեկամ այրած սըրտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ պըլպուլկդ, երգէ՝ ՚ի սարէդ,
Զանմահ բաջքն ձայոց երգէ՝ հոգւոյս հետ.
Թադէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սըրտիկս որ ՚ի խաչն էր կիպ՝ թունտ առաւ.
Ի խաչին թեւէն թըրոայ ու հասայ,
Գըտայ զքեզ՝ ՚ի դաշտ բաջին վարդանայ:
Պըլպուլքեզ համար մեր հարքն ասացին
Թէ չէ հաւ՝ պըլպուլ մեր Աւարայրին.
Եղիշեայ հոգեակն է քաղցրազրուցիկ,
Որ զվարդան ՚ի վարդն տեսնու կարմրիկ,
Չըմեռն յանապատ կու գնայ կայ ՚ի լաց,
Յնդապ գայ գարուն ՚ի թուփ վարդենեաց.
Երգել ու կանչել յն զիշեին ձայն
Թէ պատասխանիկ մ'արդեօք տայ վարդան:

Ղենդ վ. Ալիշանեան:

168.

Ամթինիկ և Արտաշէս մանուկ:

Ուր սուր կուրն էր գալիս կովկաս սարերէն,
Սի աննաման ձայն էր տալիս էն միւս ափերէն:
Փայլեց աստղեր, արե ծագեց կովկաս սարերէն,
Սամթինիկն եմ սիրուն եմ ես երկնից լուսնեակէն:

Հայոց քաջեր, բա՛շդրէք զէնքեր շուտ ձեր ձեռքերէն,
Սամթինիկն եմ կյաղթուիք դուք իմ սիրոյ սրէն:
Գեղ եմ ասում, բաջ Արտաշէս, դուրս ե՛կ վրանէն,
Սամթինիկն եմ կյաղթուիս իմ սև սև աչքերէն:

Տաք տաք արիւն զուր մի՛թափեր անմեղ սրտերէն,
Սամթինիկն եմ կյաղթուիս իմ կարմիր թշերէն:
Սի՛ պարծենար քո զօրքերի պէս պէս գունդերէն,
Սամթինիկն եմ կյաղթուիս իմ սիրուն ունքերէն:

Մի՛ իրտոլսար քո յաղթական սէդ սէդ քայլերէն,
Սամթինիկն եմ կյաղթուիս իմ փունջ փունջ մազերէն:
Բա՛ց շուտ շղթայն գերի բոնած եղօրս ոտերէն,
Սամթինիկն եմ կյաղթուիս դու իմ բլըուլ լեզուէն:

Քէն մի՛ պահիր, վրէժ մի՛ ուզիր իմ Ալաններէն,
Բարձր է կովկաս, քաջ են Ալանք Մասեաց քաջերէն:
Ձայն եմ տալիս, ձայն տո՛ւր ձայնիս բո խոր բանակէն,
Դո՛ւրս եկ մէյտան, թէ չես վախում սիրոյս նետերէն:

Ալան, Ալան, յաղթութիւնս առիր իմ ձեռէն,
Ո՞նց զիմանամ, հալվում է իմ թուրս քո կրակէն:
Ալան Ալան, վատոք ու պասկս առիր իմ զլսէն,
Ո՞նց զիմանամ, սիրուն ես դու մեր սիրուններէն:

Այդ դու անգութ, այրվում է սիրտս քո չոր ծարաւէն,
Ո՞նց դիմանամի, չեմ հովանում կուրի ջրերէն:
Տներ ինձ թևեր քո մօտ թռչեմ կուրի վրայէն,
Մի թիթեռնիկ դարձայ ես քո ճրագի լուսէն:

Հաղար կ'տամ, տասն հաղար իմ անթիւ գանձերէն,
Քեզ ինձ կառնեմ հարս-թագուշի քաջ Ալաններէն:
Ոսկւոյ անձրեւ շաղ կըտամ քո զլինիդ վրայէն,
Մէլ կըդնայ մարդարտէ քո ոտի տակերէն:

Կ'թափեմ կուրը լայքա ոսկի կարմիր մորթերէն,
Ծածկուի գետը ընծայաբեր բարձած ուղարերէն:
Ասայ, հեծաւ արի արքայն սեն իւր ձիերէն,
Արծուի նման Ճնշեց անցաւ կուր գետի մջէն:

Հասաւ, հանեց իւր կարմիր թռկ օղն ոսկեղէն,
Զգեց, ընկաւ Սաթինիկի մէջքի մէջտեղէն:
Թռի՛ր, փախի՛ր, իմ գեղեցիկ սե ձիս հըրեղէն,
Մէջքիդ մարալն որս եմ բոնել կովկաս սարերէն:
Թռի՛ր, փախիր, մեծն է սա իմ բոլոր որսերէն,
Թևիդ վըրի կոյսն եմ խլել քաջ Ալաններէն:

Սամուէլ Գիւլզատեանց:

169

Ով դու Հայ աշխարհ, աշխարհ եղեմեան,
Հայ մարդոյ համար վայր նուիրական.
Է՞ր քո որդւոց մէջ դաւաձանք ծնան
Հայ մարդոյ սրտին դնել սե նշան:

Տիգրան, Մեհրդատ, նա եւ քաջ Վարդան
Քո դու թշնամեաց ի՞նչպէս դէմ կենան,
Երբ Փառնակ, Ասսակ, մատնիչ Մեհրուժան
Իւրեանց հայրենեաց լինին դաւաձան:

167

Ե Դ Ի Հ Յ է .
(Հեղինակութիւնը).

Պակեծըղի, գեղեցկատիպ,
Ով իմ գըրքուկ հոգեշունչ,
Ազգիս փառքը, անբաղդ օրը ապ
Դու քարոզող անմըռունչ,
Ով պիտի տար այն անբապտ
Սէրն ու գութը դէպ չային,
Թէ որ մարդիկ քեզ ով գըրքուկ,
Երբեմըն չե կարդային.
Գեզ կարդալով՝ կը մոռանամ
Ես թերութիւնք մեր ազգին,
Գէթ Հայ եղբարքս գութ ու սիրով
Միշտ կըլցավի իմ հոգին.
Մըտքիս մէջը ես միշտ կասեմ
«Սէրունդք Վարդանի քաջին,
Անհընար է անփառունակ
Ըստրուկ մընան կամ կորչին,
Կամ տեսնելով հէզ Հայ տէրտէր՝
Սուրբ Ղեղնդին կը յիշեմ
Ու յուսահատ տըրտում մըտքեր
Ինձմէն հեռու կը քըշեմ:
Եղիշէին Հայք կարդալով՝
Նոր յոյսերով կըլցուին,
Հայի գալոց բարիքն նոյա
Հոգւոյ առջեւ կըբացուին.
Հայ պատանի՝ շուտ շուտ կարդա
Այս գըրքուկը ոսկետառ,
Որ համոզիս թէ մեր Հայք՝
Կորչելու ազգ չէ իսպառ:
Ու Պատկանեան:

171.

Մայրենի լեզու.

Ո՞վ մեծասքանչ դու լեզու,
Ո՞վ հեշտ բարբառ մայրական,
Փափկահնչիւն քո բառերուդ
Նման արդեօք այլ տեղ կա՞ն:

Դու որ նախ ինձ հնչեցիր,
Նախ սիրոյ, ո՞չ, հեշտ խօսքեր,
Այն նախ զքեզ թոթովելս
Դեռ իմ մտքէն չէ ելք:

Ի՞նչ դառն վեշտ է սրտիս,
Երբ օտար տեղ ու լեզու
Բռնի իրեն զիս կըքաշեն,
Արտէս արիւն կը հեղու:

Ո՞չ, զայն օտար ես սիրել
Բնաւ չեմ կարող ի սրտէ.
Չէ, այն չէ քաղցր իմ լեզու,
Որ սիրով զիս կ'ողջունէ:

Մայրենի անուշ լեզու,
Կեաց անսաստան, կեաց յաւետ,
Կեաց միշտ լեզուդ դու հայկարժան,
Կեաց ծաղկալից, ծաղկաւէտ:

172

Մաղթանք առ Տէր.

Ո՞վ Տէր Աստուած, լո՞ւր մեր բարբառ,
Ըւզեալ սրտէ միշտ վրշահար.

Փութա՛, գրթա՛ Հայոց թշուառից ուս ՅՈ
Մի՛ օտարաց լիցին աւար:

Կայեա՛ց տրխուր աւերակաց,
Մեր հարց անշուք լըքեալ շրմաց,
Ա՛խ, Հայաստան, մայր սղգապղեաց,
Ի բիւր հառաչս կոծէ ՚ի լաց:

Ուր Հայորեար տքնին պանդոխտ,
Ո՛հ, ընդ տարվայրա բազմակարօտ,
Չունին պաշտպան մերձ ՚ի կորուստ,
Ի վտանգս կրեն հարուածք անգութ:

Տո՞ւր շունչ քոյդ Հայ որդւոց համայն,
Ի չիր դարձցին վաշ սոսիք չար.
Եւ ՚ի կրօն սուրբ Հայը Հայաստան կեցցեն յաւերժ,
Կացցեն պայծառ, կացցեն պայծառ:

173

**Ուղերձ յաւուր օրէնութեան բացման
Ճեմարանի սրբոյ Եղմիածնի.**

Ո՞չ, զի չըքնաղ ըզգացմանց ՚ի վառ
Յուզին այսօր հոգեպարար.
Հրապոյրք ՚ի միտս ՚ի սիրտս կայտառ,
Եւ յորդեն իղձք ՚ի Հայորեար:

Ո՞ւ այս հանդէս վեհ և շըքեղ —
Մինչ աստ պաշտին յօրհներգս գեղգեղ,
Նաւակատիք Տանն փառահեղուոք ՚ի անօթ
Գուշակէ քաջ յուսոց ՚ի գեղ:

Ո՞չ այս հանդէս քաղցր աւետեաց, առ ով
շընչէ ըգձայն Հայաստանեայց, ապաստ այս
Հարսին լուսոյ տայ հրճուազդեաց,
ի ձայն հրաւէր՝ ի վայրս դալրեաց:

Յորում ահա! ՚ի թես ուխտից, առ ով
Հանդիսակցեալ կարօտալից ուշասո՞ր դրին ո
Նաև ՈԳԻ Սուրբ Հայապնից զամուց զի՞
Վերասլանան մաղթանք սըրտից:

Փառք միշտ ձեռին նրւիրական, այժման
Որ զայս կանգնեաց ըզձեմարան,
Եւ խանդակաթ յիղձս եռանդեան զանց
Բանայ ըզդրունսն գործել ի ջանազար ցիզ ո
Ո՛չ, զի վսեմ՝ լայն ասպարէզ անդայս մեցքայ
Հարթեաց սովաւ յուսմանս պէսպէս,
Որ հովուեսցէ յայս սուրբ կրկէս
Ամենակալ աջըն՝ անմերձ:

Սա է երկիր առքբ, բանաւորուն ծայրան
Ոչ աւետեաց և մեղքածոր, վանականուն
Եւ ոչ կաթին առակաւոր,
Այլ փրկութեան մեր հոգեոր:

Սա սրբուեսցէ զեռանդս սուրբ Հարց,
Մեծն Գրիգորի և Թարգմանչաց,
Սահակ, Մեսրոպ, և Հետեւողաց,
Ի սիրոս համայն այսց ժառանդաց:

Պահեալ Աստուած, զայս նոր Տաճար,
Ցօգուտ ՚ի փառս Հայութեան յար,
Պայծառացն, Տէր բարերար,
Ցարդիւնս ատող և պերճափառ:

Եւ ընդ սըմին միշտ պանձասցի
Ի փառաւոր յիշատակի,
Անոն Սորին զեհ Հիմազրի
Տէր Տէր Գէորգ ՀԱՅՐԱՊԵՏԻ:

Վահրամ վ. Մանկունի:

174.

Հայ և Հայութիւն.

Ո՞Վ է Հայը. մի՞թէ նա է, որ խօսում է Հայ լեզուով,
Եւ կամ՝ որի մականունը յանգում է «եան» մասնիկով,
Որ ուտում է ամենայն օր Ճաշին տօլմա ու փըլաւ,
Կամ՝ պարծանօք միշտ հագնում է Հայի գըղակ ու հալաւ:

Ո՞Վ է Հայը. մի՞թէ նա է, որ զընում է Հայի ժամ,
Ու տարէնը հաղորդվում է խիստ սակաւից՝ չորս անգամ,
Որ կեանքումը պաս չի կերել ծում էլ պահում է նոյնպէս,
Յօրանջելիս խաչ է կնքում բաց բերանն ու երես:

Ո՞Վ է Հայը. մի՞թէ նա է, որ տեսնելիս տէրտէրին
«Օրհնեա! ՚ի տէր» պատրաստ սւնի ամեն բոպէ իր բերնին,
Որի համար մեծ ամօթ է, նաև մեղք է մահացու,
թէ Զատկի թաթախմանը չուտէ թերխաշ կարմիր ձու:

Զէ՛, սիրելիս, ազգութիւնը չէ՛ արտաքին արարմունք,
Հայ ծընելդ անգամ չի տալ քեզ Հայութեան իրաւունք,
«Ով» է կամ «եան» մականունիդ վերջի վանկի մասնիկը,
Կարմիր ձուով կամ թէ անձու կատարում ես Զատիկը:

Քալլա-փաչա կամ թէ բօրշ է ամեն օրուայ կերածդ,
Սերտուկ, պալսո կամ թէ չուխայ է փրայի հագածը —
Ո ղջը մին է. ծէսով չես տալ ազգիդ վնաս կամ օգուտ,
Տեղը մընայ ազգութիւնը, այդ նաև վարձ չէ՛ հոգուդ:

Սոխակ Հայաստանի Ա. հատոր. Ա. Գ.

Թռէ դու Հայ ես՝ հայութիւնդ պիտի յարգես անպատճառ,
Հայաստանը պիտի լինի յուսոյ աստղ քեզ համար.
Օտարինը դու մի՛ ատիլ մի՛ էլ սիրիլ կուրօրէն,
Բայց քու Հայի օգուտները միշտ վե՛ր դասէ ամենէն:

Արուեստ, ուսում, շըբեղարուեստ տարածէ՛ Հայ ազգի մէջ,
Բայց բռնութեամբ միշտ հեռացուր նորա մէջէն կրօնի վէճ.
.

Թռ' սիրելի, այդ խնդիրքը աչքըդ դարձուր դէպ հարաւ,
Բիւր բիւր հոգիք դու կը տեսնես կորած դորա պատճառաւ.
Բայց մինչ այսօր այդ խնդիրքը մընացել է անվըճիու,
Թոյլ խելքով աշխատում ես քակել անքակ այդ կնծիու:

Սիրէ ազգըդ ո՛չ լոկ խօսքով սիրէ ինչպէս քու անձը,
Նորա օդտին, թէ պէտք լինի, զոհէ՛ բոլոր քու գանձը,
Մի՛ խնայել կեանքըդ անզամ, արիւնըդ բե՛ր նորան զոհ,
Ո՛չ այն յուսով, որ քու ազգը իսկոյն լինի քեզի դոհ:

Խստակ սէրը չի պահանջում ամենեին տըրիտուր,
Թէ տուածը յետ առնուի՝ դորան կասեն առնուտուր.
Բայց վայ նոցա, որ անզգայ են իւր ազգի վիճակին,
Հազար անէծք նոցա վերայ, երնեկ շան պէս սատակին:

Թռէ դու Հայ ես՝ գիտե՞ս արդեօք ո՞վ էր ազգիդ նախահայր,
Ո՞ր տեղ, ո՞ր կողմնա ընտրել էր ազգին համար Հայ աշխարհ.
Քանի տարի անկախ մընաց Հայը օտար ազգերից,
Ի՞նչ էր պատճառ, որ նա ընկաւ իր առաջուայ փառքերից:
.

Երգ, սէր եւ գինի.

Ուրախ լինինք, եղբարք, քանի—որ կըտիճ ենք,
Թէ չէ շուտով կանցնի մեր մանկութիւնը,
Կու գայ մեզ կու կոխէ ծերութեան ցաւը,
Ապա ի՞նչ պիտ' անենք մենք ան ատենը:

Արտորանք երգելու՝ քանի—որ շունչ ունինք,
Թէ չէ գարնան ծաղկի պէս շուտ կու թառամինք.
Ափսս է, ափսս է մեր ոյժն ու սիրտը,
Ցաւ կլինի մեր սրտին անցած օրերը:

Ե՛կ սիրենք, ե՛կ սիրենք, եղբարք, մեկունիու,
Մեր մէջից գէն-ձըգենք չար բամբասանքը,
Բաց սիրով պարզ աչքով մեկ մեկու նայինք,
Թռ' սիրով անց-կացնենք մեր մանուկ կեանքը:

Եղբարք՝ խմենք զինին Հայ-ազգի կենացը,
Որ ամուր պահպանէ իւր սուրբ հաւատը,
Գաջ սրտով վառ սիրով սիրէ իւր հաւատը.
Ուրեմն դարդըկենք մենք մեր գաւաթը:

Ո՞ր մահկանացուն այս երկրիս վերայ
Երջանիկ ժամեր վայելել կրնայ.
Եւ ո՞րն է այն վարդ ծլած աշխարհի,
Որ ձեռացդ մէջ իսկոյն ըլթուամի.
Չեն չեն երջանիկ ո՛չ ժամը սիրանըւէր,
Որ զըգուէ հողմիկ ըզկուսին մազեր:

Թռէ մտօք զբկես զերկին և զերկիր,
Եւ ամէն գաղտնիք քեզ մերկանային,

Անհնար է քեզ ըլլալ երջանիկ,
Այլ գժխեմ բաղդին թշուառ խաղալիկ.
Չէք, չէք երջանիկ, ով գժբաղդ չայեր,
Մինչդեռ հայրենիք չէք մըսիթարեր:

՚Ի զուր դիւցազունք պատերազմական
Դաշտերուն վերայ կանգնեցին նրշան,
Հազիւ ստացան յաղթութեան պսակ,
Կորզեց ձեռքերնէն զայն մահու հրեշտակ.
Ո՛հ, չէք երջանիկ, ով գժբաղդ չայեր,
Մինչդեռ հայրենիք չէք մըսիթարեր:

177.

Լուսին.

Ով լուսին լուսին, սիրուն առարկայ,
Դու պայծառ փարոս երփնային վկայ,
Լուսատու ճրագ և զարդ գիշերվայ,
Եւ մեր գործերին վկայ ես, վկայ:

Փեզ միշտ տեսնելիս արդեօք պանդուխտը
Չէ՞ մտաբերում իւր սրտի ուխտը,
Որ արել է նա իւր հայրենիքում,
Քո պարզ լուսի տակ իւր սրտի խորքում:

Չէ՞ յիշում արդեօք իւր սիրականին,
Որին թողել է հեռաւոր երկրում:
Չէ՞ յիշում արդեօք աչքը լալագին,
Քաղցր խօսքերը, սէրը թանդագին:

Չէ՞ յիշում արդեօք մօրը կաթոգին,
Հօր երախտիքը, սէր եղբարց անդին.
Սէր ընկերակցաց և սէր հայրենեաց,
Որոնցից զըկուած մնայ տիսրագին:

Փեզանով, լուսին, սիրելի՝ լուսին,
Բացում է իւր սիրտ պանդուխտը թշուառ,
Ի՞նչ է տեսանում—ցաւեր նոր ու հին,
Որոնց անկասկած վկայ ես, վկայ:

Փեզանով, լուսին, սարեր ու դաշտեր,
Զորեր, հովեաներ, լճեր ու ծովեր
Փայլում են պայծառ արծաթեայ ջրով,
Սակայն պանդուխտը յայտնում է վշտեր:
Փեզանով, լուսին, մանիշակն հովտում,
Զուարթանում է թփերի մօտում,
Վարդը մայիսվայ պարտիզի միջում
Քեզնով է ուրախ, կենդանի մնում:

Աչքը դէպի քեզ, ով լուսին պայծառ,
Երգում է պանդուխտը սրտով սիրավառ.
Երբեմն անձայն յոգւոց հանելով,
Վառվում է զգացմունքով անդադար:
Փեզ որք և այրին տեսնելիս անդամ,
Նոր նորոգվում են ցաւով տրտմալից.
Քո լուսով իրանց վիճակին տարտամ,
Վկայ են կանչում քեզ վկայ բարձրից:

Խորէն ք. Միրզաբէգեանց

178.

Ո՛չ ձեզ ո՛չ չէք, չէք յաջողւած,
Ո՛վ ժանտը առ ձեզ զոչէ Աստուած,
Որ զհայրենեաց ուրանայք սէր
Եւ գնորուն խնդրէք աւեր:
Երկինք զձեզ դատապարտեն
Եւ Հայրենիք խոտեն, մերժեն,
Ելէք ի մէնջ ի բաց գնայք,
Անէծք ոյց չեն ճշմարիտ հայք,

Ի մէնջ ի բաց գնայք,
Անէծք ոյց չեն ճշմարիտ հայք.⁽²⁾

Խորէն Եպիս. Գալֆայեան:

179.

Մուխամմազ.

Չի լինիլ, ամէն մարդու հոգին արթուն չի լինիլ
Քնած հոգւոյն պատկերը երբէք սիրուն չի լինիլ
Ազատ հոգի, ազատ կամք, միովքանիւ ազատ միտք
Ունեցողի սրտին մէջ հանգստութիւն չի լինիլ:

Փողին մարդիկ երբեմն իրբեւ Աստուած պաշտեցին,
Բայց փողասէր մարդու մէջ արդարութիւնն չի լինիլ
Հարստութիւնն ըստ ինքեան նման է մեծ հրդեհի,
Մօտ կացողին կ'լափէ, ազատութիւն չի լինիլ:

Հաստափոր, արծաթապաշտ, կաշառափուլ և տգէտ
Միրքաւոր վեղարներից, ո՛հ, օգնութիւնն չի լինիլ
Անիրաւ մամննով փառք և պատիւ ճարողը
Ամենեին, պարզ բանէ, որ բանիբուն չի լինիլ:

Ուսումնէ մէկ մեծ Աստուծային հրաշալի գիտութիւնն,
Առանց ուսման ո՛չ երբէք խաղաղութիւնն չի լինիլ
Թէպէտ հիմայ փառքազգիս, ուսումնարաններկանբայց
Ինչպէս կ'ըսեն, մէկ երկու ծաղկով գարունն չի լինիլ:

Կրթութիւնն ու ուսումը աղջկանց է յոյժ պիտանի,
Առանց նոցա խակապէս վերծանութիւնն չի լինիլ
Թամբաշ եթէ այդ բոլոր ասութիւնն հասկանան
Քո և նոցա մէջ իսկի խռովութիւնն չի լինիլ:

Սանուկ թամբաշեան:

180.

Ը՞ր հեռանաս երգի եղանակով.

Պարկեշտասուն կոյս գեղեցիկ նազելի
Պերճ շառաւելի Մամիկոնեան քաջ տոհմի,
Հայաստանեայց քնքուշ ծաղիկ Շուշանիկ,
Շնորհաւորեմք քոհարսնութիւնդ պանծալի

Գուստոր մեծի սպարապետի Վարդանայ,
Մեծ իշխանին Վրաստանի հարսնանայ,
Հայաստանեայց քնքուշ ծաղիկ Շուշանիկ
Խշանական գահի վերայ բարձրանայ:

Բայց ուր երթաս, ուր որ լինիս, Տիրուհի,
Մեր սիրտը միշտ քեզ ուղեկից կըլինի.
Հայաստանեայց քնքուշ ծաղիկ Շուշանիկ,
Գնա՛ս բարեաւ, Սուրբ խաչը քեզ հովանի:

181.

Սոր-Նախիջևանի երգ.

Սամաւարը պատուական է,
Մէջին ջուրը բաւական է,
Զայ խորթողին աչքը սիրեմ,
Զեռքէն բռնեմ քովս բերեմ:

Զայ ասած բանդ խիստ աղեկ բան է,
Մարդուս սիրտը ռահաթ կանէ.

Զայ խորթողին և այլն:

Հանէ ռոսին շիշան հանէ,
Դեղին չայը կարմիր կանէ.

Զայ խորթողին և այլն:

Արծթի պատնոս, թաս ու գաւաթ,
Ռոմի շիշան մէջը դրած.

Զայ խորթողին և այլն:

Երազ.

Արսակելի երազ տեսայ այս գիշեր,
Որպէս թէ մի պարտիզի մէջ կանգնած եմ:
Մշտադալար զարդարված է կանաչով
Քիւր ծաղիկներ իւրեանց հոտը բռւրումեն:

Ուրախ ուրախ թռչունները երգելով
Ծառէ 'ի ծառ ողջունեցին իմ գալը.
Ծաղիկները քնքուշ գլուխքը խոնարհած,
Ողջոյն տուին, զմայլեցաւ իմ սիրով:

Գնումեմ խոր պարտիզի մէջ մարդ չկայ,
Ու մի տեղից ձայն, աղաղակ չէ լսվում.
Միայն հեռուից հասանումէ ականջիս
Զրի ձայնը, բայց ջուրը դեռ չեմ տեսնում:

Իմ գնացած ճանապարհի ծայրումը
Ահա՛ բացուեց մի գեղեցիկ հրապարակ,
Մարմարնեայ գեղեցկաշէն աւազան,
Ուր գործումէր ջուրը այնքան աղաղակ:

Երբ մօտեցայ աւազանին, ի՞նչ տեսնեմ,
Մի հրաշգեղ, մատաղահաս օրիորդ,
Աւազանի ափի վերայ խոնարհած,
Լուանումէ խստակ ջրում մի լուացք:

Գերբնական է այդ աղջկայ տեսիլը,
Ոչինչ չկայ դորա վերայ հողեգէն.
Լուսեղէն է, թափանցիկ է մարմինը,
Աչքը, յօնքը սև սաժի պէս փայլումեն:
Չքնաղ իրան, մէջքը բարակ իսկ կուրծքը
Դուրս է նայում բարակ հագուստի տակից,
Որպէս երկու հասունացած մեծ նոներ,
Թաւիշապատ, իւլը է թռյում զլուխից:

Վերապարանքը կանոնաւոր ու սիրուն ու մասով
Ոսկիամայրն չարժէ նորա մօտ ոչինչ.
Ծածանումէ ուսի վերայ մազերը
Բերնի վերայ ծաղկումէ քաղցր ժպիտ:

Երգ երգելով, նա կտաւ է լուանում,
Նորա ձայնը կախարդումէ թոփչի պէս.
«Խաղա՛, աղբիւր», նա երգումէ, «խայտալով»
Իմ կտաւը Ճերմակցըն'ւ քո ջրերով:»

— Ով իմ չքնաղ, տաս, լսեմ; ով ես դու.
Ես մօտեցայ և ասումեմ նազելով,
Որտեղից ես եկած այս տեղ և ինչո՞ւ,
Այդ ի՞նչ բան է, լուանումես երգելով:

Ինձ պատասխան տուեց այսպէս. «Պատրաստ կացր
Մահու պատանք լուանումեմ քո համար.»
Եւ այս խօսքը ասած չասած, ծուխի պէս
Անյայտացաւ իմ աչքիցը ամեն բան:

Տեսանումեմ, որ կանգնած եմ անտառում,
Շառի կատարքը հասանումեն երկնքին,
Իւր մնայլու գագաթովը անտառը
Սոսկալի էր, ահարեկված իմ սրտին:

Լսելիքս ամբոխվեցան... վաստակեցան աչքերս...
Կացինի ձայն հեռուից յանկարծ լսումեմ
Խիտ ծառերի մէջերից դուրս վազելով
Յանկարծ մի այլ նոր երկոյթ տեսնումեմ:

Մի հաստաբուն, բարձր կաղնի ահագին,
Նորա տակին նոյն օրիորդն է կանգնած
Կացին ձեռքին, ջարդուվելով մեծ կաղնին,
Հրաժարվումէ իւր գարաւար արմատից:

Օրիորդը կտրումէ ու երգումէ,
Նորա երգը սիրտ կախարդող է դարձեալ
«Կարի՛ր, կտրի՛ր, սրաբերան իմ տապար,
Փայտ կտրատիր, տախտակ տաշիր իմ համար:»

— իմ նազելի, իմ սիրական, ասա՛ ինձ,
Սօտենումեմ նորան դարձեալ ասելով.
Ասա՛, ո՞վ ես և կամ ուստի՞ ես եկած,
Է՞ր տախտակներ կտրատումես երգելով:—
Իմ հարցմունքին այսպէս տուեց պատասխան:
«Քո օրհասը մօտեցել է, տախտակներ
Պատրաստումեմ ես քո դադաղի համար:»
Ասաց, դարձեալ անյայտացաւ, ես մնացի:
Քայլայվելով հոգիս ու սիրոս նայումեմ....
Ահա՛ դաշտը սեանումէ չորս կողմից,
Ես չգիտեմ, թէ ինչ պիտի դայ գլխիս,
Բայց գողումեմ բոլոր մարմնով երկիւղից:
Երժումեմ ես....բայց ամպի պէս մի պատկեր
Հեռուիցը երեւցաւ իմ աչքին.
Սօտ վազեցի, դարձեալ տեսայ....ես նորան,
Մի գունաթափ, տխուր գէմքով ուրուական:
Մի ծանր մուրճ բռնած էր պինդ իւր ձեռքում,
Որով գետինը փորումէր անդադար.
Ո՛չ, թէ այնքան գեղեցիկ էր իմ աչքին,
Բայց երկիւղից սիրոս զարկումէր կատաղած:
Կա փորելով դարձեալ երգումէր մի երդ—
Մի սրտաշարժ, մի շատ տխուր, արտում երգ.
«Մուրճիմ, մուրճ իմ, փորիր գու ինձ մի փոս խոր,
Փորի՛ր, մուրճ իմ, մի գրկաշափ գեանափոր:»
Մօտենումեմ նորան դարձեալ ինդրելով,
— իմ նազելի, իմ սիրական, ասա՛ ինձ,
Ասա՛, ո՞վ ես և կամ ուստի՛ գու եկար,
Կամ այդ փոսը գու փորումես ո՞ւմ համար:—
Իմ հարցմունքին պատասխանումէ այսպէս:
«Ես քո համար պատրաստումեմ գերեզման:»
Ճայթեց սիրոս....և երկիւղից և ցաւից,
Բայց կամեցայ տեսնել իմ այդ օժեան:

Երբ գնացի ես փոսի մօտ նայելու,
Սարսափելի մի ձայն եկաւ ականջիս.
Չետ եմ նայում, տեսանումեմ այլ աղջկէ,
Նոյնպէս չընալ, նոյնպէս մատաղ, թափանցիկ:
— իմ նազելի, գո՞նէ դու ինձ գթա՛, ասա՛,
Ո՞վ է փորող օրիորդը և դու ո՞վ,
Ինչո՞ւ այդպէս զիշատումէր իմ սիրով.
Եուտ պատասխան առւր, նազելի, խղճալով—
«Մեք երկուքս քոյր ենք միմեանց անբաժան,»
Օրիորդը պատասխանեց հեգնելով.
«Նա երէյն է, իսկ ես կրտսեր հարազատ.....»
— Բայց ո՞վ էր գուր, ես հարց արի գոռալով:
«Կա ալեոր հայաստանի հոգին է....
Իսկ իմ անունն է— «Անմիաբանութիւն»,
Մեք շատ դարեր անցուցել ենք խռովով,
Եւ շատ մարդիկ փոսն են ընկիւ մեր ձեռքով:»
Ասաց ժպտաց. կատաղաբար երկու քոյր
Գլորեցին ինձ փոսի մէջ. ես ընկայ.....
Շնչարգելված նեղութենից զարթելով
Ստուգեցի, թէ երազ էր, որ տեսայ:

Կամ իմմանուէլ (Միքայէլ Նալբանդեան):

183.

Աղասիի երգը.

Աար ու ձոր ընկած մէկ չոր թփի տակի,
Գետնին նայելով մնացել եմ նըստած.
Չեռս ծոցումն, գլուխս մէկ լեռ քարի
Տըւած՝ լալիս եմ օրըս խաւարած:
Ամպերն առաջիս, սարերն ետեկիս,
Գեղ մոխիկ տալով, այ իմ քաղցր Մասիս

Աղե արտասունքով էրուած, խորոված,
Երեսիդ նայեմ, մընամ քարացած:
Ծընող, աղգականք հեռու ինձանից,
Լուսնին նայելով ձեր սէրն յիշելով
Եարաբ ե՞րբ կըլի, որ ես ձեզանից
Իմ կարօտս առնեմ, ձեզ ջան ասելով:
Աչքըս ծով դարձաւ ճամբին նայելով.
Մէկ զուշ, որ գլխիս պըտիտ է գալիս,
Թէ ե՞րբ մէկ խաբար կհամի ինձ բարով
Հոգւոց հանելով ասում եմ լալիս.
«Նազլու իմ, Նազլու, աննըման Նազլու,
Սիրտս խորովն անունդ յիշելով.
Նազլու իմ, Նազլու, հրաշալի Նազլու,
Աղասին քեզ տայ իր յետին բարով:
Արերի գօշին, ձորերի միջին,
Վայ գլխին տալով քո խեղճ Աղասին,
Երեսիցդ զըկուած, քո սիրով մաշուած
Տատրակի նըման փշի վերայ նըստած:
Նազլու իմ, Նազլու, մէկ շունչս է մնացել,
Ռսկերքս քրքրվել աչքերս խաւարել
Թո՛ղ մէկ շունչդ առնեմ, յետոյ հողը մտնեմ:
Դժոխին էլ տանին՝ ես հանգիստ կ'լինեմ:
Փեզ եմ մընում, քեզ, քու ջանին մըոնեմ,
Հող ու գերեզման ես վրես ունեմ.
Գանց իմ սառը մարմին էլ ի՞նչ գերեզման
Ինձի պէտք կուգայ, երեսիդ զուրբան:

Խ. Արովեանց:

Մի մօր օրօրական երգ.
«Աղնիւ ընկեր» երգի եղանակով.

Սիրահեղիկ սիրուն աղջիկ,
Քնի՛ր անուշակ քնով,
Որ զօրանաս, սրտիս ծաղիկ,
Քնքոյշ տեսքով, հասակով:

Քեզ սիրումէ քո մայրիկը,
Մաքուր կաթինս*) քեզ տալով,
Եւ օրհնումէ քո հայրիկը,
Քեզ փարելով գգուելով:

*)Երամին թէ տմեն մի Հայ տիկին կատարէր իրա այդ անհրաժեշտ պարտաւորութիւնը, մաքուր ու հարազատ կաթ տալով իրա նորածին մանուկին: Բայց չէ. մեր մի քանի մօղասէր, պճնասէր և վիքած Հայ լուսաւորված տիկիններ, փառաւոր կերպով նստած բազկաթոռների և զահաւորակների վերայ, յանձնումեն իրանց նորածին մանուկներին օտարազդի դայեակներին, նոցա ժլատ և խորթ կաթին, նոցա դաստիարակութեան և ուղղաւոթեան և առհասարակ նոցա ամեն մի լինակար ազդեցութիւններին, ի հարկէ Հայերիս վերաբերմասիր, Յիշեցէ՛ք, յիշեցէ՛ք. Հայ պարկեցառւհի տիկիններ, հինգերորդ ծաղկած դարու, Հայկական պատմութեան մէջ յայտնուած ոսկեղինի դարու, ոսկեղինի լրջանի մէջ հանդէս դուրս եկած երանելի Հայ տիկիններին, որոնք իրանց կենանքն անդամ զնումէին իրանց մանուկների վերայ: — Նոքա և կերակրումէին նոցա, և մնուցանում, և մեծացնում Աստուածպաշտութեան մէջ: Նոքա և հազցնումէին նոցա, և սիրում, և գգվում, և պահպանում իրանց պարզ և անմեղ, սովորութիւններով: Եթէ նոցա սպառնումէր մի որ և է վտանգ, նոքա, թողնելով մայրենի աղաստութեան փափկութիւնը և իրին գիւղացի մարդիկներ, իրանց մանուկներին գիրկը կամ շալակն առած, փախչում էին անապատներ և այնտեղ բարյական եկեղեցի կազմելով, սաղմոսների ընթերցանութիւնով և այլ սրտաշարժ երգերով էին զբաղվում: Թողնենք ձեր սաղմոսներն ու երգերը, միայն ձեր մանուկներին ձեր հարազար կաթով:

Ինձ մի՛ տանջեր, իմ՝ անուշեկ,
թո՛ղ մնայ սրտիկս խաղաղ՝
Նջի՛ր հանդիսատ, հոգւոյս հատիկ,
թո՛ղ ես չասեմ ա՛խ ու վա՛խ:

Խաչն Յիսուսի քեզ պահապան
Դիշեր ցերեկ—օրն ՚ի բուն,
Որ զարդանաս, իմ՝ աննման,
Եւ լինիս մայր սրբասուն:

Տիկն Սուսամբար Տէր-Յովհաննէսեանց.

185.

Մայր և Պայեակ

Զգիտեմ՝ աշխարհիս մեծատանց տիկիններուն այդ մի ազնուականութեան շնորհ ու նշան է, որ մայրական այդ մեծ ու առաջին պարտիքը՝ նուաստութիւն կը համարին. որպէս թէ ամօթ լինէր այն իրենց տիկինութեան և կամ թէ այն պէս կը դատին թէ մանկան կաթ տալը՝ աղախնական պաշտօն է. և այդ ծառայութիւնը դիեցիկ դայեկներու համար է միայն:

Մարդկային ընկերութեան ընտանեկան կենաց մէջ եթէ անօրինակ զեղծումն մի կայ՝ այս է. եթէ զրկանք մի կայ՝ այս է. որով մայրերը բուն իրենց զաւակները կը հարստահարեն. եթէ բանաւոր մարդ՝ անբան անսանց առաջ կը նուաստանայ ու կամաչէ այս է; Վասն զի քնութեան իմաստուն Արարիչ ինչպէս մարդոյն, նոյնպէս բոլոր կինդաննեաց համար գութը՝ հաւասար բաշխեր է:

սնուցեք ու զօրացրեք, Դորանով մեծ բարերարութիւն արած կլինք ձեր մանտկներին նոցա ապարայ աշխարհի մէջ և ապա թէ իրաւունք կունենաք հարազատ մայր կոչուելու նոցա,

Ա. Գրիգորեանց:

Թող տեսնան մայրերը, որ առիւծն անտառին մէջ իւր կուրիւն կը դարմանէ, կոմն իւր հորթիկ, մաքին՝ իւր զառնիկը, հաւ՝ իւր ճետերը, ճնջուկ՝ իւր ձագերը. այլ ևս իրաւունք ունի՞ մայրն իւր կաթով չսնուցանել իւր զաւակը, որ իւր հոգւոյ հատորիկն է, կամ թէ չը զարմանել այն հարազատ ծաղիկը, որ իւր ծոցէն բուսած է, իւր արմատին ծիլն է. ի՞նչպէս ձեռք է այն մօր ձեռք, որ կը քանցէ այն մատաղ ծիլն իւր բնաբոյս արմատէն և զայն օտար արմատին հիւթով սնուցանել կուզէ:

Դիեցիկ մանուկը կը բողոքէ այդ զրկանաց դէմ, միայն յայնած ամ ներելի կը համարուի մօր համար, երբ ինըն տկար, անառողջ է և կամ կաթին աղբիւրները ցամքած են: Բաց այս պատճառներէն չը կայ ուրիշ մի այլ զօրաւոր պատճառ, որ իրաւունք տայ ծնող մօր, իւր մանուկը ուրիշ մօր կաթով դիելու, որոյ անունը դայեակ կը կոչուի, և ես ծիշդ կը հասկնամ այդ բառին նշանակութիւնը, որ է կաթ վաճառող կին:

Պայեակն ևս անշուշտ նորածին զաւկի ծնող է. ոհ, մի տառապեալ մայր է նա, որ անհնարին կարօտութենէն ստիպեալ իւր մանկիկն մի ուրիշ մօր կը յանձնէ նուազ վարձքով, կը թայ կը դեգերի մեծատանց տուները, որպէս զի իւր կաթն աւելի զընով վաճառէ, որ իւր մանկան արդար իրաւունքն է: Ողորմելի որդեզուրկ կին պարտասորեալ է իւր դայեկութեան վարձքէն՝ մի մասն վարձեալ կնոջ տալ, և մնացեալ մասովն իւր ընտանեկան ապրուստ հոգալ: Զեղ թողում, Հայոց Ճշմարիտ մայրեր, դուք դատեցէք, այս երկու մայրերէն ո՞րն է աւելի յանցապարտ կարօտագին դայեակի, որ առ չքաւորութեանն իւր կաթը կը վաճառէ, թէ հարուստ տիկին, որ սնուցիչ կերակուրներէն լիմանալով և յափրանալով թաթաղուն զեղուն լցուած ստինքները աղբիւրի պէս կաթ կը հոսեն, և որ թէպէս մայրական կոչումն ունի, այլ ան-

խղճաբար կը խցէ այդ կաթնաբուխ ակները: Բարեպաշտ տիւ կին երկու զրկանք ի միասին կրգործէ, զրկանք մի իւր բնածին մանկան, զրկանք մի ևս դայեկին մանկան, որոյ բաժին կաթն դրամով կը գնէ: Ահ, աղքատիկ մօր կաթն՝ իւր խեղճ տղեւ կին կեանքն է. արդեօք տիկին մայր՝ իւր մանկան կեանքը փրկելու վշտագին դայեկամօր մանկան կեանքը չի զոհեր: Այս, այսպէս աշխարհիս դատաստանը, երբ հզօները զանգօրներն կը ճմին, զարմանք չէ, որ տիրոջ և տիկինոջ մանուկը նոյնպէս խանձրուրէն սկսի յաղթուիլ ու Ճնշիլ ծառայածին դայեկամօր մանուկը:

Աւաղ, և ա՛հ, որչափ անբնական, որչափ անգթական, և որչափ անարդ ու դժուարատար է դայեկին կեանքն ու վիճակը որոյ մայրական սիրոյն և գորովզյն վերայ կը բոնանայ թշուառութիւնը, մինչև կսախլուի դժբաղդ կինը թողուլ իւր մայրական գութն, թողուլ իւր արդանդին ծնունդն և երթալ անասնոց կաթի պէս վաճառել իւր կաթն, որով թերես կարենայ երկու կեանքը միանգամայն պահպանել:

Ահ, բնական ու մայրական սիրոյն գորովն է այն, որ հանապազ կը մորմօքէ կը կալրտէ ծնողական աղիքները, երբ կը տեսնայ օտար մանուկ իւր գիրկը, անդին երեակայութեան մէջ կը յիշէ միշտ իւր մայրապուրկ մանուկը, որ աչքէն հեռացած է, մայրական կաթէն ու զրկէն զրկուած է:

Կա կենդանի մայր է, քար չէ, այնչափ կը վշտակի ու կը դառնանայ սրտին ցաւոց մէջ, որոյ անհնարին դառնութեան շափը միայն մօր սիրտ կարող է զգալ ու չափել:

Խրիմեան Հայրիկ.

Իմ սոխակին.

Սոխակ՝ ինչու դադրեցար քո անուշ երգն երգելց, Որ քամում էր արտասունք շատ իմ էրված աչերից. Մի՞տրդ է, երբ ծագում էր արշալոյսը գարնային, Քանի՞ զու միտս բերիր իմ առարկան ցանկալին... Այն յիշատակն անոյշ էր, ինչպէս երազ վաղանցիկ, Որ գէթ վայրկեան թշուառին դարձնում էր նա երջանիկ. Համակ աշխարհ մոռացած, ունկս քու ձէնին յառած, Մըտքով թուչում էի ես իմ հայրենին կարօտած... Գիտեմ, զու էլ ես կարօտ մշտագարուն այն դրախտին, Որից հեռու մեզ չեկայ բաղցը ժըպիտ մեր բազդին. Ո՞վ կուտայ ինձ թև թունի, որ խոյանան սըլանան, Օդն ու ամպերը ձեղքէն ու տանեն ինձ Հայաստան. Թէ նորա օդը շնչեմ, այն կենսատու սուրբ օդից— Գիտեմ, փրկուելու եմ անբուժելի իմ յաւից.. Գարունն անցաւ, ա՛խ սոխակ, խօսուն լեզուիդ կապ դըրաւ, Ու խեղճ վարդի թերթի հետ շարականդ էլ տարաւ: Կ'բանամ գուռը վանդակիդ, ազատութիւնքեզ կուտամ, Բայց աղաչում եմ քեզի, թոփիր դէպի Հայաստան. Վարդ ես ուզում՝ այնտեղ է, անամպ երկինք, մեղմ հովքը, ծածանչափայլ արեգակ, կարկաչասահ առուներ: Ես էլ քեզ պէս կարօտ եմ բնութեան պայծառ օրերին, Մէգ, մառախուզ, հեղձուկ օդն հալեց, մաշեց իմ հոգին. Փըչեց հողմը Հիւսիսին, փոշին երկինք բարձրացուց, Կտրի վրայից ագռաւը խոպտ դազան հնչեցուց. Ահա՛ Հիւսիսի, սոխակն, ահա՛ Հիւսիսի այեր.... Ի՞նչ էք կորցրել Հիւսիսումն, այ խելացնոր խեղճ Հայեր, Ախ, ես ատել եմ նորա կեանք ու վայելքը պատիր, Տուէք օդը իմ երկրին, դալար դաշտն ու վարդ կարմիր:

Առատկանեան:

Առատկանեանի Ա. հատոր, Ա. Գ.

15*

187.

Սիրտ Մուսային շարժի 'ի լաց,
Այո, ողբայ և հառաջէ.
'ի մենիկ վայր նսեմ նոճեաց
Փարի զշիրմաւ և անց գոչէ.
Ո՞ զնա խլեաց:

Թնդաց այեր, երկիր դողաց,
Եւ մի մանուկ եկն յերեան.
Յանշուք դամբան յոտին եկաց
Եւ հարց նմա թշուառ Մուսայն. ինչ յուզոց
Ո՞ զնա խլեաց:

Գոչեաց մանկիկ 'ի ձայն հզօրու անձ ընչ
Ողբա՛, ողբա՛, աստ 'ի շերիմ,
Ո՛հ, աստ մեռաւ 'ի վիշտ յաքսոր,
Միշտ օրհնելով զիւը ոխերիմ. ո՞ ազն առ
Պարսիկ բռնաւոր:

Հայ որերոյն բօթ ակնկոր,
Անկաւ անդէն ազատութեան
Դրօշակակիր ահեղազօր,
Անէ՛ծը, վայ քեզ մինչ յաւխտեան,
Պարսիկ բռնաւոր:

188.

Վերջին վարդ:
(գերմանականից).

Վերջին վարդ, վերջին վարդ,
Սիրականիս վերջին վարդ, և անոնց առջան
Նա քեզ հանեց իւր կրծից, ինչ զրո գնու
Ինձ պարզեց, վերջին վարդ:

Հայոց նկան Մանկութեան ոսկէ ժամերն առանց զանալ
Անցել են անդառնալի,
Կորած սիրոյս յիշատակ, և առաջ առաջ մասն մէ ողոք
Գու ես միայն, վերջին վարդ:
Գարնան օրերն անցել են, առաջ և միստացած
Տօթ ամառն է ինձ էրում, մասնակի զմերդոյզ
Միշտ սպասում քու տեսքին, մէ ներգն ձիու
Գու, ամառուայ վերջին վարդ:
Երջանիկ կեանքիս օրերը
Ցաւ են դառել առաջիս,
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք
Միշտքս բերի՛ր, վերջին վարդ:
Շատ չե տեսիլ կրացուի
Առաջիս սև գերեզման,
Էս աշխարհից միայն քեզ
Հետոս կ'առնում, վերջին վարդ:

Ք. Պատկանեան:

189.

Վարդան Մամիկոնեան.

«Եկր քաջ Հայոց զօրութիւնք» Երգի եղանակով.

Վարդան մեր քաջ զօրավար, Հայոց զօրքերն անհամար,
Թուրը ձեռին ոսկէվառ,
Կանչում է իւր քաջերին, Գրօշակներով են պայծառ,
Զարդել գլուխ Յազկերտին: Ամեն կողմից շտապած
Վարդել զարդարան:

Հայոց զօրքերն գունդագունդ, Վեռնդեանց խումբը անմահ
Մեծաբարբառ, զոռով թունդ Անվախ, անդող և անահ,
Հաւաքվումեն Արտաշատ, Խաչը բռնած Քրիստոսեան,
Մայրաքաղաք մարդաշատ: Բորբոքումեն զօրքն Հայկեան:

Կանայք համեստ, աննման, Փառք և պարծանք յաղթական
 Վառված սիրով աստուածեան, Գեղ սիրելի ազգ Հայկեան,
 Դուրս են թռչում տըներից — Որ քո սիրով բորբոքիչ
 Վազել դաշտը ծաղկալից: Միշտ եղել եւ քաջ Փրկիչ:
 Քաղցրախօսիկ և սիրուն Պէ՛, գնացէք, առիւծներ,
 Օրիորդներ փափկասուն, Ո՛վ աչքի լոյս, քաջ Հայեր,
 Ոսկէ ձգում են շորեր, Զարդեցէք զօրքն Պարսկական,
 Հագնումն սուր մահաբեր: Դըրէք գետինաանկենդան:

Պէ՛, դուրս թռէք ասպարէզ, Ախոյաններ,
 Ախոյաններ, քաջապէս, Փշրեցէք դուք կատաղած
 Սրեր, թրեր թշնամեաց:

Ս. Շահազիզեան:

190.

Երգ աւազակաց.

Վառեց երկինք իւր լապտեր
 Աւազակաց համար,
 Հնչեն հողմունք փոթորիկ,
 Մեր պալատն է անտառ:
 Խ մբ ապ ե տ.
 Երբ — որ մեռնիմ, ո՛վ ընկերներ, Հայ ուն
 Կինիներով խօսք տուէք որ՝
 Կի բաժակներ ձեռներիդ
 Դաք ու պարէք շիրմիս բոլոր,
 Եւ առ ՚ի զոհ մեծ քաւութեան
 Հոգւյս բարի պազատելով՝
 Պիտի ցողէք իմ գերեզման գինիներով, Այսոր սուս
 Գինիներով հարիւր բաժակ,
 Գինիներով հարիւր տակառ,
 Գինիներով գինիներով:

191
Երգ Ուուսաց Կայսրին.

«Յօյ, Արյ քրանի! հիմի եղանակով.

Ո՛վ Տէր, պահի՛ր Կայսրին —
 Հայկեան Պաշտպանին
 Երջանիկ օրով
 Ընտանիքով.

Ո՞ղ զօրբով նա քաջաց
 Վանէ թշնամեաց:
 Ո՛վ Տէր, պահի՛ր Կայսրին:

Ո՛վ Տէր, պահի՛ր Կայսրին,
 Որ Հայ գործերին
 Նա լինի պաշտպան
 Միշտ անխափան.

Եւ տայ ազատութիւն —
 Պահել ազգութիւն:
 Ո՛վ Տէր, պահի՛ր Կայսրին:

Ա. Գրիգորեանց:

192.

Օրհներգութիւն ազգային.

Տէր՝ կեցո՛ դու զՀայս,
 Եւ արա՛ զնոսա պայծառս.
 Կեցո՛ զՀայս,
 Զողորմութիւնդ վերին
 Հածեաց ձօնել նոցին,
 Զի նովիմբ մարթասցին,
 Ապրիլ յաստիս:

Ո՛Վ Տէ՛ր մեր, Տէ՛ր, փութա՛,
Զազդ մեր համայն փրկեա'
Ի թշնամեաց,
Կափո՛ զաչս նոցուն,
Հա՛տ զարմատոյն գըուն
Եւ զազդ մեր պարտասուն
Արա՛ հզօր:
Ի քո իջեալ տեղի
Զաթոռն չայրապետի
Մեր հաստատեա՛,
Զերկարութիւն կենաց
Հօր մեր աստուած—ազգեաց
Շնորհեա՛ Պետին մեր հարց,
Որ զմեզ հովուէ:

Մ. Թաղիաթեանց

193

Աղօթք վասն Հայրենեաց.

Առ արժանապատիւ Սարգիս Վ. Թէոդորեան.
Ա.

Տէ՛ր, կեցո՛ ըզչայաստան,
Լո՛ւր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէ՛ր, կեցո՛ ըզչայաստան,
Յարո՛ զնա նոր յիւրն աւերս:
Ցերբ, Աստուած հըզօր, Աստուած Գրիգորի,
Աստուած զոր կարդամք ՚ի խորոց սրտի,
Թողուցո՞ւ զի զմեր հայրենիս թըշուառ,
Սուր, հեռև հերձուածք առնուցուն յաւար:

Բ.

Տէ՛ր, կեցո՛ ըզչայաստան,
Լո՛ւր զորդւոցն առ քեզ աղերս.

Տէ՛ր, կեցո՛ ըզչայաստան,
Յարո՛ զնա նոր յիւրն աւերս:
Տէ՛ս օտարք անգութ այսն ըզմեօք առնեն,
Եւ ըզըրբութեամբք մեր թըշնամանեն.
Բայց մեք ե՞րբ ՚ի քոյդ հովացաք ՚ի սէր.
Ո՞չ և ՚ի մահու զբեզ պաշտեմք ՚ի ստուեր:

Գ.

Տէ՛ր, կեցո՛ ըզչայաստան,
Լո՛ւր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէ՛ր, կեցո՛ ըզչայաստան,
Յարո՛ զնա նոր յիւրն աւերս:
Տէ՛ր, Տէ՛ր զմերս օրհնեա զուզութիւն,
Որ ՚ի Գրիգորի սրբեալս եմք արիւն.
Դու զնորուն պահեա հաւատս անսասան,
Եւ զԱթոռն իւր սուրբ ՚ի Հայս յաւիտեան:

Դ.

Տէ՛ր, կեցո՛ ըզչայաստան,
Լո՛ւր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէ՛ր, կեցո՛ ըզչայաստան,
Յարո՛ զնա նոր յիւրն աւերս:
Իբր ըզգարնանի ցօղ ՚ի սիրտ եղբարց
Ծաւալեա՛ ըզսէր, հեղ զոգի մեր հարց,
Եւ ՚ի ջահ լուսոյ նոցա տար ըզմեզ,
Իբր ըզհօտ յարօտը քո ՚ի կադէս:

Ե.

Տէ՛ր, կեցո՛ ըզչայաստան.
Լո՛ւր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէ՛ր, կեցո՛ ըզչայաստան,
Յարո՛ զնա նոր յիւրն աւերս:
Ո՛հ, շատ իսկ աղէտք ծանրացան ՚ի մեզ,
Շատ իսկ մահ ՚ի մեզ հաշուէ ողջակէզ...

Տէր կենաց, յերկիր մեր, անքաւ տապան,
Արկ ըգշունչդ և կեանս առցէ Հայաստան:
Հանգաւ զամբաց մասն առաջ առաջ առաջ
Խորէն Ե. Գալֆայեան:

194.

Երկիր Հայկայ:

Յնձացէք, լերինք Արարատայ,
Յնձա՛, Հայաստան, երկիրդ Հայկայ,
Յնձա, ցնձա, ցնձա, ցնձա,
Յնձա, Հայաստան, երկիրդ Հայկայ:

Մեր նախնեաց անմահ անունները
Պարծանքով յիշեն մեր սերունդները
Յնձա՛, ցնձա, ցնձա, ցնձա,
Յնձա, Հայաստան, երկիրդ Հայկայ:

Արբեցէք քնարի լարերը ժանգոտ,
Ելէք Հայաստան երգով եռանդոտ,
Յնձա՛, ցնձա, ցնձա ցնձա,
Յնձա, Հայաստան, երկիրդ Հայկայ:

195.

Աղքատ կին.

(Գաղղիերէնից.)

Յուրաք փչեց, ձմեռ սաստիկ.
Զիւնը ծածկեց գետինը,
Ամենայն մարդ մտաւ իւր տուն,
Պատապարվիլ յրտիցը:
Ժամի դոնում դողդողալով

Կանգնած է մի աղքատ կին. ո մշտմալլ
Նորա հանդերձը պատառ պատառ,
Չունի շապիկ իւր հագին. ո միլիս ո ազլլ
Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզումէ անց կացողին —
«Ողորմութիւն արէք, պարոն, մազու գմիլ
Անտուն, անտէր աղքատին:»

Զեղ, սիրելիք, ասեմ ով էր
Այս խղճալի աղքատը,
Այն յրտումը ոտարոբիկ
Կանգնած, ժամի դրնումը.
Շատ ժամանակ զեռ չէ անցել,
Երբ նա վառքով ու պատուով
Ման էր գալիս փողոցներում
Իւր սեպհական կառքերով.
Այժմ, վախով նա իւր ձեռքը
Պարզումէ անց կացողին —
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին:»

Մինչ թատրոնում յայտնվումէր,
Մինչ խաղումէր հանդիսում որս ո մաս
Դղրդումէր թէատրոնը,
Նա դափնիք շատ էր հնձում. ո մաս
Ժողովուրդը հաւաքվումէր
Մօտ թատրոնի պաաշգամբին,
Զէր կշտանում նայել նորա
Քնքոյշ, չքնաղ երեսին.
Այժմ նորան չեն ձանաչում,
Մոռացել են բնաւին —
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին:»

Ամենայն օր նորա դոնում
կանգնած էին շատ կառքեր.
Միշտ հացկերոյթ, ընթրիք, զինի, ձևաց
Նուագարան ու տաղեր. ամ անձնանշան
Ամենայն ոք ցանկանումէր բան մատրան
Էինի նորան բարեկամ.
Ամենայն ժամ նորան բաց էր առաջ
Շռայլ քսակը մեծատան.

Այժմ զբկված ամեն բանից,
Չունի անգամ հայի զին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին:»

Ամենայն օր իւր մարմինը
Անուշահոտ ջրերով
Լուանումէր, մազը սանրում
Կրիայի սանրով.

Նա հագնում էր բեհեզ, կերպաս,
Դիպակի, թաւիշ թանգաղին.

Նա չգիտէր ի՞նչ ասելէ
Արծաթի կարօտութիւն.

Այժմ անլուայ, մազեն արձակ,
Չունի հագուստ թէե հին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն անտէր աղքատին:»

Նորա շքեղ ննջարանում
Բնակվումէր Ասողիկը,
Նորա որդին փայփայումէր
Նորան ամբողջ գիշերը...
Ախտաբորբոք երիտասարդք
Խրեանց անձը երջանիկ
Կը հաշուեին, թէ լինէին

Նորա ձեռքում խաղալիկ...
Այժմ փողոցում քնումէ նա ո՞ւ ցազ այս
Խոնաւ պատերի տակին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին:»

Ժամի դոնում նա կանգնած է,
Աչքերը կոր, վեղը ճուկ.
Նորա նախկին բարեկամքը
Չեն ասում նորան, «Փողձուկ,
Ե՞կ դու մեր մօտ, մեք կ'ամոքենք
Քո վիճակի դառնութիւն.
Կը թուլացնենք ճակատագրիդ
Խիստ հարուածի սաստկութիւն:»
Նա տանումէ տառապելով
Այս սոսկակի վշտերին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին:»

Կոմն էմմանուէլ (Միքայէլ Նալբանդեանց.)

196.

Իսպովեստ վարուց Ղարսայ Գաւառա-
պետ Ղվարդի Պօլկովնիկ և Ամպետ Լո-
ռու Մէլիքեանի.

Ցնծա՛, Արարատ, որ գովածս ուղղափառ չայ է,
Երկար միջոցիւ քո սպասած պառւղն Սա է,
Եթէ պիտոյ լինի՝ ազգին կեանքն կընծայ է,
Մտօք հինամեայ, խիկ հասակաւ դեռ երեխայ է,
Լոռու Մէլիքեան բարձրապատիւ ծնողաց աղայ է:

Ինքն անկուն, միտքն անհուն՝ աշխատաւոր սարդ,
Դէմքն շքեղ, հասակն ծեղ՝ իշխանաց մէջ զարդ,
Գեղեցկատես, ծիծաղերես՝ մէկ նոր բայուած վարդ,
Մինչ չի խօսի՝ ո՞վ ո՞ք կասի՝ պատկեր է, թէ մարդ,
Հայոց աղդի յոյսն Դա է, Տէ՛ր, դու խնայէ՛:

Թերան պիտի, որ լաւ գովի Սորա արարքն,
Բնութիւնն, մարդկութիւնն, սրբակաց վարքն,
Աստուած պահի՝ ոյք որ իցեն Նորա սատարքն,
Զի փութապէս մուծցեն զնա դիւցազնից շարքն,
Որ պարծենայ Հայաստանն, թէ որդիս Դա է:

Ո՞վ պաշտելի և տօնելի եօթն վերաց պատկեր,
Ո՞վ անաչառ, բազմաչարչար լուսաւորիւն մեր,
Ո՞վ հրաշալի և սքանչելի Հայկազին Յուրըեր,
Դո՞ւք լերուք այս իշխանին հովանի և տէր,
Որ այժմ մեր ազգն յոյժ Ճիշտ Սորան կռւ նայէ:

Սէյեադ, մի՛ գովիլ այս իշխանին, որ միշտ մնայ լաւ,
Որին գովեցիր՝ յայտնի տեսար՝ վերջն լաւ չելաւ,
Որին ասացիր սա Յակոբն է, նա եղեւ Խսաւ,
Նրանց հիմն քայլայուած էր, Սա է հաստատ նաւ,
Այս խօսքերս ժամանակին ձեզ կ'վկայէ:

Պետոս Մաղաթեան.

197.

Նուէր «Սոխակ Հայաստանիին».

Ազնիւ Սոխակ, Է՞ր չես երգում, մի՞թէ վարդը թառամեց,
Երգի՛ր վարդիդ անոյշ երգը, երգը ինչո՞ւ ընդհատվեց:

Ազնիւ Սոխակ, սիրուն Սոխակ, երգիդ ձայնը բարձրացրու՛ւ,
Վարդի վերայ քաղցր երգով մինչ առաջաւութիւն:

Մինչ կ'ծագէ արեգակը, ընթերցողիդ տաքացրու՛ւ,
Մէկ էլ տեսար այգիդ ծաղկեց, վարդիդ թուփիը կոկոնեց:

Գարուն, ամառ, աշուն, ձմեռ հաստատուած էն կանոնով,
Առանց Տէրի ծառի տերեւ չի շարժվել և՛ քամիով.
Թռչունների մէջ ազնիւն դու ես «Սոխակ» անունով,
Կ'գայ օրը, կ'գայ գարուն, տեսար կոկոնը բացուեց:

Ազնիւ Սոխակ, կագեն թէ մին վարդով գարուն չի լինիւ
Եւ մի երկու դաշեկանով մարդս պարոն չի լինիւ
Տէ՛ս, Յովսէփին կորցրին եղբարք, նորանից սիրուն չի լինիւ,
Սակայն հասաւ օրն ու ժամը՝ իշխանապետ նա կարգուեց:

Ազնիւ Սոխակ, սպասումես, որ գայ համնէ գարունդ,
Հայաստանում վարդ սիրնլու չխնայես իսկ արիւնդ.
Տէր, միութիւն երգիր այնտեղ, ուր կ'գտնես սիրունդ,
Ուզածիդ պէս, սիրածիդ պէս տեսար Տէրն պարզեց:

Մայիֆ-Յարութիւն, ողջոյն զրկիր հագու՞ ազնիւ Աւագին,
Ասա՛ նորան՝ ու՛շ ես թռցնում դու մեր սիրուն Սոխակին,
Յանձնիր նորան երգ երգելու, երգ սիրալիր թանգարին
Հայաստանի անցեալ փառքին, որից ՚ի զուր նա զրկուեց:
Յարութիւն Աղեքսանդրեանց:

197.

Ժողովրդական երգ. *)

Աղչի, Մայիի, ի՞նչ էք կորթնել
Զուռնի հաւին՝ ցամաք աչքը

*) Առ հասարակ, Հայաստանի գիւղերում, սովորութիւն կայ-աղջկանը մարդու տալու ժամանակ հաւաքվումեն զիւղի ծանօթ աղջկիները նշանակեալ տեղը և ժամանակին հարսնացուին սովորական հագուստով ու զարդերով համ զարդարումեն, համ մեղմ ու քաղցր երգում. շատերի աշքերից արտասաւք է կաթում... Հարսնացուի հոգու

Մեր երեսին էլ - չեղ պէտքը՝
Բիրեք զլիսի փէտէ կոթը:
Տեկին անենք մերնց Զաննին¹⁾,
Գլխակալը դնենք զլիսին,
Քօմնկ հասէք, սիրուն աղջկէրք,
Արժան ըլի սա իր թագին:
Պինդ պինդ կապենք զուգոր Զաննի,
Քնթ կալը չափենք կուծուր բերնի,
Լիզուն կտրենք - ծամենք ու տանք,
Որ չխօսկան՝ ըլի անդ - մանդ:
Ընկուռներին վալաս դնենք,
Քառ Պետօի զուռնէն փշենք,
Հենց քառանայ՝ ոնց որ Պետօն,
Խշարաթը առնի մրգօն...
Նախշուն թշին թշակալը
Դնենք հաւաք, որ չտենան
Տան խիզանն ու սիսառը -
Եադ աչքերն էլ բոռանան;
Թուփին կապելա սրա հմար
Էրծաթէ թոփ - էդ էլ շարենք,
Եննա, աղջի, չալ աչքերը
Կարմիր շալով մընացնենք....
Լանթոնց Զաթին²⁾ սրան սոդա,

տրամադրութիւնը փոխվումէ. նա բաժանվումէ ճնողական անից.
Նորա սիրաը աւելի է կակզանում, լստամենայնի քաղցրանումէ, յիշ-
շելով իր մանկական անցուցած քաղցրիկ օրերը, օջաղի առաջն իր
Ճնողներից, մեծերից լած խրաները, ընկերական շրջանից հեռա-
նալը... Գանձակու լառնային զաւառի Փիր զիւզում աղջիկների
խումբը եթէ ոչ այդ, գոմէ չատ թէ քիչ զորա նման երգով են կա-
պում հարսնացուին հնազանդութեան ու հաւատարմութեան թոկով...
Կ'ցանկանայինք այսպիսի երգերի լոյս տեսնելը, որոնք գեռ մնում
են խաւարի մէջ...

Ա. Արարատեանց:

^{1, 2)} Զաննի՝ հարսնացուի անունն է, իսկ Զատին՝ փեսացուի.

Կարմիր կուլը նրան հազար
Եկէք կապենք — որ քիմանայ
Ո՛չ կարենայ — ոչ էլ տենայ...
Դոշկալը տուր ջուխտ նոների,
Գաղենք աչքիցն ուրիշների,
Եթ արրիայ ու ձէն ածի,
Ազեզ — մազեզ հողին զարթնի...
Կարմիր ասենք, կարմիր կապենք,
Թագաւորի սիրաը շահենք —
Առնի, տանի փափլիկ — մափլիկ
Հետը խաղա — ինձ — մնձորիկ...
Աղեքսանդր Արարատեանց.

199.

(Ժողովրդական —)

Օլարագաղ, Գիզակ.

Բա' — բա', բլաստրակ, Ա Նձ մուտէ
Քու հար քինի լստարակ, Ես առան
Խստրակէ մէս բերէ,
Քու մար օտին կաթն անէ,
Կուծուր բալան նա ծծէ,
Զանն ընկնէ, բօյ քաշէ,
Քու մար կշոին քեաթ անէ: — արց
«Հրէն կիւլեր օռնում ըն»
Դու զզուն, ըլբաշ կռավում ըն»
Սեր երգիրը քանդում ըն»
Հօրդ ազբօրցը ջարդում ըն»
Ե'ր, կաց, բալաս, թրիսնքդ ա'ռ,
Հարդ քեզ հետի ա պըհալ.
Ես սրալ ըմ — զամէն ինք կալ
Քինի, հասէ՛, քի՞մագ ըրա,

Հրամուն խռկէ, քեօ՛ռ ըրա,
Ոտանդ միրէ տեղ ըրա.
Յետ տեռ, եկ, կաթնա հալալ
Թա չէ հառամ ընի ըմ ըսպլ...»

Ա. Արարատիստից.

200

Օրբ մանուկ

«Վечеръ былъ, сверкали звѣзды, Ерѣхъ вѣчнѣкъ,

Երѣхъ էր, ասող էր փայլում,
Դուրսը ցուրտ էր և սառոյց.
Փողոցի մէջ գնումէր մանուկ,
Ողջ կապուտած դողումէր:

«Ով Աստուած», մանուկն ասումէ,
«Սառել եմ և քաղցած եմ.
Աստուած իմ, ո՞վ կ'տաքացնէ, ո՞ւ աս
Կերակրէ ինձ որբիս»:

Անցնումէր պառաւ կին այնտեղ,
Եւ որբի ձայն նա լսեց,
Տարաւ իւր տուն և տաքացրեց,
Եւ հայ տուեց ուտելու:

Եւ պառկեցրեց անկողնի մէջ,
«Ինչպէս տաք է», նա ասաց,
Ծածկեց աչքեր, սիրուն ժպտաց,
Եւ քնեց նա հանդիստ քուն:

Աստուած ինամումէ թռչնեկին
Եւ ցօղումէ նա ծաղկին,

Անապաստան որբ մանուկին
Զի թողնի նոյնպէս Աստուած:
Խմբան բազրատունի,
201

Վանեցու «Հաւատամբը».

Ար հաւատամ, որ աշխարհի վերա
Հայից քամբաղդ¹⁾ հարգիզ²⁾ ազգ չեկայ.
Նա թէկուզ տանջուի, տընքայ համաշայ³⁾,
Բայց հզօրին միշտ ստրուկ պիտ' դառնայ:

Ար հաւատամ, որ խեղճ չայի համար
Կայ երեք աստուած—մինը միւսից չար.
Հայր—աստուած, որ է Տաճէլը—դագան,
Որդին—Փարուղը, իսկ Հոգին—Երապեան:

Ար հաւատամ, որ Հայրը իր Որդուն
Լաւ խըրատեց ու խըրկեց չայի տուն,
Որ եկաւ տանջեց, վիթեց շատ էրիւն,
Չարչարեց, խաչեց, թաղեց խեղճերուն.
Ու յիտոյ յարեաւ գընաց Պարսկաստան
Արեան դաշտ շինեց՝ նստեց յաջ անկեան:

Գալոց է նովին կատաղութիւնով
Եւ իր Հօք տուած փայլուն զէնքերով,
՚ի գատել (ջընջել) ձայն ու չայաստան,
Գաղանութեանըն որոյ չեք վախճան:

Ար հաւատամ և Հոդի—աստուածուն—
Լուսաւորեալին և կատարեալին,
Որ կազմեց բերլին դաշնադրութիւն
Եւ ազատութիւն խոստացաւ չային.

Սոխակ չայաստանի Ա. հատոր, Ա. Գ.

Որ խօսեցաւ մեծ կրնգրեաների մէջ,
Պարլամենտաներում արաւ հազար վէճ.
Որ քարոզեց իր առաւետալներին
և կ խոստմունքներով առնել սիրտ' Հային:

Կը հաւատամ, որ Հային շա՛տ ունի
Մէժ մէժ մարդիկներ—սատրին գէրէ,
Որոնք շինումեն այլոց պալատներ,
Բայց չե՞ն կարկատում իրանց Հօր արներ:

Կը հաւատամ, որ եթէ Հայըն իւր
Գլխին տուողին ոտքը չը լիզէր
Եւ ձեռքից չը տար հրբացան ու սուր՝
Թուրքի լրծից վա՛ղ ազատուած կը էր:

Իսկ որք ասեն՝ թէ կը գայ ժամանակ,
Որ թուրքը Հային կը տայ ազատ կեանք,
Կամ գազան քուրդը կը սիրէ նորան,
Կամ թէ կազատէ խեղջին Եւրօպան,—
Այնպիսիքը թո՛ղ լինին նրդովեալ
Կամ Հայաստանէ մէջը կուսկալ:

Իսկ մեք, որ կոյր չենք, այլ Ճանաչում ենք
Մէկին և Միւսին, պիտ' խոստովանենք,
Որ չային Նը կը ապահովուին,
Քանի Նը գիտէ վուել նա էր ւ....

Սիմեոն Սափարեանց,

¹⁾ անբաղդ, ²⁾ երբէք, ³⁾ միշտ,

202
Յ ո յ ս *).

Թո՞ղ փրչէ քամին պաղ պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թո՞ղ գայ,
Ո՛րքան որ կուզէ թո՞ղ կատղի հիւսիս,
Յուսով եմ, վաղ—ուշ գարունը պիտ գայ:

Թուլխալը թո՞ղ պատէ երկինքը պայծառ,
Թանձը մառախուղ երկիր թո՞ղ փակէ,
Տարիքը աշխարհիս խառնըւին իրար,
Յուսով եմ, վաղ—ուշ արև պիտ ծագէ:

Թո՞ղ գայ փորձութիւն, թո՞ղ գայ հալածանք,
Խաւար թո՞ղ դառնայ անազօտ լոյսը,
Սարսափելի չեն Հային տառապանք, —
Միայն՝ չի հատնէր խղճուկի յոյսը:

Գամառ-Բաթիպա:

203
Կոյր երգիչ.

Երկու աշքով կոյր ծերունին,
Զեռը տուած իւր որդուն,
Մի հասարակ ջութակ ձեռին
Ման է գալիս տանից տուն:

*) Այսիսկիս մէջ «Գամառ-Բաթիպա» տարբագրութեամբ գրուածքը
արտաստիւ ենք «Փորձ» ամսագրից, որ հրատարակվումէ Թիֆլիսում
մէծ պ. Արդար Յովհաննիսեանցի խմբագրութեամբ:

Ա. Գրիգորեանց:

Աս անկարող աշխատելու
 Եւ հազիւ հազ քայլելով,
 Խը անձն, որդին կերակրելու
 Հաց է մուրում երգելով:
 «Ահա՛, հայրիկ», ասաց տղան,
 «Մեծ տան առաջ ենք կանգնած.
 Երգի՞ր այս տեղ, բնակիչք այս տան
 Հարուսաներ են անկասկած»:
 «Եւ կանգնած է պատուհանում
 Շատ գեղեցիկ մի տիկին,
 Այնպէս քաղցրիկ ցած է նայում,
 Նա մեզ կը տայ հացի գին»:
 Կոյր երդիչը ածել սկսեց
 Մի շատ տիսուր եղանակ, ածոյի լուս բան
 Եւ թոյլ ձայնով այսպէս երգեց
 Նա մի և նոյն ժամանակ,
 «Ո՛վ պարոններ և տիկիններ,
 Ողորմեցէք ծերուկիս.
 Արդէն անցան շատ տարիներ,
 Ինչ հանգել է լոյս աչքիս:
 Եւ իմ համար պայծառ լուսով
 Երբեմն արև փայլումէր,
 Եւ հրաշլի բնութեան շքով
 Եւ իմ աչքը զմայլումէր:
 Սակայն իմ հին մեղքի համար
 Տէրը պատժել ինձ վճռեց,
 Եւ այն օրից թանձր խաւար
 Աչքերիս վրայ նա սփռեց:
 Նորա վճիռը միշտ արդար է,
 Չեմ գանգատում նորանից.
